Հավատքին Հավատարիմ

ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԿԱՅԱԿՈՉՈՒՄ

Հավատքին Հավատարիմ

ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԿԱՅԱԿՈՉՈՒՄ

Հրատարակված՝
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

Կազմը. *Լույս և ճշմարտություն,* Սայմոն Դյուիի
© Սայմոն Դյուիի կողմից

© 2005 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները վերապահված են
Տպագրված Ամերիկայի Միացյալ Նահանգներում

Անգլերենի հաստատումը՝ 7/04
Թարգմանության հաստատումը՝ 7/04
True to the Faith-ի թարգմանությունը
Armenian (East)

ՈՒՂԵՐՁ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԻՑ

Այս գիրքը նախատեսված է որպես տեղեկատու, երբ դուք ուսումնասիրեք սուրբ գրքերն ու վերջին օրերի մարգարեների ուսմունքները: Մենք հորդորում ենք ձեզ օգտագործել այն՝ ավետարանական ուսմունքները սովորելիս և կիրառելիս: Օգտագործեք այն՝ ելույթներ պատրաստելիս, դասավանդելիս և Եկեղեցուն առնչվող հարցերին պատասխանելիս:

Սովորելով ավետարանական ճշմարտությունները, դուք կմեծացնեք Երկնային Հոր հավերժական ծրագրի մասին ձեր ըմբռնումը: Այս ըմբռնումն ունենալով որպես ձեր կյանքի հիմք, դուք կկարողանաք կատարել իմաստուն ընտրություններ, Աստծո կամքին ներդաշնակ ապրել և ապրելով ուրախություն կգտնեք: Ձեր վկայությունն ավելի կուժեղանա: Դուք հավատարիմ կմնաք հավատքին:

Մենք հատկապես ի նկատի ենք ունեցել երիտասարդներին, երիտասարդ միայնակներին և նորադարձներին: Մենք խոստանում ենք, որ կանոնավոր անձնական աղոթքների, սուրբ գրքերի և ավետարանական ուսմունքների ուսումնասիրության միջոցով դուք պատրաստված կլինեք դիմակայելու չարի ազդեցություններին, որոնք կջանան մոլորեցնել և վնասել ձեզ:

Թող որ այս գիրքը զորացնի ձեզ Փրկչին մոտենալու և Նրա օրինակին հետևելու ձեր ջանքերում:

Առաջին Նախագահություն

Ավետարանական թեմաները՝
ԴԱՍԱՎՈՐՎԱԾ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ

Աբրահամյան ուխտ

Աբրահամն ընդունեց ավետարանը և կարգվեց քահանայապետ: (տես ՎԱՈ 84.14, Աբրահամ 1.2) Նա հետագայում սելեստիալ ամուսնության մեջ մտավ, որը վեհացման ուխտն է (տես ՎԱՈ 131. 1–4, 132.19, 29): Իր կատարած ուխտերի հետ կապված, նա Տիրոջից, իր ընտանիքի վերաբերյալ, մեծ խոստումներ ստացավ: Այդ խոստումների շարքում էին հետևյալը՝

- Նրա սերունդը բազմաթիվ կլինի: (տես Ծննդոց ԺԷ. 5–6, Աբրահամ 2.9, 3.14)
- Նրա ժառանգները կամ հետնորդները կընդունեն ավետարանը և քահանայություն կկրեն: (տես Աբրահամ 2.9)
- Նրա սերունդների ծառայության միջոցով աշխարհի բոլոր ընտանիքները [կ]օրհնվեն Ավետարանի օրհնություններով, որոնք փրկության օրհնություններն են, նույնիսկ՝ հավիտենական կյանքի: (տես Աբրահամ 2.11)

Բոլոր ուխտերն ու խոստումները միասին, որոնք Աբրահամը ստացավ Տիրոջից կոչվում են Աբրահամյան ուխտ: Այն հավիտենական ուխտ է, որը տարածվում է Աբրահամի բոլոր սերունդների վրա: (տես Ծննդոց ԺԷ.7) Աբրահամի սերունդ համարվելու համար, անձնավորությունը պետք է հնազանդվի ավետարանի օրենքներին և արարողություններին: Այդ դեպքում այդ անձնավորությունը կարող է ստանալ Աբրահամյան ուխտի բոլոր օրհնությունները, նույնիսկ, եթե նա Աբրահամի ուղղակի հետնորդը չէ: (տես Գաղատացիս Գ.26–29, 4.1–7, ՎԱՈ 84.33–40)

Որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ, դուք ուխտի զավակ եք: (տես 3 Նեփի 20. 25–26) Դուք ընդունել եք հավիտենական ավետարանը և ժառանգել եք Աբրահամին, Իսահակին և Հակոբին տրված նույն խոստումները: Դուք քահանայության և հավերժական կյանքի իրավունք ունեք, եթե

փրկության արարողությունները ընդունեք և դրանց ուղեկցող ուխտերը հավատարմությամբ պահեք: Երկրի ազգերը կօրհնվեն ձեր ջանքերով և ձեր սերնդի գործերով:

Տես նաև Ուխտ, Հավերժական Կյանք, Արարողություններ, Հայրապետական Օրհնություններ, Քահանայություն

Ազատ կամք

Ձեր Երկնային Հայրը տվել է ձեզ ազատ կամք՝ ինքնուրույն ընտրելու և գործելու ունակություն: Ազատ կամքը կարևոր է փրկության ծրագրում: Առանց դրա դուք ի վիճակի չէիք լինի սովորել կամ առաջադիմել կամ հետևել Փրկչին: Դրանով դուք «ազատ եք ընտրել ազատություն և հավերժական կյանք, բոլոր մարդկանց մեծ Միջնորդի միջոցով, կամ ընտրել գերություն և մահ՝ ըստ դևի գերությանը և զորությանը»: (2 Նեփի 2.27)

Դուք ընտրելու իրավունք ունեիք, նույնիսկ, նախքան ձեր ծնվելը: Երկնքում՝ նախաերկրային Խորհրդի ժամանակ, Երկնային Հայրը ներկայացրեց Իր ծրագիրը, որը ներառում էր ազատ կամքի սկզբունքը: Լյուցիֆերն ապստամբեց և «որոնեց կործանել մարդու ազատ կամքը»: (Մովսես 4.3) Դրա հետևանքով Լյուցիֆերին և բոլոր նրանց, ովքեր հետևեցին նրան, մերժվեց մահկանացու մարմին ստանալու արտոնությունը: Ձեր ներկայությունը երկրի վրա հաստատում է, որ դուք գործադրել եք ձեր ազատ կամքը՝ հետևելու Երկնային Հոր ծրագրին:

Մահկանացու վիճակում դուք շարունակում եք ունենալ ազատ կամք: Այս պարգևի ձեր օգտագործումը վճռորոշ կլինի ձեր երջանկության կամ թշվառության համար այս կյանքում և գալիք կյանքում: Դուք ազատ եք ընտրություններ կատարելիս և գործելիս, բայց դուք ազատ չեք ձեր գործողությունների հետևանքներն ընտրելիս: Հետևանքները գուցե և անմիջապես ի հայտ չգան, բայց դրանք անպայման կհետևեն: Բարի և արդար ընտրությունները տանում են դեպի երջանկություն, խաղաղություն և հավերժական կյանք, մինչդեռ մեղքը և չար ընտրությունները ի վերջո բերում են տառապանք և թշվառություն:

Դուք պատասխանատու եք այն ընտրությունների համար, որ դուք կատարում եք: Դուք չպետք է մեղադրեք հանգամանքները, ձեր ընտանիքին, ձեր ընկերներին, եթե դուք ընտրում եք չհնազանդվել Աստծո պատվիրաններին: Դուք մեծ ուժով օժտված Աստծո զավակ եք: Դուք ունակություն ունեք ընտրելու արդարություն և երջանկություն անկախ ձեր հանգամանքներից:

Դուք նաև պատասխանատու եք Երկնային Հոր կողմից տրված ունակություններն ու տաղանդները զարգացնելու համար: Դուք պատասխանատու եք Նրան այն բանի համար, թե ինչ եք անում ձեր ունակությունների հետ և թե ինչպես եք օգտագործում ձեր ժամանակը: Մի վատնեք ձեր ժամանակը: Հոժարակամ եղեք տքնաջան աշխատել: Ընտրեք ձեր ազատ կամքով կատարել շատ բարի գործեր:

Լրացուցիչ հղագրումներ՝ Երկրորդ Օրինաց ԺԱ. 26–28, Լ.15–20, Յեսու ԵԴ. 14–15, 2Նեփի 2, Հելաման 14. 30–31, ՎևՈւ 58.26–28, 101.78

Տես նաև Հնազանդություն, Փրկության Ծրագիր, Դայթակղություն

Ազնվություն

Հավատքի տասներեքերորդ հանգանակն ասում է. «Մենք հավատում ենք ազնիվ լինելուն»: Ազնիվ լինել նշանակում է լինել անկեղծ, ճշմարտացի և չխաբել բոլոր դեպքերում:

Երբ ազնիվ եք ամեն ինչում, դուք կարողանում եք վայելել մտքի խաղաղություն և պահպանել ինքնահարգանք: Դուք կառուցում եք բնավորության ուժ, որը թույլ է տալիս ձեզ լինել Աստծո և ուրիշների ծառայության մեջ: Դուք վստահելի եք Աստծո և ձեր շրջապատում գտնվող մյուս մարդկանց աչքում:

Մյուս կողմից, եթե դուք անազնիվ եք ձեր խոսքերում կամ գործերում, դուք վնասում եք ձեզ և հաճախ վնասում եք նաև ուրիշներին: Եթե դուք ստում եք, գողանում, խաբում կամ ձեր աշխատավարձի դիմաց լիարժեք աշխատելու ձեր պարտքը չեք կատարում, դուք կորցնում եք ձեր ինքնահարգանքը: Դուք կորցնում եք Սուրբ Հոգու առաջնորդությունը: Դուք հավանաբար կպարզեք, որ վնասել եք ընտանիքի անդամների և ընկերների

հետ ձեր փոխհարաբերությունները և մարդիկ այլևս ձեզ չեն վստահում:

Ազնիվ լինելը հաճախ խիզախություն և զոհաբերություն է պահանջում, հատկապես, երբ ուրիշները փորձում են համոզել ձեզ արդարացնելու անազնիվ վարքը: Եթե դուք գտնվում եք այդպիսի իրավիճակում, հիշեք որ մնայուն խաղաղությունը, որը գալիս է ազնիվ լինելուց, ավելի արժեքավոր է, քան ամբոխին հետևելու վայրկենական սփոփանքը:

Լրացուցիչ հղագրումներ՝ Ելից Ի.16, 2Նեփի 9.34, ՎԿՈ 97.8

Ալկոհոլ (*Տես* Իմաստության Խոսք)

Ակնածանք

Ակնածանքը խորը հարգանք և սեր է: Երբ ունեք ակնածալի վերաբերմունք Աստծո հանդեպ, դուք պատվում եք Նրան, արտահայտում եք ձեր երախտագիտությունը Նրա հանդեպ և հնազանդվում եք Նրա պատվիրաններին:

Դուք պետք է ակնածալի լինեք ձեր վարքագծով ինչպես նաև վերաբերմունքով: Ակնածալի վերաբերմունքը ներառում է՝ աղոթքը, սուրբ գրքերի ուսումնասիրությունը, ծոմը, և տասանորդների և նվիրատվությունների վճարումը: Այն ներառում է համեստ հագուստներ կրելը և մաքուր և գեղեցիկ լեզվով խոսելը: Ձեր ակնածանքի խորությունն ակնհայտ է դառնում երաժշտության և զվարճությունների ձեր ընտրության ժամանակ, սրբազան թեմաների շուրջ ձեր խոսելաձևի մեջ և ձեր հագնվելու և պահելաձևի մեջ, երբ հաճախում եք եկեղեցի և տաճար: Դուք ցույց եք տալիս ձեր ակնածանքը Տիրոջը, երբ բարությամբ և հարգանքով ծառայում եք ուրիշ մարդկանց:

Երբ դառնաք ավելի ակնածալի, կնկատեք ձեր կյանքում մի խաղաղ փոփոխություն: Տերը դուրս կթափի Իր Հոգին ավելի առատորեն ձեզ վրա: Դուք ավելի քիչ կանհանգստանաք և խառնաշփոթության մեջ կընկնեք: Դուք ի վիճակի կլինեք հայտնություն ստանալ՝ օգնելու ձեզ լուծել անձնական և ընտանեկան խնդիրները:

Ճիշտ ինչպես ակնածանքը ձեզ ավելի է մոտեցնում Աստծուն, ակնածանքի բացակայությունը համապատասխանում է հակառակորդի նպատակներին: Սատանան կգայթակղի ձեզ հետևել աշխարհի աղմուկով, հուզմունքով ու հակառակություններով լի ուղղում, և ավելի քիչ չափավորությանն ու համեստ ազնվաբարոյությանը: Ինչպես ռազմական ներխուժումը ղեկավարող հրամանատար, նա կփորձի ձեր և Տիրոջ միջև խափանել հաղորդակցության ուղիները: Զգուշացեք այդ ռազմավարությունից և ձգտեք ակնածալի լինել բոլոր բաներում որ անում եք:

Լրացուցիչ հղագրումներ՝ Ղևտեցոց ԻԶ.2, Սաղմոս ՁԹ.5–7, Եբրայեցիս ԺԲ.28, ՎևՈւ 59.21, 63.61–62, 64, 109.21

Տես նաև Հավատք, Երախտագիտություն, Համեստություն, Աղոթք, Հայտնություն, Պաշտամունք

Ահարոնյան Քահանայություն

Երբ Մարգարե Ջոզեֆ Սմիթը թարգմանում էր Մորմոնի Գիրքը, նա մեղքերի թողության համար մկրտության վերաբերյալ մի հիշատակման հանդիպեց: 1829թ. մայիսի 15-ին նա և նրա գրագիր Օլիվեր Քաուդերին գնացին անտառ՝ հարցնելու Տիրոջից մկրտության վերաբերյալ: Երբ նրանք աղոթում էին «լուսե ամպի մեջ մի սուրհանդակ իջավ երկնքից»: Այդ սուրհանդակը Հովհաննես Մկրտիչն էր՝ մարգարեն, որը դարեր առաջ մկրտել էր Հիսուս Քրիստոսին: Հովհաննես Մկրտիչը՝ այժմ հարություն առած մի էակ, իր ձեռքերը դնելով Ջոզեֆի և Օլիվերի վրա, նրանցից յուրաքանչյուրին շնորհեց Ահարոնյան Քահանայություն, որը վերցվել էր երկրի վրայից մեծ ուրացության ժամանակ: Այս իշխանությամբ Ջոզեֆն ու Օլիվերը կարողացան մկրտել միմյանց: (Տես Ջոզեֆ Սմիթ– Պատմություն 1.68–72)

Այսօր Եկեղեցում արական սեռի արժանի անդամները, սկսած 12 տարեկանից, կարող են ստանալ Ահարոնյան Քահանայություն: Նրանք սուրբ քահանայության արարողություններին մասնակցելու և ծառայություն մատուցելու բազմաթիվ հնարավորություններ են ստանում: Երբ նրանք արժանիորեն կատարում են

իրենց պարտականությունները, նրանք գործում են Տիրոջ անունով՝ օգնելով ուրիշներին ստանալու ավետարանի օրհնությունները:

Ահարոնյան Քահանայության պաշտոններն են՝ եպիսկոպոս, քահանա, ուսուցիչ և սարկավագ: Նախագահող քահանայության առաջնորդի թույլտվությամբ (սովորաբար եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի) սարկավագները բաժանում են հաղորդությունը: Նրանք օգնում են եպիսկոպոսին կամ ճյուղի նախագահին հոգ տանել Եկեղեցու անդամների մասին՝ մատուցելով ծառայություն և օգնելով աշխարհիկ գործերում, ինչպես օրինակ՝ հավաքելով ծոմի զոհաբերությունները: Ուսուցիչները կարող են կատարել սարկավագների բոլոր պարտականությունները և նրանք ստանում են նաև ծառայելու այլ հնարավորություններ: Նրանք պատրաստում են հաղորդության հացը և ջուրը և ծառայում որպես տնային ուսուցիչներ: Քահանաները կարող են կատարել սարկավագների և ուսուցիչների բոլոր պարտականությունները: Նախագահող Քահանայության առաջնորդի թույլտվությամբ, նրանք կարող են նաև օրհնել հաղորդությունը, մկրտել և ուրիշներին կարգել քահանայի, ուսուցչի և սարկավագի պաշտոններում:

Ահարոնյան Քահանայությունը հավելված է ավելի մեծագույն կամ Մելքիսեդեկյան Քահանայությանը: (տես ՎԿՈ 107.14) Այն հաճախ կոչվում է նախապատրաստական քահանայություն: Երբ քահանայություն կրողը ծառայում է Ահարոնյան Քահանայությունում, նա պատրաստվում է ստանալ Մելքիսեդեկյան Քահանայություն, ստանալ տաճարային օրհնություններ, ծառայել լիաժամկետ միսիայում, լինել սիրող ամուսին և հայր և շարունակել ողջ կյանքի ընթացքում ծառայել Տիրոջը:

Տես նաև Մելքիսեդեկյան Քահանայություն, Քահանայություն

Աղոթք

Դուք Աստծո զավակն եք: Ձեր Երկնային Հայրը սիրում է ձեզ և գիտի ձեր կարիքները, և Նա ուզում է, որ դուք հաղորդակցվեք Նրա հետ աղոթքի միջոցով: Աղոթեք Նրան և ուրիշ ոչ մեկի: Տեր

Հիսուս Քրիստոսը պատվիրել է. «Դուք պետք է միշտ աղոթեք Հորը՝ իմ անունով»: (3 Նեփի 18.19)

Երբ դուք սովորույթ դարձնեք Աստծուն մոտենալ աղոթքով, դուք կսկսեք ճանաչել Նրան և ավելի քան երբևէ կմոտենաք Նրան: Ձեր ցանկությունները կնմանվեն Նրա ցանկություններին: Դուք կարող եք օրհնություններ ապահովել ձեզ և ուրիշների համար, որոնք Նա պատրաստ է տալ, եթե դուք միայն խնդրեք հավատքով:

Աղոթքի սկզբունքները

Երկնային Հայրը միշտ պատրաստ է լսել և պատասխանել ձեր աղոթքներին: Ձեր աղոթքների ուժը կախված է ձեզանից: Երբ ձգտում եք դարձնել աղոթքը ձեր կյանքի մի մասը, հիշեք այս խորհուրդը.

Իմաստալի դարձրեք ձեր աղոթքները: Մարգարե Մորմոնը նախազգուշացրել է, որ եթե որևէ մեկը «աղոթի, բայց՝ ոչ սրտի անկեղծ միտումով . . . դա նրան ոչ մի օգուտ չի տա, քանզի Աստված այդպիսի ոչ մեկին չի ընդունում»: (Մորոնի 7.9) Ձեր աղոթքներն իմաստալի դարձնելու համար, դուք պետք է աղոթեք անկեղծորեն և «սրտի ողջ կորովով»: (Մորոնի 7.48) Ուշադիր եղեք խուսափելով «շատախոս լինելուց» , երբ աղոթում եք: (Մատթեոս Զ.7) Լուրջ մտածեք ձեր վերաբերմունքի և խոսքերի մասին, որոնք օգտագործում եք:

Օգտագործեք բառեր, որոնք ցույց են տալիս սեր, հարգանք, ակնածանք և մտերմություն: Այս սկզբունքի կիրառումը տարբեր կլինի կախված այն լեզվից, որով դուք կխոսեք: Օրինակ, եթե աղոթում եք անգլերեն դուք պետք է օգտագործեք սուրբ գրքերի դերանունները՝ *Thee, Thou, Thy և Thine*, երբ դիմում եք Աստծուն և ոչ թե *you, you և yours:* Անկախ լեզվից այդ սկզբունքը մնում է նույնը: Երբ աղոթում եք, դուք պետք է օգտագործեք բառեր, որոնք արտահայտում են պատշաճ սիրո, պաշտամունքային հարաբերություն Աստծո հետ: Դուք գուցե դժվարություն ունենաք աղոթքի լեզուն սովորելիս, բայց աստիճանաբար ավելի կհարմարվեք դրան, երբ աղոթեք և կարդաք սուրբ գրքերը:

Միշտ գոհություն հայտնեք Երկնային Հորը: Դուք պետք է «ապրեք՝ գոհություն հայտնելով ամեն օր, այն բազում ողորմածությունների և օրհնությունների համար, որոնք նա շնորհում է ձեզ»: (Ալմա 34.38) Երբ ժամանակ եք ծախսում հիշելով ձեր օրհնությունները, դուք կհասկանաք, թե որքան շատ բան է Երկնային Հայրն արել ձեզ համար: Նրան հայտնեք ձեր գոհությունը:

Բոլոր բաներն անելիս որոնեք Երկնային Հոր առաջնորդությունն ու ուժը: Ալման խորհուրդ է տվել իր որդի Հելամանին. «Կանչիր առ Աստված քո բոլոր գոյամիջոցների համար. այո, թող բոլոր քո արարքները լինեն ի Տերը, և ուր էլ որ գնաս, թող դա լինի Տիրոջով, այո, թող քո բոլոր մտքերը ուղղված լինեն առ Տերը. այո, թող քո սրտի գորովանքը դրված լինի Տիրոջ վրա հավիտյանս: Խորհուրդ արա Տիրոջ հետ քո բոլոր գործերում, և նա ուղղություն ցույց կտա քեզ բարու համար, այո, երբ դու պառկես գիշերը, պառկիր ի Տերը, որ նա կարողանա հսկել քեզ, քնիդ մեջ. և երբ դու վեր կենաս առավոտյան, թող քո սիրտը լի լինի գոհությամբ առ Աստված. և եթե դու անես այս բաները, դու պիտի բարձրացվես վերջին օրը»: (Ալմա 37.36–37, տես նաև Ալմա 34.17–26)

Երբ աղոթում եք, հիշեք ուրիշների կարիքները: Աղոթք արեք «ձեր բարօրության համար, և նաև բարօրության համար նրանց, ովքեր ձեր շրջապատում են» (Ալմա 34.27): Խնդրեք Երկնային Հորն օրհնել և սփոփել նրանց, ովքեր կարիքի մեջ են: Խնդրեք Նրան ոգեշնչել և զորացնել Եկեղեցու Նախագահին, մյուս Գերագույն Իշխանավորներին և Եկեղեցու ձեր տեղական առաջնորդներին: Աղոթեք ընտանիքի անդամների և ընկերների բարօրության համար: Աղոթեք կառավարության ղեկավարների համար: Խնդրեք Տիրոջից ոգեշնչել և պաշտպանել միսիոներներին և այն մարդկանց, որոնց նրանք սովորեցնում են:

Որոնեք Սուրբ Հոգու առաջնորդությունը: Սուրբ Հոգին կարող է սովորեցնել ձեզ աղոթել և առաջնորդել ձեզ այն բաներում, որ դուք ասում եք (տես Հռովմայեցիս Ը.26, 2 Նեփի 32.8): Նա կարող է օգնել ձեզ աղոթել «համաձայն Աստծո կամքին»: (ՎևՈւ 46.30)

Երբ աղոթքով խնդրանք եք հղում, արեք այն ամենն ինչ կարող եք, որպեսզի աջակցեք, որ այն շնորհվի ձեզ: Երկնային Հայրն ակնկալում է, որ դուք ավելին անեք, քան միայն օրհնություն խնդրելը:

Երբ դուք կարևոր որոշում պետք է ընդունեք, Նա հաճախ կպահանջի ձեզանից, որպեսզի դուք ուսումնասիրեք այն ձեր մտքում, նախքան ձեզ պատասխան տալը: (տես ՎԱՈ 9.7) Առաջնորդության համար ձեր ասած աղոթքները այն ժամանակ միայն արդյունավետ կլինեն, երբ դուք ջանք գործադրեք ընկալունակ լինել Սուրբ Հոգու հուշումների հանդեպ: Ձեր և ուրիշների բարօրության համար արած ձեր աղոթքները զուր կլինեն, եթե «երես դարձնեք կարիքավորից ու մերկից, և չայցելեք հիվանդին ու չարչարվածին, և բաժին չհանեք ձեր ստացվածքից, եթե դուք ունեք, նրանց համար, ովքեր կարիքի մեջ են»: (Ալմա 34.28)

Եթե դժվար խնդրի առաջ եք կանգնած, Երկնային Հայրը գոհ է մնում , երբ ծնկի եք գալիս և օգնություն խնդրում, իսկ հետո ոտքի կանգնում և գնում գործելու: Նա կօգնի ձեզ ձեր բոլոր արդար ձգտումներում, բայց Նա հազվադեպ կանի այն, ինչը դուք ինքներդ կարող եք անել:

Անձնական աղոթք

Լեռան Իր քարոզում Հիսուս Քրիստոսը խորհուրդ տվեց. «Բայց դու երբոր աղոթք անես, մտիր քո սենյակը և դուռդ փակած աղոթք արա դեպի քո Հայրը, որ ծածուկումն է. և քո Հայրը՝ որ ծածուկ տեղը տեսնում է, հայտնապես կհատուցանի քեզ»: (Մատթեոս Զ.6) Անձնական, մեկուսի աղոթքը ձեր հոգևոր զարգացման կարևոր մասն է կազմում:

Առնվազն ամեն առավոտ և ամեն գիշեր գտեք մի տեղ, որտեղ ձեզ չեն խանգարի: Ծնկի իջեք համեստորեն և հաղորդակցվեք ձեր Երկնային Հոր հետ: (տես ՎԱՈ 19.28, 20.51)

Հիշեք, որ աղոթքը երկկողմանի հաղորդակցություն է: Երբ փակում եք աղոթքը, ժամանակ տրամադրեք կանգ առնելու և լսելու: Երբեմն Երկնային Հայրը խորհուրդ կտա, կառաջնորդի կամ կմխիթարի ձեզ մինչ դուք ձեր ծնկների վրա եք:

Երբեք մի տեղի տվեք այն մտքին, որ դուք արժանի չեք աղոթելու: Այդ միտքը գալիս է սատանայից, որը ձեզ ցանկանում է համոզել, որ դուք չպետք է աղոթեք (տես 2 Նեփի 32.8): Եթե չեք

ուզում աղոթել, աղոթեք այնքան, մինչև իսկապես ցանկանաք աղոթել:

Փրկիչը պատվիրել է, որ անդադար աղոթենք, որպեսզի հաղթող դուրս գանք, այո որպեսզի մենք հաղթենք սատանային և որպեսզի կարողանանք դուրս պրծնել սատանայի ծառաների ձեռքից, որոնք օժանդակում են նրա գործին (ՎևՈ 10.5): Չնայած դուք չեք կարող անընդհատ ծնկների վրա լինել. միշտ անձնական մեկուսի աղոթք անելու համար, դուք կարող եք թողնել, որ ձեր սիրտը «լցված լինի՝ ուղղված վեր աղոթքով առ [Աստված] շարունակ»: (Ալմա 34.27, տես նաև 3 Նեփի 20.1) Ամեն օրվա ընթացքում, դուք կարող եք պահպանել սիրո կայուն մի զգացում ձեր Երկնային Հոր և Նրա Սիրելի Որդու հանդեպ: Դուք կարող եք մտքում գոհություն հայտնել ձեր Հորը և խնդրել, որ Նա զորացնի ձեզ ձեր պարտականությունները կատարելիս: Գայթակղության կամ ֆիզիկական վտանգի պահին, դուք կարող եք մտքում Նրանից օգնություն խնդրել:

Ընտանեկան աղոթք

Բացի մեկուսի աղոթել պատվիրելուց, Փրկիչը հորդորել է մեզ աղոթել մեր ընտանիքների հետ. «Աղոթեք Հորը ձեր ընտանիքներում, միշտ իմ անունով, որպեսզի ձեր կանայք և ձեր զավակները կարողանան օրհնվել»: (3 Նեփի 18.21)

Եթե ամուսնացած եք, ընտանեկան աղոթքը դարձրեք ձեր ընտանեկան կյանքի մշտական ուղեկիցը: Ամեն առավոտ և ամեն երեկո հեզությամբ ծնկի եկեք միասին: Յուրաքանչյուր ընտանիքի անդամին հաճախ աղոթելու հնարավորություն ընձեռեք: Միավորվեք գոհությամբ Երկնային Հոր կողմից ձեզ տրված օրհնությունների համար: Միավորվեք հավատքով՝ աղերսելու օրհնություններ, որոնց կարիքը դուք ունեք և նաև աղոթելու ուրիշների համար:

Սովորական ընտանեկան աղոթքի միջոցով դուք և ձեր ընտանիքի անդամները կմոտենան Աստծուն և միմյանց: Ձեր երեխաները կսովորեն հաղորդակցվել իրենց Հոր հետ, որը Երկնքում է: Դուք բոլորդ ավելի լավ նախապատրաստված կլինեք ծառայե-

լու ուրիշներին և դիմակայելու գայթակղություններին: Ձեր տունը աշխարհում կլինի հոգևոր ուժի և չարի ազդեցություններից ապաստանի վայր:

Հրապարակային աղոթք

Երբեմն ձեզ կխնդրեն ասել հրապարակային աղոթք, հավանաբար Եկեղեցու ժողովի կամ դասարանի առջև: Երբ ստանաք այդ հնարավորությունը, հիշեք, որ դուք հաղորդակցվում եք Երկնային Հոր հետ և ոչ թե հրապարակային քարոզ եք ասում: Մի անհանգստացեք, թե ինչ կասեն ուրիշները ձեր ասածների մասին: Ընդհակառակը, մատուցեք պարզ, սրտաբուխ աղոթք:

Աղոթքին պատասխաններ ստանալը

Փրկիչը սովորեցրել է. «Խնդրեցեք և կտրվի ձեզ. որոնեցեք և կգտնեք, դուռը թակեցեք և կբացվի ձեզ: Որովհետև ամեն խնդրող առնում է, և որոնողը գտնում է. և դուռը թակողին կբացվի»: (Մատթեոս 7.7–8) Նեփիացիներին Նա ասել է. «Ինչ որ դուք խնդրեք Հորը՝ իմ անունով, ինչը որ ճիշտ է՝ հավատալով, որ դուք կստանաք, ահա այն կտրվի ձեզ»: (3 Նեփի 18.20)

Երկնային Հայրը լսում է մեր աղոթքները: Նա միշտ չէ որ կպատասխանի ըստ ձեր սպասածի, բայց Նա իսկապես պատասխանում է՝ Իր ուրույն ժամանակին և ըստ Իր կամքի: Որովհետև Նա գիտի թե ինչն է լավագույնը ձեզ համար, երբեմն Նա կարող է պատասխանել *ոչ*, նույնիսկ երբ ձեր խնդրանքներն անկեղծ են:

Աղոթքի պատասխանները գալիս են բազմաթիվ ձևերով: Հաճախ դրանք գալիս են Սուրբ Հոգու հանդարտ և ցածր ձայնով: (տես «Հայտնություն» էջ 140–44) Դրանք կարող են գալ ձեր կյանքի հանգամանքների մեջ կամ ձեր շրջապատում գտնվողների բարի գործերի միջոցով: Երբ աղոթքով շարունակեք մոտենալ Երկնային Հորը, դուք ավելի լավ կարող եք հասկանալ Նրա ողորմած և իմաստուն պատասխանները ձեր աղերսանքին: Դուք կգտնեք, որ Նա է ձեր «ապավենը և զորությունը՝ նեղությունների մեջ նա շատ օգնական գտնվեցավ»: (Սաղմոս 46.1)

Լրացուցիչ հղագրումներ՝ Մատթեոս 6.5–15, Հակոբոս 1.5–6, Ենովս 1.1–17. Մոսիա 4.11–12, 3 Նեփի 13.6–7, 14.7–8, ՎԱՈ 19.38, 88.63–65, Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.9–19

Տես նաև Հավատք, Ծոմ և Ծոմի Ջոհաբերություններ, Պաշտամունք

Ամուսնալուծություն

«Ընտանիք: Հայտարարություն աշխարհին» ուղերձում Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը «պաշտոնապես հայտարարում են, որ տղամարդու և կնոջ ամուսնությունը հաստատված է Աստծո կողմից և, որ ընտանիքը առանցքային է Արարչի ծրագրում՝ նվիրված Իր զավակների հավիտենական ճակատագրին»: (տես էջ 59 այս գրքում) Չնայած այս ճշմարտություններին ամուսնալուծությունը դարձել է սովորական մի բան շատ հասարակություններում և տարածում է գտել նույնիսկ Եկեղեցու անդամների մեջ: Այս աճող համաճարակը Աստծուց չէ, այլ ավելի շուտ հակառակորդի գործն է:

Յուրաքանչյուր ամուսնացած զույգ պետք է համատեղ աշխատի հավերժական ամուսնության օրհնություններին արժանի լինելու համար: Եթե դուք ամուսնացած եք և դուք ու ձեր կողակիցը դժվարություններ եք տանում, հիշեք որ շատ ամուսնական սթրեսների համար սպեղանին ամուսնալուծության կամ բաժանման մեջ չէ: Սպեղանին գտնվում է Հիսուս Քրիստոսի ավետարանում՝ ապաշխարության, ներման, ազնվության և սիրո մեջ: Այն գտնվում է ձեր կողակցին այնպես վերաբերվելու մեջ, ինչպես դուք կցանկանայիք, որ նա վերաբերվեր ձեզ: (Տես Մատթեոս Է.12) Երբ աշխատում եք լուծել խնդիրները, ձեզ անհրաժեշտ կլինի միասին գնալ և խորհուրդ վերցնել ձեր եպիսկոպոսից կամ ճյուղի նախագահից:

Տես նաև Գթություն, Ընտանիք, Սեր, Ամուսնություն, Տաճարներ

Ամուսնություն

Այժմ աշխարհում կան շատ մարդիկ, ովքեր խուսափում են և նույնիսկ ծաղրում ամուսնությունն ու ընտանիքը: Այդպիսի շփոթեցնող և կործանարար ձայների միջից Առաջին նախագահության

և Տասներկու Առաքյալների Քվորումը բարձրացնում է ճշմարտության հաստատուն ձայնը: Նրանք «հանդիսավոր հայտարարում են, որ տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը կարգված է Աստծո կողմից և որ ընտանիքը կենտրոնական տեղ է գրավում Նրա զավակների հավերժական ճակատագրի վերաբերյալ Արարչի ծրագրում» (տես «Ընտանիք՝ հռչակագիր աշխարհին» այս գրքի էջ 59-ում):

Կյանքի մեծագույն ուրախությունները գտնվում են ընտանիքում: Ամուր ընտանեկան հարաբերությունները պահանջում են ջանքեր, բայց այդպիսի ջանքերը բերում են մեծ երջանկություն այս կյանքում և հավերժության մեջ: Նույնիսկ, եթե դուք ընտանեկան երջանիկ կյանք չեք ունեցել անցյալում, դուք կարող եք ձգտել հավերժական երջանիկ ամուսնության և սիրո հարաբերությունների ընտանիքի անդամների հետ:

Ամուսնության նոր և հավերժական ուխտը

Երկնային Հոր երջանկության ծրագրում տղամարդը և կինը կարող են կնքվել միմյանց հետ ժամանակի և ողջ հավերժության համար: Նրանք ովքեր կնքվել են տաճարում, համոզված են, որ իրենց հարաբերությունները կշարունակվեն հավերժ, եթե նրանք հավատարիմ մնան իրենց ուխտերին: Նրանք գիտեն, որ ոչինչ, նույնիսկ մահը չի կարող հավետ բաժանել իրենց:

Հավերժական ամուսնության ուխտն անհրաժեշտ է վեհացման համար: Տերը հայտնել է Ջոզեֆ Սմիթի միջոցով, որ սելեստիալ փառքում կան երեք երկինքներ կամ աստիճաններ և որպեսզի հասնի բարձրագույնին մարդը պետք է մտնի քահանայության այս կարգի մեջ [որն ամուսնության նոր և հավիտենական ուխտն է] և եթե նա չի մտնում, նա չի կարող դրան հասնել: Նա կարող է մտնել մյուսի մեջ, բայց դա կլինի նրա արքայության վերջը, նա չի կարող ունենալ աճ: (ՎԵՈՒ 131.1–4)

Կնքման արարողությունը ստանալուց և տաճարում սրբազան ուխտեր կապելուց հետո, զույգը պետք է շարունակի հավատարմության մեջ, որպեսզի ստանա հավերժական ամուսնության և վեհացման օրհնությունները: Տերն ասել է, որ

եթե մարդն ամուսնանա Իր խոսքով, որն Իր օրենքն է և նոր ու հավերժական ուխտը և այն կնքվի նրանց համար խոստման Սուրբ Հոգով, նրա կողմից, ով օծված է, որին Նա տվել է այդ զորությունը և քահանայության այդ բանալիները, . . . և եթե [նրանք] կենան Նրա ուխտի մեջ, . . . բոլոր բաները նրանց համար կարվեն ինչպես որ Նրա ծառան կդնի նրանց վրա, ժամանակի և ողջ հավերժության համար և լիակատար ուժի մեջ կլինի, երբ աշխարհից դուրս կլինեն (ՎԿՈ 132.19, Խոստման Սուրբ Հոգու բացատրության մասին տես էջ 82):

Պատրաստվել ամուսնությանը

Եթե ամուսնացած չեք, լրջորեն պատրաստվեք ամուսնության համար: Հիշեք, որ տաճարային ամուսնությանը ոչինչ չի կարող փոխարինել: Պատրաստվեք ամուսնանալ ճիշտ անձնավորության հետ, ճիշտ տեղում և ճիշտ ժամանակին: Այնպիսի մարդու համար ապրեք արժանի այժմ, որի հետ հույս ունեք ամուսնանալ:

Ժամադրվեք միայն նրանց հետ, ովքեր բարձր չափանիշներ ունեն և որոնց ընկերակցությամբ դուք կարող եք պահպանել ձեր բարձր չափանիշները: Խնամքով ծրագրեք դրական և կառուցողական գործեր, որպեսզի դուք և ձեր ընկերը չմնաք մենակ և անգործ: Մնացեք ապահով տարածքներում, որտեղ կարող եք հեշտորեն վերահսկել ինքներդ ձեզ: Մի մասնակցեք զրույցների կամ միջոցառումների, որոնք առաջացնում են սեռական զգացումներ:

Ձգտեք ձեր հավատքին պատկանող զուգընկերոջ: Ձգտեք այնպիսի մեկին, որին միշտ կարող եք հարգել, մեկին, որը կհիանա ձեզանով ձեր կյանքի ընթացքում: Մինչև ամուսնանալը համոզվեք, որ գտել եք մեկին, որին կարող եք տալ ձեր ողջ սիրտը, ձեր ողջ սերը, ձեր ողջ նվիրվածությունը, ձեր ողջ հավատարմությունը:

Խորհուրդ նրանց ովքեր չեն ամուսնանում

Չնայած Եկեղեցու որոշ անդամներ ցանկանում են ամուսնանալ, նրանք մնում են միայնակ ոչ իրենց մեղքով: Եթե դուք գտնվում եք այդ վիճակում, համոզված եղեք, որ «Աստծուն սիրողներին ամեն բաները գործակից են լինում դեպի բարին»: (Հռովմ. Ը.28) Երբ արժանի եք մնում, մի օր այս կամ հաջորդ կյանքում ձեզ կտրվեն հավերժական ընտանեկան հարաբերությունների բոլոր օրհնությունները: Տերն այս խոստումը կրկին ու կրկին տվել է Իր վերջին օրերի մարգարեների միջոցով:

Եթե դուք միայնակ եք և ցանկանում եք ամուսնանալ, մի կորցրեք ձեր հույսը: Միևնույն ժամանակ թույլ մի տվեք որ ձեր այդ նպատակը գերիշխի ձեզ: Ընդհակառակը, ձեզ ամբողջովին նվիրեք արժանավայել գործերի: Ձգտեք ինչ որ մի ձևով ծառայել ձեր հեռավոր ազգականներին և համայնքին: Ընդունեք և փառավորեք Եկեղեցու կոչումները: Ձեզ մաքուր պահեք և՛ ֆիզիկապես և՛ հոգեպես: Շարունակեք սովորել, զարգանալ և առաջընթաց ապրել ձեր անձնական կյանքում:

Հասնելով երջանիկ ամուսնության

Եթե ամուսնացած եք, հիշեք, որ ամենաթանկ հարաբերությունը երկրի վրա ձեր կողակցի և ձեր միջև ընկերությունն ու սերը պետք է լինի: Ձեր կողակիցը միակ անձն է, բացի Տիրոջից, որին ձեզ պատվիրված է սիրել ձեր ողջ սրտով: (տես ՎԱՈ 42.22)

Հիշեք, որ ամուսնությունը իր ամենահիսկական իմաստով հավասարների ընկերակցություն է, որում ոչ մեկը իշխանություն չի գործադրում մյուսի վրա, այլ յուրաքանչյուրը խրախուսում է, սփոփում և օգնում մյուսին:

Քանի որ ամուսնությունն այդպիսի կարևոր հարաբերություն է կյանքում, արժե և անհրաժեշտ է դրան ժամանակ տրամադրել: Ավելի բարձր առաջնահերթություն մի տվեք ավելի քիչ կարևոր պարտականություններին: Ժամանակ տրամադրեք միմյանց հետ խոսելու և միմյանց լսելու համար: Եղեք ուշադիր և հարգալից: Հաճախ արտահայտեք քնքուշ զգացմունքներ և սեր:

Վճռեք, որ ոչ մի բան երբևէ չի գա ձեր կողակցի և ձեր միջև խզելու ձեր ամուսնությունը: Որոշեք ձեր ամուսնությունը հաջողակ դարձնել, չնայած այն դժվարություններին, որոնք կարող են առաջանալ:

Հավատարիմ եղեք միմյանց: Հավատարիմ եղեք ձեր ամուսնական ուխտերին մտքով, խոսքով և գործով: Հիշե՛ք, Տերն ասել է, որ դուք պետք է սիրեք ձեր կնոջը ձեր ողջ սրտով և պետք է հարեք նրան և ուրիշ ոչ ոքի: (ՎԱՌ 42.22) «Ուրիշ ոչ ոքի» արտահայտությունը սովորեցնում է, որ ոչ մի մարդ, գործ կամ ունեցվածք չպետք է երբևէ ավելի բարձր տեղ գրավի, քան ձեր կողակցի հետ հարաբերությունը:

Հեռու մնացեք այն ամենից, ինչը կարող է տանել ձեզ որևէ ձևի անհավատարմության: Պոռնոգրաֆիան անառողջ ֆանտազիաները և սիրահետումները կքայքայեն ձեր բնավորությունը և կհարվածեն ձեր ամուսնության հիմքերին:

Ձեր ֆինանսները կառավարելիս գործեք համատեղ: Համագործակցեք բյուջե կազմելիս և դրան հետևելիս: Չափավորեք ձեր ծախսերը և խուսափեք պարտքի լծից: Փողի իմաստուն կառավարումը և պարտքից ազատ լինելը նպաստում են տան խաղաղությանը:

Կենտրոնացրեք ձեր կյանքը Հիսուս Քրիստոսի ավետարանի վրա: Միմյանց օգնեք պահել այն ուխտերը, որոնք դուք արել եք: Միասին հաճախեք եկեղեցի և տաճար: Միասին ծնկի իջեք աղոթքի յուրաքանչյուր օրվա սկզբում և վերջում՝ Երկնային Հորը շնորհակալություն հայտնելով միմյանց համար և միասին խնդրեք Նրա օրհնությունները ձեր կյանքի, ձեր տան, ձեր սիրելիների և ձեր արդար ցանկությունների կատարման համար: Այդ ժամանակ Աստված կառաջնորդի ձեզ և ձեր ամենօրյա զրույցները Նրա միջոցով կբերեն խաղաղություն և ուրախություն, որը ուրիշ ոչ մի աղբյուրից չի կարող գալ: Ձեր ընկերակցությունը քաղցր կլինի տարիների հետ, ձեր սերը կուժեղանա: Ձեր երախտագիտությունը միմյանց հանդեպ կմեծանա:

Լրացուցիչ հղագրումներ՝ Ծննդոց Ա.27–28, Բ.18, 21–24, Ա Կորնթացիս ԺԱ.11, Եփեսացիս Ե. 22–23, Մովսես 2.27–28, 3.18, 21–24

Տես նաև Մաքրաբարոյություն, Ապահարզան, Ընտանիք, Տաճարներ, Միասնություն

Այցելությամբ ուսուցում (տես Սփոփող Միություն)

Անառակություն (*Տես* Մաքրաբարոյություն)

Անարգանք

Անարգանքը ուրիշների կամ անձի հանդեպ վերաբերմունքի մի ձև է, որն առաջացնում է վնասվածք կամ վիրավորանք: Այն վնասում է միտքն ու հոգին և հաճախ նաև մարմինը: Այն կարող է առաջացնել շփոթություն, կասկածանք, անվստահություն և վախ: Դա հասարակական օրենքների խախտում է և լիակատար հակադրության մեջ է Փրկչի ուսմունքների հետ: Տերը դատապարտում է վիրավորական անարգանքի բոլոր ձևերը՝ լինի այն ֆիզիկական, սեռական, խոսքով թե զգացմունքային: Վիրավորական վարքագիծը կարող է հանգեցնել Եկեղեցու կողմից կարգապահական տույժի:

Խորհուրդ անարգողին

Եթե դուք ձեր հարաբերություններում անարգել եք որևէ մեկին, դուք պետք է ապաշխարեք ձեր մեղքից: Աղաչեք Տիրոջը ներել ձեզ: Ներողություն խնդրեք նրանցից, ում դուք ցավ եք պատճառել: Խոսեք ձեր եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի հետ, որպեսզի նա օգնի ձեզ անցնել ապաշխարության ընթացքով և եթե անհրաժեշտ է, օգնի ձեզ ստանալ լրացուցիչ խուրհուրդ կամ այլ օգնություն:

Եթե բարկության զգացումն է ձեր մեջ բռնկել վիրավորական վարվելաձև, սովորեք զսպել ձեր զայրույթը: Գնացեք Տիրոջ մոտ աղոթքով և խնդրեք Նրան օգնել ձեզ: Հավերժական հեռանկարի տեսանկյունից դուք կտեսնեք, որ ձեր զայրույթը գրեթե միշտ առաջացել է ի պատասխան այնպիսի բաների, որոնք այնքան էլ կարևոր չեն:

Եթե դուք հանցավոր եք սեռական անարգանքի մեջ, ձգտեք կարգավորել ձեր միտքը: Հիշեք, որ ձեր մտքերը հզոր ազդեցություն ունեն ձեր կյանքի վրա. «ինչպես որ [մարդ] իր սրտում մտածում է՝ այնպես է»: (Առակաց ԻԳ.7) Հեռու մնացեք պոռնոգրաֆիայից և բոլոր այն բաներից, որոնք կարող են խթանել անբարոյական սեռական ցանկություն: Աղոթեք կարողության համար, որպեսզի առաքինությունը զարդարի [ձեր] մտքերը շարունակաբար: (տես ՎԿՈ 121.45)

Օգնություն անարգանքի զոհերին

Եթե դուք անարգանքի զոհ եք դարձել, անմիջապես օգնություն հայցեք: Խոսեք քահանայության առաջնորդի հետ, սովորաբար ձեր եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի, իսկ երբեմն էլ ցցի կամ շրջանի նախագահության որևէ անդամի հետ: Նա կարող է օգնել ձեզ իմանալ, թե ինչ անեք:

Համոզված եղեք, որ դուք մեղավոր չեք մյուսների կողմից վիրավորական վարվելաձևի համար: Դուք չպետք է ունենաք մեղքի զգացում: Եթե դուք բռնաբարության կամ այլ սեռական վիրավորանքի զոհ եք, անկախ նրանից, թե դուք վիրավորանք եք ստացել ծանոթից թե անծանոթից կամ նույնիսկ ընտանիքի անդամից, դուք մեղավոր չեք սեռական մեղքի մեջ: Իմացեք, որ դուք անմեղ եք և որ ձեր Երկնային Հայրը սիրում է ձեզ:

Աղոթեք խաղաղության համար, որը գալիս է միայն Հիսուս Քրիստոսից և Նրա Քավությունից: (տես Հովհ. ԺԴ.27, ԺՁ.33) Փրկիչը տարել է բոլոր ձեր ցավերը և տառապանքները, նույնիսկ այն բաները, որոնք հասցվել են ուրիշների կողմից և Նա գիտի ինչպես օգնի ձեզ: (տես Ալմա 7.11–12) Վրեժի ձգտելու փոխարեն, կենտրոնացրեք ձեր ուշադրությունը այնպիսի հարցերի վրա, որոնք դուք կարող եք վերահսկել, ինչպես օրինակ՝ կյանքի ձեր սեփական տեսակետը: Աղոթեք ուժ ունենալ ներելու նրանց, ովքեր անարգել են ձեզ:

Շարունակեք օգնություն հայցել ձեր քահանայության առաջնորդից, որպեսզի նա կարողանա առաջնորդել ձեզ զգացմունքային ապաքինման ընթացքում: Ավետարանի օրհնությունների

միջոցով, դուք կարող եք կանգնեցնել անարգանքի ցիկլը և ազատվել ձեր տարած տառապանքից:

Լրացուցիչ հղագրումներ՝ Մատթեոս ԺԸ.1–16, ՎԱՌ 121.34–46

Տես նաև Ներում, Ապաշխարություն

Անկում

Եդեմի պարտեզում Աստված պատվիրեց. «Պարտեզի ամեն ծառիցը համարձակ կեր. Բայց բարիի և չարի գիտության ծառիցը մի ուտիր, սակայն, դու կարող ես ինքդ ընտրել, քանզի դա տրված է քեզ, բայց հիշիր, որ ես արգելում եմ դա. որովհետև նրանից կերած օրդ մահով պիտի մեռնես»: (Մովսես 3.16–17) Քանի որ Ադամն ու Եվան զանց առան այս պատվերը և ճաշակեցին բարու և չարի գիտության ծառի պտղից, նրանք վտարվեցին Տիրոջ ներկայությունից: (տես ՎԱՌ 29. 40–41) Այլ խոսքով ասած, նրանք տարան հոգևոր մահ: Նրանք նաև դարձան մահկանացու՝ ֆիզիկական մահի ենթակա: Այս հոգևոր և ֆիզիկական մահը կոչվում է անկում:

Մեր ընկած վիճակը

Որպես Ադամի ու Եվայի հետնորդներ, մահկանացու կյանքի ընթացքում մենք ժառանգում ենք ընկած վիճակ: (տես Ալմա 42. 5–9, 14) Մենք առանձնացված ենք Տիրոջ ներկայությունից և ենթակա ենք ֆիզիկական մահի: Մենք նաև դրված ենք հակադրության վիճակում, որի ընթացքում մենք ստուգվում ենք կյանքի դժվարություններով և հակառակորդի գայթակղություններով: (տես 2 Նեփի 2. 11–14, ՎԱՌ 29. 39, Մովսես 6. 48–49)

Այս ընկած վիճակում մենք հակասություն ունենք մեր մեջ: Մենք Աստծո հոգևոր զավակներն ենք, «աստվածային բնությանը հաղորդակից լինելու» ներուժով: (Բ Պետրոս Ա.4) Սակայն «մենք անարժան ենք [Աստծո] առջև. անկման պատճառով մեր էությունները շարունակ չար են դարձել»: (Եթեր 3.2) Մենք պետք է անընդհատ ձգտենք հաղթահարել անարդար կրքերն ու ցանկությունները:

Կրկնելով հրեշտակի խոսքերը Թագավոր Բենյամինն ասել է. «Բնական մարդն Աստծո մի թշնամի է, և եղել է՝ Ադամի անկումից ի վեր, և կլինի՝ հավիտյանս հավիտենից, մինչև նա չենթարկվի Սուրբ Հոգու հորդորներին և չհանի իր միջից բնական մարդուն և չդառնա մի սուրբ՝ Տեր Քրիստոսի քավությամբ, և դառնա ինչպես մի երեխա՝ ենթարկվող, հեզ, խոնարհ, համբերատար. սիրով լի, հոժար՝ ենթարկվելու բոլոր բաներին, որոնք Տերը հարմար է տեսնում բերել նրա վրա, ճիշտ ինչպես երեխան է ենթարկվում իր հորը»: (Մոսիա 3.19)

Անկման օգուտները

Անկումը Երկնային Հոր փրկության ծրագրի անբաժանելի մասն է: (տես 2 Նեփի 2.15–16, 9. 6) Այն երկկողմանի ուղղություն ունի՝ դեպի ներքև, բայց դեպի առաջ: Բացի ֆիզիկական և հոգևոր մահվան հետ ծանոթանալուց, այն մեզ հնարավորություն է տալիս ծնվել երկրի վրա և սովորել ու առաջադիմել: Ազատ կամքի արդար գործադրման և մեղանչելիս անկեղծ ապաշխարության միջոցով մենք կարող ենք գալ դեպի Քրիստոս և Նրա Քավության միջոցով պատրաստվել ընդունելու հավերժական կյանքի պարգևը: Մարգարե Լեքին սովորեցրել է.

«Եթե Ադամն օրինազանցություն չաներ, նա չէր ընկնի, այլ նա կմնար Եդեմի պարտեզում: Եվ բոլոր բաները, որոնք արարվել էին, պետք է մնացած լինեին նույն վիճակում, որում եղել էին արարվելուց հետո. և նրանք պետք է հավիտյան մնային և չունենային վերջ:

Եվ [Ադամն ու Եվան] երեխաներ չէին ունենա. ուստի, նրանք մնացած կլինեին անմեղության վիճակում, չունենալով ուրախություն, քանզի չգիտեին թշվառություն. չանելով բարիք, քանզի նրանք չգիտեին մեղքը:

Բայց, ահա, բոլոր բաներն արվել են նրա իմաստությամբ, ով գիտի բոլոր բաները:

Ադամն ընկավ, որպեսզի մարդիկ լինեն. և մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն:

«Եվ Մեսիան գալիս է ժամանակի լրիվության մեջ, որպեսզի կարողանա մարդկանց զավակներին փրկագնել անկումից»: (2 Նեփի 2. 22–26, տես նաև 19–21, 27 հատվածները)

Ադամն ու Եվան արտահայտեցին իրենց երախտագիտությունն այն օրհնությունների համար, որոնք եկան Անկման հետևանքով:

Ադամն օրհնեց Աստծուն և լցված լինելով սկսեց մարգարեանալ աշխարհի բոլոր ընտանիքների վերաբերյալ, ասելով. Օրհնված լինի Աստծո անունը, քանզի իմ օրհնազանցության պատճառով աչքերս բացվեցին և այս կյանքում ես կունենամ ուրախություն և կրկին մարմնում ես կտեսնեմ Աստծուն:

Եվան՝ նրա կինը լսեց բոլոր այս բաները և ուրախացավ, ասելով. Եթե չլիներ մեր օրհնազանցությունը, մենք երբեք սերունդ չէինք ունենա և երբեք չէինք գիտենա բարին և չարը, և փրկագնման ուրախությունը և հավերժական կյանքը, որն Աստված տալիս է բոլոր հնազանդներին: (Մովսես 5.10–11)

Փրկագնում Անկումից

Մեր ընկած, մահկանացու էության և մեր անձնական մեղքերի պատճառով, մեր միակ հույսը Հիսուս Քրիստոսն է և փրկագնման ծրագիրը:

Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով բոլորը կփրկագնվեն անկման հետևանքներից: Մենք հարություն կառնենք և ետ կբերվենք Տիրոջ ներկայության մեջ դատվելու համար: (տես 2 Նեփի 2. 5–10, Ալմա 11. 42–45, Հելաման 14.15–17)

Բացի Անկման համաշխարհային հետևանքներից փրկագնելուց, Փրկիչը կարող է փրկագնել մեզ մեր սեփական մեղքերից: Մեր ընկած վիճակում մենք մեղանչում ենք և հեռացնում մեզ Տիրոջից՝ մեզ վրա բերելով հոգևոր մահ: Ինչպես Պողոս Առաքյալն է ասել. «Որովհետև ամենքը մեղանչեցին, և Աստծո փառքիցը պակասված են»: (Հռովմայեցիս Գ.23) Եթե մենք մնանք մեր մեղքերի մեջ, չենք կարող բնակվել . . . Աստծո ներկայության մեջ: (Մովսես 6.57) Բարեբախտաբար, Քավությունը «իրագործում է ապաշխարության պայմանը» (Հելաման 14.18), մեզ համար հնարավոր դարձ-

նելով ներում ստանալը և Աստծո ներկայության մեջ հավերժ բնակվելը: Ալման սովորեցրել է. «Կար մի ժամանակահատված՝ շնորհված մարդուն, որի ընթացքում նա կարողանար ապաշխարել, հետևաբար, այս կյանքը դարձավ մի փորձնական վիճակ. մի ժամանակ պատրաստվելու համար հանդիպելու Աստծուն. մի ժամանակ՝ պատրաստվելու այն անվերջ վիճակին, որի մասին խոսեցինք, որը մեռելների հարությունից հետո է»: (Ալմա 12.24)

Երախտագիտություն Փրկչի քավող զոհաբերության համար:

Ճիշտ ինչպես մենք իսկապես ուտելիք չենք ցանկանում, մինչև չենք սովածանում, այնպես էլ մենք լիովին չենք ցանկանա հավերժական փրկություն, մինչև չգիտակցենք մեզ համար Փրկչի կարիքը: Այս գիտակցումը գալիս է, երբ անկման վերաբերյալ մեր ըմբռնումը խորանում է: Ինչպես մարգարե Լեքին է սովորեցրել. «Ողջ մարդկությունը կորած և ընկած վիճակում էր և ընդմիշտ կմնա, եթե չապավինի այս Քավիչին»: (1 Նեփի 10.6)

Լրացուցիչ հղագրումներ՝ Ծննդոց Գ, Մորմոն 9. 12–14, Մովսես 4

Տես նաև Ազատ Կամք, Հիսուս Քրիստոսի Քավություն, Սկզբնական Մեղք, Փրկության Ծրագիր, Մեղք

Անձնական հայտնություն (*Տես Հայտնություն*)

Ապաշխարություն

Ապաշխարությունն ավետարանի առաջին սկզբունքներից է : (տես Հավատո հանգանակներ 1.4) Այն կարևոր է ձեր երջանկության համար այս կյանքում և ողջ հավերժության մեջ: Ապաշխարությունն ավելին է, քան միայն գործած սխալների գիտակցումը: Այն մտքի և սրտի փոփոխություն է, որը տալիս է ձեզ թարմ տեսակետ Աստծո մասին, ձեր մասին և աշխարհի մասին: Այն ներառում է մեղքից հեռանալը և դեպի Աստված դառնալը՝ ներման համար: Այն թելադրվում է Աստծո հանդեպ ունեցած սիրուց և Նրա պատվիրաններին հնազանդվելու անկեղծ ցանկությունից:

Ապաշխարության անհրաժեշտությունը

Տերը հայտարարել է, որ «ոչ մի անմաքուր բան չի կարող ժառանգել երկնքի արքայությունը»: (Ալմա 11.37) Ձեր մեղքերը դարձնում են ձեզ անմաքուր, անարժան վերադառնալու և բնակվելու ձեր Երկնային Հոր ներկայության մեջ: Դրանք նաև տվայտանք են բերում ձեր հոգուն այս կյանքում:

Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով Երկնային Հայրն ապահովել է ձեզ համար միակ ճանապարհը ձեր մեղքերից ներում ստանալու համար (տես «Ներում» էջ 70–72): Հիսուս Քրիստոսը տարավ պատիժը ձեր մեղքերի համար, որպեսզի դուք կարողանաք ներվել, եթե անկեղծորեն ապաշխարեք: Երբ ապաշխարեք և ապավինեք Նրա փրկող շնորհին, դուք կմաքրվեք մեղքից: Նա հայտարարել է, որ

պատվիրում է մեզ ապաշխարել, ապաշխարել, որ չլինի թե զարկի մեզ իր բերանի գավազանով և իր ցասմամբ և իր բարկությամբ և մեր տանջանքները լինեն դառը, այնքան դառը, որ չգիտենք, այնքան սուր որ չգիտենք, այո, այնքան անտանելի, որ չգիտենք:

Քանզի ահա, Նա՝ Աստված տանջվել է բոլոր այս բաներից բոլորի համար, որպեսզի մենք չտանջվենք, եթե ապաշխարենք:

Բայց եթե մենք չապաշխարենք պետք է տանջվենք ճիշտ ինչպես Նա,

Տանջանք, որը ստիպեց Նրան, հենց Աստծուն, բոլորից մեծագույնին դողալ ցավից և արնահոսել յուրաքանչյուր ծակոտիից ու տանջվել և՛ մարմնով և՛ հոգով և կամեցավ չխմել այդ դառը գավաթը և ընկրկել,

Այնուամենայնիվ, փառքը լինի Հորը, և Նա ճաշակեց և ավարտեց Իր պատրաստությունները մարդկանց զավակների համար: (տես ՎԱՈ 19.15–19)

Ապաշխարությունը հետաձգելու վտանգը

Մի արդարացրեք ձեր մեղքերը կամ հետաձգեք ապաշխարությունը: Ամուղեկը նախազգուշացրել է. «Մարդկանց համար այս

կյանքն է ժամանակը նախապատրաստվելու՝ հանդիպելու Աստծուն. այո, ահա, մարդկանց համար այս կյանքի օրն է իրենց գործերը կատարելու օրը . . . ես աղերսում եմ ձեզ, որ դուք չհետաձգեք ձեր ապաշխարության օրը մինչև վերջ. քանզի կյանքի այս օրից հետո, որը տրված է մեզ՝ նախապատրաստվելու հավերժության համար, ահա, եթե մենք ճիշտ չենք օգտագործում մեր ժամանակն այս կյանքում, հետո գալիս է խավարի գիշերը, որի ժամանակ ոչ մի գործ չի կարող կատարվել»: (Ալմա 34.32–33)

Ապաշխարության տարրը

Ապաշխարությունը ցավոտ գործընթաց է, բայց այն տանում է դեպի ներում և հարատև խաղաղություն: Եսայիա մարգարեի միջոցով Տերն ասել է. «Եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պես լինեն, ձյունի պես պիտի սպիտականան. եթե նրանք որդան կարմիրի պես լինեն, ասրի պես սպիտակ պիտի դառնան» (Եսայիա Ա. 18): Այս ժամանակաշրջանի համար Տերը խոստացել է, որ նա, ով ապաշխարել է իր մեղքերից, նա ներվում է և Տերը դրանք այլևս չի հիշում: (տես ՎԿՈ 58.42) Ապաշխարությունը ներառում է հետևյալ տարրը.

Հավատք առ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը: Մեղքի ուժը մեծ է: Դրանից ազատվելու համար դուք պետք է դառնաք դեպի ձեր Երկնային Հայրը և աղոթեք հավատքով: Սատանան հավանաբար կփորձի համոզել ձեզ, որ դուք արժանի չեք աղոթելու, որ Երկնային Հայրն այնքան դժգոհ է ձեզանից, որ Նա երբեք չի լսի ձեր աղոթքները: Սա սուտ է: Ձեր Հայրը, որը Երկնքում է, միշտ պատրաստ է օգնել ձեզ, եթե դուք գաք Նրա մոտ ապաշխարող սրտով: Նա ունի զորություն ապաքինելու ձեզ և օգնելու՝ հաղթելու մեղքին:

Ապաշխարությունը հավատքի գործ է առ Հիսուս Քրիստոս՝ Նրա Քավության զորության գիտակցում: Հիշեք, որ դուք կարող եք ներվել միայն Նրա միջոցով: Երբ դուք երախտագիտությամբ ընդունեք Նրա Քավությունը և մեղքից մաքրելու Նրա զորությունը, դուք կկարողանաք «գործադրել ձեր հավատքն ապաշխարության համար»: (Ալմա 34.17)

Տրտմություն մեղքի համար: Որպեսզի ներվեք, դուք պետք է առաջինը ձեր մեջ գիտակցեք, որ մեղք եք գործել: Եթե ձգտում եք ապրել ըստ ավետարանի, այդպիսի գիտակցությունը կտանի դեպի «Աստծո ուզած կերպով տրտմության, որը «ապաշխարություն է գործում փրկության համար»: (Բ Կորնթացիս Է.10) Աստծո ուզած կերպով տրտմությունը չի գալիս մեղքի բնական հետևանքների պատճառով կամ պատժի վախի պատճառով, այլ ավելի շուտ այն գալիս է այն գիտակցությունից, որ դուք Երկնային Հոր և ձեր Փրկչի դժգոհությունն եք առաջացրել: Երբ զգում եք Աստծո ուզած կերպով տրտմություն, դուք փոխվելու անկեղծ ցանկություն եք ունենում և հոժարակամություն ենթարկվելու ամեն ձևի պահանջի՝ ներում ստանալու համար:

Խոստովանություն: «Իր հանցանքը ծածկողը չի հաջողվի, բայց խոստովանող ու թողողը ողորմություն կգտնի»: (Առակաց ԻԸ.13) Ներման համար կարևոր է հոժարակամորեն լիովին բացահայտել ձեր Երկնային Հորը այն ամենն, ինչ արել եք: Ծնկի եկեք Նրա առջև խոնարհ աղոթքով, ընդունելով ձեր մեղքերը: Խոստովանեք ձեր ամոթն ու հանցանքը և հետո աղերսեք օգնության համար:

Լուրջ օրինազանցությունները, ինչպես օրինակ մաքրաբարոյության օրենքի խախտումը կարող է դադարեցնել ձեր անդամակցությունը Եկեղեցում: Հետևաբար դուք պետք է խոստովանեք ձեր մեղքերը ինչպես Տիրոջը այնպես էլ Եկեղեցու Նրա ներկայացուցիչներին: Դա արվում է ձեր եպիսկոպոսին կամ ճյուղի նախագահին և հնարավոր է ձեր ցցի կամ միսիայի նախագահին, որոնք ծառայում են որպես հսկիչներ կամ դատավորներ Եկեղեցում: Չնայած միայն Տերը կարող է ներել մեղքեր, այս քահանայության առաջնորդները կարևոր դեր են խաղում ապաշխարության գործընթացում: Նրանց հետ եղեք լիովին ազնիվ: Եթե մասնակիորեն եք խոստովանում, նշելով ավելի փոքր սխալները, դուք չեք կարող որոշում ընդունել ավելի լուրջ չբացահայտված օրինազանցության համար: Որքան ավելի շուտ սկսեք այս գործընթացը այնքան շուտ խաղաղություն կգտնեք և ուրախություն, որը գալիս է ներման հրաշքի հետ:

Մեղքից հրաժարումը: Չնայած խոստովանությունը ապաշխարության կարևոր մաս է, դա բավական չէ: Տերն ասել է, որ սրանով դուք կարող եք իմանալ թե մարդն ապաշխարում է իր մեղքերից, եթե նա խոստովանի և թողնի դրանք: (ՎԱՌ 58.43)

Պահպանեք անբեկանելի, անսասան վճռականություն, որ դուք երբեք չեք կրկնի օրինազանցությունը: Երբ դուք պահում եք այս պարտավորությունը, դուք երբեք այլևս չեք զգա այդ մեղքի ցավը:

Անմիջապես փախուստի դիմեք վտանգավոր իրավիճակներից: Եթե որոշակի իրավիճակ ստիպում է ձեզ մեղանչել, հեռացեք: Դուք չեք կարող հապաղել գայթակղության մեջ և ակնկալել, որ կհաղթեք մեղքին:

Հատուցում: Դուք պետք է հատուցեք որքան հնարավոր է բոլոր բաների համար, որ դուք վնաս եք հասցրել ձեր գործողություններով, լինի դա որևէ մեկի ունեցվածքը, թե որևէ մեկի բարի համբավը: Հոժարակամ հատուցումը ցույց է տալիս Տիրոջը. որ դուք կանեք այն ամենը, ինչ կարող եք, ապաշխարելու համար:

Արդար ապրելաձև: Բավական չէ պարզապես փորձել դիմադրել չարին կամ դատարկել ձեր կյանքը մեղքից: Դուք պետք է լցնեք ձեր կյանքը արդարությամբ և զբաղվեք գործերով, որոնք բերում են հոգևոր ուժ: Խորասուզվեք սուրբ գրքերի մեջ: Ամեն օր աղոթեք, որ Տերը ձեր սեփական ունակությունից վեր ուժ տա ձեզ: Երբեմն ծոմ պահեք հատուկ օրհնությունների համար:

Լիակատար հնազանդությունը բերում է ավետարանի ողջ զորությունը ձեր կյանք՝ ներառյալ մեծ ուժ ձեր թուլությունները հաղթահարելու համար: Այս հնազանդությունը ներառում է գործողություններ, որոնք սկզբում դուք գուցե չեք համարում ապաշխարության մի մաս, ինչպես օրինակ՝ ժողովներ հաճախելը, տասանորդ վճարելը, ծառայություն մատուցելը և ուրիշներին ներելը: Տերը խոստացել է, որ նա, ով ապաշխարում է և կատարում Տիրոջ պատվիրանները պիտի ներվի: (տես ՎԱՌ 1.32)

Լրացուցիչ հղագրումներ՝ Ղուկաս ԺԵ.11–32, 2Նեփի 9.19–24, Մոսիա 4.1–3, 10–13, 26.30–31, ՎԱՌ 18.10–16

Տես նաև Հիսուս Քրիստոսի Քավություն, Մկրտություն, Եկեղեցու Կարգապահական Խորհուրդներ, Հավատք, Ներում, Փրկության Ծրագիր, Մեղք, Գայթակղություն

Առաջին Նախագահություն (*Տես* Եկեղեցու Կառավարում, Մարգարեներ)

Առաքյալ (*Տես* Եկեղեցու Կառավարում, Մարգարեներ)

Աստվածագլուխ

Հավատո առաջին հանգանակը նշում է. «Մենք հավատում ենք Աստծուն՝ Հավերժական Հորը և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին և Սուրբ Հոգուն»: Այս երեք էակները կազմում են Աստվածագլուխը: Նրանք նախագահում են ողջ այս աշխարհի և մեր Երկնային Հոր բոլոր մյուս արարածների վրա:

Աստվածայնության ճշմարիտ վարդապետությունը կորավ այն ուրացության ժամանակ, որը հաջորդեց Փրկչի երկրային ծառայությանը և Նրա Առաքյալների մահվանը: Այս վարդապետությունը սկսվեց վերականգնվել, երբ 14- ամյա Ջոզեֆ Սմիթը ստացավ իր Առաջին Տեսիլքը: (տես Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.17) Առաջին տեսիլքի մասին մարգարեի պատմությունից և նրա այլ ուսմունքներից, մենք իմանում ենք, որ Աստվածայնության անդամները երեք առանձին էակներ են: Հայրը և Որդին մսից և ոսկորից շոշափելի մարմիններ են, իսկ Սուրբ Հոգին հոգևոր անձ է: (տես ՎԿՈ 130.22)

Չնայած Աստվածայնության անդամները որոշակի էակներ են որոշակի դերերով, նրանք մեկ են նպատակով և վարդապետությամբ: Նրանք կատարելապես միասնական են Երկնային Հոր փրկության աստվածային ծրագիրն իրականացնելիս:

Լրացուցիչ հղագրումներ՝ Մատթեոս Գ.13–17, Հովհաննես ԺԴ. 6–10, ԺԷ.6–23, Գործք Է.55–56, 2 Նեփի 31.18, Մորմոն 7. 5–7, ՎԿՈ 76.20–24

Տես նաև Հայր Աստված, Սուրբ Հոգի, Հիսուս Քրիստոս

Աստվածաշունչ (*Տես* Սուրբ Գրքեր)

Ավետարան

Ավետարանը Երկնային Հոր երջանկության ծրագիրն է: Ավետարանի կենտրոնական վարդապետությունը Հիսուս Քրիստոսի Քավությունն է:

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է. «Ավետարանի հիմնական արարողություններն են՝ առաջինը՝ Հավատք առ Հիսուս Քրիստոս, երկրորդ՝ Ապաշխարություն, երրորդ՝ ընկղմամբ Մկրտություն մեղքերի թողության համար, չորրորդը՝ Ձեռնադրմամբ Սուրբ Հոգու պարգևում» (Հավատո Հանգանակներ 1.4): Իր լրիվությամբ ավետարանը ներառում է բոլոր վարդապետությունները, սկզբունքները, օրենքները, արարողությունները և ուխտերը, որոնք անհրաժեշտ են մեզ սելեստիալ արքայությունում վեհացման համար: Փրկիչը խոստացել է, որ եթե մենք համբերենք մինչև վերջ, հավատարմորեն ապրելով ավետարանով, Նա մեզ անմեղ կդարձնի Հոր առջև Վերջին Դատաստանի ժամանակ: (տես 3 Նեփի 27.16)

Ավետարանի լրիվությունը քարոզվել է բոլոր դարերում, երբ Աստծո զավակները պատրաստ են եղել ընդունել այն: Վերջին օրերում կամ ժամանակների լրության ժամանակահատվածում, ավետարանը վերականգվեց Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից:

Լրացուցիչ հղագրումներ՝ Հռովմայեցիս Ա.16–17, 3 Նեփի 27. 13–22, ՎԱՌ 11.24, 39.5–6

Տես նաև Հիսուս Քրիստոսի Քավություն, Մկրտություն, Հավատք, Սուրբ Հոգի, Հիսուս Քրիստոս, Փրկության Ծրագիր, Ապաշխարություն, Ավետարանի Վերականգնում

Ավետարանի վերականգնում

Երբ Հիսուս Քրիստոսը երկրի վրա էր, Նա հիմնադրեց Իր Եկեղեցին Իր հետևորդների մեջ: Նրա Խաչելությունից և Նրա Առաքյալների մահից հետո, ավետարանի լրիվությունը վերցվեց երկրի վրայից՝ համատարած ուրացության պատճառով: (տես

«Ուրացություն» էջ 13–14) Բազմաթիվ տղամարդիկ և կանայք որոնում էին ավետարանի ճշմարտության լրիվությունը Մեծ Ուրացության դարերի ընթացքում, բայց նրանք չկարողացան գտնել այն: Չնայած շատերը անկեղծորեն քարոզում էին Փրկչի և Նրա ուսմունքների մասին, ոչ մեկը չուներ ճշմարտության լրիվությունը կամ Աստծո կողմից քահանայության իշխանությունը:

Մեծ Ուրացությունը հոգևոր խավարի մի ժամանակաշրջան էր, բայց մենք այժմ ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ կարող ենք ճաշակել «Քրիստոսի փառավոր ավետարանի լուսավորությունը»: (Բ Կորնթացիս Դ.4, տես նաև ՎԿՈ 45.28) Ավետարանի լրիվությունը վերականգվել է և Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին կրկին երկրի վրա է: Ոչ մի ուրիշ կազմակերպություն չի կարող համեմատվել նրա հետ: Այն վերափոխության արդյունք չէ՝ բարեմիտ տղամարդկանց և կանանց տքնաջան աշխատանքով՝անելով ամեն ինչ փոփոխություն առաջ բերելու համար: Այն Հիսուս Քրիստոսի կողմից հիմնադրված Եկեղեցու վերականգնումն է: Այն Երկնային Հոր և Նրա Սիրելի Որդու գործն է:

Որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ, դուք կարող եք օրհնություններ ստանալ, որոնք երկրի վրայից բացակայում էին մոտավորապես 2,000 տարի: Մկրտության և հաստատման արարողությունների միջոցով, դուք կարող եք ձեր մեղքերին թողություն ստանալ և վայելել Սուրբ Հոգու մշտական ընկերակցությունը: Դուք կարող եք ապրել ըստ ավետարանի՝ նրա լրիվությամբ և պարզությամբ: Դուք կարող եք ձեռք բերել հասկացողություն Աստվածագլխի էության, Հիսուս Քրիստոսի Քավության, երկրի վրա կյանքի նպատակի և մահից հետո կյանքի իրական լինելու վերաբերյալ: Դուք արտոնություն ունեք առաջնորդվել ապրող մարգարեների կողմից, ովքեր սովորեցնում են Աստծո կամքը մեր օրերում: Տաճարային արարողությունները ձեզ հնարավորություն են տալիս ստանալ առաջնորդություն և խաղաղություն, նախապատրաստվել հավերժական կյանքի, կնքվել ձեր ընտանիքի հետ հավերժության համար և ապահովել փրկարար արարողություններ ձեր մահացած նախնիների համար:

Վերականգման իրադարձություններ

Հետևյալ ուրվագիծը ընդհանրացնում է մի քանի կարևոր իրադարձություններ ավետարանի վերականգման և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հիմնադրման վերաբերյալ, որը Տերը հայտարարել է, որ միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցին է ողջ աշխարհի երեսին: (տես ՎԵՈՒ 1.30)

1820թ. վաղ գարուն: Որոնելով Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին 14-ամյա Ջոզեֆ Սմիթն աղոթեց իր տան մոտ գտնվող ծառերի մի պուրակում Պալմիրա, Նյու-Յորքում: Ի պատասխան նրա խոնարհ աղոթքի Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը այցելեցին նրան և ասացին, որ նա այդ ժամանակ չպետք է միանա երկրի վրա գտնվող որևէ եկեղեցու: (Տես Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.11–19) Եկեղեցում մենք այդ իրադարձությունը կոչում ենք Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլք:

Սեպտեմբեր 21–22, 1823: Ջոզեֆ Սմիթին այցելեց Մորոնի անունով մի հրեշտակ: Մորոնին մարգարեացավ գալիք իրադարձությունների մասին և պատմեց Ջոզեֆին Մորմոնի Գրքի հիշատակարանի մասին, որը գրված էր ոսկե թիթեղների վրա: Հրեշտակը թույլ տվեց Ջոզեֆին տեսնել ոսկե թիթեղները, որոնք թաղված էին Կումորա բլրի մոտակայքում: (Տես Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.27–53)

Սեպտեմբեր 22, 1827: Նախորդ չորս տարիների ընթացքում յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 22-ին Մորոնիի հետ հանդիպելուց հետո, Ջոզեֆ Սմիթը Կումորա բլրում Մորոնիից ստացավ ոսկե թիթեղները: (Տես Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.53, 59)

1829թ. մայիսի 15: Ոսկե թիթեղների թարգմանության վրա աշխատելիս՝ կարդալով մեղքերի թողության համար մկրտության մասին, Ջոզեֆ Սմիթը և նրա գրագիրը՝ Օլիվեր Քաուդերին, գնացին մի մեկուսի տարածք՝ հարցնելու

Տիրոջից այդ հարցի վերաբերյալ: Պենսիլվանիայի Հարմոնիին մոտիկ գտնվող Սասքուեհանա գետի մոտ նրանք ստացան իրենց աղոթքի պատասխանը: Հովհաննես Մկրտիչը՝ հարություն առած անձնավորություն, եկավ նրանց մոտ «որպես սուրհանդակ երկնքից . . . լույսի ամպի մեջ»: Նա շնորհեց նրանց Ահարոնյան քահանայությունը: Հետո հնազանդվելով նրա հրահանգներին, Ջոզեֆը և Օլիվերը մկրտեցին և կարգեցին միմյանց Ահարոնյան Քահանայությամբ: (Տես Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.68–72, տես նաև ՎԿՈ 13)

1829թ. մայիս: Հնադարյան Առաքյալներ Պետրոսը, Հակոբոսը, և Հովհաննեսը շնորհեցին Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին Մելքիսեդեկյան Քահանայություն: (Տես ՎԿՈ 128.20)

1829թ. հունիս: Առաջնորդվելով «Աստծո պարգևով և զորությամբ» (ՎԿՈ 135.3), Մարգարե Ջոզեֆ Սմիթն ավարտեց Մորմոնի Գրքի թարգմանությունը:

1830թ. մարտի 26: Մորմոնի Գրքի առաջին տպագրված օրինակները մատչելի դարձան Պալմիրայում, Նյու Յորք:

1830թ. ապրիլի 6: Եկեղեցին կազմակերպվեց Ֆայեթ Թաունշիփում, Նյու Յորք, սկիզբ առնելով վեց անդամներով:

1836թ. մարտի 27: Նվիրագործվեց Կիրթլանդի Տաճարը՝ այս ժամանակաշրջանում առաջին տաճարը: Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասաց նվիրագործման աղոթքը, որը նրան հայտնությամբ էր տրվել: (Տես ՎԿՈ 109)

1836թ. ապրիլ: Փրկիչը հայտնվեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին Կիրթլենդի Տաճարում: Մովսեսը, Եղիասը և Եղիան ևս հայտնվեցին և Ջոզեֆին ու Օլիվերին տվեցին քահանայության բանալիները: Եղիան բերեց

> կնքող զորության բանալիները, որոնք հնարավոր են դարձնում ընտանիքներին կնքվել միասին հավերժության համար: (Տես ՎԱՈ 110)

Եկեղեցու ճակատագիրը

Հին Կտակարանի մարգարե Դանիելը մարգարեացել է, որ Աստված «մեկ թագավորություն է վեր կացնելու», որը «հավիտյանս չի ավերվի» և «կմնա հավիտյանս» (Դանիել Բ.44): Այս մարգարեությունն անելիս, նա խոսել է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մասին՝ այսօր երկրի վրա Աստծո թագավորության մասին: Այն օրից սկսած, երբ Եկեղեցին կազմավորվեց վեց անդամներով, այն աճել է և ծաղկել և այն կշարունակի բարգավաճել մինչև որ «լցնի ողջ երկիրը»: (Դանիել Բ.35, տես նաև ՎԱՈ 65.2) Ամեն տարի հարյուր հազարավոր մարդիկ են մկրտվում: Մորմոնի Գիրքը թարգմանվում է բազմաթիվ լեզուներով: Տաճարներ են կառուցվում ողջ աշխարհով մեկ: Հիսուս Քրիստոսի ղեկավարությամբ ապրող մարգարեները կառաջնորդեն Եկեղեցու բարգավաճումը մինչև երկիրը կնախապատրաստվի Փրկչի Երկրորդ Գալուստին:

Մարգարե Ջոզեֆ Սմիթը խոսել է Վերականգման օրհնությունների մասին. «Այժմ ի՞նչ ենք լսում մեր ստացած ավետարանում: Ուրախության ձայն: Ողորմածության ձայն երկնքից, և ճշմարտության ձայն երկրից, ուրախ լուրեր մահացածների համար, ուրախ ձայն ապրողների և մահացածների համար, մեծ ցնծության ուրախ լուրեր»: (ՎԱՈ 128.19)

Լրացուցիչ հղագրումներ՝ Եսայիա Բ.1–3, ԻԹ.13–14, Գործք Գ. 19–21, Հայտնություն ԺԴ. 6–7, 2 Նեփի 3.3–15, ՎԱՈ 128.19–21, 133.36–39, 57–58, Ջոզեֆ Սմիթ– Պատմություն

Տես նաև Ուրացություն, Ջոզեֆ Սմիթ, Հայտնություն, Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստ

Ավետարանի ուսուցումը

Տերը հայտարարել է. «Ես պատվիրան եմ տալիս ձեզ, որ դուք ուսուցանեք միմյանց արքայության վարդապետությունը: Սովորեցրեք ջանասիրաբար և իմ շնորհը կուղեկցի ձեզ, որպեսզի դուք ավելի կատարելապես հրահանգավորվեք տեսության, սկզբունքի, վարդապետության, ավետարանի օրենքի, բոլոր բաների մեջ, որոնք վերաբերվում են Աստծո արքայությանը, որոնք կարևոր են ձեզ համար հասկանալ»: (ՎԱՈՒ 88.77–78)

Տալով այս պատվիրանը, Տերը տալիս է մեզ սրբազան պատասխանատվություն: Նա նաև տալիս է մեզ անհամար հնարավորություններ իմաստալի ծառայության համար: Քիչ փորձառություններ կարելի է համեմատել, ավետարանն ուսուցանելու և նրանով ապրելու ուրիշներին օգնելու ուրախության հետ:

Ուսուցանելու պատվիրանը վերաբերվում է ձեզ, եթե նույնիսկ ներկայումս դուք ուսուցչի պաշտոնական կոչում չունեք: Դուք ուսուցանելու հնարավորություններ ունեք որպես ձեր ընտանիքի անդամ, որպես տնային ուսուցիչ և նույնիսկ որպես աշխատակից, հարևան և ընկեր: Երբեմն դուք ուսուցանում եք խոսքերի միջոցով, որոնք նախապատրաստել եք ասելու համար: Երբեմն դուք կարող եք կարճ, չծրագրավորված պահերի առիթից օգտվել՝ կիսվելով ավետարանական ճշմարտություններով: Շատ հաճախ դուք սովորեցնում եք օրինակով:

Ուսուցանելով ինչպես Փրկիչն է ուսուցանել

Ավետարանը սովորեցնելու ձեր ջանքերում նայեք Հիսուս Քրիստոսին որպես ձեզ օրինակ: Ուսումնասիրեք պատմություններ Նրա մահկանացու կյանքի ծառայությունից և որոնեք ուղիներ սովորեցնելու, ինչպես Նա էր սովորեցնում: Նա անկեղծ սեր և սրտացավություն էր դրսևորում նրանց հանդեպ, ում ծառայում էր: Նա զորացնում էր մարդկանց անհատապես՝ սովորեցնելով ավետարանի սկզբունքներն այնպես, որպեսզի կարողանար օգնել նրանց իրենց առանձնահատուկ կարիքների մեջ: Նա ոմանց մեջ ցանկություն էր արթնացնում հասկանալ և ապրել ավետարանով:

Երբեմն Նա հարցեր էր տալիս, որոնք օգնում էին նրանց կիրառել այն, ինչ որ իրենք սովորել էին: Նա սովորեցնում էր ավետարանի փրկարար ճշմարտությունները՝ օգնելով Իր ունկնդիրներին հասկանալ այն, ինչն անհրաժեշտ էր նրանց գիտենալ, անել և լինել, որպեսզի ստանային հավերժական կյանքի պարգևը:

Երբ հետևում եք Փրկչի օրինակին, ձեր ուսուցումը կսնուցի և կբարձրացնի ուրիշներին, կկառուցի նրանց հավատքը և կտա նրանց վստահություն դիմակայելու կյանքի դժվարություններին: Այն կխրախուսի նրանց թողնել մեղքը և հնազանդվել պատվիրաններին: Այն կօգնի նրանց գալ դեպի Քրիստոսը և կենալ Նրա սիրո մեջ:

Սովորեցնել Հոգով

Տերն ասել է, որ Հոգին կտրվի մեզ հավատքի աղոթքով և եթե չստանանք Հոգին, մենք չպետք է սովորեցնենք: (ՎԿՈ 42.14) Հոգին կամ Սուրբ Հոգին Աստվածագլխի անդամ է: Հոգու նպատակներից մեկը «ճշմարտության մասին հայտնելն է . . . բոլոր բաների վերաբերյալ»: (Մորոնի 10.4–5) Միայն Հոգու ազդեցության միջոցով կարող է ավետարանի ուսուցումը խրատող և ոգեշնչող լինել:

Ձեր արտոնությունը որպես ավետարանի ուսուցիչ գործիք լինելն է, որի միջոցով Սուրբ Հոգին կարող է սովորեցնել, վկայել, սփոփել և ոգեշնչել: Ինչպես մարգարե Նեփիին է սովորեցրել. «Երբ մարդ խոսում է Սուրբ Հոգու զորությամբ, Սուրբ Հոգու զորությունը տանում է այն, մինչև մարդկանց զավակների սրտերը»: (2 Նեփի 33.1)

Եթե դուք պատրաստվեք հոգեպես, Սուրբ Հոգին կօգնի ձեզ իմանալ ինչ անել և ասել ձեր ուսուցման ժամանակ: Դուք կարող եք պատրաստվել հաճախ աղոթելով, ուսումնասիրելով սուրբ գրքերը, ապրելով ըստ ավետարանի և լինելով խոնարհ:

Ուսուցման մեթոդներ

Ձեր ուսուցումը ամենաարդյունավետը կլինի, երբ դուք օգտագործեք համապատասխան մեթոդների բազմազանություն: Օրինակ՝ դուք կարող եք կիսվել պատմություններով և օրինակներով

մարդկանց ուշադրությունը կենտրոնացնելով և և ցույց տալով, թե ինչպես են ավետարանական սկզբունքները կիրառվում ամենօրյա կյանքում: Դուք կարող եք օգտագործել նկարներ և առարկաներ մեծացնելու մյուսների ըմբռնումը սուրբ գրքերի պատմությունների և ավետարանական սկզբունքների վերաբերյալ: Երաժշտության միջոցով դուք և նրանք, ում դուք սովորեցնում եք, կարող եք հրավիրել Սուրբ Հոգու ազդեցությունը և արտահայտել զգացումներ, որոնք այլապես դժվար կլիներ արտահայտել: Դուք կարող եք տալ հարցեր, որոնք առաջացնում են խորիմաստ ուսուցում ու քննարկում և որոնք տանում են դեպի համապատասխան անձնական փորձառություններով կիսվելուն: Պարզ միջոցառումներով դուք կարող եք օգնել սովորողներին կենտրոնացնել իրենց ուշադրությունը:

Երբ մտածում եք ուսուցողական հատուկ մեթոդ օգտագործելու մասին, տվեք հետևյալ հարցերը. Այս մեթոդը կիրավիրի՞ Հոգու ազդեցությունը: Այն արդյո՞ք համապատասխանում է այն սկզբունքների սրբազանությանը, որոնք ես ուսուցանում եմ: Այն կխրատի՞ և կուժեղացնի՞ նրանց, ում սովորեցնում եմ:

Հիշեք, որ որպես ավետարանի ուսուցիչ, դուք ներկայացնում եք Տիրոջը: Ուշադիր եղեք, որ այն բոլորը, որ դուք անում եք և ասում, լինի ակնածալի և Նրա կամքի համաձայն:

Ավետարանի ուսուցման վերաբերյալ լրացուցիչ առաջարկների համար կարող եք օգտվել՝ *Teaching, No Greater Call* (36123); the *Teaching Guidebook* (34595); և "Gospel Teaching and Leadership," section 16 of the *Church Handbook of Instructions, Book 2: Priesthood and Auxiliary Leaders* (35903):

Լրացուցիչ հղագրումներ՝ Մոսիա 18.19, Ալմա 1.26, 17.2–3, 31.5, ՎԱՈ11.21

Արարչագործություն

Երկնային Հոր ղեկավարության ներքո Հիսուս Քրիստոսը ստեղծեց երկինքները և երկիրը: (տես Մոսիա 3.8, Մովսես 2.1) Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով հայտնի դարձված սուրբ գրություններից մենք իմանում ենք, որ Արարման աշխատանքի ժամա-

նակ, Տերը ձևավորել էր էլեմենտներ, որոնք արդեն գոյություն ունեին: (տես Աբրահամ 3.24) Նա չստեղծեց աշխարհը «ոչինչից» ինչպես հավատում են որոշ մարդիկ:

Սուրբ գրքերը սովորեցնում են նաև, որ Ադամը «բոլոր մարդկանցից առաջին մարդն էր»: (Մովսես 1. 34) Աստված ստեղծեց Ադամին և Եվային Իր իսկ և Իր Միածնի պատկերով: (տես Մովսես 2. 26–27):

Երկնային Հոր փրկության ծրագրում Արարչագործությունն անբաժանելի մաս է կազմում: Այն մեզանից յուրաքանչյուրիս հնարավորություն է տալիս գալ երկիր, որտեղ մենք ստանում ենք ֆիզիկական մարմիններ և գործադրում ենք մեր ազատ կամքը: Աստվածների նախաերկրային Խորհրդում արվեց հետևյալ հայտարարությունը. «Մենք կգնանք ներքև, քանզի այնտեղ տարածություն կա, և մենք կվերցնենք այս նյութերից, և մենք կստեղծենք երկիր, որի վրա նրանք կկարողանան բնակվել, և սրանով կստուգենք նրանց, տեսնելու, թե արդյոք նրանք կկատարեն բոլոր բաները, որոնք Տերը՝ նրանց Աստվածը, կպատվիրի նրանց»: (Աբրահամ 3. 24–25)

Դուք Աստծո հոգևոր զավակն եք և ձեր մարմինը ստեղծվել է Նրա պատկերով: Որպեսզի ցույց տաք ձեր երախտագիտությունն այս օրհնությունների համար, դուք կարող եք հոգ տանել ձեր մարմնի մասին՝ հնազանդվելով Իմաստության Խոսքին և մյուս պատվիրաններին, որոնք կապված են ձեր հոգևոր և ֆիզիկական առողջության հետ: (տես ՎևՈւ 89, տես նաև ՎևՈւ 88.124) Դուք կարող եք նաև հարգել մյուս մարդկանց որպես Աստծո զավակների:

Որպես արարչագործության բոլոր գեղեցկություններից օգտվող անձ, դուք կարող եք հոգ տանել երկրի մասին և օգնեք պահպանելու այն՝ ապագա սերունդների համար:

Լրացուցիչ հղագրումներ՝ Ծննդոց Ա.2, Եբրայեցիս Ա.1–2, 1 Նեփի 17.36, ՎևՈւ 38.1–3, 59.16–20, Մովսես 1–3, Աբրահամ 4–5

Տես նաև Հայր Աստված, Հիսուս Քրիստոս, Փրկության Ծրագիր

Արարողություններ

Եկեղեցում արարողությունը սրբազան, կանոնակարգված գործողություն է, որը կատարվում է քահանայության իշխանությամբ: Որոշ արարողություններ կարևոր են մեր վեհացման համար: Այս արարողությունները կոչվում են փրկարար արարողություններ: Դրանք ներառում են՝ մկրտությունը, հաստատումը, Մելքիսեդեկյան Քահանայության կարգում (տղամարդկանց համար), տաճարային օժտում, և ամուսնության կնքում: Այս արարողություններից յուրաքանչյուրի միջոցով մենք Տիրոջ հետ մտնում ենք հանդիսավոր ուխտերի մեջ:

Այլ արարողություններ, ինչպիսիք են երեխաների անվանակոչությունը և օրհնումը, յուղի սրբագործումը և սպասավորումը հիվանդներին ու տառապյալներին, նույնպես կատարվում են քահանայության իշխանությամբ: Չնայած դրանք էական չեն մեր փրկության համար, սակայն կարևոր են մեր հանգստության, առաջնորդության և խրախուսման համար:

Արարողություններն ու ուխտերն օգնում են մեզ հիշել, թե ով ենք մենք: Դրանք հիշեցնում են մեզ Աստծո հանդեպ մեր պարտականության մասին: Տերը դրանք տվել է՝ օգնելու մեզ դեպի Իրեն գալ և հավերժական կյանք ստանալ: Երբ մենք հարգում ենք դրանք, Նա զորացնում է մեզ:

Դուք կարող եք ստանալ քահանայության արարողություններին մասնակցելու բազմաթիվ հնարավորություններ: Երբ այդպիսի հնարավորություն ունենաք, արեք ամեն ինչ նախապատրաստվելու համար, անկախ նրանից դուք արարողության կատարողն եք, թե այն ստացողը: Դուք կարող եք նախապատրաստվել աղոթելով, ծոմ պահելով, խորհրդակցելով քահանայության առաջնորդների հետ և ուսումնասիրելով սուրբ գրքերը և վերջին օրերի մարգարեների խոսքերը: Եթե դուք քահանայություն կրող եք, միշտ պետք է հոգեպես պատրաստ լինեք արարողություն կատարելու համար: Ապրեք մաքուր, արժանի կյանքով և ձգտեք ստանալ Սուրբ Հոգու մշտական ընկերակցությունը:

Լրացուցիչ հղագրումներ՝ ՎԿՈ 84.19–21, Հավատո հանգանակներ 1.3–5

Տես նաև Ուխտեր, Ավետարան, Քահանայություն

Արդարադատություն

Արդարադատությունը չփոփոխվող օրենք է, որը գործողությունների համար հետևանքներ է բերում: Արդարադատության օրենքի շնորհիվ դուք օրհնություններ եք ստանում, երբ հնազանդվում եք Աստծո պատվիրաններին: (տես ՎԱՈ 130.21–22) Արդարադատության օրենքը պահանջում է նաև, որ տույժ վճարվի յուրաքանչյուր մեղքի համար, որ դուք գործում եք: Այն պահանջում է, որ ոչ մի անմաքուր բան թույլ չտրվի բնակվելու Աստծո հետ: (տես 1 Նեփի 10.21)

Երբ Փրկիչն իրականացրեց Քավությունը, Նա վերցրեց մեր մեղքերն Իր վրա: Նա կարողացավ բավարարել օրենքի պահանջները (2 Նեփի 2.7) որովհետև Նա ենթարկվեց տույժի, որն օրենքը պահանջում էր մեր մեղքերի համար: Այդպես անելով Նա «բավարարեց արդարադատության պահանջները» և ողորմածություն հասցրեց բոլորին, ովքեր ապաշխարում են և հետևում Նրան: (տես Մոսիա 15.9, Ալմա 34.14–16) Քանի որ Նա վճարել է գինը ձեր մեղքերի համար, դուք ստիպված չեք լինի կրել այդ պատիժը, եթե ապաշխարեք: (տես ՎԱՈ 19.15–20)

Լրացուցիչ հղագրումներ՝ 2 Նեփի 9.26, Ալմա 42

Տես նաև Հիսուս Քրիստոսի Քավություն, Ողորմածություն, Ապաշխարություն

Արհեստական վիժում

Այսօրվա հասարակության մեջ արհեստական վիժումը դարձել է սովորական երևույթ, որն արդարացվում է խաբուսիկ պատճառաբանություններով: Եթե դուք դիմակայում եք այս խնդրի հետ առնչվող հարցերի, կարող եք ապահով լինել՝ հետևելով Տիրոջ հայտնած կամքին: Վերջին օրերի մարգարեները մերժել են արհեստական վիժումը՝ վկայակոչելով Տիրոջ հայտարարությունը, որ մենք չպետք է . . . սպանենք, ոչ էլ դրա նման որևէ մի բան անենք: (տես ՎԱՈ 59.60) Այդ հարցի վերաբերյալ նրանց խորհուրդը հստակ է: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները չպետք է համաձայնվեն, կատարեն, խրա-

խուսեն, վճարեն կամ կազմակերպեն արհեստական վիժում: Եթե դուք որևէ կերպ խրախուսեք արհեստական վիժումը, դուք Եկեղեցու կողմից կենթարկվեք կարգապահական տույժի:

Եկեղեցու առաջնորդներն ասել են, որ որոշ բացառիկ դեպքերում արհեստական վիժումը կարելի է արդարացնել, ինչպես օրինակ, երբ հղիությունն արյունապղծության կամ բռնաբարության արդյունք է, երբ մոր կյանքը կամ առողջությունը, ըստ հեղինակավոր բժշկական մասնագետի, համարվում է լուրջ վտանգի տակ, կամ երբ հեղինակավոր բժշկական մասնագետի կողմից հայտնաբերվում է, որ սաղմը լուրջ թերություններ ունի, որոնք թույլ չեն տա, որ երեխան ծնվելուց հետո ապրի: Բայց նույնիսկ այս հանգամանքները ինքնաբերաբար չեն արդարացնում արհեստական վիժումը: Նրանք, ովքեր այսպիսի հանգամանքներում են հայտնվել, պետք է մտածեն արհեստական վիժման մասին միայն Եկեղեցու իրենց տեղական ղեկավարի հետ խորհրդակցելուց և անկեղծ աղոթքով հաստատում ստանալուց հետո:

Երբ երեխան հղիացվել է ամուսնությունից դուրս, լավագույն տարբերակը երեխայի մոր և հոր համար ամուսնանալն է և աշխատելը հաստատել հավերժական ընտանեկան հարաբերություններ: Եթե հաջող ամուսնության հավանականությունը մեծ չէ, նրանք պետք է երեխային որդեգրման տան, նախընտրելի է ՎՕՍ Ընտանեկան Ծառայությունների միջոցով: (տես «Որդեգրում» էջ 7–8)

Բարեկեցության ծրագիր

Եկեղեցու յուրաքանչյուր անդամ ունի բարեկեցության երկու հիմնական պարտականություն՝ դառնալ սեփական ուժերին վստահող և հոգ տանել աղքատներին և կարիքավորներին:

Ծնողները սրբազան պարտականություն ունեն հոգ տանել իրենց զավակների ֆիզիկական և հոգևոր բարեկեցության համար: Երբ երեխաները մեծանում են, նրանք պատասխանատու են դառնում իրենց սեփական բարեկեցության համար: Ծնողները պետք է նրանց սովորեցնեն բարեկեցության հիմնական սկզբունքները, օգնելով նրանց դառնալ իրենց սեփական ուժերին վստահող և

ապագայում ապահովել իրենց սեփական ընտանիքներին: Ծնողները կարող են նաև հնարավորություններ ընձեռել երեխաներին օգնելու աղքատներին ու հոգ տանելու կարիքավորների համար:

Եթե դուք Եկեղեցու չափահաս անդամ եք, հետևյալ խորհուրդը ամբողջովին և ուղղակիորեն ձեզ է վերաբերում: Եթե դուք երիտասարդ տղամարդ եք կամ կին, այս խորհուրդը մեծամասամբ ձեզ էլ է վերաբերում, եթե նույնիսկ դուք դեռևս մեծ մասամբ կախված եք ձեր ծնողներից:

Դառնալով իրենց սեփական ուժերին վստահող

Ձեր սոցիալական, զգացմունքային, հոգևոր, ֆիզիկական և տնտեսական բարեկեցությունը առաջինը հիմնված է ձեր, երկրորդը ձեր ընտանիքի և երրորդը Եկեղեցու վրա: Տիրոջ ոգեշնչման ներքո և ձեր սեփական ջանքերով դուք պետք է ապահովեք ձեզ և ձեր ընտանիքին կյանքի հոգևոր և նյութական անհրաժեշտ միջոցներով:

Դուք ավելի լավ եք կարողանում հոգ տանել ձեզ և ձեր ընտանիքի համար, երբ վստահում եք ձեր սեփական ուժերին: Դուք պատրաստ եք լինում դիմանալ ճախորդ օրերին առանց ուրիշներից կախվածության մեջ ընկնելու:

Դուք կարող եք դառնալ սեփական ուժերին վստահող, (1) օգտվելով կրթական հնարավորությունների առիթներից, (2) կիրառելով սնուցման և հիգիենայի խելամիտ սկզբունքներ, (3) նախապատրաստվելով և ձեռք բերելով հարմար աշխատանք, (4) պահեստավորելով սննդամթերքի պաշարներ և հագուստեղեն, որքան որ օրենքը թույլ է տալիս, (5) իմաստուն օգտագործելով ձեր ռեսուրսները, ներառյալ տասանորդ և ծոմապահության նվիրատվություններ վճարելը և պարտքից խուսափելը, և (6) զարգացնելով հոգևոր, զգացմունքային, և սոցիալական ուժ:

Որպեսզի դառնաք ձեր սեփական ուժերին վստահող, դուք պետք է կամենաք աշխատել: Տերը պատվիրել է մեզ աշխատել: (տես Ծննդոց Գ.19, ՎԿՈ 42.42) Պատվավոր աշխատանքը երջանկության, ինքնագնահատման և բարգավաճման հիմնական աղբյուրն է:

Եթե դուք ժամանակավորապես անկարող եք բավարարել ձեր հիմնական կարիքները ձեր իսկ ջանքերով կամ ընտանիքի անդամների աջակցությամբ, Եկեղեցին կարող է օգնել ձեզ: Այդ իրավիճակներում Եկեղեցին հաճախ ապահովում է կենսական միջոցներով՝ օգնելու ձեզ և ձեր ընտանիքին կրկին ինքնապահովող դառնալու համար:

Հոգ տանելով աղքատների և կարիքավորների համար

Տերը միշտ պատվիրել է Իր ժողովրդին հոգ տանել աղքատների ու կարիքավորների համար: Նա ասել է, որ մենք պետք է այցելենք աղքատներին և կարիքավորներին և հոգաք նրանց կարիքները: (ՎԱՌ 44.6) Նա նաև պատվիրել է, որ բոլոր բաներում հիշենք աղքատներին և կարիքավորներին, հիվանդներին ու չարչարվածներին, քանզի ովքեր չեն անում այս բաները, նրանք Իր հետևորդները չեն: (ՎԱՌ 52.40)

Դուք կարող եք հոգ տանել աղքատների ու կարիքավորների համար բազմաթիվ ուղիներով: Կարևոր ուղիներից մեկը ծոմապահությունը և ծոմի նվիրատվություններ տալն է, որը եպիսկոպոսը կամ ճյուղի նախագահն օգտագործում է՝ օգնելու ծխի կամ ճյուղի անդամներին, ովքեր աղքատության, հիվանդության կամ այլ դժվարությունների մեջ են գտնվում: Դուք նաև կարող եք տրամադրել ձեր ժամանակը և կիսվել ձեր տաղանդներով: Դուք կարող եք ծառայել անտուններին, հաշմանդամներին, այրիներին և ձեր շրջապատի կամ համայնքի այլ մարդկանց:

Բացի տեղի կարիքավորներին կամ անհատներին հոգ տանելուց, Եկեղեցին հասնում է մարդկանց ողջ աշխարհով մեկ, անկախ նրանց հավատքից, ովքեր տուժվել են բնական աղետներից, աղքատությունից, հիվանդությունից, և այլ ճգնաժամերից: Եկեղեցին ապահովում է կենսապահովման ռեսուրսներ՝ օգնելու ընտանիքներին և անհատներին վերականգնելու և աշխատելու ինքնապահովման ուղղությամբ: Եկեղեցու մշտական կրթական ֆոնդին արվող նվիրատվություններն ապահովում են միջոցներ կարիքավոր Վերջին Օրերի Սրբերին շարունակելու իրենց կրթությունը: Եկեղեցում ծառայող միսիոներները կամավոր տրամադրում են

իրենց ժամանակը և ռեսուրսները վերացնելու անգրագիտությունը, բարելավելու առողջությունը և ապահովելու ուսուցում:

Լրացուցիչ հղագրումներ՝ Հակոբոս Ա. 27, Հակոբ 2.17–19, ՎԱՌ 42. 31, 104. 15–18

Տես նաև Ծոմապահություն և Ծոմի Նվիրատվություններ, Ծառայություն

Գայթակղություն

Ինչպես Առաքյալ Պողոսն է մարգարեացել վերջին օրերը «չար ժամանակներ» են: (Բ Տիմոթեոս Գ.1) Հակառակորդի ազդեցությունը համատարած է և հրապուրիչ: Բայց դուք կարող եք պարտության մատնել սատանային և հաղթահարել նրա գայթակղություններին: Երկնային Հայրը տվել է ձեզ ազատ կամքի պարգևը՝ բարին չարից նախընտրելու ուժ: Դուք կարող եք «խոնարհեցնել ձեզ Տիրոջ առաջին և կանչեք նրա սուրբ անունը և արթուն կենաք ու շարունակ աղոթեք, որպեսզի դուք չլինի թե փորձվեք ավելի, քան դուք կարող եք դիմանալ»: (Ալմա 13.28) Երբ հոժարակամ հնազանդվեք պատվիրաններին, ձեր Երկնային Հայրը կզորացնի ձեզ գայթակղությանը դիմադրելու համար:

Հետևյալ խորհուրդը կօգնի ձեզ հաղթահարել գայթակղությանը.

Կենտրոնացրեք ձեր կյանքը Փրկչի վրա: Մարգարե Հելամանը խորհուրդ տվեց իր որդիներին. «Հիշե՛ք, հիշե՛ք, որ դա մեր Քավիչի վեմի վրա է, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, որ դուք պիտի կառուցեք ձեր հիմքը. որ, երբ դևն առաջ ուղարկի իր զորեղ քամիները, այո, իր նետերը պտտահողմում, այո, երբ նրա ողջ կարկուտը և նրա զորեղ փոթորիկը հարվածի ձեզ, այն չի ունենա զորություն ձեր վրա՝ քաշելու ձեզ վար՝ դեպի թշվառության ու անվերջ վայի անդունդը, այն վեմի շնորհիվ, որի վրա դուք կառուցված եք, որը հաստատուն հիմք է, հիմք, որի վրա, եթե մարդիկ կառուցեն, նրանք չեն կարող ընկնել»: (Հելաման 5.12)

Աղոթեք ուժի համար: Երբ հարություն առած Փրկիչը եկավ Նեփիացիների մոտ, Նա սովորեցրեց բազմությանը. «Դուք պետք է արթուն կենաք և միշտ աղոթեք, որ չլինի թե մտնեք գայթակղու-

թյան մեջ. քանզի սատանան փափագում է ունենալ ձեզ, որպեսզի նա կարողանա ցորենի պես մաղել ձեզ: Ուստի դուք պետք է միշտ աղոթեք Հորը՝ իմ անունով»: (3 Նեփի 18.18–19) Վերջին օրերին Նա տվել է նմանատիպ մի խորհուրդ, որ մենք պետք է միշտ աղոթենք, որպեսզի հաղթող դուրս գանք, այո, որպեսզի մենք կարողանանք հաղթել սատանային և որպեսզի մենք կարողանանք փախչել սատանայի ծառաների ձեռքից, որոնք պաշտպանում են նրա գործը»: (տես ՎԼՈՒ 10.5)

Ամեն օր ուսումնասիրեք սուրբ գրքերը: Երբ դուք ուսումնասիրում եք ավետարանական ճշմարտությունները և կիրառում դրանք ձեր կյանքում, Տերը ձեզ կօրհնի գայթակղությանը դիմադրելու զորությամբ: Նեփին սովորեցրել է. «Նրանք ովքեր ականջ կդնեն Աստծո խոսքին և ամուր կբռնեն դրանից, երբեք չեն ոչնչանա. ոչ էլ գայթակղությունները և հակառակորդի կրակոտ նետերը կարող են հաղթել նրանց՝ կուրացնելով, տանելով նրանց դեպի կործանում»: (1 Նեփի 15.24, տես նաև Հելաման 3. 29–30)

Լցրեք ձեր կյանքը բարությամբ: Դուք այնքան բարին ընտրելու հնարավորություններ ունեք, որ կարիք չունեք ճաշակելու չարից: Երբ ձեր կյանքը լցնում եք բարությամբ, դուք տեղ չեք թողնում որևէ այլ բանի համար:

Խուսափեք գայթակղիչ վայրերից և իրավիճակներից: Դուք չեք կարող լիովին խուսափել գայթակղությունից, բայց կարող եք խուսափել այնպիսի վայրերից և իրավիճակներից, որտեղ գայթակղության ենթարկվելու հավանականություն կա: Դուք կարող եք նաև խուսափել ամսագրերի, գրքերի, հեռուստատեսային, կինոնկարների և երաժշտության և ինտեռնետային անպատշաճ նյութերից:

Ձգտեք բարությամբ ազդել ուրիշների վրա: Գեթսեմանի պարտեզում Իր տառապանքից առաջ Փրկիչն աղոթեց Իր աշակերտների համար. «Նրանք աշխարհիցը չեն ինչպես ես էլ աշխարհիցը չեմ: Ես չեմ աղաչում, որ աշխարհիցը վեր առնես նրանց. այլ որ նրանց պահես չարիցը: Նրանց սուրբ արա քո ճշմարտությունովը. քո խոսքը ճշմարտություն է: Ինչպես դու ինձ ուղարկեցիր աշխարհ, ես էլ նրանց ուղարկեցի աշխարհ»: (Հովհաննես ԺԷ. 14–18)

Որպես Հիսուս Քրիստոսի վերջին օրերի աշակերտ դուք կարող եք լինել աշխարհում, բայց «ոչ աշխարհից»: Բացի գայթակղությունից ինքներդ խուսափելուց, դուք կարող եք ազդել ուրիշների վրա ապրելու բարի և առողջ կյանքով: Դուք կարող եք արդարակեցության օրինակ հանդիսանալ, լինել լավ ընկեր, մասնակցել հասարակական ծառայության և, հնարավորության դեպքում, թող ձեր ձայնը լսվի ի պաշտպանություն բարոյական արժեքների:

Երբեք մի տատանվեք գայթակղությանը դեմ կանգնելու ձեր որոշումներում: Ձգտեք հետևել Փրկչի օրինակին, որը տարավ գայթակղություններ, բայց տեղի չտվեց դրանց: (տես ՎԱՈ 20.22) Երբ անապատում սատանան գայթակղեց Հիսուսին, Տերը երբեք չտատանվեց: Նրա պատասխանն արագ էր և հաստատուն. «Գնա յետս, սատանա»: (Ղուկաս Դ.8) Արդար մտքերով, խոսքերով և գործերով դուք կարող եք պատասխանել հակառակորդի գայթակղություններին նույն համոզվածությամբ. «Հակառակ կացեք սատանային, և նա կփախչի ձեզանից: Մոտեցեք Աստծուն, և նա կմոտենա ձեզ»: (Հակոբոս Դ.7–8)

Լրացուցիչ հղագրումներ՝ Հռովմայեցիս ԺԲ.21, Եփեսացիս Զ.11–17, Հակոբոս Ա.12՝ տողատակի ծանոթություն *բ*, ՎԱՈ 23.1, 31.12, Մովսես 1.12–22

Տես նաև Ազատ կամք, Խիղճ, Ծոմապահություն և Ծոմի Նվիրատվություններ, Սուրբ Հոգի, Քրիստոսի Լույս, Ապաշխարություն, Սատանա

Գերագույն Իշխանություններ (*Տես* Եկեղեցու Կառավարում)

Գթություն

Գթությունը «Քրիստոսի մաքուր սերն է» կամ «հավիտենական սերը»: (Մորոնի 7. 47, 8.17) Մարգարե Մորմոնը սովորեցրել է.«Եվ գթությունը երկայնամիտ է, և բարի է, և չի նախանձում, և փքված չէ, չի որոնում իրենը, չի գրգռվում հեշտորեն, չարը չի մտածում և չի հրճվում անօրինությամբ, այլ հրճվում է ճշմարտությամբ, տանում է ամեն բան, հավատում է ամեն բանի, ամեն բանի հույս ունի, ամեն բանի համբերում է»: (Մորոնի 7.45. տես նաև Ա Կորնթացիս ԺԳ. 4–7)

Հիսուս Քրիստոսը գթության կատարյալ օրինակ է: Մահկանացու կյանքի Իր ծառայության ընթացքում, Նա միշտ «շրջում էր բարիք անելով», սովորեցնելով ավետարանը, ցույց տալով գորովալի կարեկցանք աղքատների, չարչարվածների և թշվառների հանդեպ (տես Մատթեոս Դ. 23, Մարկոս Զ. 6, Գործք Ժ. 38): Նրա գթության դրսևորման գագաթնակետը Նրա անսահման Քավությունն էր: Նա ասել է. «Ոչ ոք նրանից ավելի մեծ սեր չունի, որ մեկն իր անձը դնի իր բարեկամների համար»: (Հովհ. ԺԵ.13) Սա երկայնամտության, բարության և անեսասիրության մեծագույն օրինակն է, որ մենք երբևէ կիմանանք: Փրկչի համբերատար սիրո ըմբռնմամբ, դուք կարող եք հավատք գործադրել և ապաշխարել ձեր մեղքերից, լինելով վստահ, որ Նա կների և կզորացնի ավետարանով ապրելու ձեր ջանքերը:

Փրկիչն ուզում է, որ դուք ստանաք Նրա սերը, և Նա ուզում է նաև, որ դուք այն կիսեք ուրիշների հետ: Նա հայտարարեց իր աշակերտներին. «Նոր պատվիրանք եմ տալիս ձեզ. որ իրար սիրեք. ինչպես ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք»: Սրանով կգիտենան ամենքը թե իմ աշակերտներն եք, եթե իրար վրա սեր ունենաք»: (Հովհ. ԺԳ. 34–35) Ընտանիքի անդամների և ուրիշների հետ ձեր հարաբերություններում նայեք Փրկչին որպես ձեզ օրինակ: Ձգտեք սիրել ինչպես Նա սիրեց՝ անսպառ կարեկցանքով, համբերությամբ և ողորմածությամբ:

Երբ շարունակեք ստանալ Փրկչի կատարյալ սերը և երբ ցույց տաք Քրիստոսանման սեր ուրիշների հանդեպ, դուք կտեսնեք, որ ձեր սերն աճում է: Դուք կզգաք ուրախություն՝ լինելով Տիրոջ ծառայության մեջ: Սուրբ Հոգին կլինի ձեր մշտական ուղեկիցը՝ ձեզ առաջնորդելով ձեր ծառայության մեջ և ուրիշների հետ ձեր հարաբերություններում: Դուք պատրաստված կլինեք հանդիպելու Տիրոջը Դատաստանի ժամանակ, երբ Նա ձեզ կպարգևատրի՝ ըստ Իր գործի հանդեպ ձեր ունեցած նվիրվածության: Մորմոնը սովորեցրել է.

«Եթե դուք չունեք գթություն, դուք ոչինչ եք, քանզի գթությունը երբեք չի խափանվում: Ուստի, հարեք գթությանը, որը բոլորից մեծ է, քանզի բոլոր բաները պիտի խափանվեն,

Բայց գթությունը Քրիստոսի մաքուր սերն է, և այն տևում է հավերժ. և ով որ օժտված լինի դրանով վերջին օրը, նրա համար լավ կլինի:

Ուստի, իմ սիրելի եղբայրներ, աղոթեք Հորը, սրտի ողջ կորովով, որ դուք կարողանաք լցված լինել այդ սիրով, որը նա շնորհել է բոլոր նրանց, ովքեր Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներն են. որ դուք կարողանաք դառնալ Աստծո որդիները. որպեսզի, երբ նա հայտնվի, մենք լինենք նրա նման. քանզի մենք պիտի տեսնենք նրան, ինչպես որ ինքն է. որ մենք կարողանանք ունենալ այդ հույսը. որ մենք կարողանանք մաքրվել, ճիշտ ինչպես նա է մաքուր»: (Մորոնի 7. 46–48)

Լրացուցիչ հղագրումներ՝ Մատթեոս ԻԵ. 31–46, Ա Հովհ. Դ.18, Եթեր 12. 33–34, ՎԿՈ12. 8, 34. 3, 121. 45

Տես նաև Սեր, Ծառայություն

Դաջվածք

Վերջին Օրերի մարգարեները խստորեն խորհուրդ չեն տալիս մարմինը դաջելը: Նրանք, ովքեր հաշվի չեն առնում այս խորհուրդը, ցույց են տալիս հարգանքի բացակայություն իրենց և Աստծո հանդեպ: Պողոս Առաքյալը սովորեցրել է մեր մարմինների կարևորության և դրանք կանխամտածված ապականելու մասին. «Չգիտե՞ք որ դուք Աստծո տաճար եք և Աստծո Հոգին բնակված է ձեզանում: Եթե մեկն Աստծո տաճարն ապականի նրան էլ Աստված կապականի, որովհետև Աստծո տաճարը սուրբ է՝ որ դուք եք»: (Ա Կորնթացիս Գ.16–17)

Եթե դուք դաջվածք ունեք, դուք կրում եք մշտական հիշեցում ձեր կատարած սխալի մասին: Գուցե մտածեք այն վերացնելու մասին:

Տես նաև Մարմնի ծակում

Դատել ուրիշներին

Երբեմն մարդիկ զգում են, որ սխալ է որևէ ձևով դատել ուրիշներին: Չնայած ճիշտ է, որ դուք չպետք է ուրիշներին դատապարտեք կամ անարդարացի մեղադրեք, ձեզ անհրաժեշտ կլինի դատողություններ անել գաղափարների, իրավիճակների և մարդկանց մասին ձեր ողջ կյանքի ընթացքում: Տերը բազմաթիվ պատվիրաններ է տվել, որոնք չեք կարող պահել առանց դատողություններ անելու: Օրինակ Նա ասել է. «Զգույշ կացեք սուտ մարգարեներեց . . . Իրենց պտուղներիցը նրանց ճանաչեցեք» (Մատթեոս Է. 15–16) և «Դուրս եկեք ամբարիշտների միջից»: (ՎԱՌ 38.42) Ձեզ անհրաժեշտ կլինի դատողություններ անել մարդկանց մասին ձեզ համար բազմաթիվ կարևոր որոշումներ ընդունելիս, ինչպես օրինակ ընկերներ ընտրելիս, կառավարության ղեկավարների համար քվեարկելիս և հավերժական ընկերակից ընտրելիս:

Դատելը ձեր ազատ կամքի կարևոր օգտագործման ձև է և պահանջում է մեծ զգուշություն, հատկապես, երբ դատողություններ եք անում ուրիշ մարդկանց մասին: Ձեր բոլոր դատողությունները պետք է առաջնորդվեն արդար չափանիշներով: Հիշեք, որ միայն Աստված, որը գիտի յուրաքանչյուր անձնավորության սիրտը, կարող է վերջնական դատաստան անել անձանց (տես Հայտնություն Ի.12, 3Նեփի 27.14, ՎԱՌ 137.9):

Տերը մի նախազգուշացում է տվել առաջնորդելու մեզ ուրիշների մասին դատելու վերաբերյալ. «Քանզի ինչ դատաստանով, որ դուք դատեք, դուք պիտի դատվեք. և ինչ չափով, որ չափեք, դրանով կրկին պիտի չափվի ձեզ: Եվ ինչու՞ եք տեսնում շյուղը, որը ձեր եղբոր աչքում է, բայց չեք նկատում գերանը, որ ձեր սեփական աչքում է: Կամ ինչպե՞ս կասես քո եղբորը. Թող որ հանեմ շյուղը քո աչքից, և ահա, մի գերան է քո սեփական աչքում: Դու, կեղծավոր, նախ հանիր գերանը քո սեփական աչքից. և ապա հստակ կտեսնես շյուղը՝ քո եղբոր աչքից հանելու համար»: (3 Նեփի 14.2–5)

Սուրբ գրքի այս հատվածում Տերը սովորեցնում է, որ այն հանցանքը, որ մենք տեսնում ենք մեկ ուրիշի մեջ, հաճախ նման է փոքր շյուղի այդ մարդու աչքում, համեմատած մեր սեփական հանցանք-

ների հետ, որոնք նման են հսկայական գերանի մեր աչքում: Երբեմն մենք կենտրոնանում ենք ուրիշների հանցանքների վրա, երբ փոխարենը պետք է աշխատենք ինքներս մեզ բարելավել:

Ձեր արդար դատողությունները ուրիշների մասին կարող է ապահովել անհրաժեշտ առաջնորդություն նրանց համար և որոշ դեպքերում, պաշտպանություն ձեր և ձեր ընտանիքի համար: Այդպիսի որևէ դատողություն անելիս զգուշությամբ և կարեկցանքով մոտեցեք: Որքան կարող եք, դատողություններ արեք ավելի շուտ մարդկանց իրավիճակների մասին, քան մարդկանց մասին: Հնարավորության դեպքում ձեռնպահ մնացեք դատողություններ անելուց, մինչև որ համապատասխան գիտելիք ունենաք փաստերի մասին: Միշտ զգայուն եղեք Սուրբ Հոգու հանդեպ, որը կարող է ուղղություն տալ ձեզ որոշումներ ընդունելիս: Հիշեք Ալմայի խորհուրդը իր որդի Կորիանթոնին. «Տես որ դու ողորմած լինես հանդեպ քո եղբայրները. վարվիր ազնվորեն, դատիր արդարորեն և գործիր բարիք շարունակ»: (Ալմա 41.14)

Լրացուցիչ հղագրումներ՝ Ա Սամուել ԺԶ.7, Մորոնի 7.14–19, ՎևՈ 11.12

Տես նաև Գթություն, Ներում, Սեր, Ողորմածություն

Դարձ

«Որովհետև մարմնի խորհուրդը մահ է», - ասել է Պողոս Առաքյալը «և հոգու խորհուրդը՝ կյանք և խաղաղություն» (Հռովմայեցիս Ը.6, տես՝ նաև 2 Նեփի 9.39): Մեր ընկած վիճակում մենք հաճախ ենք մաքառում գայթակղության դեմ և երբեմն տեղի ենք տալիս «մարմնի կամքին ու չարությանը, որը նրանում է» (2 Նեփի 2.29, տես նաև «Անկում», այս գրքում՝ էջ. 56–59): Որպեսզի կարողանանք ստանալ հավերժական կյանքի օրհությունը, մենք պետք է լինենք «հոգու խորհրդով» և հաղթենք մեր անարդար ցանկությունները: Մենք պետք է *փոխվենք*, կամ դարձի գանք Փրկչի Քավության զորությամբ և Սուրբ Հոգու զորության միջոցով: Այս գործընթացը կոչվում է դարձ:

Դարձը ներառում է վարքագծի փոփոխություն, բայց այն անցնում է վարքագծից այն կողմ, դա մեր ողջ էության փոփոխու-

թյունն է: Դա այնպիսի նշանակալի փոփոխություն է, որ Տերը և Նրա մարգարեները անվանում են այն՝ վերածնունդ, սրտի փոփոխություն և կրակով մկրտություն: Տերն ասել է.

«Մի զարմացիր, որ ողջ մարդկությունը, այո՛, տղամարդիկ ու կանայք, բոլոր ազգերը, ցեղերը, լեզուները և ժողովուրդները պիտի վերստին ծնվեն. այո՛, Աստծու՛ց ծնվեն, փոխված՝ իրենց մարմնական ու ընկած վիճակից դեպի արդարության մի վիճակի, լինելով փրկագնված Աստծուց, դառնալով նրա որդիներն ու դուստրերը.

Եվ այսպես, նրանք դառնում են նոր արարածներ. և մինչև նրանք չանեն այս, նրանք ոչ մի կերպ չեն կարող ժառանգել Աստծո արքայությունը»: (Մոսիա 27. 25–26)

Դարձի գործընթացը

Դարձը գործընթաց է, ոչ թե իրադարձություն: Դուք դարձի եք գալիս Փրկչին հետևելու արդար ջանքերի հետևանքով: Այս ջանքերը ներառում են հավատքի գործադրումն առ Հիսուս Քրիստոս, մեղքից ապաշխարությունը, մկրտությունը, Սուրբ Հոգու պարգևի ստացումը և հավատքով մինչև վերջ համբերելը:

Չնայած դարձը հրաշագործություն է և կյանքը փոխող, այն անաղմուկ հրաշք է: Հրեշտակների այցելությունը և այլ տպավորիչ դեպքեր չեն բերում դարձի: Նույնիսկ Ալման, որը հրեշտակ էր տեսել, դարձի եկավ ճշմարտության մասին վկայություն ստանալու համար միայն «շատ օրերի ընթացքում ծոմ պահելուց և աղոթելուց» հետո: (Ալմա 5.46) Եվ Պողոսը, որը տեսել էր հարություն առած Փրկչին, սովորեցնում էր, որ «ոչ ով չի կարող Հիսուսին Տեր ասել՝ եթե ոչ Հոգով Սրբով»: (Ա Կորնթացիս ԺԲ.3)

Քանի որ դարձը անաղմուկ, մշտական գործընթաց է , դուք կարող եք այժմ դարձի եկած լինել և չգիտակցել դա: Դուք կարող եք Լամանացիների նման լինել, որոնք «մկրտվեցին կրակով և Սուրբ Հոգով՝ ինձանում իրենց հավատքի պատճառով, իրենց դարձի ժամանակ, և չիմացան դա»: (3 Նեփի 9.20) Հավատք գործադրելու և Փրկչին հետևելու ձեր շարունակական ջանքերը կառաջնորդեն ձեզ ավելի մեծ դարձի:

Դարձի եկած մարդկանց առանձնահատկությունները

Մորմոնի Գրքում կան մարդկանց նկարագրություններ, ովքեր դարձի էին եկել դեպի Տերը:

Նրանք ցանկանում են բարիք անել: Թագավոր Բենյամինի ժողովուրդը հայտարարեց. «Ամենակարող Տիրոջ Հոգին . . . մի զորեղ փոփոխություն է առաջացրել, այնպես որ մենք այլևս հակում չունենք չարիք անելու, այլ՝ շարունակ կատարելու բարիք»: (Մոսիա 5.2) Ալման խոսում էր ժողովրդի մասին, ովքեր «չէին կարող նայել մեղքի վրա, բացի դա լիներ զզվանքով»: (Ալմա 13.12)

Նրանք չեն ապստամբում Տիրոջ դեմ: Մորմոնը պատմում է Լամանացիների մի խմբի մասին, ովքեր ամբարիշտ էին և արյունառուշտ, բայց որոնք «դարձի էին եկել դեպի Տերը»: (Ալմա 23.6) Այս մարդիկ փոխել էին իրենց անունները Անթի-Նեփի-Լեքի և «դարձան մի արդարակյաց ժողովուրդ, նրանք վայր դրեցին իրենց ապստամբության զենքերը, այնպես որ նրանք այլևս չկռվեցին Աստծո դեմ, ոչ էլ՝ իրենց եղբայրներից որևէ մեկի դեմ»: (Ալմա 23.7)

Նրանք կիսվում են ավետարանով: Ենովսը, Ալմա Ավագը, Ալմա Կրտսերը, Մոսիայի որդիները, Ամուղեկը և Զիզրոմը դեպի Տերը իրենց դարձի գալուց հետո իրենց նվիրեցին ավետարանը քարոզելուն: (տես Ենովս 1.26, Մոսիա 18.1, Մոսիա 27.32–37, Ալմա 10.1–12, 15.12)

Նրանք սիրով են լցված: Ամերիկաների ժողովրդին հարություն առած Փրկչի այցելությունից հետո «ամբողջ ժողովուրդը դարձի էր եկել դեպի Տերը՝ ողջ երկրի երեսին, ինչպես Նեփիացիները, այնպես էլ Լամանացիները, նրանց մեջ չկային հակառակություններ և վիճաբանություններ և ամեն մարդ արդար էր վարվում մեկը մյուսի հետ . . .

Եվ եղավ այնպես, որ չկար ոչ մի հակառակություն երկրում Աստծո սիրո շնորհիվ, որը բնակվում էր մարդկանց սրտերում:

Եվ չկային նախանձություններ, ոչ էլ՝ պայքարներ, ոչ էլ՝ խլրտումներ, ոչ էլ՝ պոռնկություններ, ոչ էլ՝ ստախոսություններ, ոչ

էլ՝ սպանություններ, ոչ էլ՝ որևէ ձևի հեշտասիրություն. և անկասկած չէր կարող լինել մի ավելի երջանիկ ժողովուրդ այն բոլոր ժողովուրդների մեջ, որոնք ստեղծվել էին Աստծո ձեռքով

Չկային ոչ ավազակներ, ոչ մարդասպաններ, ոչ էլ կային Լամանացիներ, կամ էլ՝ որևէ ձևի -ացիներ. այլ նրանք մեկ էին՝ Քրիստոսի զավակները, և ժառանգներ՝ Աստծո արքայության: (4 Նեփի 1.2, 15–17)

Ձգտելով ավելի մեծ դարձի

Ձեր իսկ դարձի համար դուք եք կրում գլխավոր պատասխանատվությունը: Ձեզ համար ոչ մեկը չի կարող դարձի գալ և ոչ ոք չի կարող ձեզ ստիպել դարձի գալ: Այնուամենայնիվ, ուրիշները կարող են օգնել ձեզ դարձի գալու գործընթացում: Սովորեք ընտանիքի արդար անդամների, Եկեղեցու առաջնորդների և ուսուցիչների, սուրբ գրքերի տղամարդկանց և կանանց օրինակից:

Սրտի զորեղ փոփոխություն զգալու ձեր ունակությունը կմեծանա, երբ ձգտեք հետևել Փրկչի կատարյալ օրինակին: Ուսումնասիրեք սուրբ գրքերը, աղոթեք հավատքով, պահեք պատվիրանները, և որոնեք Սուրբ Հոգու մշտական ընկերակցությունը: Երբ շարունակեք դարձի գործընթացը, դուք կստանաք «չափազանց մեծ ուրախություն» ինչպես թագավոր Բենյամինի ժողովուրդը, երբ Հոգին «մի զորեղ փոփոխություն առաջացրեց [նրանց] սրտերում»: (տես Մոսիա 5.2, 4) Դուք կկարողանաք հետևել Թագավոր Բենյամինի խորհրդին «լինել անսասան և անխախտ՝ միշտ հարուստ լինելով բարի գործերով, որպեսզի Քրիստոսը՝ Ամենակարող Տեր Աստվածը կարողանա կնքել ձեզ՝ որպես իրենը, որպեսզի դուք կարողանաք բերվել երկինք, որպեսզի դուք կարողանաք ունենալ հավիտենական փրկություն ու հավերժական կյանք»: (Մոսիա 5.15)

Լրացուցիչ հղագրումներ՝ Մատթեոս ԺԷ.3, Ղուկաս ԻԲ.32, Ալմա 5.7–14

Տես նաև Հիսուս Քրիստոսի Քավությունը, Մկրտություն, Սուրբ Հոգի, Փրկություն

Դժոխք

Վերջին Օրերի հայտնությունները դժոխքի մասին խոսում են երկու ձևով: Առաջինը, հոգևոր բանտի ևս մեկ անվանում է, մի տեղ հետմահու հոգևոր աշխարհում նրանց համար, ովքեր մահացել են մեղքերի մեջ, առանց ճշմարտության իմացության, կամ օրինազանցության մեջ, մերժած լինելով մարգարեներին: (ՎԱՈ138.32) Դա մի ժամանակավոր վիճակ է, որի ընթացքում հոգիներին կուսուցանվի ավետարանը և հնարավորություն կընձեռվի ապաշխարելու և ընդունելու փրկարար արարողությունները, որոնք նրանց համար կատարվում են տաճարներում: (տես ՎԱՈ 138.30–35) Նրանք, ովքեր ընդունում են ավետարանը, կարող են բնակվել դրախտում մինչև Հարությունը: Հարություն առնելուց և դատվելուց հետո, նրանք կստանան փառքի այն աստիճանը, որին նրանք արժանի են: Նրանք, ովքեր ընտրում են չապաշխարել, բայց որոնք կորստի որդիներ չեն, կմնան հոգևոր բանտում մինչև Հազարամյակի վերջը, երբ նրանք կազատվեն դժոխքից և պատժից և հարություն կառնեն թելեստիալ փառքով: (տես ՎԱՈ 76.81–85)

Երկրորդը՝ *դժոխք* բառն օգտագործվում է դրսի խավար հասկացությամբ, որը դևի և նրա հրեշտակների ու կորստի որդիների բնակավայրն է: (տես ՎԱՈ 29.36–38, 76.28–33) Կորստի որդիները նրանք են, ովքեր չեն ստանում «ներում ոչ այս աշխարհում ոչ էլ եկող աշխարհում՝ ուրանալով Սուրբ Հոգին այն ստանալուց հետո, ուրանալով Հոր Միածին Որդուն իրենց համար խաչելով Նրան: (Վ և ՈՒ 76. 34–35, տես նաև հատվածներ 31–33, 36–37) Այսպիսի անձինք չեն ժառանգի տեղ փառքի ոչ մի արքայությունում, նրանց համար դժոխքի պայմանները մնում են: (տես ՎԱՈ 76.38, 88.24, 32)

Տես նաև Փառքի Արքայություններ, Սատանա

Դրախտ

Սուրբ գրքերում *դրախտ* բառն օգտագործվում է տարբեր ձևերով: Առաջինը այն նշանակում է խաղաղության և երջանկության մի վայր հետմահկանացու հոգևոր աշխարհում, որը պահ-

վում է նրանց համար, ովքեր մկրտվել են և ովքեր հավատարիմ են մնացել: (տես Ալմա 40.12, Մորոնի 10.34) Հոգևոր բանտում եղողները հնարավորություն ունեն սովորել Հիսուս Քրիստոսի ավետարանը, ապաշխարել իրենց մեղքերից և ստանալ մկրտության և հաստատման արարողությունները այն աշխատանքի միջոցով, որը մենք կատարում ենք տաճարներում: (տես ՎևՈւ 138.30–35) Երբ նրանք անում են այդ, նրանք կարող են մտնել դրախտ:

Դրախտ բառի երկրորդ օգտագործումը հանդիպում ենք Փրկչի Խաչելության մասին Ղուկասի պատմության մեջ: Երբ Հիսուսը խաչի վրա էր, մի ավազակ, որը նույպես խաչվում էր, ասաց. «Տեր, ինձ հիշիր, երբ գաս քո թագավորությունովը»: (Ղուկաս 23.42) Ըստ Ղուկասի 23.43 հատվածի Տերը պատասխանեց. «Ճշմարիտ ասում եմ քեզ, դու այսօր ինձ հետ դրախտումը կլինես»: Մարգարե Ջոզեֆ Սմիթը բացատրել է, որ սա սխալ թարգմանություն է, Տերն իրականում ասել է, որ ավազակը Իր հետ հոգիների աշխարհում կլինի:

Դրախտ բառը գտնվում է նաև Բ Կորնթացիս ԺԲ.4 հատվածում, որտեղ այն հավանաբար վերաբերվում է սելեստիալ արքայությանը: Հավատո տասներորդ հանգանակում դրախտային բառը նկարագրում է երկրային փառքը Հազարամյակի ժամանակ:

Տես նաև Մահ՝ Ֆիզիկական, Փրկության Ծրագիր, Հարություն

Դև (*Տես* սատանա)

Եկեղեցու կառավարում

Հիսուս Քրիստոսը կանգնած է Եկեղեցու գլխին: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու միսիան է օգնել բոլոր մարդկանց գալ դեպի Նա: (տես Մորոնի 10.32) Այս միսիան իրականացնելու համար Եկեղեցին կազմակերպված է ըստ այն սկզբունքի, որը հայտնի է դարձվել Տիրոջ կողմից «սրբերի կատարելության համար, . . . մինչև որ ամենքս հասնենք հավատքի և Աստծո Որդին ճանաչելու միությանը»: (Եփեսացիս Դ. 12–13, տես նաև հատված 11)

Տուն և ընտանիք

Ընտանիքը Եկեղեցու հիմնական միավորն է, իսկ տունը՝ ավետարանի ուսուցման համար ամենակարևոր վայրն է: Ոչ մի ուրիշ կազմակերպություն չի կարող զբաղեցնել ընտանիքի տեղը: Նույնիսկ, երբ Եկեղեցին շարունակում է աճել, դրա նպատակը միշտ կլինի աջակցել և զորացնել ընտանիքներին ու անձանց ավետարանով ապրելու նրանց ջանքերում:

Ընդհանուր կառավարում

Տերն այսօր առաջնորդում է Իր ուխտի ժողովրդին Եկեղեցու Նախագահի միջոցով, որին մենք հաստատում ենք որպես մարգարե, տեսանող և հայտնող: Նախագահը նախագահում է ողջ Եկեղեցու վրա: Նա և իր խորհրդականները, որոնք նույնպես մարգարեներ են, տեսանողներ և հայտնողներ, կազմում են Առաջին Նախագահության Քվորումը:

Տասներկու Առաքյալների Քվորումի անդամները նույնպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ են: Նրանք, Առաջին Նախագահության հետ միասին, Քրիստոսի անվան մասին հատուկ վկաներ են ողջ աշխարհում: (տես ՎԱՈ 107.23) Նրանք գործում են Առաջին Նախագահության ղեկավարության ներքո կառուցելու եկեղեցին և կարգավորելու բոլոր գործերը բոլոր ազգերի մեջ: (տես ՎԱՈ 107.33) Նրանք բացում են դուռը [ազգերին] հրապարակելով Հիսուս Քրիստոսի ավետարանը: (տես ՎԱՈ 107.35)

Յոթանասունականների Քվորումի անդամները կանչված են հրապարակելու ավետարանը և կառուցելու Եկեղեցին: Նրանք աշխատում են Տասներկու Առաքյալների և յոթ եղբայրների ղեկավարության ներքո, ովքեր կանչվում են ծառայելու որպես Յոթանասունի Նախագահություն: Յոթանասունականների Առաջին և Երկրորդ Քվորումների անդամները նշանակված Գերագույն Իշխանություններ են և նրանք աշխարհում ամենուրեք կարող են ծառայելու կանչվել:

Նախագահող Եպիսկոպոսությունը Ահարոնյան Քահանայության Նախագահությունն է ողջ աշխարհով մեկ: Նախագահող Եպիսկոպոսը և նրա խորհրդականները ծառայում են Առաջին Նախագահության ղեկավարության ներքո, կառավարելու Եկեղեցու աշխարհիկ գործերը:

Երիտասարդ Տղամարդկանց, Սփոփող Միության, Երիտասարդ Կանանց, Երեխաների Միության և Կիրակնօրյա Դպրոցի կազմակերպությունները բոլորն ունեն գերագույն մակարդակի նախագահություններ, որոնք ապահովում են հրահանգավորում և կառավարում:

Տարածքային կառավարում

Տարածքը Եկեղեցու աշխարհագրական ամենամեծ բաժանումն է: Առաջին Նախագահությունը ուղղակի ղեկավարություն իրականացնելու համար նշանակում է Յոթանասունի Նախագահությանը կառավարելու Եկեղեցու ընտրված տարածքները Տասներկու Առաքյալների Քվորումի առաջնորդությամբ: Եկեղեցու այլ տարածքներում ղեկավարությունն իրականացնելու համար Առաջին Նախագահությունը նշանակում է Տարածքային Նախագահություններ: Տարածքային Նախագահությունը բաղկացած է նախագահից, որը սովորաբար նշանակվում է Յոթանասունի Առաջին կամ Երկրորդ Քվորումից, և երկու խորհրդականներից, ովքեր կարող են նշանակվել Յոթանասունի որևէ Քվորումից: Տարածքային Նախագահությունները ծառայում են Առաջին Նախագահության, Տասներկուսի Քվորումի և Յոթանասունի Նախագահության ղեկավարության ներքո:

Որոշ եղբայրներ կարգվել են Յոթանասունականի պաշտոնում, բայց չեն ծառայում որպես Գերագույն Իշխանավորներ: Նրանք կոչվում են Տարածքային Յոթանասունական և նրանք նշանակվում են այլ քվորումներում՝ ըստ աշխարհագրական վայրի, ոչ թե Յոթանասունականների Առաջին և Երկրորդ Քվորումներում: Նրանց իրավասությունը սահմանափակվում է ընդհանուր շրջանով, որտեղ նրանք ապրում են: Որոշ Տարածքային Յոթանասունականներ ծառայում են Տարածքի Նախագահություններում:

Տեղական կառավարում

Ծխեր և ճյուղեր: Եկեղեցու անդամները կազմակերպված են համայնքերով, որոնք հաճախ հավաքվում են միասին հասարակական և հոգևոր հարստացման համար: Մեծ համայնքները կոչվում են ծխեր: Յուրաքանչյուր ծխում նախագահում է եպիսկոպոսը, որին օգնում են երկու խորհրդականներ:

Փոքր համայնքները կոչվում են ճյուղեր: Յուրաքանչյուր ճյուղում նախագահում է ճյուղի նախագահը, որին օգնում են երկու խորհրդականներ: Ճյուղ կարող է կազմավորվել, երբ առնվազն երկու անդամ ընտանիքներ են ապրում տարածքում և անդամներից մեկը արժանի Մելքիսեդեկյան Քահանայություն կրող կամ արժանի Ահարոնյան Քահանայություն կրող քահանա է: Ցցի, միսիայի կամ շրջանի նախագահությունը կազմակերպում է և կառավարում ճյուղը: Ճյուղը կարող է դառնալ ծուխ, երբ այն մտնում է ցցի մեջ:

Յուրաքանչյուր ծուխ կամ ճյուղ ընդգրկում է որոշակի աշխարհագրական տարածք: Ծխում կամ ճյուղում տարբեր կազմակերպություններ իրենց ներդրումն են կատարում Տիրոջ աշխատանքի մեջ, դրանք են՝ քահանայապետերի խմբերը, երեցների քվորումները, Սփոփող Միությունը՝ 18 տարեկան և բարձր կանանց համար, Ահարոնյան Քահանայության քվորումները՝ 12-ից 17 տարեկան պատանիների համար, Երիտասարդ Կանանց ծրագիրը՝ 12-ից 17 տարեկան երիտասարդ կանանց համար, Երեխաների Միությունը՝ 18 ամսեկանից մինչև 11 տարեկան և Կիրակնօրյա Դպրոցը՝ 12 տարեկան և բարձր բոլոր Եկեղեցու անդամների համար: Այս կազմակերպություններից յուրաքանչյուրը ավետարանի ուսուցման համար կարևոր դեր է կատարում՝ ծառայություն մատուցելով և օգնելով ծնողներին, իրենց երեխաներին դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը դարձի բերելու սրբազան պարտականության մեջ: Այս կազմակերպությունները աշխատում են նաև միասին օգնելու անդամներին ուրիշների հետ ավետարանով կիսվելու համար:

Ցցեր, Միսիաներ, և Շրջաններ: Աշխարհագրական տարածքների մեծ մասը, որտեղ կազմավորված է Եկեղեցին, բաժանված են ցցերի: *Ցից* բառը գալիս է Եսայիայից, որը մարգարեացել է, որ Վերջին Օրերի Եկեղեցին նման կլինի վրանի, որն ամուր կպահվի ցցերի միջոցով: (տես Եսայիա 33.20, 54.2) Սովորաբար ցցում լինում են 5-ից 12 ծխեր և ճյուղեր: Յուրաքանչյուր ցից նախագահում է ցցի նախագահը, որին օգնում են երկու խորհրդականներ: Ցցի նախագահները հաշվետու են և հրահանգներ են ստանում Յոթանասունի Նախագահությունից կամ Տարածքի Նախագահությունից:

Միսիան Եկեղեցու միավոր է, որը որպես կանոն ընդգրկում է մի տարածք, որը շատ ավելի մեծ է, քան ցցինը: Յուրաքանչյուր միսիա նախագահում է միսիայի նախագահը, որին օգնում են երկու խորհրդականներ: Միսիայի նախագահները պատասխանատու են անմիջապես Գերագույն Իշխանություններին:

Ճիշտ ինչպես ճյուղը ծխի ավելի փոքր տարբերակն է, այնպես էլ ցցի ավելի փոքր տարբերակը շրջանն է: Շրջանը կազմավորվում է, երբ որևէ տարածքում առկա են բավարար թվով ճյուղեր, որոնք թույլ են տալիս հեշտ հաղորդակցություն և հարմար ուղևորություն շրջանի ժողովներին: Շրջանի նախագահը կանչված է նախագահելու շրջանի վրա՝ երկու խորհրդականների օգնությամբ: Շրջանի նախագահը հաշվետու է միսիայի նախագահին: Շրջանը կարող է դառնալ ցից:

Ծրագրեր միայնակ անդամների համար: Եկեղեցու բազմաթիվ անդամներ երբեք չեն ամուսնացել, կամ բաժանված են կամ այրիացած: Այս անդամները կազմում են երկու խումբ՝ երիտասարդ ամուրիներ (18 տարեկանից մինչև 30) և ամուրիներ (30 տարեկան և բարձր):

Չկա համընդհանուր Եկեղեցական ծրագիր երիտասարդ ամուրիների և ամուրիների համար: Փոխարենը, երբ բավական քանակությամբ անդամներ են ապրում տարածքում, տեղի քահանայության ղեկավարներին խրախուսվում է կանչել միայնակ անդամ ներկայացուցիչներ, ովքեր աշխատում են նրանց ղեկա-

վարության ներքո: Միայնակ անդամ ներկայացուցիչները ծրագրում են այնպիսի միջոցառումներ ինչպես օրինակ՝ պարեր, ծառայողական ծրագրեր և հավաքույթներ: Այս միջոցառումները միայնակ անդամներին հնարավորություններ են ընձեռում հանդիպել և զորացնել միմյանց: Միայնակ անդամները խրախուսվում են նաև հանդիպել կանոնավորապես իրենց քահանայության ղեկավարների հետ՝ քննարկելու իրենց կարիքները և հոգևոր աճի և ծառայության հնարավորությունները:

Լրացուցիչ հղագրում՝ ՎԿՈ 107

Տես նաև Քահանայություն, Սփոփող Միություն

Եկեղեցու կարգապահական խորհուրդներ

Եպիսկոպոսները և ճյուղի նախագահները և ցցի, միսիայի և շրջանի նախագահները պատասխանատվություն ունեն՝ օգնելու անդամներին հաղթահարել օրինազանցությունն ապաշխարության միջոցով: Ամենալուրջ օրինազանցությունները, ինչպես օրինակ՝ քաղաքացիական օրենքի խախտումները, կողակցին անարգելը, երեխային անարգելը, շնությունը, պոռնկությունը, բռնաբարությունը և արյունապղծությունը հաճախ պահանջում են Եկեղեցու պաշտոնական կարգապահական միջոցառումներ: Եկեղեցու պաշտոնական միջոցառումների մեջ են մտնում Եկեղեցու անդամակցության արտոնության սահմանափակում կամ Եկեղեցու անդամակցության կորուստ:

Պաշտոնական կարգապահական գործընթացը սկսվում է, երբ նախագահող քահանայության առաջնորդը հրավիրում է կարգապահական խորհուրդ: Այդ խորհուրդների նպատակը օրինազանցների հոգիների փրկությունն է, անմեղների պաշտպանությունը և անարատության և Եկեղեցու բարի անվան պահպանումը:

Եկեղեցու կարգապահական միջոցառումները ոգեշնչված գործընթաց է, որը տեղի է ունենում որոշակի ժամանակահատվածի ընթացքում: Այս գործընթացի և Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով, անդամը կարող է ներում ստանալ մեղքերին, վերգտնել

մտքի խաղաղություն և ձեռք բերել ուժ, ապագայում խուսափելու օրինազանցությունից: Եկեղեցու կարգապահական միջոցառումները նախատեսված չեն լինելու այդ գործընթացի վերջը: Այն նախատեսված է օգնելու Երկնային Հոր զավակներին շարունակելու իրենց ջանքերը վերադառնալու լիակատար ընկերակցության և Եկեղեցու ողջ օրհնություններին: Ցանկալի արդյունքն այն է, որ անձնավորությունը կատարում է այն փոփոխությունները, որոնք անհրաժեշտ են լիովին ապաշխարելու համար:

Տես նաև՝ Ներում, Ապաշխարություն

Եպիսկոպոս (*Տես* Եկեղեցու կառավարում)

Երախտագիտություն

Տերը խոստացել է. «Նա, ով շնորհակալությամբ է ստանում բոլոր բաները փառավոր կդարձվի»: (ՎԱՌ 78.19) Երախտագիտությունը վեր բարձրացնող, վեհացնող վերաբերմունք է: Դուք ձեր կյանքի փորձից կարող եք ասել, որ ավելի երջանիկ եք, երբ երախտագիտություն ունեք ձեր սրտում: Դուք չեք կարող լինել դառնացած, վիրավորված կամ ստոր, երբ երախտագիտության զգացում ունեք:

Շնորհակալ եղեք այն հրաշալի օրհնությունների համար, որոնք ձերն են: Շնորհակալ եղեք վիթխարի հնարավորությունների համար, որ դուք ունեք: Շնորհակալ եղեք ձեր ծնողներին: Նրանց հայտնեք ձեր երախտագիտությունը: Շնորհակալություն հայտնեք ձեր ընկերներին և ուսուցիչներին: Երախտագիտություն հայտնեք յուրաքանչյուրին, ով ձեզ ծառայություն է մատուցում կամ ինչ որ ձևով աջակցում է:

Շնորհակալ եղեք Երկնային Հորը՝ ձեր հանդեպ Նրա բարության համար: Դուք կարող եք ձեր երախտագիտությունն արտահայտել Աստծուն՝ ճանաչելով Նրա ձեռքը բոլոր բաներում, Նրան շնորհակալություն հայտնելով բոլոր բաների համար, որ Նա տալիս է ձեզ, պահելով Նրա պատվիրանները և ծառայելով մյուսներին: Շնորհակալություն հայտնեք Նրա Սիրելի Որդու՝ Հիսուս

Քրիստոսի համար: Շնորհակալություն հայտնեք Փրկչի մեծ օրինակի համար, Նրա ուսմունքների համար, Նրա օգնության հասնող և բարձրացնող ձեռքի, Նրա անսահման Քավության համար:

Շնորհակալություն հայտնեք Տիրոջը Նրա վերականգնած Եկեղեցու համար: Շնորհակալություն հայտնեք Նրան այն բոլոր բաների համար, որ այն տալիս է ձեզ: Շնորհակալություն հայտնեք Նրան ընկերների և ընտանիքի համար: Թող գոհության ոգին առաջնորդի և օրհնի ձեր օրերն ու գիշերները: Աշխատեք երախտապարտ լինել: Դուք կպարզեք, որ այն հրաշալի արդյունք է տալիս:

Լրացուցիչ հղագրումներ՝ Սաղմոս Ճ. 3–4,Ղուկաս ԺԷ.11–19, Մոսիա 2.19–22, Ալմա 34.38, ՎԿՈ 59.7

Երեց (*Տես* Մելքիսեդեկյան Քահանայություն, Քահանայություն)

Երկինք

Սուրբ գրքերում *երկինք* բառն օգտագործվում է երկու հիմնական ձևերով: Առաջինը, այն վերաբերում է այն վայրին որտեղ ապրում է Աստված, որը բոլոր հավատարիմների վերջնական տունն է: (տես Մոսիա 2.41) Երկրորդը, այն վերաբերում է երկիրը պարուրող տարածությանը: (տես Ծննդոց Ա.1)

Լրացուցիչ հղագրումներ՝ Սաղմոս ԺԱ. 4, Մատթեոս Զ.9, 1 Նեփի 1.8, Մոսիա 3.8, ՎԿՈ 20.17

Տես նաև Փառքի Արքայություններ

Երկնային Հայր (*Տես* Հայր Աստված)

Երջանկություն

Վկայելով Աստծո «հավերժական նպատակների» մասին, մարգարե Լեքին սովորեցրել է. «մարդիկ կան որպեսզի ունենան ուրախություն»: (2 Նեփի 2.15, 25)

Երկնային Հայրը կամենում է, որպեսզի մենք գտնենք իսկական, հարատև երջանկություն: Մեր երջանկությունը Նրա տված բոլոր օրհնությունների ծրագիրն է՝ ավետարանական ուսմունքները, պատվիրանները, քահանայության արարողությունները, ընտանեկան հարաբերությունները, մարգարեները, տաճարները, արարչագործության գեղեցկությունները և նույնիսկ ձախորդություն կրելու հնարավորությունը: Մեր փրկության Նրա ծրագիրը հաճախ կոչվում է «երջանկության մեծ ծրագիր»: (Ալմա 42.8) Նա ուղարկեց Իր Սիրելի Որդուն իրականացնելու Քավությունը, որպեսզի մենք կարողանանք երջանիկ լինել այս կյանքում և ստանալ լիակատար ուրախություն հավերժության մեջ:

Շատ մարդիկ փորձում են երջանկության իրականացում գտնել այնպիսի արարքներում, որոնք հակառակ են Տիրոջ պատվիրաններին: Անտեսելով Աստծո ծրագիրն իրենց համար, նրանք մերժում են իսկական երջանկության միակ աղբյուրը: Նրանք ենթարկվում են դևին, որը «ջանում է, որ բոլոր մարդիկ լինեն թշվառ, ինչպես ինքը»: (2 Նեփի 2.27) Վերջիվերջո, նրանք գիտակցում են իր որդի Կորիանթոնին Ալմայի կողմից արված նախազգուշացման ճշմարտացիությունը. «ամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել»: (Ալմա 41.10)

Մյուսները կյանքում որոնում են միայն զվարճություն: Ունենալով դա որպես իրենց հիմնական նպատակ, նրանք թույլ են տալիս, որ ժամանակավոր հաճույքները իրենց շեղեն տևական երջանկությունից: Նրանք իրենց զրկում են հոգևոր աճի, ծառայության և տքնաջան աշխատանքի հարատև ուրախությունից:

Երբ երջանկություն եք որոնում, հիշեք, որ միակ ճանապարհը դեպի իսկական երջանկություն՝ ավետարանով ապրելու միջոցով է: Դուք կգտնեք խաղաղ, հավերժական երջանկություն, երբ ձգտեք պահել պատվիրանները, աղոթեք ուժի համար, ապաշխարեք ձեր մեղքերից, մասնակցեք օգտակար գործերի և մատուցեք իմաստալի ծառայություն: Դուք կսովորեք զվարճություն ունենալ սիրող Երկնային Հոր կողմից դրված սահմանների մեջ:

Ձեր երջանկությունը կարող է վարակիչ լինել: Երբ ուրիշները տեսնեն ձեզ, նրանք կարող են ցանկանալ իմանալ ձեր ուրախու-

թյան պատճառը: Այդ ժամանակ նրանք կարող են զգալ այն երջանկությունը, որը գալիս է Հիսուս Քրիստոսի ավետարանով ապրելուց:

Լրացուցիչ հղագրումներ՝ Սաղմոս ԼԵ.9, 2 Նեփի 5.27, Մոսիա 2.41, 3Նեփի 17.18–20, 4Նեփի 1.15–16, ՎԿՈ 18.10–16

Տես նաև Միսիոներական աշխատանք, Փրկության Ծրագիր, Ծառայություն

Զոհաբերություն

Զոհաբերել նշանակում է հրաժարվել ինչ որ բանից, որը մենք գնահատում ենք, հանուն ավելի մեծ արժեք ունեցող մի բանի: Որպես Վերջին Օրերի Սրբեր մենք հնարավորություն ունենք զոհաբերել աշխարհիկ բաները Տիրոջ և Նրա արքայության համար: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները պետք է հոժար լինեն կատարել ցանկացած զոհաբերություն, որը պահանջվում է Տիրոջ կողմից: Եթե մեզանից չպահանջվեր զոհաբերություններ անել, մենք երբեք ի վիճակի չէինք լինի զարգացնել հավատք, որն անհրաժեշտ է հավերժական փրկության համար:

Հիսուս Քրիստոսի Քավությունը կենտրոնական տեղ է գրավում ավետարանում, որպես մեծ և հավերժական զոհաբերություն: (տես Ալմա 34.8–16) Նախքան Փրկչի կողմից Քավության իրականացումը, Նրա ուխտի ժողովուրդը կենդանիներ էր զոհաբերում՝ որպես Նրա զոհաբերության խորհրդանիշ: Այս կարգը օգնում էր պատրաստվել Քավությանը: (տես Մովսես 5.4–8) Կենդանիներին որպես զոհ մատուցելու պատվերը ավարտվեց Հիսուս Քրիստոսի մահվամբ: Այսօր Եկեղեցում մենք ճաշակում ենք հաղորդությունը ի հիշատակ Փրկչի քավող զոհաբերության:

Բացի Հիսուս Քրիստոսի քավող զոհաբերությունը հիշելուց, մենք պետք է մատուցենք մեր սեփական զոհաբերությունը՝ կոտրված սիրտ և ապաշխարող հոգի: Փրկիչն ասել է. «Դուք չպիտի այլևս մատուցեք ինձ արյուն թափելը, այո, պիտի վերջ տրվի ձեր զոհերին ու ձեր ողջակեզներին, . . . և դուք պիտի մատուցեք ինձ

որպես զոհ՝ կոտրված սիրտ և ապաշխարող հոգի: Եվ ով որ գալիս է ինձ մոտ կոտրված սրտով և ապաշխարող հոգով, նրան կմկրտեմ ես կրակով և Սուրբ Հոգով»: (3 Նեփի 9.19–20)

Կոտրված սիրտ և ապաշխարող հոգի ունենալ նշանակում է լինել խոնարհ և ընկալունակ Աստծո կամքին և նրանց խորհրդին, ում Նա կանչել է առաջնորդելու Իր Եկեղեցին: Այն նաև նշանակում է զգալ խորը վիշտ մեղքի համար և ապաշխարելու անկեղծ ցանկություն: Մարգարե Լեքին շեշտել է այս զոհաբերությունը մատուցելու կարևորությունը: «Ահա, [Քրիստոսը] իրեն զոհ է մատուցում մեղքի համար՝ բավարարելու օրենքի պահանջները, բոլոր նրանց համար, ովքեր ունեն կոտրված սիրտ ու ապաշխարող հոգի. և ուրիշ ոչ մեկի համար օրենքի պահանջները չեն կարող բավարարվել»: (2 Նեփի 2.7) Եթե մենք չմատուցենք կոտրված սրտի և ապաշխարող հոգու զոհաբերությունը, մենք չենք կարող լիովին ստանալ այն օրհնությունները, որոնք գալիս են Քավության միջոցով:

Եթե դուք հոժար եք զոհաբերել ինչպես Տերն է պատվիրել, դուք կընդունվեք Նրա կողմից: Նա սովորեցրել է, որ բոլորը . . . ովքեր գիտեն, որ իրենց սրտերն ազնիվ են և կոտրված և իրենց հոգիներն ապաշխարող և հոժար են պահել իրենց ուխտերը զոհաբերության միջոցով՝ այո, ամեն զոհաբերության, որը Տերը կպատվիրի, նրանք ընդունվում են Նրա կողմից: (տես ՎԱՈ 97.8) Հավերժական տեսանկյունից, դուք կարող եք տեսնել, որ աշխարհիկ բաներից հրաժարվելը իրոք զոհաբերություն չէ ընհանրապես: Այն օրհնությունները, որ դուք ստանում եք ավելի մեծ են, քան որևէ բան, որից դուք հրաժարվում եք:

Լրացուցիչ հղագրումներ՝ Մատթեոս ԺԹ.16–22, ՎԱՈ 59.8

Տես նաև Հիսուս Քրիստոսի Քավություն, Սեր, Հնազանդություն, Ապաշխարություն, Հաղորդություն. Ծառայություն

Զոհաբերություններ (*Տես* Ծոմ և Ծոմի Զոհաբերություն, Տասանորդ)

Ընտանիք

1995թ. սեպտեմբերի 23-ին Նախագահ Գորդոն Բ. Հինքլին՝ Եկեղեցու 15-րդ Նախագահը կարդաց հետևյալ հռչակագիրը Սփոփող Միության ընդհանուր ժողովում: Այս ոգեշնչված հռչակագիրը, որի վերնագիրն է. «Ընտանիք: Հայտարարություն աշխարհին», դարձել է ընտանիքի վերաբերյալ Եկեղեցու վերջնական հայտարարությունը:

«Մենք՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Խորհուրդը պաշտոնապես հայտարարում ենք, որ տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը կարգված է Աստծո կողմից և որ ընտանիքն առանցքային է Իր զավակների հավիտենական ճակատագրին նվիրված Արարչի ծրագրում»:

Մարդ արարածները՝ տղամարդիկ և կանայք, բոլորն արարված են Աստծո պատկերով: Յուրաքանչյուրը երկնային ծնողների կողմից սիրված հոգևոր որդին կամ դուստրն է, և որպես այդպիսին, յուրաքանչյուրն ունի աստվածային բնույթ և ճակատագիր: Նախաերկրային, երկրային և հավիտենական կյանքի և նպատակի համար սեռն անհատի հիմնական բնութագիրն է:

Նախաերկրային աշխարհում հոգևոր որդիներն ու դուստրերը ճանաչում և երկրպագում էին Աստծուն, որպես իրենց Հավիտենական Հորը և ընդունում էին Նրա ծրագիրը, ըստ որի պետք է ձեռք բերեին ֆիզիկական մարմիններ և աշխարհիկ փորձ ունենային՝ դեպի կատարելություն ընթանալու և իրենց աստվածային ճակատագիրը որպես հավիտենական կյանքի ժառանգներ բացառիկ կերպով գիտակցելու համար: Երջանկության աստվածային ծրագիրը հնարավորություն է տալիս, որ ընտանեկան կապերը շարունակվեն մահից հետո: Սուրբ տաճարներում կատարվող սուրբ արարողություններն ու ուխտերը հնարավոր են դարձնում անհատների համար վերադարձը Աստծո ներկայություն, իսկ ընտանիքների համար՝ հավերժորեն միանալը:

Ադամին և Եվային Աստծո կողմից տրված առաջին պատվիրանը որպես ամուսին և կին նրանց ծնող դառնալու հնարավորությունն էր: Մենք հայտարարում ենք, որ դեռևս ուժի մեջ է Իր

երեխաներին տված բազմանալու և երկիրը լցնելու վերաբերյալ Աստծո պատվիրանը: Մենք հայտարարում ենք նաև Աստծո այն պատվիրանը, որ ծնունդ տալու սուրբ զորությունը պետք է օգտագործվի միայն այն տղամարդու և կնոջ միջև, որոնք օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին:

Մենք հայտարարում ենք, որ կյանքի ստեղծման ուղիները ղեկավարվում են Աստծո կողմից: Մենք հայտարարում ենք կյանքի սուրբ լինելը և նրա կարևորությունն Աստծո հավերժական ծրագրում:

Ամուսինն ու կինը սուրբ պատասխանատվություն են կրում՝ սիրելու և հոգ տանելու միմյանց և երեխաների համար: «Որդիքը Տիրոջ ժառանգությունն են»: (Սաղմոս ՃԻԷ.3) Ծնողների սուրբ պարտականությունն է դաստիարակել երեխաներին սիրո և առաքինության մթնոլորտում, ապահովել նրանց նյութական և հոգևոր կարիքները, ուսուցանել նրանց սիրել և ծառայել մեկը մյուսին, պահել Աստծո պատվիրանները և օրինապաշտ քաղաքացիներ լինել, որտեղ էլ որ ապրեն: Ամուսիններն ու կանայք, մայրերն ու հայրերը հաշվետու կլինեն Աստծո առջև այս պարտականությունների իրականացման համար:

Ընտանիքը հաստատված է Աստծո կողմից: Տղամարդու և կնոջ ամուսնությունը հիմնական մասն է Նրա հավիտենական ծրագրի: Երեխաները պետք է ծնվեն ամուսնացած ծնողներից և դաստիարակվեն հոր և մոր կողմից, ովքեր ընդունում են ամուսնության խոստումը և հնազանդվում դրան ողջ հավատարմությամբ: Ընտանեկան կյանքում երջանկության հասնելու ամենամեծ հավանականությունն այն դեպքում է, երբ ընտանիքը հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա: Հաջողակ ամուսնություններն ու ընտանիքները հիմնվում են և պահպանվում հավատի, աղոթքի, ապաշխարության, ներողամտության, հարգանքի, սիրո, կարեկցանքի, աշխատանքի և առողջ ու ստեղծարար միջոցառումների սկզբունքներով: Ըստ աստվածային ծրագրի, հայրերը պետք է ղեկավարեն իրենց ընտանիքները սիրով ու առաքինությամբ, և պատասխանատու լինեն ապահովելու ընտանիքի կենսական կարիքներն ու պաշտպանությունը: Մայրերը մասնավորապես

պատասխանատու են իրենց երեխաների դաստիարակման համար: Այս սուրբ պարտականություններն իրականացնելիս, հայրերն ու մայրերը պարտավոր են օգնել միմյանց որպես հավասար գործընկերներ: Անաշխատունակությունը, մահը կամ այլ իրողությունները կարող են անհրաժեշտություն առաջացնել ընտանիքի համար հոգ տանողների դերերի փոփոխման: Անհրաժեշտության դեպքում ընտանիքները կարող են ապավինել նաև մերձավորների օգնությանը:

Մենք զգուշացնում ենք, որ այն անհատները, ովքեր խախտում են ողջախոհության ուխտերը, վատ են վարվում իրենց կանանց, ամուսինների, կամ երեխաների հետ, կամ թերանում են ընտանեկան պարտականությունները կատարելիս, մի օր հաշվետու կլինեն Աստծո առջև: Դեռ ավելին, մենք զգուշացնում ենք, որ ընտանիքի քայքայումը անհատներին, համայնքներին և ազգերին կպատճառի այն դժբախտությունները, որոնց մասին կանխագուշակել էին հին և նոր մարգարեները:

Մենք դիմում ենք պատասխանատու քաղաքացիներին և կառավարության պաշտոնյաներին ամենուր, որպեսզի պայմաններ ստեղծեն և միջոցառումներ անցկացնեն ուղղված ընտանիքների, որպես հասարակական հիմնական միավորների, պահպանմանն ու ամրապնդմանը» (Ընտանիք: Հայտարարություն Աշխարհին):

Տես նաև՝ Ընտանեկան Երեկո, Ամուսնություն, Տաճարներ

Ընտանեկան պատմության աշխատանք և ծագումնաբանություն

1836թ. ապրիլի 3-ին մարգարե Եղիան հայտնվեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին Կիրթլանդի Տաճարում: Նա շնորհեց նրանց քահանայության կնքող զորությունը, հնարավոր դարձնելով ընտանիքների համար կնքվել բոլոր սերունդների համար: Շնորհելով այս զորությունը, նա իրականացրեց Տիրոջ այն մարգարեությունը, որ Տերը կուղարկի նրան «դարձնելու հայրերի սիրտը դեպի որդիքը և որդկանց սիրտը՝ դեպի իրենց հայրերը»: (տես ՎԱՈ 110.14–16, տես նաև Մաղաքիա Դ. 5–6)

Ընտանեկան պատմության աշխատանքի միջոցով դուք կարող եք մասնակցել այս մարգարեության ընթացիկ իրականացմանը: Դուք կարող եք իմանալ ձեր նախնիների մասին և մեծացնել ձեր սերը նրանց հանդեպ: Դուք կարող եք ոգեշնչվել խիզախության և հավատքի նրանց պատմություններով: Դուք կարող եք փոխանցել այդ ժառանգությունը ձեր երեխաներին:

Սրանք մնայուն բարիքներ են, որոնք գալիս են ընտանեկան պատմության աշխատանքից, բայց ծագումնաբանական արձանագրություններ հավաքելու Եկեղեցու մեծ ջանքերի հիմնական պատճառները դրանք չեն: Եկեղեցու ընտանեկան պատմության բոլոր ջանքերն ուղղված են «հայրերի և զավակների միջև. կապող օղակի» ձևավորման անհրաժեշտությանը: (ՎԿՈ 128.18) Այս կապող օղակը ձևավորվում է քահանայության զորությամբ, տաճարային սրբազան արարողությունների միջոցով, որոնք մենք ստանում ենք մեր նախնիների համար:

Մահացածների փրկագնում

Երկնային Հոր զավակներից շատերը մահացել են առանց ավետարանի լրիվության ընդունման հնարավորության: Իր ողորմությամբ և անսահման սիրով Տերը նրանց համար ուղի է պատրաստել ավետարանի վերաբերյալ վկայություն ձեռք բերելու և քահանայության փրկարար արարողությունները ստանալու համար:

Հոգևոր աշխարհում ավետարանը քարոզվում է նրանց, ովքեր մահացել են իրենց մեղքերի մեջ, առանց ճշմարտության իմացության, կամ օրինազանցության մեջ, մերժած լինելով մարգարեներին: Նրանց ուսուցանվում է հավատք առ Աստված, ապաշխարություն մեղքից, փոխարինող մկրտություն մեղքերի թողության համար, Սուրբ Հոգու պարգևը ձեռնադրումով, և ավետարանի բոլոր մյուս սկզբունքները, որոնց գիտենալը նրանց համար անհրաժեշտ են, որպեսզի պատրաստ լինեին դատվելու մարմնում ըստ մարդկանց, բայց ապրեին ըստ Աստծո հոգով: (ՎԿՈ 138. 32–34)

Հոգևոր աշխարհում շատերն ընդունում են ավետարանը: Սակայն նրանք չեն կարող ստանալ քահանայության արարողու-

թյուններն իրենց համար, որովհետև նրանք չունեն ֆիզիկական մարմիններ: Սուրբ տաճարներում մենք արտոնություն ունենք ստանալ արարողությունները նրանց համար: Այս արարողությունները ներառում են՝ մկրտությունը, հաստատումը, Մելքիսեդեկյան Քահանայության կարգում (տղամարդկանց համար), օժտում, ամուսնության կնքում և երեխաների կնքում ծնողներին: Տերը հայտնի դարձրեց այս աշխատանքը Մարգարե Ջոզեֆ Սմիթին՝ վերականգնելով դրա կիրառումը, որը հայտնի էր դարձվել Քրիստոնյաներին Հիսուս Քրիստոսի հարությունից ոչ շատ անց: (Ա Կորնթացիս ԺԵ.29)

Երբ ստանում եք քահանայության արարողությունները նրանց համար, ովքեր մահացել են, նրանց համար դուք դառնում եք փրկիչ Սիոն սարի վրա: (տես Աբդիա Ա.21) Ձեր ջանքը մոտեցնում է Փրկչի քավող զոհաբերության ոգին՝ դուք կատարում եք փրկարար աշխատանք մյուսների համար, որը նրանք չեն կարող կատարել իրենց համար:

Ընտանեկան պատմության աշխատանքում ձեր պարտականությունները

Ընտանեկան պատմության աշխատանքում դուք ունեք երեք հիմնական պարտականություններ՝

1. Ստանալ տաճարային արարողություններ ձեզ համար և օգնել, որպեսզի ընտանիքի անմիջական անդամները ստանան դրանք:
2. Ունենալ ընթացիկ տաճարային երաշխավորագիր և հաճախել տաճար այնքան հաճախ, որքան հանգամանքները թույլ են տալիս:
3. Հավաքել ընտանեկան պատմության վերաբերյալ տեղեկություններ, որպեսզի կարողանաք օգնել ձեր նախնիներին ստանալ տաճարային օրհնություններ:

Դուք կարող եք մասնակցել տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքին, առնվազն որոշ չափով, անկախ նրանից, թե որտեղ եք ապրում կամ ինչպիսին են ձեր հանգա-

մանքները: Դուք հավանաբար ի վիճակի չեք լինի անել ամեն ինչ, բայց կարող եք անել որոշ բան: Հետևյալ գաղափարները կարող են օգնել ձեզ սկսել՝

- Գրել կարևոր մանրամասներ ձեր սեփական կյանքի մասին: Գրի առնել ձեր ծննդյան ամսաթիվը և տեղը և ձեր մկրտության և հաստատման ամսաթիվը: պահել անձնական հուշատետր գրանցելու ձեր կյանքի ամենակարևոր պահերը, ներառյալ անձնական փորձառությունները, որոնք կուժեղացնեն ձեր երեխաների և մյուս սերունդների հավատքը:
- Տեղեկանալ ձեր նախնիների մասին: Սկսել գրի առնել տեղեկություններ ձեր հիշողություններից և տանը առկա աղբյուրներից: Գրի առնել այն կարևոր տեղեկությունները, որոնք դուք ճշգրիտ հիշում եք կամ, որոնք կարող եք գտնել ձեր արյունակից եղբայրների և քույրերի, ծնողների, քեռիների և հորաքույր, մորաքույրների, պապերի, տատերի և նախապապերի և նախատատերի մասին: Եթե հնարավոր է ձեռք բերել վկայականներ և այլ փաստաթղթեր, որոնք պարունակում են այս տեղեկությունները: Երբ հավաքեք նոր տեղեկություններ, գուցե անհրաժեշտ լինի որոնումներ կատարել այլ տեղերում, ինչպես օրինակ պետական արխիվներում: Տեղական ծուխը կամ ճյուղը կարող է ունենալ ընտանեկան պատմության գծով խորհրդական, որը կարող է օգնել ձեզ: Դուք կարող եք նաև օգտվել Եկեղեցու ընտանեկան պատմության ծառայության համակարգչային www.familysearch.org էջից:
- Երբ գտնեք ձեր նախնիներին, օգտագործեք տոհմաբանական աղյուսակները և ընտանեկան խմբի անկետաները ձեր գտած տեղեկությունները գրանցելու համար: Այս անկետաները մատչելի են ինչպես թղթի վրա, այնպես էլ Եկեղեցու կողմից ստեղծված համակարգչային ծրագրերում, ինչպես օրինակ՝ Personal Ancestral File-ում:

Երբ անհրաժեշտ տեղեկություններ հավաքեք ձեր նախնիների մասին, ովքեր մահացել են առանց ավետարանն ընդունելու,

հոգ տարեք, որ նրանց համար կատարվի տաճարային աշխատանք: Նույնիսկ, եթե դուք բավականաչափ մոտիկ չեք ապրում տաճարին, ձեր և ձեր ընտանիքի անդամների համար արարողության աշխատանքները կատարելու համար, դուք կարող եք գրանցել ձեր նախնիների անունները տաճարում, որպեսզի ուրիշները կարողանան այդ աշխատանքը կատարել նրանց համար: Դուք կարող եք այցելել մոտակա ընտանեկան պատմության կենտրոն կամ խորհրդակցել տեղի ծխի կամ ճյուղի ընտանեկան պատմության խորհրդատուի հետ, որոշելու թե ինչպես դա անել:

Մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտնել է, որ կան սկզբունքներ կապված մահացածների ու ողջերի հետ, որոնց վրայով չի կարելի թեթևակի անցնել, ինչ վերաբերում է մեր փրկությանը, քանի որ . . . նրանք առանց մեզ չեն կարող կատարյալ դառնալ, ոչ էլ մենք կարող ենք դառնալ կատարյալ առանց մեր մահացածների: (ՎԵՈ 128.15) Ընտանեկան պատմության աշխատանքում ձեր մասնակցության միջոցով, դուք և ձեր նախնիները առաջ եք ընթանում դեպի փրկություն:

Տես նաև Տաճարներ

Ընտանեկան Երեկո

Տունն ամենակարևոր վայրն է ավետարանը սովորելու համար: Ոչ մի այլ կազմակերպություն չի կարող զբաղեցնել ընտանիքի տեղը: Վերջին Օրերի մարգարեները անընդհատ կոչ են արել ծնողներին մեծացնել իրենց երեխաներին սիրով և ավետարանի ուսմունքով:

1915թ. Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը և Առաջին Նախագահության նրա խորհրդականները սկսեցին ողջ Եկեղեցով մեկ ջանք գործադրել ընտանիքների զորացման համար: Նրանք Եկեղեցում գտնվող ծնողներին կոչ արեցին շաբաթը մեկ անգամ հավաքել իրենց երեխաներին «Ընտանեկան երեկոյի»: Ընտանիքները պետք է ժամանակն անցկացնեն միասին աղոթելով և երգելով, կարդալով սուրբ գրքերը, միմյանց սովորեցնելով ավետարանը և մասնակցեն այլ միջոցառումների, որոնք կամրացնեն ընտանիքի միասնությունը:

1970թ. Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը Առաջին Նախագահության իր խորհրդականների հետ միասին երկուշաբթի երեկոն ընտանեկան երեկո անցկացնելու ժամանակ սահմանեց: Այդ հայտարարությունից սկսած, Եկեղեցին երկուշաբթի երեկոները ազատ է պահում Եկեղեցական միջոցառումներից, որպեսզի ընտանիքները կարողանան այս ժամանակահատվածը միասին անցկացնել:

Վերջին Օրերի մարգարեները շարունակում են խրախուսել Եկեղեցու անդամներին ընտանեկան երեկոյին առաջնահերթ տեղ տալ: Նրանք խոստացել են, որ մեր նվիրվածությունն այս ծրագրին կօգնի պահպանել մեր ընտանիքները մեր ժամանակի չարիքների դեմ և կբերի մեզ լիակատար ուրախություն այժմ և ողջ հավերժության մեջ:

Եկեղեցու բոլոր անդամները պետք է դարձնեն երկուշաբթի երեկոն մի սրբազան ժամանակահատված, որը պահվում է ընտանեկան երեկոյի համար: Եթե ամուսնացած եք, անցկացրեք ամենշաբաթյա ընտանեկան երեկոն ձեր կողակցի հետ: Եթե երեխաներ ունեք, ընտանեկան երեկոյի ժամանակ ներգրավեք նրանց: Համապատասխանեցրեք ծրագիրը նրանց կարիքներին և հետաքրքրություններին և թույլ տվեք մասնակցեն: Ձեր երեխաները մեծանալուց և հեռանալուց հետո, շարունակեք ընտանեկան երեկոներ անցկացնել ձեր կողակցի հետ:

Եթե դուք ամուսնացած չեք, խնդրեք ձեր եպիսկոպոսին կամ ճյուղի նախագահին կազմակերպել ընտանեկան երեկոյի խումբ ձեր և ձեր ծխի կամ ճյուղի ուրիշ միայնակ անդամների համար: Նա կարող է կանչել ընտանեկան երեկոյի ղեկավար, որը պատասխանատու է կազմակերպել ծրագիրը և հոգ տանել, որ ընտանեկան երեկոները կանոնավորապես կազմակերպվեն:

Առաջարկվում է ընտանեկան երեկոյի հետևյալ ուրվագիծը՝

- Բացող երգ
- Բացող աղոթք
- Սուրբ գրքերի ընթերցում
- Դաս

- Միջոցառում
- Փակող երգ
- Փակող աղոթք
- Հյուրասիրություն

Երբ ընտանեկան երեկոյի համար դաս եք պատրաստում, հիշեք հիմնավորել դրանք սուրբ գրքերի, վերջին օրերի մարգարեների ուսմունքների և անձնական փորձառությունների և վկայության վրա: Այս գիրքը կարող է օգնել ուսուցման համար թեմաներ ընտրելիս: Բացի այդ դուք կարող եք օգտվել Եկեղեցու այլ հրատարակություններից, ինչպես օրինակ՝ *Family Home Evening Resource Book* (Ընտանեկան երեկոյի սկզբնաղբյուրների դասագիրք) (item number 31106), Ավետարանի Սկզբունքներ (31110), The *Family Guidebook* (Ընտանեկան ուղեցույց) (31180) և եկեղեցական ամսագրերից:

Տես նաև Ընտանիք

Ընտանեկան աղոթք (*Տես՝* Աղոթք)

Թելեստիալ Արքայություն (*Տես* Փառքի արքայություններ)

Թեյ (*Տես* Իմաստության Խոսք)

Թերեստրիալ արքայություն (*Տես՝* Փառքի արքայություններ)

Թմրադեղեր (*Տես* Իմաստության խոսք)

Իմաստության Խոսք

Իմաստության Խոսքն առողջության օրենք է, որը հայտնի է դարձվել Տիրոջ կողմից մեր ֆիզիկական և հոգևոր օգտի համար: Այս հայտնության մեջ, որն արձանագրվել է Վարդապետություն և Ուխտեր 89 բաժնում, Տերն ասում է մեզ, թե որ ուտելիքներն են լավ մեզ համար ուտել և որ նյութերն են մեր մարմինների համար

ոչ լավ: Իմաստության Խոսքին հնազանդվելու դեպքում Նա խոստանում է հոգևոր և ֆիզիկական օրհնություններ:

Իմաստության Խոսքում Տերը պատվիրում է մեզ հետևյալ նյութերը չընդունել մեր մարմինները՝

- Ոգելից խմիչքներ: (տես ՎԿՈ 89. 5–7)
- Ծխախոտ: (տես ՎԿՈ 89. 8)
- Թեյ և սուրճ (ՎԿՈ 89. 9, վերջին օրերի մարգարեները սովորեցրել են, որ «տաք ըմպելիքներ» արտահայտությունը վերաբերվում է թեյին և սուրճին):

Որևէ վնասակար բան, որը մարդիկ մտածված ընդունում են իրենց մարմինները, ներդաշնակության մեջ չէ Իմաստության Խոսքի հետ: Սա հատկապես ճիշտ է անօրինական թմրադեղերի վերաբերյալ, որոնք ՝ները, են կործանել նրանց, ովքեր հակում են ձեռք բերում դրանց հանդեպ: Դրանցից լիովին հեռու մնացեք: Փորձարկումներ մի կատարեք դրանց հետ: Դեղատոմոսով թմրադեղերի չարաշահումը ևս առաջացնում է կործանարար հակում:

Տերը հայտնել է, որ հետևյալ ուտելիքները լավ են մեր մարմնի համար՝

- Բանջարեղեն և մրգեր, որոնք պետք է օգտագործվեն խելամտությամբ և երախտագիտությամբ: (տես ՎԿՈ 89.10–11)
- Կենդանիների և օդի թռչունների միսը, որը պետք է օգտագործվի խնայողաբար: (տես 89.12–13)
- Հատիկավորներից ինչպիսիք են ցորենը, բրինձը և վարսակը, որոնք «կյանքի նեցուկն են»: (ՎԿՈ 89. 14–17)

Իմաստության Խոսքը պահելու օրհնություններ

Նրանց, ովքեր պահում են Իմաստության Խոսքը, Տերը խոստանում է՝

Որ բոլոր սրբերը, ովքեր հիշում են պահել և կատարել այս ասածները, քայլելով պատվիրաններին հնազանդ, կստանան առողջություն իրենց պորտում և ծուծք իրենց ոսկորներում,

Եվ պիտի գտնեն իմաստություն և գիտության մեծ գանձեր, նույնիսկ թաքցված գանձեր,

Եվ կվազեն ու չեն հոգնի և կքայլեն և չեն նվաղի:

Եվ Տերը տալիս է խոստում, որ կործանիչ հրեշտակը պիտի անցնի նրանց կողքով, ինչպես Իսրայելի զավակների կողքով, և չի սպանի նրանց: (տես ՎԵՈՒ 89.18–21)

Հաղթահարելով հակումը

Լավագույն ուղին այն նյութերից լիովին խուսափելն է, որոնք Տերն արգելում է Իմաստության Խոսքում: Բայց եթե դուք հակում եք ձեռք բերել այս նյութերից որևէ մեկի հանդեպ, դուք կարող եք ազատվել ձեր հակումից: Դուք կարող եք հաղթահարել հակումը անձնական ջանքերով, Տիրոջ շնորհի ունակություն տվող զորությամբ, ընտանիքի անդամների և ընկերների օգնությամբ և Եկեղեցու ղեկավարների առաջնորդությամբ:

Աղոթեք օգնության համար և արեք այն ամենը, ինչ կարող եք՝ դիմադրելու գայթակղություններին, որոնք գալիս են հակման պատճառով: Ձեր Երկնային Հայրը կամենում է, որ դուք ստանաք այն օրհնությունները, որոնք գալիս են Իմաստության Խոսքը պահելուց և այդ անելիս Նա ձեզ կզորացնի ձեր անկեղծ ջանքերում:

Լրացուցիչ հղագրումներ՝ ՎԵՈՒ 49.19–21, 59.15–20, 88.124, 89.1–4

Տես նաև Հնազանդություն, Գայթակղություն

Խաղաղություն

Շատ մարդիկ կարծում են խաղաղությունը պատերազմի բացակայությունն է: Բայց մենք կարող ենք խաղաղություն զգալ նույնիսկ պատերազմի ժամանակ և կարող ենք խաղաղություն չունենալ, նույնիսկ, երբ պատերազմ չի մոլեգնում: Պարզապես ընդհարման բացակայությունը բավական չէ մեր սրտերին

խաղաղություն բերելու համար: Խաղաղությունը գալիս է ավետարանի, Հիսուս Քրիստոսի Քավության և Սուրբ Հոգու օգնության և մեր իսկ արդարակեցության, անկեղծ ապաշխարության և ջանասեր ծառայության միջոցով:

Նույնիսկ, երբ աշխարհը իրարանցման մեջ է ձեր շրջապատում, դուք կարող եք ստանալ ներքին խաղաղության օրհնությունը: Այս օրհնությունը կշարունակի լինել ձեզ հետ, երբ դուք հավատարիմ մնաք ավետարանի ձեր վկայությանը և երբ հիշեք, որ Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը սիրում են ձեզ և պահպանում ձեզ:

Բացի ինքներդ խաղաղություն զգալուց, դուք կարող եք թողնել խաղաղության ազդեցությունը ձեր ընտանիքում, ձեր համայնքում և աշխարհում: Դուք գործում եք խաղաղության համար, երբ պահում եք պատվիրանները, ծառայություն եք մատուցում, հոգ եք տանում ընտանիքի անդամների և հարևանների մասին և կիսվում եք ավետարանով: Դուք գործում եք խաղաղության համար, երբ օգնում եք թեթևացնել ուրիշների տառապանքը:

Փրկչի հետևյալ խոսքերը սովորեցնում են մեզ, թե ինչպես կարող ենք զգալ այն խաղաղությունը, որը պարգևում է ավետարանը.

«Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը կուղարկէ իմ անունովը, նա ամեն բան կսովորեցնէ ձեզ, և կհիշեցնէ ձեզ ամեն ինչ, որ ձեզ ասեցի:

Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ, ոչ թե ինչպես աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ. ձեր սիրտը չխռովի և չվախենա»: (Հովհ. ԺԴ. 26–27)

Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին Նա պատվիրեց չվախենալ բարիք անելուց, որովհետև ինչ որ նրանք ցանեն այն էլ կհնձեն, ուստի, եթե բարիք սերմեն, նրանք որպես վարձք կհնձեն բարիք:

Նա պատվիրեց փոքրիկ հոտին չվախենալ, բարիք անել և, եթե երկիրն ու դժոխքը միավորվեն նրանց դեմ, նրանք չեն կարող հաղթել, եթե կառուցված լինեն Նրա վեմի վրա:

Նա չդատապարտեց նրանց և պատվիրեց նրանց գնալ իրենց ճանապարհով և այլևս չմեղանչել, լրջորեն կատարել այն գործը, որը Նա պատվիրել էր նրանց:

Նա պատվիրեց նրանց ապավինել Իրեն բոլոր մտորումներում, չկասկածել, չվախենալ:

Նա ցույց տվեց վերքերը Իր խոցված կողի և նաև ձեռքերի և ոտքերի վրայի գամերի հետքերը և պատվիրեց լինել հավատարիմ, պահել Իր պատվիրանները և նրանք կժառանգեն երկնքի արքայությունը: (տես ՎԱՌ 6. 33–37)

«Այս բաները խոսեցի ձեզ հետ, որ ինձանում խաղաղություն ունենաք. աշխարհքումը նեղություն կունենաք. բայց քաջացեք, ես հաղթել եմ աշխարհին»: (Հովհ. ԺԶ.33)

Երբ դուք հիշում եք Փրկչին և հետևում Նրան, դուք իսկապես կարող եք հանգիստ լինել: Դուք կարող եք զգալ իսկական, հարատև խաղաղություն ամեն ժամանակ: Դուք կարող եք գտնել հույս Հարությունից հետո Իր աշակերտներին ուղղված Փրկչի առաջին խոսքերում. «Խաղաղություն ձեզ»: (Հովհ. Ի.19)

Լրացուցիչ հղագրումներ՝ ՎԱՌ 59.23

Տես նաև Գթություն, Սուրբ Հոգի, Հույս, Հիսուս Քրիստոս, Սեր, Ծառայություն, Պատերազմ

Խաչ

Խաչը Քրիստոնեական բազմաթիվ եկեղեցիներում օգտագործվում է որպես Փրկչի մահվան և Հարության խորհրդանիշ և որպես անկեղծ հավատքի արտահայտություն: Որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, մենք ևս ակնածանքով ենք հիշում Փրկչի չարչարանքը: Բայց քանի որ Փրկիչն ապրում է, մենք չենք օգտագործում Նրա մահվան խորհրդանիշը որպես մեր հավատքի խորհրդանիշ:

Ձեր կյանքը պետք է լինի ձեր հավատքի արտահայտությունը: Հիշեք, որ երբ դուք մկրտվեցիք և հաստատվեցիք, դուք ուխտեցիք ձեր վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը: Երբ ձեր ընկերները նայում են ձեզ, նրանք պետք է կարողանան զգալ ձեր սերը Փրկչի և Նրա գործի հանդեպ:

Եկեղեցու միակ անդամները, ովքեր կրում են խաչի խորհրդանիշը, Վերջին Օրերի Սրբերի զինվորական քահանաներն են, ովքեր կրում են այն իրենց զինվորական համազգեստի վրա, ցույց տալու, որ Նրան միշտ կհիշեք: որ իրենք Քրիստոնյա քահանաներ են:

Տես նաև Հիսուս Քրիստոսի Քավություն, Հիսուս Քրիստոս, Հարություն

Խաչելություն (*Տես՝* Հիսուս Քրիստոսի Քավություն)

Խիղճ

Բոլոր մարդիկ ծնվում են ճիշտն ու սխալը զանազանելու ունակությամբ: Այս ունակությունը, որը կոչվում է խիղճ, Քրիստոսի Լույսի դրսևորումն է: (տես Մորոնի 7.15–19)

Ձեր խիղճը պաշտպանություն է՝ օգնելու ձեզ հեռու մնալ այնպիսի իրավիճակներից, որոնք հոգևոր առումով վնասակար են: Երբ հնազանդվում եք պատվիրաններին և կատարում արդար ընտրություններ, դուք զգում եք խղճի խաղաղություն:

Երբ մեղանչում եք, զգում եք խղճի խայթ կամ հանցանք, ճիշտ ինչպես վնասվելու դեպքում ֆիզիկական ցավ եք զգում: Դա մեղքի հանդեպ ձեր խղճի բնական արձագանքն է, և այն կարող է մղել ձեզ ապաշխարության:

Ապաշխարությունն ու ներումը վերականգնում են ձեր խղճի խաղաղությունը: Մյուս կողմից, եթե անտեսում եք ձեր խիղճը և չեք ապաշխարում, ձեր խիղճը թուլանում է, կարծես այն «թաղված է» (Ա Տիմոթեոս Դ. 2):

Սովորեք հետևել ձեր խղճին: Այն կարևոր մաս է ձեր ազատ կամքի գործադրման համար: Որքան ավելի շատ հետևեք ձեր խղճին այն ավելի ուժեղ կդառնա: Զգայուն խիղճը առողջ հոգու նշան է:

Լրացուցիչ հղագրումներ՝ Մոսիա 4.1–3, ՎԿՈ 84. 45–47

Տես նաև Քրիստոսի Լույսը, Հնազանդություն, Գայթակղություն

Խորհուրդ Երկնքում (*Տես* Փրկության Ծրագիր)

Ծառայություն

Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտները ցանկանում են ծառայել իրենց շրջապատի մարդկանց: Փրկիչն ասել է. «Սրանով կգիտենան ամենքը թե իմ աշակերտներն եք, եթե իրար վրա սեր ունենաք»: (Հովհաննես ԺԳ.35)

Երբ դուք մկրտվեցիք, ուխտեցիք ձեզ վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը: Մարգարե Ալման բացատրեց այս ուխտը մի խումբ նորադարձների, ովքեր ուզում էին մկրտվել: Նա նկատեց, որ «Աստծո հոտը գալու» նրանց ցանկությունը ներառում էր իմաստալի ծառայություն մատուցելու պատրաստակամություն՝ «կրելու մեկը մյուսի բեռը, որ դրանք թեթև լինեն», «սգալու նրանց հետ, ովքեր սգում են» և «մխիթարել նրանց, ովքեր կարիք ունեն մխիթարության»: (Մոսիա 18.8–9)

Երբ ձգտում եք ծառայել ուրիշներին որպես ձեզ օրինակ նայեք Փրկչին: Չնայած Նա եկավ երկիր որպես Աստծո Որդի, Նա խոնարհաբար ծառայեց բոլոր նրանց, ովքեր Իր շրջապատում էին: Նա հայտարարեց. «Ես ձեր միջումը ծառայողի պես եմ»: (Ղուկաս ԻԲ.27)

Փրկիչն օգտագործել է մի առակ՝ սովորեցնելու ծառայության կարևորությունը: Առակում Նա վերադառնում է երկիր Իր փառքով և բաժանում է արդարներին ամբարիշտներից: Արդարներին Նա ասում է. «Եկեք, ով իմ Հոր օրհնածները, ժառանգեցեք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված թագավորությունը: Որովհետև սովեցի, և դուք տվիք ինձ ուտել, ծարավեցի և խմեցրիք ինձ, օտար էի, և ինձ ձեզ մոտ առաք: Մերկ էի, և հագցրիք ինձ. հիվանդ էի, և ինձ այցելեցիք. բանտի մեջ էի, և ինձ մոտ եկաք»: (Մատթեոս ԻԲ. 34–36)

Այս հայտարարությունից զարմացած արդարները հարցնում են.«Տեր, ե՞րբ տեսանք քեզ սոված, և կերակրեցինք, կամ ծարավ, և խմեցրեցինք: Ե՞րբ տեսանք քեզ օտար, և մեզ մոտ առանք, կամ մերկ, և հագցրինք: Ե՞րբ տեսանք քեզ հիվանդ, կամ բանտի մեջ, և եկանք քեզ մոտ»: (Մատթեոս ԻԲ. 37–39)

Այդ ժամանակ Տերը պատասխանում է. «Որովհետև այս իմ փոքր եղբայրներից մեկին արիք, ինձ արիք»: (Մատթեոս ԻԵ.40)

Փրկիչը հրավիրում է նվիրաբերել ձեզ ուրիշներին ծառայելուն: Այդ անելու ձեր հնարավորություններն անսահման են: Ամեն օր ուղիներ որոնեք սրտեր ուրախացնելու, բարի խոսքեր ասելու, ուրիշների համար գործեր անելու, որոնք նրանք չեն կարող իրենք անել և ավետարանով կիսվելու համար: Ընկալունակ եղեք Հոգու հուշումների հանդեպ, որը հուշում է ձեզ ծառայել: Դուք կտեսնեք, որ երջանկության ճշմարիտ բանալին ուրիշների երջանկության համար աշխատելն է:

Լրացուցիչ հղագրումներ՝ Մատթեոս ԻԲ. 35–40, ԻԵ.41–46, Ղուկաս Ժ.25–37, Գաղատացիս Ե.13–14, Մոսիա 2.17

Տես նաև Գթություն, Սեր

Ծխախոտ (*Տես* Իմաստության Խոսք)

Ծոմապահություն և ծոմի նվիրատվություն

Ծոմ պահելը որոշակի ժամանակահատվածում կամավոր առանց ուտելու և խմելու ապրելն է: Ծոմապահությունն ուղեկցվում է անկեղծ աղոթքով և կարող է օգնել պատրաստվել ձեզ և ուրիշներին ստանալ Աստծո օրհնությունները:

Ծոմապահության նպատակները

Մի առիթով Փրկիչը երեխայի միջից դուրս գցեց դևին և օգտագործեց այդ դեպքն Իր աշակերտներին աղոթքի և ծոմի զորության մասին ուսուցանելու համար: Նրա աշակերտները հարցրեցին Նրան. «Մենք ինչու՞ չկարողացանք հանել նրան»: Հիսուսը պատասխանեց. «Ձեր թերահավատության համար. որովհետև ճշմարիտ ասում եմ ձեզ՝ եթե մանանեխի հատի չափ հավատք ունենաք, այս սարին կասեք՝ փոխադրվիր այստեղից այնտեղ, և նա կփոխադրվի. և ոչինչ անկարելի չի լինի ձեզ համար: Բայց այս ցեղը դուրս չի գա եթե ոչ աղոթքով և ծոմով»: (Տես Մատթեոս ԺԷ.14–21)

Այս պատմությունն ուսուցանում է, որ աղոթքը և ծոմը կարող են տալ հավելյալ ուժ նրանց, ովքեր տալիս են և ստանում քահանայության օրհնություններ: Պատմությունը կարելի է վերագրել

նաև ավետարանով ապրելու ձեր անձնական ջանքերին: Եթե դուք թուլություն կամ մեղք ունեք, որը հաղթահարելու համար դուք մաքառում եք, դուք կարիք կունենաք ծոմ պահել և աղոթք անել, որպեսզի ստանաք ձեր ցանկացած օգնությունն ու ներումը: Այն դևի նման, որին Քրիստոսը դուրս գցեց, ձեր դժվարությունը կարող է լինել այնպիսին, որը դուրս կգա միայն աղոթքի և ծոմի միջոցով:

Դուք կարող եք ծոմ պահել շատ նպատակներով: Ծոմ պահելը Աստծուն երկրպագելու և Նրան երախտագիտություն ցույց տալու մի ձև է: (տես Ղուկաս Բ.37, Ալմա 45.1) Դուք կարող եք ծոմ պահել, երբ խնդրում եք Երկնային Հորն օրհնել հիվանդին կամ չարչարվածին: (տես Մատթեոս ԺԷ. 14–21) Ծոմապահությունը կարող է օգնել ձեզ և նրանց, ում սիրում եք, ստանալ անձնական հայտնություն և դարձի գալ դեպի ճշմարտությունը: (տես Ալմա 5.46, 6.6) Ծոմի միջոցով դուք կարող եք ուժ ձեռք բերել դիմադրելու գայթակղությանը: (տես Եսայիա ԾԸ.6) Դուք կարող եք ծոմ պահել, երբ ձգտում եք խոնարհեցնել ձեզ Աստծո առջև և գործադրել հավատք առ Հիսուս Քրիստոսը: (տես Օմնի 1.26, Հելաման 3.35) Դուք կարող եք ծոմ պահել ավետարանով կիսվելիս առաջնորդություն ստանալու և եկեղեցական կոչումները փառավոր անելու համար: (տես Գործք ԺԳ.2–3, Ալմա 17.3, 9, 3Նեփի 27.1–2) Ծոմը կարող է ուղեկցվել անկեղծ վշտով և սգով: (տես Ալմա 28.4–6, 30.1–2)

Ծոմի Կիրակի

Յուրաքանչյուր ամսվա մի կիրակի, սովորաբար առաջին կիրակին, Եկեղեցին որոշել է որպես ծոմապահության օր: Ծոմի կիրակին ճիշտ պահելն իր մեջ ընդգրկում է երկու հաջորդող ճաշերի ընթացքում ոչինչ չուտել և չխմել, հաճախել ծոմի և վկայության ժողովին և տալ ծոմի զոհաբերություն՝ օգնելու հոգ տանել նրանց, ովքեր կարիքի մեջ են:

Ձեր ծոմի նվիրատվությունը պետք է առնվազն լինի այդ երկու ճաշերի արժեքը, որոնք դուք չեք ուտում: Հնարավորության դեպքում եղեք առատաձեռն և տվեք շատ ավելի, քան այդ գումարն է:

Բացի Եկեղեցու առաջնորդների կողմից սահմանված ծոմի օրերը պահելուց, դուք կարող եք ծոմ պահել ցանկացած որևէ

այլ օր, ըստ ձեր և ուրիշների կարիքների: Սակայն դուք չպետք է ծոմ պահեք խիստ հաճախ կամ չափազանց երկար ժամանակի ընթացքում:

Ճիշտ ծոմապահությունը

Լեռան Քարոզում Հիսուսը սովորեցրեց ծոմապահության ճիշտ ձևը: Նա խոսեց կեղծավորների դեմ, երբ նրանք ծոմ են պահում «իրենց երեսները տխրեցնում են, որ մարդկանց ծոմ պահող երևան»: Արդարակեցության արտաքուստ ցուցադրման փոխարեն, դուք պետք է ծոմ պահեք.«[ձեր] Հորը՝ որ ծածուկումն է. և [ձեր] Հայրը, որ ծածուկ տեղը տեսնում է, հայտնապես կհատուցանի [ձեզ]»: (Մատթեոս Զ.16–18)

Եսայիա մարգարեն նույնպես սովորեցրել է ծոմի ճշմարիտ ոգու մասին. «Ահա սա է ծոմը, որին ես հավանում եմ. լուծիր անիրավության կապանքները, բաց արա լուծի կոշկոռները. և ջարդվածներին ազատ թող տուր, և ամեն տեսակ լուծ կոտրեցեք: Այո հացդ կտրիր տուր սովածին, և թափառական խեղճերին տար տունդ, երբոր մի մերկ տեսնես, նրան հագցրու, և քեզ պես մարմին ունեցողից քեզ մի ծածկիր»: (Եսայիա ԾԸ.6–7)

Եսայիան նաև վկայել է այն օրհնությունների մասին, որոնք գալիս են, երբ հնազանդվում ենք ծոմի օրենքին. «Այն ժամանակ քո լույսն արշալույսի պես պիտի ծագի, և քո բժշկությունը շուտով պիտի բուսնի, և քո արդարությունը պիտի գնա քո առաջից, Տիրոջ փառքը պիտի պահի քեզ ետևից: Այն ժամանակ դու կկանչես, և Տերը կպատասխանի. դու կաղաղակես, և նա կասի. Ահա ես . . . Եթե կերակրես սովածին ախորժանոքդ, և կարոտի հոգին կշտացնես, այն ժամանակ քո լույսը կծագի խավարումը, և քո խավարը կլինի կես օրվա պես: Եվ Տերը քեզ միշտ կառաջնորդի, և կկշտացնի քո անձը երաշտներումը, և քո ոսկորներդ կզորացնի, և ջրարբի պարտեզի նման կլինես, և ջրի ակնի պես՝ որի ջուրը չի պակասի» (Եսայիա ԾԸ.8–11):

Լրացուցիչ հղագրումներ՝ 3 Նեփի 13. 16–18, ՎԿՈ 59.12–14, 88.76, 119

Տես նաև Աղոթք

Ծուխ (*Տես* Եկեղեցու կառավարում)

Կանոնիկ աշխատություններ (*Տես* սուրբ գրքեր)

Կառավարում (*Տես* Քաղաքացիական Կառավարում և Օրենք)

Կիրակի (*Տես* Հանգստության օր, Պաշտամունք)

Կրթություն

Տերը պատվիրել է, որ ձգտենք ուսման ինչպես սովորելով այնպես էլ հավատքով (ՎԱՈ 88.118): Նա խորհուրդ է տվել մեզ սովորել ավետարանը և ձեռք բերել հասկացողություն ինչպես այն բաների մասին, որ երկնքում են, այնպես էլ երկրում և երկրի տակ գտնվող բաների մասին, բաներ, որոնք եղել են, բաներ, որոնք կան, բաներ, որոնք պետք է շուտով տեղի ունենան, բաներ, որոնք տանն են, բաներ, որոնք արտասահմանում են, ազգերի պատերազմներն ու խառնակությունները և դատաստանները, որոնք երկրի վրա են և նաև գիտելիք երկրների և թագավորությունների մասին, որպեսզի կարողանանք պատրաստ լինել բոլոր բաներում: (ՎԱՈ 88. 78–80)

Դպրոցական և մասնագիտական ուսուցում

Դուք պետք է միշտ աշխատեք կրթել ձեր միտքը և ձեր ձեռքերը, որպեսզի կարողանաք հաջողության հասնել ձեր ընտրած ոլորտում: Օգտագործեք ձեր կրթությունը, որպեսզի այն լինի բարու ազդեցության համար: Երբ այդպես եք անում, դուք հայտնի կդառնաք որպես ազնիվ մարդ: Դուք կնախապատրաստվեք գալիք հնարավորությունների համար և դուք կդառնաք ձեր ընտանիքի, Եկեղեցու և ձեր համայնքի համար մեծ ուժ:

Ձգտեք ձեռք բերել լավագույն կրթությունը, որը մատչելի է ձեզ: Դրանք կարող են լինել՝ քոլեջներ և համալսարաններ, տեխնիկական ուսումնարաններ, հեռակա դասընթացներ, հասարակական ուսուցում և անհատական ուսուցում:

Ճեմարան և Ինստիտուտ

Ողջ աշխարհով մեկ 14–18 տարեկան Վերջին Օրերի Սրբերը մասնակցում են ճեմարանի դասերին, որն ապահովում է շաբաթվա ընթացքում ուսուցում սուրբ գրքերից: Կրոնի ինստիտուտն ապահովում է շաբաթվա ընթացքում 18–ից 30 տարեկան Վերջին Օրերի Սրբերին ավետարանական տարբեր դասընթացներ:

Այս ծրագրերն ապահովում են հոգևոր և հասարակական մթնոլորտ, որտեղ ուսանողները կարող են շփվել միմյանց հետ և ավելի շատ բան սովորել ավետարանի մասին:

Ճեմարանի և ինստիտուտի վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու համար դիմեք տեղի քահանայության առաջնորդին:

Ցմահ ուսուցում

Շարունակեք հնարավորություններ որոնել կրթության համար ձեր ողջ կյանքի ընթացքում: Այն կօգնի ձեզ՝ ձեր ընտրած մասնագիտության մեջ մնալ ժամանակակից պահանջներին և մյուս հմտություններին ու հետաքրքրություններին համապատասխան: Այս արագ փոփոխվող աշխարհում դուք պետք է ժամանակ գտնեք կրթելու ձեզ ներկայի և ապագայի համար:

Բացի ձեր կրթությունը կանոնավոր դպրոցական ուսուցմամբ շարունակելուց, դուք կարող եք շարունակել սովորել՝ կարդալով, հաճախելով մշակութային իրադարձությունների, այցելելով թանգարաններ և պատմական վայրեր և զննելով ձեզ շրջապատող աշխարհը:

Լրացուցիչ հղագրումներ՝ Առակաց Ա. 5, ՎԱՈ 130.18–19

Կրկին Ծնված (*Տես* Մկրտություն, Դարձ, Փրկություն)

Հազարամյակ

Հազարամյակը 1,000 տարվա մի ժամանակահատված է: Երբ խոսում ենք «Հազարամյակի» մասին մենք ի նկատի ունենք Փրկչի Երկրորդ Գալուստին հաջորդող հազար տարին: (տես Հայտնություն Ի.4, ՎԱՈ 29.11) Հազարամյակի ընթացքում:

«Քրիստոսն անձնապես կթագավորի երկրի վրա» (Հավատո Հանգանակներ 1.10)

Հազարամյակը երկրի վրա կլինի արդարության և խաղաղության մի ժամանակաշրջան: Տերը հայտնել է, որ «այդ օրը մարդու թշնամությունը և գազանների թշնամությունը, այո, բոլոր մարմնի թշնամությունը կդադարի» (ՎԱՈ 101.26): Սատանան «կկապվի, որպեսզի նա տեղ չունենա մարդկանց որդիների սրտերում»: (ՎԱՈ 45.55, տես նաև Հայտնություն Ի.1–3)

Հազարամյակի ընթացքում բոլոր մարդիկ երկրի վրա բարի և արդար կլինեն, բայց շատերը ընդունած չեն լինի ավետարանի լրիվությունը: Հետևաբար Եկեղեցու անդամները կմասնակցեն միսիոներական աշխատանքին:

Եկեղեցու անդամները Հազարամյակի ընթացքում կմասնակցեն նաև տաճարային աշխատանքին: Սրբերը կշարունակեն կառուցել տաճարներ և ստանալ արարողություններ իրենց մահացած հարազատների համար: Առաջնորդվելով հայտնությամբ, նրանք կպատրաստեն իրենց նախնիների արձանագրությունները ետ գնալով մինչև Ադամն ու Եվան:

Լիակատար արդարությունն ու խաղաղությունը կշարունակվի մինչև 1,000 տարվա վերջը, երբ սատանան «կարձակվի մի փոքր ժամանակով, որպեսզի միասին հավաքի իր զորքերը»: Սատանայի զորքերը կկռվեն երկնքի զորքերի դեմ, որոնք կառաջնորդվեն Միքայելի կամ Ադամի կողմից: Սատանան և նրա հետևորդները կպարտվեն և դուրս կգցվեն հավիտյան: (Տես ՎԱՈ 88.111–115)

Լրացուցիչ հղագրումներ՝ ՎԱՈ 45. 55–59, 101. 22–34, 133.25

Տես նաև Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստ

Հաղորդություն

Իր Խաչելությունից առաջ՝ նախորդ գիշերը, Հիսուս Քրիստոսը հանդիպեց Իր Առաքյալներին և հաստատեց հաղորդությունը. «Եվ հաց առավ և գոհացավ, կտրեց և նրանց տվեց, և ասաց. Այս է իմ մարմինը, որ ձեզ համար տրվում է. այս արեք իմ հիշատակի

համար: Այնպես էլ ընթրիքից հետո բաժակն առավ, և ասաց. Այս բաժակը նոր ուխտն է իմ արյունով, որ ձեզ համար թափվում է»: (Ղուկաս ԻԲ.19–20) Իր Հարությունից հետո Նա հաստատեց հաղորդությունը Նեփիացիների մեջ: (տես 3 Նեփի 18.1–11)

Այսօր մենք ճաշակում ենք հաց և ջուր ի հիշատակ Հիսուս Քրիստոսի քավող զոհաբերության: Այս արարողությունը մեր պաշտամունքի և մեր հոգևոր զարգացման համար կարևոր մաս է: Որքան ավելի շատ ենք մտածում դրա կարևորության մասին այնքան ավելի սրբազան է այն դառնում մեզ համար:

Հիշելով Փրկչին և Նրա Քավությունը

Հաղորդությունը հնարավորություն է տալիս ձեզ երախտագիտությամբ հիշել Աստծո Որդու կյանքը, ծառայությունը և Քավությունը:

Կտրված հացով դուք հիշում եք Նրա մարմինը: Դուք կարող եք հիշել Նրա ֆիզիկական չարչարանքը, հատկապես Նրա չարչարանքը խաչի վրա: Դուք կարող եք հիշել, որ Նրա ողորմածության և շնորհի միջոցով բոլոր մարդիկ հարություն կառնեն և հնարավորություն կտրվի Աստծո հետ հավերժական կյանքի համար:

Ջրի մի փոքրիկ բաժակով, դուք կարող եք հիշել, որ Փրկիչը Գեթսեմանի պարտեզից սկսած հեղեց Իր արյունը հոգևոր ուժեղ չարչարանքի և տվայտանքի մեջ: Այնտեղ Նա ասաց. «Հոգիս մեռնելու չափ տրտմած է»: (Մատթեոս ԻԶ.38) Ենթարկվելով Հոր կամքին, Նա չարչարվեց ավելի, քան մենք կարող ենք ըմբռնել: «Արյուն կգա յուրաքանչյուր ծակոտիից, այնքան մեծ կլինի նրա տվայտանքն իր ժողովրդի ամբարշտության և պղծությունների համար»: (Մոսիա 3.7) Դուք կարող եք հիշել, որ Իր արյան հեղմամբ Հիսուս Քրիստոսը փրկեց ձեզ և բոլոր մյուս մարդկանց նրանից, ինչ սուրբ գրքերը կոչում են Ադամի օրինազանցության «սկզբնական մեղք» (Մովսես 6.54): Դուք կարող եք հիշել, որ Նա նաև չարչարվել է բոլոր Երկնային Հոր զավակների մեղքերի, վշտերի և ցավերի համար՝ ապահովելով մեղքերի թողություն նրանց համար, ովքեր ապաշխարում են, ապրում ըստ ավետարանի: (տես 2 Նեփի 9.21–23)

Վերանորոգելով ուխտերը և խոստացված օրհնությունները

Երբ ճաշակում եք հաղորդությունից, դուք վկայում եք Աստծուն, որ կհիշեք Նրա Որդուն այդ սրբազան արարողությունից հետո նս: Դուք խոստանում եք, որ Նրան միշտ կհիշեք: Դուք վկայում եք, որ դուք հոժար եք ձեզ վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը և որ դուք կպահեք Նրա պատվիրանները: Ճաշակելով հաղորդությունից և վերցնելով այս պարտավորությունները, դուք վերանորոգում եք ձեր մկրտության ուխտը: (տես Մոսիա 18.8–10, ՎԿՈ 20.37)

Դուք ստանում եք մեծ օրհնություններ, երբ պահում եք մկրտության ուխտը: Երբ դուք վերանորոգում եք այն, Տերը վերանորոգում է ձեր մեղքերի խոստացված թողությունը: Մեղքից մաքրված դուք կարող եք Նրա Հոգին ձեզ հետ ունենալ: (տես ՎԿՈ 20.77) Հոգու մշտական ընկերակցությունը մեծագույն պարգևներից մեկն է, որ դուք կարող եք ունենալ մահկանացու կյանքում: Հոգին կառաջնորդի ձեզ արդարության և խաղաղության ուղիներով, տանելով ձեզ դեպի հավերժական կյանք ձեր Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ:

Ճաշակելով արժանիորեն

Յուրաքանչյուր շաբաթ պատրաստվելով հաղորդության, ժամանակ տրամադրեք քննության ենթարկելու ձեր կյանքը և ապաշխարելու ձեր մեղքերից: Դուք չպետք է կատարյալ լինեք, որպեսզի ճաշակեք հաղորդությունից, բայց դուք պետք է ունենաք համեստության և ապաշխարության հոգի ձեր սրտում: Ամեն շաբաթ դուք պետք է պատրաստվեք այդ սրբազան արարողությանը կոտրված սրտով և ապաշխարող հոգով: (տես 3 Նեփի 9.20)

Եթե դուք այնպիսի ակնածանքով և լրջությամբ մոտենաք հաղորդությանը, որին այն արժան է, այն դառնում է ամենշաբաթյա հնարավորություն ինքնադիտողության, ապաշխարության և վերանվիրման համար՝ ուժի աղբյուր և մշտական հիշեցում Փրկչի Քավության մասին:

Լրացուցիչ հղագրումներ՝ Ա Կորնթացիս ԺԱ.23–29, Մորոնի 4–5, ՎԿՈ 20.75–79, 27.2

Տես նաև՝ Հիսուս Քրիստոսի Քավություն, Ուխտ

Հաղորդության ժողով (*Տես՝* Հանգստյան օր, Հաղորդություն, Զոհաբերություն)

Համասեռություն (*Տես* Մաքրաբարոյություն)

Համեստություն

Համեստությունը հագուստով, հարդարանքով, լեզվի հեզությամբ և օրինականությամբ դրսևորվող վարքն է: Եթե դուք համեստ եք, դուք անտեղի ուշադրություն չեք հրավիրում ձեզ վրա: Ընդհակառակը դուք որոնում եք «փառավորել Աստծուն ձեր մարմնում և ձեր հոգում»: (Ա Կորնթացիս Զ.20, տես նաև 19 հատվածը)

Եթե համոզված չեք թե արդյոք ձեր զգեստը կամ հարդարանքը համեստ է թե ոչ, հարցրեք ինքներդ ձեզ. «Ես իմ արտաքինով արդյո՞ք անհարմար չէի զգա, եթե Տիրոջ ներկայության մեջ լինեի»: Դուք նմանատիպ հարց կարող եք տալ ձեր խոսելաձևի և վարքի վերաբերյալ: «Կասեի՞ այդ խոսքերը կամ կմասնակցեի՞ այդ զբաղմունքին, եթե Տերը ներկա լիներ»: Այս հարցերին ձեր ազնիվ պատասխանները կարող են առաջնորդել ձեզ կարևոր փոփոխություններ կատարել ձեր կյանքում: Հետևյալ տեղեկատվությունը կօգնի ձեզ համեստ լինելու ձեր ջանքերում:

Հագուստ և հարդարանք

Մարգարեները միշտ խորհուրդ են տվել մեզ համեստ հագնվել: Այս խորհուրդը հիմնված է այն ճշմարտության վրա, որ մարդկային մարմինը Աստծո սուրբ արարչագործությունն է: Հարգեք ձեր մարմինը որպես Աստծո պարգև: Ձեր հագուստով և արտաքինով դուք կարող եք ցույց տալ Տիրոջը, որ դուք գիտեք, թե որքան թանկ է ձեր մարմինը:

Ձեր հագուստները ցույց են տալիս, թե դուք ով եք: Այն պատկերացում է տալիս ձեր մասին և ազդում ձեր և ուրիշների

վարքի վրա: Երբ դուք լավ հարդարված և համեստ եք հագնված, դուք կարող եք հրավիրել Հոգու ուղեկցությունը և լավ ազդեցություն թողնել ձեր շրջապատում գտնվողների վրա:

Համեստ լինելու պատվիրանի կենտրոնում է ծննդաստեղծ զորության սրբազան լինելու, երեխաներ լույս աշխարհ բերելու ունակության գիտակցումը: Այս զորությունը պետք է օգտագործվի միայն ամուսնու և կնոջ միջև: Բաց և սեռապես տրամադրող հագուստը, որը ներառում է կարճ կիսավարտիքներ և կիսաշրջազգեստներ, սեղմ հագուստներ և վերնաշապիկներ, որոնք չեն ծածկում իրանը կարող են առաջացնել ցանկություններ և գործողություններ, որոնք խախտում են Տիրոջ մաքրաբարոյության օրենքը:

Բացի նրանից, որ պետք է խուսափել բաց հագուստներից, դուք պետք է խուսափեք հագուստի, արտաքինի և վարսահարդարման ծայրահեղ ոճերից: Հագուստով, հարդարանքով և շարժուձևով միշտ եղեք կոկիկ և մաքուր, երբեք մի եղեք թափթփված կամ անփույթ: Մի տձևացրեք ձեզ դաջվածքներով կամ մարմինը ծակելով: Եթե կին եք և ուզում եք ծակել ձեր ականջները, կրեք միայն մի զույգ համեստ ականջօղեր:

Պահպանեք համեստության բարձր չափանիշներ բոլոր դեպքերում: Մի ցածրացրեք ձեր չափանիշները, որպեսզի ուրիշների ուշադրությունը հրավիրեք ձեր մարմնի վրա կամ ուրիշների հավանությանն արժանանանք: Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտները պահպանում են Տիրոջ չափանիշները անկախ ներկա նորաձևությունից կամ ուրիշների ճնշումից:

Լեզու և վարք

Ձեր զգեստի և հարդարանքի նման ձեր լեզուն և պահվածքը ձեր բնավորության արտահայտությունն են: Ձեր խոսքերը և գործողությունները կարող են խորն ազդեցություն թողնել ձեր և ուրիշների վրա: Արտահայտվեք մաքուր, դրական, վեհացնող լեզվով և գործողություններով, որոնք բերում են երջանկություն ձեր շրջապատում եղողներին: Խոսքով և գործով համեստ լինելու ձեր

ջանքերի արդյունքում էլ ավելի է մեծանում Սուրբ Հոգու առաջնորդությունն ու սփոփանքը:

Խուսափեք կեղտոտ լեզվից և Տիրոջ անունն անտեղի, ոչ ակնածալի օգտագործելուց, որն այնքան ընդունված է աշխարհում: Դիմակայեք ծայրահեղ կամ անպատշաճ վարքի ամեն մի գայթակղության: Այդպիսի լեզվի և վարքի ոչ ակնածալի բնույթը զրկում է ձեզ Սուրբ Հոգու մեղմ հուշումները ստանալու ունակությունից:

Լրացուցիչ հղագրումներ՝ ՎԱՌ 42.40–41, Հավատո Հանգանակներ 1.13

Տես նաև Մարմնի ծակում, Մաքրաբարոյություն, Անպարկեշտություն, Դաջվածք

Հայհոյանք (*Տես* Սրբապղծություն)

Հայտնություն

Հայտնությունը Աստծուց եկող հաղորդակցություն է Իր զավակներին: Այս առաջնորդությունը գալիս է տարբեր ուղիներով՝ ըստ անհատների, ընտանիքների կարիքների և հանգամանքների և Եկեղեցուն որպես մի ամբողջություն:

Երբ Տերը հայտնում է Իր կամքը Եկեղեցուն, Նա խոսում է Իր մարգարեի միջոցով: Սուրբ գրքերը պարունակում են այդպիսի բազմաթիվ հայտնություններ, դա Տիրոջ խոսքն է տրված հնադարյան և վերջին օրերի մարգարեների միջոցով: Այսօր Տերը շարունակում է առաջնորդել Եկեղեցին՝ հայտնելով Իր կամքը Իր ընտրյալ ծառաներին:

Մարգարեները միակ մարդիկ չեն, ովքեր կարող են հայտնություն ստանալ: Ձեր հավատարմության համաձայն, դուք կարող եք ստանալ հայտնություն՝ օգնելու ձեր որոշակի կարիքների, պարտականությունների և հարցերի կապակցությամբ և օգնելու զորացնելու ձեր վկայությունը:

Պատրաստվելով հայտնություն ստանալ Սուրբ Հոգու միջոցով

Սուրբ գրքերը պատմում են հայտնության զանազան տեսակների մասին, ինչպես օրինակ՝ տեսիլքներ, երազներ և հրեշտակների այցելություն: Այս ուղիների միջոցով Տերը վերականգնել է Իր ավետարանը վերջին օրերում և հայտնի վերաբերյալ, ճշմարտություններ այնպիսի վարդապետությունների վերաբերյալ, ինչպես օրինակ՝ նախաերկրային գոյությունը, մահացածների փրկագնումը և փառքի երեք արքայությունները: Սակայն Եկեղեցու առաջնորդներին և անդամներին հայտնությունների մեծ մասը գալիս է Սուրբ Հոգու շշունջների միջոցով:

Հանդարտ հոգևոր հուշումները կարող են թվալ ոչ այնքան տպավորիչ, ինչպես տեսիլքները կամ հրեշտակների այցելությունները, բայց դրանք ավելի զորեղ են և հարատև և կյանքը փոխող: Սուրբ Հոգու վկայությունը տպավորություն է թողնում հոգու վրա, որն ավելի կարևոր է, քան որևէ բան, որ կարող եք տեսնել և լսել: Այսպիսի հայտնությունների միջոցով, դուք կստանաք ավետարանին հավատարիմ մնալու հարատև ուժ և կօգնեք ուրիշներին անել նույնը:

Հետևյալ խորհուրդը կօգնի ձեզ պատրաստվել հուշումներ ստանալու Սուրբ Հոգուց:

Աղոթեք առաջնորդության համար: Տերն ասել է. «Խնդրեցեք և կտրվի ձեզ, որոնեցեք և կգտնեք, դուռը թակեցեք և կբացվի ձեզ: Որովհետև ամեն խնդրող առնում է, և որոնողը գտնում է. և դուռը թակողին կբացվի»: (Մատթեոս Է.7–8) Որպեսզի գտնեք և ստանաք, դուք պետք է որոնեք և խնդրեք: Եթե դուք չեք թակում՝ աղոթելով ձեր Երկնային Հորն առաջնորդության համար, հայտնության դուռը չի բացվի ձեզ: Բայց եթե դուք մոտենաք ձեր Հորը խոնարհ աղոթքով, ի վերջո կարող եք ստանալ հայտնություն հայտնության վրա, գիտելիք գիտելիքի վրա, որպեսզի կարողանաք իմանալ գաղտնիքները և խաղաղաբեր այն բաները, որոնք բերում են հավերժական կյանք: (տես ՎԱՈ 42.61)

Եղեք ակնածալի: Ակնածանքը խորը հարգանք և սեր է: Երբ ակնածալի եք և խաղաղ, տրամադրվում եք հայտնություն ստանալու: Նույնիսկ, երբ ձեր շրջապատում ամեն ինչ խառնաշփո-

թության մեջ է, դուք կարող եք ակնածալի վերաբերմունք ունենալ և պատրաստ լինել առաջնորդություն ստանալու Տիրոջից:

Եղեք խոնարհ: Համեստությունը սերտորեն կապված է ակնածանքի հետ: Երբ խոնարհ եք, դուք ընդունում եք Տիրոջից ձեր կախվածությունը: Մարգարե Մորմոնը սովորեցրել է. «Հեզության ու սրտի խոնարհության շնորհիվ գալիս է Սուրբ Հոգու այցելությունը, Մխիթարիչ, որը լցնում է հույսով և կատարյալ սիրով»: (Մորոնի 8.26)

Պահեք պատվիրանները: Երբ պահեք պատվիրանները, դուք պատրաստ կլինեք ստանալ, ճանաչել և հետևել Սուրբ Հոգու հուշումներին: Տերը խոստացել է, որ նա, ով պահում է պատվիրանները Նա կտա իր արքայության գաղտնիքները և այն կլինի նրա մեջ կենդանի ջրի աղբյուր, վեր բխելով դեպի հավիտենական կյանք: (ՎԱՈ 63.23)

Հաղորդությունն արժանիորեն ճաշակեք: Հաղորդության աղոթքները սովորեցնում են մեզ, թե ինչպես ստանալ Սուրբ Հոգու մշտական ընկերակցությունը: Երբ վերցնում եք հաղորդությունը, դուք վկայում եք Աստծուն, որ դուք հոժար եք վերցնել ձեզ վրա Նրա Որդու անունը և որ դուք միշտ կհիշեք Նրան և կպահեք Նրա պատվիրանները: Երկնային Հայրը խոստանում է, որ երբ պահեք այս ուխտերը, դուք միշտ Հոգին կունենաք ձեզ հետ: (Տես ՎԱՈ 20.77, 79)

Ամեն օր ուսումնասիրեք սուրբ գրքերը: Երբ ջանասիրաբար ուսումնասիրում եք սուրբ գրքերը, սովորում եք այն տղամարդկանց և կանանց օրինակներով, որոնց կյանքը օրհնվել է, երբ նրանք հետևել են Տիրոջ հայտնած կամքին: Դուք նաև ավելի ընկալունակ եք դառնում Սուրբ Հոգու նկատմամբ ձեր սեփական կյանքում: Երբ կարդում եք և խորհում, կարող եք հայտնություն ստանալ այն մասին, թե ինչպես է որոշակի սուրբ գրքի հատված վերաբերում ձեզ կամ որ ինչ է Տերը ցանկանում հաղորդել ձեզ: Քանի որ սուրբ գիրքը կարդալը կարող է օգնել ձեզ անձնական հայտնություն ստանալ, դուք պետք է ուսունասիրեք սուրբ գրքերն ամեն օր:

Ժամանակ տրամադրեք խորհելուն: Երբ ժամանակ եք տրամադրում ավետարանի ճշմարտությունների մասին խորհելուն,

դուք բացում եք ձեր սիրտն ու միտքը Սուրբ Հոգու առաջնորդող ազդեցության առջև: (տես 1 Նեփի 11.1, ՎԱՈ 76.19, 138.1–11) Խորհելը հեռացնում է ձեր մտքերը աշխարհի անկարևոր բաներից և ձեզ ավելի է մոտեցնում Հոգուն:

Երբ որոնում եք հատուկ առաջնորդություն, ուսումնասիրեք այդ հարցը ձեր մտքում: Երբեմն Տիրոջ հաղորդակցությունը կգա միայն այդ հարցը ձեր մտքում լիովին ուսումնասիրելուց հետո: Տերը բացատրել է այդ պրոցեսը Օլիվեր Քաուդերիին, որը Ջոզեֆ Սմիթին որպես գրագիր էր ծառայում Մորմոնի Գրքի թարգմանության մեծ մասի համար: Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով Տերը խոսեց Օլիվեր Քաուդերիի հետ, բացատրելով թե ինչու Օլիվերը չկարողացավ թարգմանել Մորմոնի Գիրքը, չնայած նրան տրվել էր թարգմանելու պարգևը: Նա ասաց, որ Օլիվերը չէր հասկացել և ենթադրել էր, որ իրեն կտրվեր առանց իր կողմից մտածելու, միայն թե խնդրեր: Բայց, ահա նա պետք է ուսումնասիրեր իր մտքում և հետո հարցներ Նրան թե արդյոք ճիշտ էր և եթե ճիշտ լիներ նրա կուրծքը պիտի այրվեր ներսում, հետևաբար նա պիտի զգար, որ այն ճիշտ էր: (Տես ՎԱՈ 9.7–8)

Համբերությամբ որոնեք Աստծո կամքը: Աստված հայտնի է դարձնում Իրեն Իր ուրույն ժամանակին և Իր ուրույն ձևով և համաձայն Իր կամքի: (տես Վ և ու 88.63–68) Հայտնությունը հավանաբար կգա ձեզ «տող առ տող, ցուցում առ ցուցում, մի քիչ այստեղ և մի քիչ այնտեղ»: (2 Նեփի 28.30, տես նաև Եսայիա ԻԹ.10, ՎԱՈ 98.12) Մի փորձեք արհեստականորեն արագացնել հոգևոր բաները: Հայտնությունը չի գալիս այդ ուղով: Եղեք համբերատար և վստահեք Տիրոջ սահմանած ժամանակին:

Ճանաչելով Սուրբ Հոգու հուշումները

Այսօրվա աշխարհի բազում ձայների և լրատվության մեջ դուք պետք է սովորեք ճանաչել Սուրբ Հոգու հուշումները: Հետևյալը մի քանի հիմնական ուղիներ են, որոնցով Սուրբ Հոգին հաղորդակցվում է մեզ հետ՝

Նա խոսում է մտքի և սրտի հետ հանդարտ, մեղմ ձայնով: Տերը սովորեցրել է, որ Նա կասի մեզ մեր մտքում և սրտում, Սուրբ

Հոգու միջոցով, որը կգա մեզ վրա և կմնա մեր սրտում: Ահա դա հայտնության հոգին է: (տես ՎԼՈ 8.2–3) Երբեմն Սուրբ Հոգին կօգնի ձեզ հասկանալ ավետարանական ճշմարտություն կամ էլ կտա մի հուշում, որը կթվա թե կզբաղեցնի [ձեր] միտքը և կճնշի [ձեր] զգացմունքները (ՎԼՈ 128.1): Չնայած այդպիսի հայտնությունը կարող է զորեղ ազդեցություն ունենալ ձեզ վրա, այն գրեթե միշտ կգա հանդարտորեն, որպես «մեղմ, բարակ ձայն» (տես Ա Թագավորաց ԺԹ. 9–12, Հելաման 5.30, ՎԼՈ 85.6):

Նա հուշում է մեզ՝ մեր զգացմունքների միջոցով: Չնայած մենք հաճախ նկարագրում ենք Հոգուց եկող հաղորդակցությունը որպես ձայն, այդ ձայնը այնպիսին է, որ մենք ավելի շատ զգում ենք, քան լսում: Եվ երբ խոսում ենք Սուրբ Հոգու հուշումները «լսելու» մասին, մենք հաճախ նկարագրում ենք հոգևոր հուշումն ասելով. «Ես զգացի . . . »: Տիրոջ խորհուրդը Օլիվեր Քաուդերիին Վարդապետություն և Ուխտերի 9-րդ բաժնում, որը քննարկվում է 143 էջում, սովորեցնում է այս սկզբունքը: Սակայն այս սկզբունքը երբեմն սխալ է հասկացվում: Կարդալով այդ հատվածը, երբեմն որոշ Եկեղեցու անդամներ շփոթության մեջ են ընկնում, վախենալով, որ նրանք երբեք Սուրբ Հոգուց հուշում չեն ստացել, որովհետև երբեք իրենց կրծքում այրոց չեն զգացել: Ուշադրություն դարձրեք Վարդապետություն և Ուխտերի 9.8–րդ հատվածին, որտեղ ասվում է, որ դուք պիտի զգաք, որ այն ճիշտ է: Այս հատվածում նկարագրվող այրոցը հանգստության և անդորրի զգացում է և ոչ թե անպայման ջերմության զգացում: Երբ շարունակում եք որոնել և հետևել Տիրոջ կամքին ձեր կյանքում, դուք կսկսեք ճանաչել, թե ինչպես է Սուրբ Հոգին ձեզ վրա անհատապես ազդում:

Նա բերում է խաղաղություն: Սուրբ Հոգին հաճախ կոչվում է Մխիթարիչ: (տես Հովհաննես ԺԴ.26, ՎԼՈ 39.6) Երբ Նա հայտնում է ձեզ Տիրոջ կամքը, Նա խաղաղություն կհաղորդի ձեր մտքին: (տես ՎԼՈ 6.23) Այն խաղաղությունը, որ Նա է տալիս, չի կարող կեղծվել աշխարհիկ ազդեցություններով կամ կեղծ ուսմունքներով: Դա այն խաղաղությունն է, որ Փրկիչը խոստացավ, երբ Նա հավաստիացրեց Իր աշակերտներին, որ Նա կուղարկի Մխիթարիչին. «Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս

ձեզ. ոչ թե ինչպես աշխարհն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ. ձեր սիրտը չխռովի և չվախենա»: (տես Հովհաննես ԺԴ. 27)

Լրացուցիչ հղագրումներ՝ Ամոս Գ.7, Մատթեոս ԺԶ. 13–18, Ա Կորնթացիս Բ.9–14, ԺԲ.3, Հայտնություն ԺԹ.10, Ալմա 5.43–48, 17. 2–3, Վևու 76.5–10, 121.26–33, Հավատո Հանգանակներ 1.7, 9

Տես նաև՝ Հավատք, Սուրբ Հոգի, Աղոթք, Ակնածանք, Սուրբ գրքեր, Հոգևոր պարգևներ

Հայրապետական օրհնություններ

Հայրապետական օրհնությունները տրվում են Եկեղեցու արժանի անդամներին կարգված հայրապետերի կողմից: Ձեր հայրապետական օրհնությունը հայտնում է Իսրայելի տան ձեր տոհմը և պարունակում է Տիրոջ կողմից անձնական խորհուրդ ձեզ:

Երբ ուսումնասիրում եք ձեր հայրապետական օրհնությունը և հետևում այնտեղ պարունակվող խորհրդին, այն առաջնորդություն է տալիս, սփոփանք և պաշտպանություն: Պարզելու համար, թե ինչպես ստանալ հայրապետական օրհնություն, խոսեք ձեր եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի հետ:

Տոհմի հայտնումը

Ձեր հայրապետական օրհնությունը պարունակում է ձեր տոհմի հայտնումը, նշելով որ դուք Իսրայելի տնից եք, Աբրահամի հետնորդ՝ պատկանելով Հակոբի որոշակի ցեղի: Շատ Վերջին Օրերի Սրբեր Եփրեմի ցեղից են, այն ցեղը, որին տրված է վերջին օրերի Տիրոջ աշխատանքի ղեկավարման հիմնական պատասխանատվությունը:

Քանի որ մեզանից յուրաքանչյուրի երակներում հոսում է բազմաթիվ ցեղերի արյուն, նույն ընտանիքի երկու անդամներ կարող են հայտարարվել Իսրայելի տարբեր ցեղերից:

Նշանակություն չունի, թե ձեր տոհմը Իսրայելի տանը արյունակից է, թե որդեգրված: Որպես Եկեղեցու անդամ, դուք համարվում եք Աբրահամի հետնորդ և ժառանգորդ բոլոր խոստումների և օրհնությունների, որոնք պարունակվում են Աբրահամյան ուխտի մեջ: (տես «Աբրահամյան ուխտ» էջ 5–6)

Սովորելով ձեր հայրապետական օրհնությունից

Երբ ստանում եք ձեր հայրապետական օրհնությունը, դուք պետք է այն կարդաք խոնարհաբար, աղոթքով և հաճախ: Այն անձնական հայտնություն է ձեր Երկնային Հորից, որը գիտի ձեր ուժեղ և թույլ կողմերը և հավերժական ներուժը: Ձեր հայրապետական օրհնության միջոցով, Նա կօգնի ձեզ իմանալ, թե ինչ է ձեզանից ակնկալում: Ձեր օրհնությունը կարող է պարունակել խոստումներ, հորդորներ և նախազգուշացումներ: Երբ ժամանակն անցնի, դուք կճանաչեք նրանում պարունակվող հայտնության ուժը:

Երբ հետևեք ձեր օրհնության խորհրդին, ավելի քիչ կսայթաքեք կամ կմոլորվեք: Եթե չհետևեք խորհրդին, դուք չեք կարողանա ստանալ խոստացված օրհնությունները:

Չնայած ձեր հայրապետական օրհնությունը պարունակում է ոգեշնչված խորհուրդ և խոստումներ, դուք չպետք է ակնկալեք, որ այն կպատասխանի ձեր բոլոր հարցերին կամ կմանրամասնի բոլորը, ինչ պատահելու է ձեր կյանքում: Եթե ձեր օրհնությունը չի նշում կարևոր մի իրադարձություն, ինչպես օրինակ լիաժամկետ միսիա կամ ամուսնություն, դուք չպետք է ենթադրեք, որ այդ հնարավորությունը դուք չեք ստանա:

Նմանապես, դուք չպետք է ենթադրեք, որ այն ամենը, ինչ նշված է ձեր հայրապետական օրհնության մեջ, կիրականանա այս կյանքում: Հայրապետական օրհնությունը հավերժական է և դրա խոստումները կարող են տարածվել հավերժության մեջ: Վստահ եղեք, որ եթե դուք արժանի եք, բոլոր խոստումները կիրականանան Տիրոջ ուրույն ժամանակին: Այն խոստումները, որոնք չեն իրականացել այս կյանքում, կիրագործվեն հաջորդ կյանքում:

Ձեր հայրապետական օրհնությունը սրբազան է և անձնական: Դուք կարող եք կիսվել ընտանիքի անմիջական անդամների հետ, բայց դուք չպետք է բարձրաձայն կարդաք այն հասարակության մեջ կամ թույլ տաք ուրիշներին կարդալ այն և մեկնաբանել: Նույնիսկ ձեր հայրապետը, եպիսկոպոսը կամ ճյուղի նախագահը չպետք է մեկնաբանեն այն:

Ձեր սրտերում գանձի պես պահեք հայրապետական օրհնության թանկարժեք խոսքերը: Խորհեք դրանց մասին և ապրեք

այնպես, որպեսզի արժանի լինեք ստանալ խոստացված օրհնություններն ինչպես այս կյանքում, այնպես էլ եկող կյանքում:

Հայր Աստված

Հայր Աստվածը այն Գերագույն Էակն է, ում մենք հավատում ենք և ում երկրպագում ենք: Նա մեծագույն Արարիչն է, Կառավարիչը և բոլոր բաների Պահպանողը: Նա կատարյալ է, ունի ողջ իշխանությունը և գիտի բոլոր բաները: Նա ունի մսից և ոսկրից մարմին՝ այնպես շոշափելի ինչպես մարդունը: (ՎԱՈ 130.22)

Մեր Երկնային Հայրը դատաստանի և ուժի, գիտության և իշխանության Աստված է, բայց Նա նաև կատարյալ ողորմածության, բարության և գթության Աստված է: Չնայած «մենք չգիտենք բոլոր բաների իմաստը», մենք կարող ենք խաղաղություն գտնել այն անխախտ գիտությամբ, որ Նա սիրում է մեզ: (տես 1 Նեփի 11.17)

Մեր հոգիների Հայրը

Կյանքի մեծագույն հարցերից է՝ «Ո՞վ եմ ես»: Երեխաների Միության մի սիրված երգ օգնում է նույնիսկ երեխաներին պատասխանել այս հարցին: Մենք երգում ենք. «Զավակն եմ ես Աստծո, Նա է ինձ կյանք տվել»: Գիտելիքը, որ մենք Աստծո զավակներն ենք, ապահովում է ուժ, հանգստություն և հույս:

Դուք Աստծո տառացի զավակն եք՝ հոգեպես ծնված նախաերկրային կյանքում: Որպես Նրա զավակ, դուք կարող եք համոզված լինել, որ դուք ունեք աստվածային, հավերժական ներուժ և որ Նա կօգնի ձեզ՝ ձեր անկեղծ ջանքերում հասնելու այդ ներուժին:

Գերագույն Արարիչը

Երկնային Հայրը Գերագույն Արարիչն է: Հիսուս Քրիստոսի միջոցով Նա ստեղծեց երկինքը և երկիրը և նրանց միջի բոլոր բաները: (տես Մովսես 2.1) Ալման ասել է. «Նույնիսկ երկիրը, և բոլոր բաները, որ դրա երեսին են, այո և դրա շարժումը, այո, և

բոլոր մոլորակները, որոնք շարժվում են իրենց կանոնավոր ձևով, վկայում են, որ կա մի Գերագույն Ստեղծող»: (Ալմա 30.44)

Ժամանակ առ ժամանակ խորհեք արարչագործության գեղեցկությունների՝ ծառերի, ծաղիկների, կենդանիների, լեռների, օվկիանոսի ալիքների, նորածին երեխայի մասին: Ժամանակ գտեք նայելու երկնքին, որտեղ աստղերի և մոլորակների ընթացքը վկայում են, որ. «Աստված շարժվում է իր վեհափառությամբ և զորությամբ»: (ՎԱՈ 88.41–47)

Փրկության Ծրագրի Հեղինակը

Մեր Երկնային Հայրը ցանկանում է, որ մենք բնակվենք Իր հետ հավերժ: Նրա գործն է ու փառքը «իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»: (Մովսես 1.39) Դա հնարավոր դարձնելու համար, Նա պատրաստեց փրկության ծրագիրը: Նա ուղարկեց Իր Սիրելի Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, արձակելու մահվան կապանքները և քավելու աշխարհի մեղքերը. «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ իր միածին Որդին տվավ, որ ամեն նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանքն ունենա»: (Հովհ. Գ.16) Այս զոհաբերությունը մեր Երկնային Հոր սիրո մեծագույն արտահայտությունն է մեր նկատմամբ:

Գալով Հայր Աստծո Ճանաչմանը

Որպես Աստծո զավակներ, մենք հատուկ փոխհարաբերություն ունենք Նրա հետ, որոնց Նա առանձնացնում է Իր բոլոր մյուս արարումներից: Չգտեք ճանաչել ձեր Երկնային հետ, որոնց Նա առանձնացնում է Իր բոլոր մյուս արարումներից: Նա սիրում է ձեզ, և Նա տվել է ձեզ թանկագին հնարավորություն մոտենալ Նրան աղոթելով: Ձեր աղոթքները, որոնք ասվում են համեստությամբ և անկեղծությամբ լսվում են և պատասխանվում:

Դուք կարող եք նաև գալ ձեր Հոր ճանաչմանը՝ սովորելով Նրա Միածին Որդու մասին և կիրառելով ավետարանը ձեր կյանքում: Փրկիչը սովորեցրեց Իր աշակերտներին. «Եթե ինձ գիտենայիք, իմ Հորն էլ կգիտենայիք . . . ինձ տեսնողը Հորը տեսավ»: (Հովհ. ԺԴ. 7, 9)

Դուք մոտենում եք Հայր Աստծուն, երբ ուսումնասիրում եք սուրբ գրքերն ու վերջին օրերի մարգարեների խոսքերը և երբ ծառայություն եք մատուցում: Երբ դուք հետևում եք Աստծո կամքին և ապրում ինչպես Նա կկամենար, որ դուք ապրեիք, դուք ավելի եք նմանվում Նրան և Նրա Որդուն: Դուք պատրաստվում եք վերադառնալ, ապրելու Նրանց ներկայության մեջ:

Լրացուցիչ հղագրումներ՝ Հովհ. ԺԴ. 6, 21–24, ԺԷ. 3, Մոսիա 4.9, ՎԱՈ 132.22–24, Հավատո Հանգանակներ 1.1

Տես նաև Արարում, Աստվածագլուխ, Փրկության Ծրագիր

Հանգստյան օր

Հանգստյան օրը Տիրոջ օրն է, որն առանձնացվում է յուրաքանչյուր շաբաթ՝ հանգստի և պաշտամունքի համար: Հին Կտակարանի ժամանակներում Տիրոջ ուխտի ժողովուրդը պահում էր հանգստյան օրը շաբաթվա յոթերորդ օրը, որովհետև Աստված հանգստացավ յոթերորդ օրը, երբ ստեղծեց երկիրը: Տերը շեշտել է հանգստյան օրը պահելու կարևորությունը տասը պատվիրաններում:

«Հիշիր հանգստության օրը նրան սուրբ պահելու համար:

Վեց օր աշխատիր և քո բոլոր գործն արա:

Բայց յոթներորդ օրը՝ քո Եհովա Աստծո հանգստության օր է, ոչ մի գործ չգործես, ոչ դու, ոչ քո որդին՝ ոչ քո աղջիկը, ոչ քո ծառան ու աղախինը՝ ոչ քո անասունը՝ ոչ էլ քո դռան օտարականը:

Որովհետև Եհովան վեց օրվա մեջ արավ երկինքն ու երկիրը՝ ծովն ու բոլոր նրանց մեջ եղածները և յոթներորդ օրը հանգստացավ. նրա համար Եհովան օրհնեց հանգստության օրը և սրբեց նրան»: (Ելից Ի.8–11)

Հիսուս Քրիստոսի Հարությունից հետո, որը տեղի ունեցավ շաբաթվա առաջին օրը, Տիրոջ աշակերտները սկսեցին պահել հանգստյան օրը շաբաթվա առաջին օրը՝ կիրակին: (տես Գործք Ի.7)

Վերջին օրերին Տերը պատվիրել է մեզ շարունակել պահել հանգստյան օրը: Նա խոստացել է, որ եթե մենք հնազանդվենք

այս պատվիրանին մենք կստանանք երկրի լիությունը: (տես ՎԵՈՒ 59.16–20)

Քանի որ հանգստյան օրը սուրբ է, այն պետք է պահվի արժանի և սուրբ գործերի համար: Աշխատանքից և զվարճություններից հեռու մնալը բավական չէ: Փաստորեն, եթե մենք պարզապես անգործության ենք մատնվում հանգստյան օրը ոչինչ չանելով, մենք ձախողվում ենք օրը սուրբ պահել: 1831թ. Տերը Ջոզեֆ Սմիթին տրված մի հայտնության մեջ պատվիրել է՝ որպեսզի մենք ավելի լիովին անարատ պահենք մեզ աշխարհից պետք է գնանք աղոթքի տուն և մատուցենք մեր արարողությունները Նրա սուրբ օրը, քանզի այս մեզ համար մի նշանակված օր է՝ հանգստանալու մեր գործերից և մեր աղոթքները հղելու առ Բարձրյալը: (ՎԵՈՒ 59.9–10) Այս հայտնության համաձայն ամեն շաբաթ մենք հաճախում ենք հաղորդության ժողովի: Հանգստյան օրվա այլ գործեր կարող են ներառել՝ աղոթելը, խորհրդածելը, սուրբ գրքերը և վերջին օրերի մարգարեների ուսմունքներն ուսումնասիրելը, ընտանիքի անդամներին և ընկերներին նամակներ գրելը, օգտակար նյութեր կարդալը, հիվանդներին և տառապյալներին այցելելը և Եկեղեցու այլ ժողովներին մասնակցելը:

Լրացուցիչ հղագրումներ՝ Ելից ԼԱ.16–17, Մոսիա 18.23, ՎԵՈՒ 59.11–14, 68.29

Տես նաև Ակնածանք, Հաղորդություն, Պաշտամունք

Հաստատում (*Տես* Սուրբ Հոգի, Ձեռնադրում)

Հավատո հանգանակներ

Հավատո Հանգանակները ներկայացնում են Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամների մեջ հավատքի 13 հիմնական կետեր: Մարգարե Ջոզեֆ Սմիթը առաջին անգամ գրեց դրանք Ջոն Ուենթուորթին՝ լրագրի խմբագրին ուղղված մի նամակում, ի պատասխան Պր. Ուենթուորթի խնդրանքի, որը ցանկանում էր իմանալ, թե ինչի էին հավատում Եկեղեցու անդամները: Ավելի ուշ դրանք հրատարակվեցին Եկե-

ղեցու ամսագրերում: Այժմ այն համարվում է սուրբ գրություն և մտնում է Թանկագին Մարգարիտի մեջ:

Հավատք

Պողոս Առաքյալը սովորեցրել է. «հավատքն էլ հուսացած բաների հաստատությունը՝ և չերևացող բաների ապացույցն է»: (Եբրայեցիս ԺԱ.1, տես տողատակի ծանոթություն *բ*) Ալման արտահայտել է նմանատիպ մի միտք. «Եթե դուք ունեք հավատք, դուք հույս ունեք բաների համար, որոնք տեսանելի չեն, որոնք ճշմարիտ են»: (Ալմա 32. 21)

Հավատքը գործունեության և զորության սկզբունք է: Երբ որ աշխատում եք հասնել արժանի նպատակի, գործադրեք հավատք: Դուք հույս եք դրսևորում մի բանի հանդեպ, որը դուք դեռ չեք կարող տեսնել:

Հավատք առ Տեր Հիսուս Քրիստոս

Որպեսզի ձեր հավատքն առաջնորդի ձեզ դեպի փրկություն, այն պետք է կենտրոնացված լինի Տեր Հիսուս Քրիստոսի վրա: (տես Գործք Դ.10–12, Մոսիա 3.17, Մորոնի 7. 24–26, Հավատո Հանգանակներ 1.4) Դուք կարող եք հավատք գործադրել առ Քրիստոս, երբ դուք համոզվածություն ունենաք, որ Նա գոյություն ունի, ունենաք ճիշտ գաղափար՝ Նրա բնավորության մասին և մի իմացություն, որ դուք ձգտում եք ապրել համաձայն Նրա կամքի:

Հավատք ունենալ առ Քրիստոս նշանակում է լիովին ապավինել Նրան՝ վստահելով Նրա անսահման զորությանը, բանականությանն ու սիրուն: Դա ներառում է Նրա ուսմունքներին հավատալը: Դա նշանակում է, որ չնայած դուք չեք հասկանում բոլոր բաները, Նա հասկանում է: Հիշեք, քանի որ Նա տարել է բոլոր ձեր ցավերը, չարչարանքներն ու թուլությունները, Նա գիտի ինչպես օգնել ձեզ վեր բարձրանալ ձեր առօրյա դժվարություններից (տես Ալմա 7.11–12, ՎԿՈ 122.8): Նա «հաղթել է աշխարհին» (Հովհ. ԺՁ. 33) և ձեզ համար պատրաստել է հավերժական կյանք ստանալու ճանապարհ: Նա միշտ պատրաստ է օգնել ձեզ, երբ հիշեք Նրա

խնդրանքը՝ ապավինել Իրեն յուրաքանչյուր մտքում, առանց կասկածելու, առանց վախենալու: (տես ՎԵՌ 6.36)

Ապրեք հավատքով

Հավատքն ավելին է, քան պասսիվ հավատամքը: Դուք արտահայտում եք ձեր հավատքը գործի միջոցով՝ ձեր ապրելու ձևով:

Փրկիչը խոստացել է. «Եթե դուք հավատք ունենաք առ ինձ, դուք զորություն կունենաք անելու ինչ որ նպատակահարմար է ինձ»: (Մորոնի 7.33) Հավատքն առ Հիսուս Քրիստոս կարող է մղել ձեզ հետևելու Նրա կատարյալ օրինակին: (տես Հովհ.ԺԴ.12) Ձեր հավատքը կարող է առաջնորդել ձեզ՝ անելու բարի գործեր, հնազանդվելու պատվիրաններին և ապաշխարելու ձեր մեղքերից: (տես Հակոբոս Բ.18, 1Նեփի 3.7, Ալմա 34.17) Ձեր հավատքը կարող է օգնել ձեզ հաղթահարել գայթակղությանը: Ալման խորհուրդ տվեց իր որդի Հելամանին. «Սովորեցրու նրանց դիմակայել դևի ամեն գայթակղության՝ իրենց հավատքով առ Տեր Հիսուս Քրիստոսը»: (Ալմա 37.33)

Տերը զորավոր հրաշքներ կգործի ձեր կյանքում համաձայն ձեր հավատքի: (տես 2 Նեփի 26.13) Հավատքն առ Հիսուս Քրիստոս օգնում է ձեզ ստանալ հոգևոր և ֆիզիկական ապաքինում Նրա Քավության միջոցով: (տես 3 Նեփի 9. 13–14) Երբ գալիս են փորձության ժամանակները, հավատքը կարող է ձեզ ուժ տալ առաջ գնալու և քաջությամբ դիմակայելու ձեր դժվարություններին: Նույնիսկ, երբ ձեր ապագան անորոշ է թվում, ձեր հավատքն առ Փրկիչը կարող է ձեզ խաղաղություն տալ: (տես Հռովմայեցիս Ե.1, Հելաման 5.47)

Մեծացրեք ձեր հավատքը

Հավատքը պարգև է Աստծուց, բայց դուք պետք է մեծացնեք ձեր հավատքն այն ուժեղ պահելու համար: Հավատքը նման է ձեր թևի մկանին: Եթե դուք մարզում եք այն, մկանն ուժեղանում է, իսկ եթե այն դնում եք վիրակապի մեջ և այդպես թողնում, այն թուլանում է:

Դուք կարող եք մեծացնել հավատքի պարգևը աղոթելով Երկնային Հորը Հիսուս Քրիստոսի անունով: Երբ դուք արտահայտում եք ձեր երախտագիտությունը ձեր Երկնային Հոր հանդեպ և խնդրում Նրանից օրհնություններ, որոնց կարիքը դուք և ուրիշներն ունեն, դուք մոտենում եք Նրան: Դուք կմոտենաք Փրկչին, որի Քավությունը հնարավոր է դարձնում ձեզ համար խնդրել ողորմություն: (տես Ալմա 33.11) Դուք նաև ընկալունակ կլինեք Սուրբ Հոգու խաղաղ առաջնորդության հանդեպ:

Դուք կարող եք զորացնել ձեր հավատքը՝ պահելով պատվիրանները: Աստծուց եկող բոլոր օրհնությունների նման, հավատքը ձեռք է բերվում և աճում անձնական հնազանդության և արդար գործերի միջոցով: Եթե ցանկանում եք հարստացնել ձեր հավատքը՝ հասցնելով հնարավոր ամենաբարձր աստիճանին, դուք պետք է պահեք ձեր ուխտերը, որոնք դուք կապել եք:

Դուք կարող եք նաև զարգացնել ձեր հավատքը՝ կարդալով սուրբ գրքերը և վերջին օրերի մարգարեների խոսքերը: Մարգարե Ալման սովորեցրել է, որ Աստծո խոսքն օգնում է զորացնել հավատքը: Համեմատելով խոսքը սերմի հետ, նա ասում էր, որ «հավատալու ցանկությունը» կարող է առաջնորդել ձեզ «տեղ տալու» խոսքին «ցանվելու ձեր սրտում»: Այնուհետև դուք կզգաք, որ խոսքը լավն է, քանի որ այն կվեհացնի ձեր հոգին և կլուսավորի ձեր հասկացողությունը: Սա կզորացնի ձեր հավատքը: Երբ դուք անընդհատ սնուցեք խոսքը ձեր սրտում «մեծ ջանասիրությամբ, և համբերությամբ՝ սպասելով դրա պտղին, այն արմատ կգցի. և ահա այն կլինի դեպի հավիտենական կյանք վեր խոյացող մի ծառ»: (Տես Ալմա 32.26–43)

Լրացուցիչ հղագրումներ՝ Եբրայեցիս ԺԱ, Հակոբոս Ա.5–6, Բ.14–26, Եթեր 12.4–27, Մորոնի 7.20–48, ՎԱՈ 63. 7–11, 90.24

Տես նաև Մկրտություն, Հայր Աստված, Հիսուս Քրիստոս, Ապաշխարություն

Հավերժական կյանք

Տերը հայտարարել է. «Սա իմ գործն է և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»: (Մով-

սես 1. 39) Անմահություն նշանակում է հավերժ ապրել որպես հարություն առած էակ: Հիսուս Քրիստոսի Քավությամբ բոլորը կստանան այս պարգևը: Հավերժական կյանքը, կամ վեհացումը՝ սելեստիալ արքայության բարձրագույն աստիճանում մի տեղ ժառանգելն է, որտեղ մենք կապրենք Աստծո ներկայության մեջ և կշարունակենք որպես ընտանիքներ: (*Տես* ՎԿՈ 131. 1–4) Անմահության նման այս պարգևը հնարավոր է դառնում Հիսուս Քրիստոսի Քավությամբ: Հիսուս Քրիստոսի Քավությամբ բոլորը կստանան այս պարգևը: Սակայն այն պահանջում է մեր «հնազանդությունն ավետարանի օրենքներին և արարողություններին: (Հավատո Հանգանակներ 1.3)

Մնացեք հավերժական կյանքի արահետի վրա

Երբ մկրտվեցիք և ստացաք Սուրբ Հոգու պարգևը, դուք մտաք այն արահետը, որը տանում է դեպի հավերժական կյանք: Մարգարե Նեփին սովորեցրել է.

«Դարպասը, որով դուք պիտի մտնեք, ապաշխարությունն ու մկրտությունն է ջրով. և ապա գալիս է ձեր մեղքերի թողությունը՝ կրակով և Սուրբ Հոգով:

Եվ այն ժամանակ դուք այս նեղ և անձուկ արահետի վրա եք. որը տանում է դեպի հավերժական կյանք. այո, դուք մտել եք ներս՝ դարպասով. դուք արել եք ըստ Հոր և Որդու պատվիրանների. և դուք ստացել եք Սուրբ Հոգին, որը վկայում է Հոր և Որդու մասին՝ ի կատարումն խոստումի, որը նա արել է, որ՝ եթե դուք ներս մտնեք այդ ճանապարհով, դուք պիտի ստանաք»: (2 Նեփի 31.17–18)

Նեփին շեշտում է, որ այս «նեղ և անձուկ արահետը» մտնելուց հետո, մենք պետք է համբերենք հավատքով մինչև վերջ:

«Հետո, երբ դուք ներս եք մտել այս նեղ և անձուկ արահետը, ես կհարցնեի, թե արդյո՞ք ամեն ինչ արված է: Ահա, ես ասում եմ ձեզ՝ Ոչ. քանզի դուք չէիք գա այսքան հեռու, եթե դա չլիներ Քրիստոսի խոսքով և անխախտ հավատքով նրա հանդեպ՝ ապավինելով ամբողջովին նրա արժանիքներին, որը հզոր է փրկելիս:

Ուստի , դուք պետք է առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ՝ ունենալով հույսի կատարյալ պայծառություն,

և սեր՝ Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ: Ուստի, եթե դուք առաջ մղվեք, սնվելով Քրիստոսի խոսքով, և համբերեք մինչև վերջ, ահա, այսպես է ասում Հայրը. Դուք կունենաք հավերժական կյանք»: (2 Նեփի 31.19–20)

Այժմ, երբ դուք մկրտվել եք և հաստատվել, դեպի հավերժական կյանք ձեր առաջընթացի մեծ մասը կախված է փրկության մյուս արարողությունները ստանալուց՝ տղամարդկանց համար՝ Մելքիսեդեկյան Քահանայության կարգում, տղամարդկանց և կանանց համար՝ տաճարային օժտում և ամուսնության կնքում: Երբ դուք ստանում եք այս արարողությունները և պահում դրանց ուղեկցող ուխտերը, դուք պատրաստվում եք ժառանգել սելեստիալ փառքի բարձրագույն աստիճանը:

Ձեզ հասանելի է

Երբ խորհում եք «նեղ և անձուկ» արահետի վրա ձեր առաջընթացի մասին, համոզված եղեք, որ հավերժական կյանքը ձեզ հասանելի է: Տերը ցանկանում է, որ դուք վերադառնաք Նրա մոտ, և Նա երբեք ձեզանից չի պահանջի որևէ բան, որը դուք չկարողանաք իրականացնել: Նրա բոլոր պատվիրանները կանխատեսված են նպաստելու ձեր երջանկությանը: Երբ դուք գործի եք դնում հավատք և ծառայում եք Նրան ձեր ողջ զորությամբ, Նա ձեզ ուժ է տալիս և ապահովում է ձեզ համար ուղի՝ անելու այն, ինչ Նա պատվիրում է ձեզ: (տես 1 Նեփի 3.7) Հիշեք, որ երբ մեծ ջանքեր եք գործադրում և ապաշխարում ձեր մեղքերից, Հիսուս Քրիստոսի Քավությունը համակշռում է ձեր թուլություններին ու անօրինություններին, վիրավորանքներին ու ցավերին, որոնք դուք կրում եք այս կյանքում: «Մենք գիտենք, որ շնորհի միջոցով է, որ մենք փրկվում ենք՝ այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել»: (2 Նեփի 25.23)

Լրացուցիչ հղագրումներ՝ Հովհ. Գ.16, ԺԷ.3, 2 Նեփի 9.39, Մորոնի 7.41, ՎԱՈ 14. 7, 50. 5

Տես նաև Հիսուս Քրիստոսի Քավություն, Շնորհ, Փառքի Արքայություններ

Հարություն

Ադամի և Եվայի անկման պատճառով մենք ենթակա ենք ֆիզիկական մահվան, որը հոգու անջատումն է մարմնից: Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով, բոլոր մարդիկ հարություն կառնեն՝ փրկվելով ֆիզիկական մահից: (տես Ա Կորնթացիս ԺԵ.22) Հարությունը հոգու և մարմնի վերամիավորումն է կատարյալ և անմահական վիճակում, այլևս ենթակա չլինելով հիվանդության կամ մահվան: (տես Ալմա 11. 42–45)

Փրկիչը հարություն առած առաջին մարդն էր այս երկրի վրա: Նոր Կտակարանը պարունակում է մի քանի պատմություններ, վկայելով, որ Նա բարձրացել էր գերեզմանից: (տես Մատթեոս ԻԸ. 1–8, Մարկոս ԺԶ.1–14, Ղուկաս ԻԴ.1–48, Հովհաննես Ի. 1–29, Ա Կորնթացիս ԺԵ.1–8, Բ Պետրոս Ա.16–17)

Երբ հարություն առած Տերը հայտնվեց Իր Առաքյալներին, Նա օգնեց նրանց հասկանալ, որ Նա մսից և ոսկրից մարմին ուներ: Նա ասաց. «Տեսեք իմ ձեռքերը և իմ ոտքերը, որ ես ինքս եմ. շոշափեցեք ինձ և տեսեք, որովհետև ոգին մարմին և ոսկերք չունի, ինչպես ինձ եք տեսնում որ ունեմ»: (Ղուկաս ԻԴ.39) Իր հարությունից հետո, Նա հայտնվեց նաև Նեփիացիներին: (տես 3 Նեփի 11.10–17)

Հարության ժամանակ մենք «կդատվենք ըստ [մեր] գործերի . . . Մենք պիտի բերվենք կանգնելու Աստծո առաջ՝ իմանալով, ճիշտ ինչպես մենք հիմա գիտենք, և կունենանք մի վառ վերհուշ մեր բոլոր հանցանքի»: (Ալմա 11.41, 43) Հավերժական փառքը, որ մենք կստանանք կախված կլինի մեր հավատարմությունից: Չնայած բոլոր մարդիկ հարություն կառնեն, միայն նրանք, ովքեր եկել են դեպի Քրիստոս և ճաշակել Նրա ավետարանի լրիվությունից, կժառանգեն վեհացում և սելեստիալ արքայություն:

Հարության վերաբերյալ ըմբռնումն ու վկայությունը կարող է հույս և հեռանկար տալ, երբ անցնում եք դժվարություններով, փորձություններով և կյանքի հաջողություններով: Դուք կարող եք սփոփանք գտնել այն համոզվածությամբ, որ Փրկիչն ապրում է և որ Նրա Քավության միջոցով «նա ջարդում է մահվան կապանք-

ները, որպեսզի գերեզմանը հաղթանակ չունենա, և որպեսզի մահվան խայթը կուլ գնա փառքի հույսերին»: (Ալմա 22.14)

Լրացուցիչ հղագրումներ՝ Եսայիա ԻԵ.8, ԻԶ.19, Հովհաննես Ե.25–29, ԺԱ.25–26, Ա Կորնթացիս ԺԵ, Ենովս 1.27, Ալմա 40.23–26, 41, Մորմոն 9.12–14, ՎԱՈ 88.15–16, 93.33–34, Մովսես 1.39

Տես նաև Հիսուս Քրիստոսի Քավություն, Մահ՝ ֆիզիկական, Փառքի արքայություններ, Փրկության ծրագիր, Փրկություն, Հոգի

Հեզություն

Խոնարհ լինել նշանակում է երախտագիտությամբ ճանաչել ձեր կախվածությունը Տիրոջից՝ հասկանալ, որ դուք անընդհատ Նրա աջակցության կարիքն ունեք: Հեզություն նշանակում է գիտակցում, որ ձեր տաղանդներն ու ունակությունները պարգևներ են Աստծուց: Այն թուլության, ամաչկոտության կամ վախի նշան չէ, դա նշանակում է, որ դուք գիտեք, թե որտեղ է գտնվում ձեր իսկական ուժը: Դուք կարող եք լինել խոնարհ, բայց անվախ: Դուք կարող եք լինել և խոնարհ և խիզախ:

Հիսուս Քրիստոսը հեզության մեծագույն օրինակն է մեզ համար: Իր մահկանացու կյանքի ծառայության ընթացքում, Նա միշտ ընդունում էր, որ Իր ուժը գալիս էր Իր Հորից Իր կախման շնորհիվ: Նա ասում էր. «Ես ինձանից չեմ կարող ոչինչ անել . . . իմ կամքը չեմ որոնում, այլ ինձ ուղարկող Հոր կամքը»: (Հովհ. Ե.30)

Տերը կզորացնի ձեզ, երբ դուք խոնարհեցնեք ձեզ Նրա առջև: Հակոբոսը սովորեցրել է. «Աստված ամբարտավաններին հակառակ է կենում, բայց խոնարհներին շնորհք է տալիս . . . Խոնարհեցեք Տիրոջ առաջին, և Նա կբարձրացնի ձեզ»: (Հակոբոս Դ.6,10)

Լրացուցիչ հղագրումներ՝ Մատթեոս ԺԸ. 4, ԻԳ. 12, ԻԶ. 39, Ղուկաս ԻԲ. 42, Ա Պետրոս Ե. 5–6, Մոսիա 4.11–12, 15.6–7, Ալմա 5.27–28, Հելաման 3.33–35, Եթեր12.27, ՎԱՈ 12.8, 67.10, 112.10, 136.32–33

Հիսուս Քրիստոս

2000թ. հունվարի 1-ին Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը հրապարակեցին հետևյալ հայտարարությունը: Վերնագրված լինելով «Կենդանի Քրիստոսը», այս հայտարարությունը վկայություն է բերում Տեր Հիսուս Քրիստոսի մասին և համառոտ շարադրում Նրա ինքնությունը և աստվածային առաքելությունը:

«Հիշելով երկու հազարամյակ առաջ տեղի ունեցած Հիսուս Քրիստոսի Ծնունդը մենք բերում ենք մեր վկայությունը Նրա անզուգական կյանքի իրողության և Նրա մեծ քավող զոհաբերության անսահման զորության մասին: Ոչ ոք չի ունեցել այդպիսի խորը ազդեցություն բոլորի վրա, ովքեր ապրել են և ովքեր դեռ կապրեն երկրի վրա:

Նա Հին Կտակարանի Մեծ Եհովան էր և Նորի՝ Մեսիան: Իր Հոր ղեկավարության ներքո Նա էր երկրի արարիչը»: «Ամեն ինչ նրանով եղավ, և առանց նրան ոչինչ չեղավ, ինչ որ եղավ»: (Հովհ. Ա.3) Թեև անմեղ էր, Նա մկրտվեց, որ ամեն արդարություն կատարվի: Նա «ման եկավ բարի անելով» (Գործք Ժ. 38), սակայն արհամարհվեց դրա համար: Նրա ավետարանը խաղաղության ու բարյացակամության ուղերձ էր: Նա կոչ արեց բոլորին հետևել Իր օրինակին: Նա քայլեց Պաղեստինի ճանապարհներով, բուժելով հիվանդներին, տեսողություն շնորհելով կույրերին, կենդանացնելով մահացածներին: Նա սովորեցնում էր հավերժության ճշմարտությունները, մեր նախաերկրային կյանքի իրողությունը, երկրի վրա մեր կյանքի նպատակը և գալիք կյանքի համար Աստծո որդիների ու դուստրերի ներուժը:

Նա հիմնեց հաղորդության արարողությունը, որպես հիշեցում Իր մեծ քավող զոհաբերության: Նա ձերբակալվեց ու դատապարտվեց կեղծ մեղադրանքներով, մեղավոր ճանաչվեց՝ ամբոխին բավարարելու համար, և մահվան դատապարտվեց Գագաթի խաչի վրա:Նա զոհեց Իր կյանքը ողջ մարդկության մեղքերը քավելու համար: Նա մեծ փոխարինող պարգև էր ի օգուտ նրանց, ովքեր երբևէ կապրեն երկրի երեսին:

Մենք ամենայն լրջախոհությամբ վկայում ենք, որ Նրա կյանքը, որն առանցքային է ողջ մարդկության պատմության մեջ, սկիզբ չի առել Բեթլեհեմում, ոչ էլ ավարտվել է Գագաթում: Նա Աստծո Առաջնեկն էր. Միածին Որդին մարմնում, աշխարհի Քավիչը:

Նա հարություն առավ գերեզմանից «ննջածների առաջնեկ եղավ»: (Ա Կորնթ. ԺԵ.20) Որպես հարություն առած Տեր, Նա այցելեց նրանց, ում սիրել էր կյանքի ընթացքում: Նա նաև ծառայեց Իր «ուրիշ ոչխարներին» (Հովհ. Ժ. 16) հնադարյան Ամերիկայում: Ժամանակակից աշխարհում Նա և Նրա Հայրը հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին, սկսելով երկար խոստացված «ժամանակների լրության տնտեսությունը»: (Եփեսացիս Ա.10)

Ապրող Քրիստոսի մասին մարգարե Ջոզեֆը գրել է, որ Նրա աչքերը կրակի բոցի նման էին, Նրա գլխի մազերը ճերմակ էին, ինչպես մաքուր ձյունը, Նրա դեմքը փայլում էր, գերազանցելով արևի պայծառությունը, և Նրա ձայնը հորդացող մեծ ջրերի ձայնի նման էր, այո, Եհովայի ձայնը, ասելով,

որ Նա է առաջինն ու վերջինը, որ Նա ապրում է, որ Նա մահվան դատապարտվեց և, որ Նա է մեր պաշտպանն Աստծո առջև (տես ՎԱՈ 110.3–4)

Մարգարեն նաև ասել է, որ բոլոր վկայություններից զատ, որ տրվել են Փրկչի մասին, նա տալիս է այս վկայությունը, ամենավերջինը, որ Փրկիչն ապրում է:

Քանզի մարգարեն տեսել է Նրան Աստծո աջ կողմը նստած և լսել է ձայնը, ազդարարող, որ Նա է Աստծո Միածին Որդին,

որ Նրա կողմից, Նրա միջոցով և Նրանից աշխարհները կան ու արարվել են և բնակիչները դրանց՝ Աստծո ծնած որդիներն ու դուստրերն են: (տես ՎԱՈ 76.22–24)

Մենք ազդարարում ենք ամենայն խոհեմությամբ, որ Նրա քահանայությունը և Նրա Եկեղեցին վերականգնվել են երկրի երեսին. «Առաքյալների և մարգարեների հիմքի վրա շինված. որի անկյունի գլուխը Հիսուս Քրիստոսն է»: (Եփեսացիս Բ.20)

Մենք վկայում ենք, որ մի օր Նա կվերադառնա երկիր: «Եվ պիտի հայտնվի Տիրոջ փառքը, և ամեն մարմին միասին պիտի

տեսնեն»: (Եսայիա Խ.5) Նա կղեկավարի որպես Թագավորների Թագավոր և կկառավարի որպես Տերերի Տեր և ամեն ծունկ պիտի ծալվի ու ամեն լեզու խոստովանի Նրա առջև երկրպագության մեջ: Մեզանից յուրաքանչյուրը պետք է կանգնի դատվելու համար Նրա կողմից՝ համաձայն մեր գործերի ու մեր սրտի ցանկությունների:

Մենք վկայում ենք, որպես Նրա պատշաճ կերպով կարգված Առաքյալներ, որ Հիսուսը ապրող Քրիստոսն է, Աստծո անմահ Որդին: Նա է մեծ Թագավոր Էմմանուելը, որը կանգնած է այսօր Իր Հոր աջ կողքին: Նա է լույսը, կյանքը և հույսն աշխարհի: Նրա ճանապարհն այն արահետն է, որը տանում է դեպի երջանկություն այս կյանքում և հավիտենական կյանք գալիք աշխարհում: Փառք Աստծուն Իր աստվածային Որդու անզուգական պարգևի համար»: (Լիահոնա, Ապրիլ, 2000, էջ 2–3)

Տես նաև Հիսուս Քրիստոսի Քավություն

Հիսուս Քրիստոսի Երկրորդ գալուստը

Երբ Հիսուս Քրիստոսը Իր մահկանացու ծառայությունն ավարտելուց հետո երկինք համբարձվեց, երկու հրեշտակներ հայտարարեցին Նրա Առաքյալներին. «Այս Հիսուսը, որ ձեզանից վերացավ երկինքը, այսպես կգա ինչպես նրան տեսաք երկինքը գնալիս»: (Գործք Առաքելոց Ա.11) Երբ Փրկիչը նորից գա, Նա կգա զորությամբ և փառքով հայտարարելու երկիրը որպես Իր արքայություն: Նրա Երկրորդ Գալուստը սկիզբ կդնի Հազարամյակին:

Երկրորդ Գալուստը կլինի ահավոր, ողբալի ժամանակ ամբարիշտների համար, բայց այն կլինի խաղաղության և հաղթանակի օր արդարների համար: Տերը հայտնել է.

Նրանք, ովքեր իմաստուն են և ընդունել են ճշմարտությունը և վերցրել Սուրբ Հոգին որպես իրենց ուղեկից և չեն խաբվել՝ ճշմարիտ եմ ասում ձեզ, նրանք չեն կտրվի և կրակը գցվի, այլ կմնան այդ օրը:

Եվ երկիրը կտրվի նրանց որպես ժառանգություն և նրանք կբազմանան և կուժեղանան և նրանց երեխաները կմեծանան առանց մեղքի ի փրկություն:

Քանզի Տերը կլինի նրանց մեջ և նրա փառքը կլինի նրանց վրա, և նա կլինի նրանց թագավորը և օրենսդիրը: (ՎԱՌ 45.57–59)

Տերը չի հայտնել կոնկրետ, թե Ինքը երբ կգա նորից, ժամն ու օրը ոչ մի մարդ չգիտի, ոչ էլ երկնքի հրեշտակները, ոչ էլ նրանք կիմանան մինչև նրա գալը: (տես ՎԱՌ 49.7) Բայց Նա հայտնել է Իր մարգարեներին Իր Երկրորդ Գալստյանը նախորդող իրադարձություններն ու նշանները: Մարգարեացած իրադարձությունների և նշանների շարքում են՝

- Ուրացություն ավետարանական ճշմարտություններից: (տես Մատթեոս ԻԴ. 9–12, Բ Թեսաղոնիկեցիս Բ.1–3)
- Ավետարանի վերականգնումը, ներառյալ Հիսուս Քրիստոսի Եկեղեցու վերականգնումը: (տես Գործք Գ. 19–21, Հայտնություն ԺԴ. 6–7, ՎԱՌ 45.28, 133.36)
- Քահանայության բանալիների վերականգնում: (տես Մաղաքիա Դ. 5–6, ՎԱՌ 110.11–16)
- Մորմոնի Գրքի ի հայտ գալը: (տես Եսայիա ԻԹ.4–18, 3 Նեփի 21.1–11)
- Ավետարանի քարոզումը ողջ աշխարհով մեկ: (տես Մատթեոս ԻԴ.14)
- Ամբարշտության, պատերազմի և խառնաշփոթության ժամանակ: (տես Մատթեոս ԻԴ. 6–7, Բ Տիմոթեոս Գ.1–7, ՎԱՌ 29.17, 45.26–33, 88.91)
- Նշաններ երկնքում և երկրի վրա: (տես Հովել Բ.30–31, Մատթեոս ԻԴ. 29–30, ՎԱՌ 29.14–16, 45.39–42, 49.23, 88.87–90)

Մի մտահոգվեք Փրկչի Երկրորդ Գալստյան ճշգրիտ ժամանակի համար: Փոխարենը ապրեք այնպես, որ պատրաստ լինեք, երբ էլ որ Նա գա: Երբ տեսնեք այս վերջին օրերի աղետները,

հիշեք որ արդարները կարիք չունեն վախենալու Երկրորդ Գալստից կամ դրան նախորդող նշաններից: Իր Առաքյալներին ուղղված Փրկչի խոսքերը կարող եք վերաբերել ձեզ. Մի վախեցեք, քանզի, երբ բոլոր այս բաները տեղի ունենան, դուք կարող եք իմանալ, որ խոստումները, որոնք արվել են ձեզ, պիտի իրականանան: (տես ՎԱՈ 45.35)

Լրացուցիչ հղագրումներ՝ Ղուկաս ԻԱ. 34–36, Բ Պետրոս Գ. 10–14, ՎԱՈ 133.42–52, Ջոզեֆ Սմիթ՝ Մատթեոս

Տես նաև Հազարամյակ, Փրկության Ծրագիր, Նշաններ

Հիսուս Քրիստոսի Քավությունը

Քավել բառը նշանակում է հաշտեցնել կամ վերականգնել ներդաշնակությունը: Հիսուս Քրիստոսի Քավությամբ մենք կարող ենք հաշտվել Երկնային Հոր հետ: (տես Հռովմայեցիս Ե.10–11, 2 Նեփի 25. 23, Հակոբ 4.11) Մենք ի վերջո կարող ենք հավերժ ապրել Նրա ներկայության մեջ, դառնալով կատարյալ Հիսուսի միջոցով: (տես ՎԱՈ 76.62, 69՝)

Հիսուս Քրիստոսը «պատրաստված էր աշխարհի հիմնադրումից ի վեր՝ փրկագնելու [Իր] ժողովրդին»: (Եթեր 3.14) Նախաերկրային հոգևոր աշխարհում Երկնային Հայրը ներկայացրեց Փրկության հավերժական ծրագիրը, որը պահանջում էր մի անսահման, հավերժական Քավություն: Նախաերկրային Հիսուսը, այդ ժամանակ հայտնի որպես Եհովա, խոնարհաբար հայտարարեց, որ Նա ծրագիրն իրականացնելիս կկատարի Հոր կամքը (տես Մովսես 4.2): Այսպիսով Նա նախասահմանված էր իրականացնելու Քավությունը՝ գալու աշխարհ, կրելու պատիժը մեր մեղքերի համար, մահանալու խաչի վրա և հարություն առնելու: Նա դարձավ «Գառ, որ աշխարհի սկզբից հետէ մորթված է»: (Հայտնություն ԺԳ. 8, տես նաև Ա Պետրոս Ա. 19–20, Մովսես 7.47)

Քավությունը մեր հանդեպ Երկնային Հոր սիրո գերագույն արտահայտությունն է (տես Հովհ. Գ.16): Այն նաև Հոր և մեր հան-

դեպ Փրկչի սիրո մեծագույն արտահայտությունն է: (տես ԺԴ. 28–31, ԺԵ. 9–13, Ա Հովի. Գ.16, ՎԱՌ 34. 3, 138. 1–4)

Քավության համար մեր կարիքը

Որպես Ադամի և Եվայի հետնորդներ բոլոր մարդիկ ժառանգում են Անկման հետևանքները: Մենք բոլորս տանում ենք հոգևոր մահ, մեկուսացած լինելով Աստծո ներկայությունից, և մենք բոլորս ենթակա ենք ժամանակավոր մահվան, որը ֆիզիկական մարմնի մահն է: (տես Ալմա 42. 6–9, ՎԱՌ 29. 41–42)

Ընկած վիճակում, մենք ենթակա ենք ընդդիմության և գայթակղության: Երբ տեղի ենք տալիս գայթակղությանը, մենք հեռացնում ենք մեզ Աստծուց և զրկվում Նրա փառքից: (տես Հռովմայեցիս Գ. 23)

Հավերժական արդարադատությունը պահանջում է, որ Անկման հետևանքները մնան և որ մենք պատժվենք մեր իսկ մեղսագործությունների համար: Առանց Քավության հոգևոր և ժամանակավոր մահը կդներ մի անանցանելի արգելք մեր և Աստծո միջև: Քանի որ մենք չենք կարող ինքներս մեզ փրկել Անկումից կամ մեր իսկ մեղքերից, մենք հավերժ մեկուսացված կլինեինք մեր Երկնային Հորից, քանզի «ոչ մի անմաքուր բան չի կարող ապրել . . . նրա ներկայության մեջ»: (Մովսես 6. 57)

Մեզ համար փրկվելու միակ միջոցը որևէ մեկ ուրիշի կողմից ազատագրումն է: Մենք կարիք ունենք մեկի, որը կկարողանա բավարարել արդարադատության պահանջները՝ կանգնելով մեր փոխարեն և իր վրա վերցնելով Անկման բեռը և վճարելով գինը մեր մեղքերի համար: Հիսուս Քրիստոսը միշտ միակն է եղել, որն ի վիճակի էր այդպիսի զոհաբերություն կատարել:

Հիսուս Քրիստոս՝ մեր միակ հույսը

Նախքան Երկրի արարումը Փրկիչն է եղել մեր միակ հույսը խաղաղության համար այս աշխարհում և հավերժական կյանքի համար գալիք աշխարհում: (տես ՎԱՌ 59. 23)

Միայն Նա ուներ իշխանություն վար դնելու Իր կյանքը և կրկին այն վերցնելու: Իր մահկանացու մորից՝ Մարիամից, Նա

ժառանգեց մեռնելու ունակությունը: Իր անմահ Հորից, Նա ժառանգեց մահվանը հաղթելու իշխանությունը: Նա հայտարարել է. «Որովհետև ինչպես որ Հայրն իր անձումը կյանք ունի, այնպես էլ Որդուն տվավ՝ որ իր անձումն կյանք ունենա»: (Հովհ. Ե. 26)

Միայն Նա կարող էր փրկագնել մեզ մեր մեղքերից: Հայր Աստված տվեց Նրան այդ զորությունը: (տես Հելաման 5.11) Փրկիչը կարողացավ ստանալ այդ զորությունը և իրականացնել Քավությունը, որովհետև Նա Իրեն զերծ պահեց մեղքից: Նա կրեց գայթակղություններ, բայց տեղի չտվեց դրանց (տես ՎԿՈ 20.22): Ապրելով կատարյալ, անմեղ կյանքով, Նա ազատ էր արդարադատության պահանջներից: Քանի որ Նա ուներ փրկագնման զորություն և չուներ պարտք արդարադատությանը, Նա կարողացավ վճարել պարտքը նրանց համար, ովքեր ապաշխարում են: Նա կարող է ասել.

Հայր, տես տառապանքները և մահը նրա, որը չմեղանչեց, որին դու հավանեցիր. ահա, քո Որդու արյունը, որը հեղվեց, նրա արյունը, որին դու տվեցիր, որպեսզի դու ինքդ կարենայիր փառավորվել,

Ուստի, Հայր, խնայիր, իմ այս եղբայրներին, ովքեր հավատում են իմ անունին, որպեսզի նրանք կարողանան գալ ինձ մոտ և ունենալ հավիտենական կյանք: (տես ՎԿՈ 45. 4–5)

Իսկապես, «տրված չի լինի ոչ մի ուրիշ անուն, ոչ էլ՝ որևէ ուրիշ ճանապարհ, ոչ էլ՝ միջոց, որի շնորհիվ կարող է փրկություն գալ մարդկանց զավակներին, բացի Քրիստոսի՝ Ամենակարող Տիրոջ անունով և միջոցով»: (Մոսիա 3.17)

Քավող զոհաբերությունը

Հիսուսի քավող զոհաբերությունը տեղի ունեցավ Գեթսեմանի Պարտեզում և խաչի վրա՝ Գողգոթայում: Գեթսեմանում Նա ենթարկվեց Հոր կամքին և սկսեց Իր վրա վերցնել բոլոր մարդկանց մեղքերը: Նա հայտնել է որոշ բան այն ամենից ինչ Նա տարել էր, երբ վճարում էր գինը մեր մեղքերի համար.

Ես՝ Աստված, տարել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն, եթե կամենան ապաշխարել:

Բայց եթե նրանք չկամենան ապաշխարել, նրանք պիտի տառապեն, նույնիսկ ինչպես ես,

Տառապանք, որը ստիպեց ինձ, նույնիսկ Աստծուս, բոլորից մեծագույնիս, դողալ ցավից և արնահոսել յուրաքանչյուր ծակոտիից ու տառապել, և՛ մարմնով, և՛ հոգով, և կամեցա չխմել դառը գավաթը, և ետ քաշվել,

Սակայն, փառքը լինի Հորը, և ես ճաշակեցի և վերջացրեցի մարդկանց զավակների համար նախապատրաստությունները: (տես ՎԼՈ 19. 16–19, տես նաև Ղուկաս ԻԲ. 44, Մոսիա 3.7)

Փրկիչը շարունակեց տառապել մեր մեղքերի համար, երբ Նա Ինքը թույլ տվեց, որ խաչվի, «Նա խաչ բարձրացվեց և սպանվեց աշխարհի մեղքերի համար» (1 Նեփի 11.33):

Խաչի վրա, Նա թույլ տվեց, որ Ինքը մահանա: Այնուհետև Նրա մարմինը դրվեց գերեզմանում, մինչև Նա հարություն առավ և դարձավ «ննջածների առաջնեկ» (Ա Կորնթացիս ԺԵ. 20): Նրա մահվան և Հարության միջոցով, Նա մեզ բոլորիս համար հաղթեց ֆիզիկական մահին: Ավելի ուշ Նա ասաց.

«Ես եկա աշխարհ՝ կատարելու իմ Հոր կամքը, որովհետև իմ Հայրն ուղարկեց ինձ:

Եվ իմ Հայրն ուղարկեց ինձ , որպեսզի ես խաչի վրա բարձրացվեմ, իսկ հետո, երբ խաչի վրա էի բարձրացվել, որպեսզի ես կարողանայի բոլոր մարդկանց ձգել դեպի ինձ, որպեսզի ինչպես ես բարձրացվեցի մարդկանց կողմից, ճիշտ նույնպես մարդիկ բարձրացվեն Հոր կողմից՝ կանգնելու իմ առջև, դատվելու ըստ իրենց գործերի՝ լինեն դրանք բարի, թե լինեն դրանք չար,

Եվ այս պատճառով եմ ես բարձրացվել. հետևաբար, համաձայն Հոր զորությանը, ես բոլոր մարդկանց կձգեմ դեպի ինձ, որպեսզի նրանք կարողանան դատվել՝ համաձայն իրենց գործերի:

Եվ կլինի այնպես, որ ով որ ապաշխարի և մկրտվի իմ անունով, կլցվի Սուրբ Հոգով. և եթե նա համբերի մինչև վերջ, ահա, նրան ես կհամարեմ անմեղ իմ Հոր առաջ, այն օրը, երբ ես կկանգնեմ՝ դատելու աշխարհը»: (3 Նեփի 27.13–16)

Համընդհանուր փրկագնում անկումից

Քավության միջոցով Հիսուս Քրիստոսը փրկագնում է բոլոր մարդկանց Անկման հետևանքներից: Բոլոր մարդիկ, որոնք երբևէ ապրել են երկրի վրա, հարություն կառնեն և հետ կբերվեն Աստծո ներկայության մեջ՝ դատվելու: (տես 2 Նեփի 2. 5–10, Հելաման 14.15–17) Փրկչի ողորմածության պարգևի և փրկագնող շնորհի միջոցով մենք բոլորս կստանանք անմահության պարգևը և հավերժ կապրենք փառավորված և հարություն առած մարմիններում:

Փրկություն մեր մեղքերից

Չնայած մենք Անկման համաշխարհային հետևանքներից փրկագնվում ենք առանց պայմանի, մենք պատասխանատու ենք մեր սեփական մեղքերի համար: Բայց մենք կարող ենք ներվել և մաքրվել մեղքի բծից, եթե «գործի դնենք Քրիստոսի քավող արյունը»: (Մոսիա 4.2) Մենք պետք է գործադրենք հավատք առ Հիսուս Քրիստոս, ապաշխարենք, մկրտվենք մեղքերի թողության համար և ստանանք Սուրբ Հոգին: Ալման խորհուրդ էր տալիս.

«Դուք պետք է ապաշխարեք և վերստին ծնվեք, քանզի Հոգին ասում է. եթե դուք չծնվեք վերստին, դուք չեք կարող ժառանգել երկնքի արքայությունը. հետևաբար, եկեք և մկրտվեք ապաշխարության համար, որպեսզի կարողանաք լվացված լինել ձեր մեղքերից, որպեսզի կարողանաք ունենալ հավատք առ Աստծո Գառը, որը վեր է առնում աշխարհի մեղքը, որը հզոր է փրկելում ու ամեն անարդարությունից սրբելում»: (Ալմա 7.14)

Հավերժական Կյանքի Պարգևը

Փրկիչը հայտարարել է, որ հավերժական կյանքը «Աստծո բոլոր պարգևներից մեծագույնն է»: (ՎԱՌ 14. 7) Հավերժական կյանքի հասնելու համար պետք է արժանի լինել բնակվել Աստծո ներկայության մեջ՝ ժառանգելով մի տեղ սելեստիալ արքայության բարձրագույն աստիճանում: Այս պարգևը մատչելի է դառնում միայն Հիսուս Քրիստոսի Քավությամբ: Մորմոնն ասել է.

«Եվ ի՞նչն է, որի համար դուք պիտի հույս ունենաք: Ահա, ես ասում եմ ձեզ, որ դուք կունենաք հույս, Քրիստոսի քավության և նրա հարության զորության միջոցով, բարձրացվելու դեպի հավերժական կյանք, և այս՝ ձեր հավատքի շնորհիվ առ նա՝ խոստումի համաձայն»: (Մորոնի 7.41)

Այս պարգևը ստանալու համար, մենք պետք է բավարարենք որոշակի պայմաններ: Մենք պետք է հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոս, ապաշխարենք մեր մեղքերից և համբերենք հավատարմորեն մինչև վերջ: Մենք պետք է ստանանք փրկության արարողությունները՝ մկրտություն, Սուրբ Հոգու պարգևը, Մելքիսեդեկյան Քահանայության կարգում (տղամարդկանց համար), և տաճարային օժտում և ամուսնության կնքում: Ստանալով այս արարողությունները և պահելով դրանց հետ կապված ուխտերը, մենք գալիս ենք դեպի Քրիստոս և վերջում ստանում հավերժական կյանքի պարգևը: (տես Հավատո Հանգանակներ 1.3)

Իր անսահման արդարադատությամբ և ողորմածությամբ Տերը հավերժական կյանք է տալիս նաև բոլոր նրանց, ովքեր մահացել են առանց այս ավետարանի իմացության, ովքեր կընդունեին այն, եթե նրանց թույլ տրվեր ապրել և բոլոր երեխաներին, ովքեր մահանում են մինչև պատասխանատվության տարիքի հասնելը: (տես ՎԱՌ 137.7,10)

Փրկիչը հրավիրում է մեզ բոլորիս ստանալ հավերժական կյանք՝ «Նա ուղարկում է մի հրավեր բոլոր մարդկանց, քանզի ողորմության բազուկները մեկնված են դեպի նրանց, և նա ասում է. Ապաշխարեք, և ես կընդունեմ ձեզ: Այո նա ասում է. Եկեք ինձ մոտ, և դուք կճաշակեք կենաց ծառի պտղից. այո, դուք կուտեք և կխմեք կյանքի հացից ու ջրից անհատույց»: (Ալմա 5. 33–34)

Գտնելով Խաղաղություն և Ապաքինում Քավության միջոցով

Փրկչի Քավության օրհնությունները տարածվում են ողջ հավերժության մեջ, բայց դրանք գալիս են այս կյանք ևս: Երբ դուք գաք Քրիստոսի մոտ, դուք կիմանաք Տիրոջ առջև մաքուր լինելու ուրախությունը: Դուք կկարողանաք արձագանքել Ալմայի խոսքերին, որը մեծ մեղքից և ապստամբությունից հետո, զգաց

ապաշխարության ցավոտ, բայց ապաքինող գործընթացը: Ներումն ստանալուց հետո նա վկայել է.

«Ես այլևս չկարողացա հիշել իմ ցավերը. այո, ես այլևս տակնուվրա չէի լինում իմ մեղքերի հիշողությունից:

Եվ, Օ՜հ, ինչպիսի ուրախություն, և ինչ սքանչելի լույս ես տեսա. այո, իմ հոգին լցվեց ուրախությամբ՝ նույնքան սաստիկ, ինչպիսին իմ ցավն էր:

. . . Չէր կարող լինել ոչինչ, այնպես ուժգին և այնպես անողոք, ինչպես իմ ցավերն էին . . . մյուս կողմից, չէր կարող լինել ոչինչ այնպես ուժգին և քաղցր, ինչպիսին իմ ուրախությունն էր»: (Ալմա 36. 19–21)

Ի հավելումն առաջարկելով փրկագնում մեղքի ցավից, Փրկիչն առաջարկում է խաղաղություն փորձության ժամանակ: Որպես Իր Քավության մի մաս Հիսուսն Իր վրա վեր առավ բոլոր մարդկանց ցավերը, հիվանդություններն ու թուլությունները: (տես Ալմա 7.11–12) Նա հասկանում է ձեր տառապանքը, որովհետև նա տարել է այն: Այս կատարյալ հասկացողությամբ, Նա գիտի ինչպես օգնել ձեզ: Դուք կարող եք զգել «ձեր բոլոր հոգսը նրա վրա, որովհետև նա հոգս է անում ձեզ համար»: (Ա Պետրոս Ե.7)

Ձեր հավատքի և արդարակյացության և Նրա քավող զոհաբերության միջոցով, այս կյանքի բոլոր անօրինությունները, անարդարություններն ու ցավերը կարող են լիովին հատուցվել և ուղղվել: Այս կյանքում մերժված օրհնությունները կտրվեն հավերժության մեջ: Եվ չնայած Նա գուցե ձեր ողջ տառապանքն այժմ չամոքի, Նա կօրհնի ձեզ հանգստությամբ, հասկացողությամբ և ուժով «[ձեր] բեռները հեշտությամբ տանելու»: (Մոսիա 24.15)

«Ինձ մոտ եկեք, ամեն վաստակածներ և բեռնավորվածներ», - ասել է Փրկիչը,- «և ես հանգիստ կտամ ձեզ»: (Մատթեոս ԺԱ. 28) Մեկ այլ առիթով նա կրկին խոստացել է Իր խաղաղությունն, ասելով. «Աշխարհքումը նեղություն կունենաք. բայց քաջացեք, ես հաղթել եմ աշխարհքին»: (Հովհ.ԺԶ. 33) Սրանք Քավության խոստումներն են այս կյանքում և ողջ հավերժության մեջ:

Լրացուցիչ հղագրումներ՝ Եսայիա ԽԹ.13–16, ԾԳ, Մատթեոս ԻԶ–ԻԸ, Մարկոս ԺԴ–ԺԶ, Ղուկաս ԻԲ–ԻԴ, Հովհաննես Ժ.14–15; ԺԱ. 25–26; ԺԴ.6; ԺԵ.13,

19–20, Ա Կորնթացիս ԺԵ.20–22; Եբրայեցիս Դ.14–16, Ա Հովհ. Ա.7, 1 Նեփի 10.6, 2 Նեփի 2.1–10, 9, 25.23–26, Հակոբ 4.12, Մոսիա 3.1–19, Ալմա 22.14, 34.5–18, 42, Հելաման 5. 9–12, 14. 3–19, 3 Նեփի 9.14–22, 27.13–22, Մորմոն 9.10–14, Եթեր 12. 27, 41, Մորոնի 8. 5–26, 10. 32–33, ՎԿՈ 18.10–12, 19.15–24, 20.17–34, 45. 3–5, 76. 40–43, Մովսես 1. 39

Տես նաև Մկրտություն, Մահ՝ Ֆիզիկական, Մահ՝ Հոգևոր, Հավերժական Կյանք, Հավատք, Անկում, Ներում, Հայր Աստված, Ավետարան, Արդարադատություն, Փառքի Արքայություններ, Ողորմածություն, Արարողություններ, Փրկության Ծրագիր, Ապաշխարություն, Հարություն, Փրկություն

Հնազանդություն

Նախաերկրային գոյության ժամանակ Երկնային Հայրը երկնքում նախագահում էր մի մեծ Խորհրդում: Այնտեղ մենք իմացանք մեր փրկության Նրա մեծ ծրագրի մասին, որը ներառում էր երկրի վրա ստուգման մի ժամանակահատված. «Մենք երկիր կպատրաստենք, որի վրա նրանք կկարողանան բնակվել, և սրանով մենք կստուգենք նրանց, տեսնելու թե նրանք կանեն բոլոր բաները, ինչ որ Տերը իրենց Աստվածը կպատվիրի իրենց»: (Աբրահամ 3.24–25) Այստեղ՝ երկրի վրա լինելու պատճառներից մեկը Երկնային Հոր պատվիրաններին հնազանդվելու ձեր պատրաստակամության դրսևորումն է:

Շատ մարդիկ զգում են, որ պատվիրանները բեռ են և որ դրանք սահմանափակում են ազատությունն ու անհատական աճը: Բայց Փրկիչը սովորեցրել է, որ իսկական ազատությունը գալիս է միայն Նրան հետևելուց. «Եթե դուք իմ խոսքի մեջ կենաք, ճշմարտապես իմ աշակերտներն եք: Եվ ճշմարտությունը կճանաչեք և ճշմարտությունը կազատե ձեզ»: (Հովհ. Ը.31–32) Աստված տալիս է պատվիրաններ ձեր օգտի համար: Դրանք սիրով լեցուն ցուցումներ են ձեր երջանկության և ձեր ֆիզիկական ու հոգևոր բարօրության համար:

Մարգարե Ջոզեֆ Սմիթը սովորեցրել է, որ պատվիրաններին հնազանդ լինելը բերում է օրհնություններ Աստծո կողմից: Նա ասել է, որ երկնքում անդարձորեն վճռված օրենք գոյություն ունի այս աշխարհի հիմնադրումից առաջ, որոնց վրա են հիմնվում բոլոր օրհնությունները: (տես ՎԿՈ 130.20–21) Թագավոր

Բենիամինը ևս սովորեցրել է այս սկզբունքը: «Ես կցանկանայի, որ դուք խորհեք օրհնված և երջանիկ վիճակի վրա նրանց, ովքեր պահում են Աստծո պատվիրանները», խորհուրդ է տալիս նա: «Քանզի, ահա, նրանք օրհնված են բոլոր բաներում՝ և աշխարհիկ, և հոգևոր, և եթե նրանք հավատարմորեն դիմանում են մինչև վերջ, նրանք ընդունվում են երկնքում, և դրա շնորհիվ նրանք կարողանում են բնակվել Աստծո հետ՝ երբեք չվերջացող երջանկության վիճակում: Օ՜ հիշե՛ք, հիշե՛ք, որ այս բաները ճշմարիտ են. քանզի Տեր Աստված է ասել դրանք»: (Մոսիա 2.41)

Մեր հնազանդությունը պատվիրաններին Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր սիրո արտահայտությունն է: Փրկիչն ասել է. «Եթե ինձ սիրում եք, իմ պատվիրանքները պահեցեք»: (Հովհ. ԺԴ.15) Նա հայտարարեց ավելի ուշ. «Եթե իմ պատվիրանքները պահեք, իմ սերի մեջ կկենաք. ինչպես ես իմ Հոր պատվիրանքները պահեցի, և կենում եմ նրա սերի մեջ»: (Հովհ. ԺԵ.10)

Լրացուցիչ հղագրումներ՝ Հեսու ԻԴ.14–15, Ժողովող ԺԲ.13, Մատթեոս Է.21, Հովհաննես Է.17, 1 Նեփի 3.7, ՎԿՈ 58.21–22, 82.8–10

Տես նաև Ազատ կամք, Փրկության ծրագիր

Հոգի

Սուրբ գրքերում *հոգի* տերմինն օգտագործվում է երկու ձևով: Առաջինը, ֆիզիկական մարմնի հետ միավորված ոգի է, լինի դա մահկանացու կյանքում, թե հարությունից հետո, և կոչվում է հոգի: Երկրորդը՝, մեր ոգիները երբեմն կոչվում են հոգիներ: (տես Ալմա 40. 15–18, Աբրահամ 3.23)

Տես նաև՝ Փրկության Ծրագիր, Հարություն, Հոգի

Հոգի

Դուք Երկնային Հոր հոգևոր զավակն եք և դուք գոյություն ունեիք որպես հոգի նախքան երկրի վրա ձեր ծնվելը: Երկրի վրա ձեր կյանքի ընթացքում, ձեր հոգին բնակվում է մահկանացու ծնողներից ծնված ֆիզիկական մարմնում:

Սուրբ գրքերից մենք իմանում ենք հոգիների բնույթի մասին: Մենք իմանում ենք որ ամեն հոգի նյութ է, բայց այն ավելի նուրբ կամ հստակ է, միայն ավելի մաքուր աչքերով կարող է զանազանվել (ՎԱՈ 131.7): Մենք կարդում ենք, որ մարդու հոգին նման է իր անձին, ինչպես նաև անասունի հոգին և ուրիշ ամեն արարած, որ Աստված ստեղծել է: (ՎԱՈ 77.2, տես նաև Եթեր 3.7–16)

Սուրբ գրքերը նաև սովորեցնում են, որ ֆիզիկական մահվան ժամանակ հոգին չի մահանում: Այն առանձնանում է մարմնից և ապրում հետմահկանացու հոգևոր աշխարհում: Հարության ժամանակ հոգին վերամիավորվում է մարմնի հետ «երբեք չբաժանվելու. այսպիսով, ամբողջը դառնալով հոգևոր ու անմահ»: (Ալմա 11.45)

Լրացուցիչ հղագրումներ՝ Հռովմայեցիս Ը.16–17, 2 Նեփի 9.10–13, ՎԱՈ 93.29, 33

Տես նաև Փրկության ծրագիր, Հարություն, Հոգի

Հոգու Շնորհներ (*Տես* Հոգևոր Շնորհներ)

Հոգևոր բանտ (*Տես* Մահ՝ ֆիզիկական, Դժոխք, Դրախտ)

Հոգևոր մահ (*Տես* Մահ՝ հոգևոր)

Հոգևոր Պարգևներ

Հոգևոր պարգևները օրհնություններ են կամ ունակություններ, որոնք տրվում են Սուրբ Հոգու զորությամբ: Եկեղեցու յուրաքանչյուր հավատարիմ անդամի Աստված տալիս է այս պարգևներից առնվազն մեկը: Երբ ստանում եք այս պարգևները, դրանք կուժեղացնեն և կօրհնեն ձեզ անհատապես և կօգնեն ծառայել ուրիշներին: (Տես ՎԱՈ 46.8–12) Սուրբ գրքերը սովորեցնում են Հոգու բազմաթիվ պարգևների մասին՝

- Գիտելիք, «որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է և որ Նա խաչվել է աշխարհի մեղքերի համար»: (ՎԱՈ 46.13)

- Ունակություն հավատալու նրանց խոսքերին, ովքեր վկայում են Հիսուս Քրիստոսի մասին: (տես ՎԱՌ 46.17)
- Գիտելիք «սպասավորման տարբերությունների» մասին, (տես նաև Ա Կորնթացիս ԺԲ.5): Այս պարգևն օգտագործվում է Եկեղեցում՝ սպասավորման և ղեկավարման համար:
- Գիտելիք «գործողությունների զանազանությունների» մասին, որն օգնում է մեզ գիտենալ, թե արդյոք որևէ ուսմունք կամ ազդեցություն Աստծուց է գալիս թե որևէ այլ աղբյուրից: (ՎԱՌ 46.16, տես նաև Ա Կորնթացիս ԺԲ.6–7)
- «Իմաստության խոսքի» պարգևը: (Ա Կորնթացիս ԺԲ.8, ՎԱՌ 46.17) Սա չի վերաբերվում այն օրենքին, որը մենք գիտենք որպես Իմաստության Խոսք: Այն ավելի շուտ իմաստության պարգևն է՝ գիտելիքն արդար ձևով օգտագործելու ունակությունը:
- «Գիտության խոսքի» պարգևը: (Ա Կորնթացիս ԺԲ.8, ՎԱՌ 46.18)
- Սուրբ Հոգու զորությամբ ուսուցանելու պարգևը: (տես Մորոնի 10.9–10, տես նաև ՎԱՌ 46.18)
- Հավատքի պարգևը: (տես Ա Կորնթացիս ԺԲ.9, Մորոնի 10.11)
- «Բժշկվելու հավատք ունենալու» պարգևը: (ՎԱՌ 46.19)
- «Բժշկելու հավատք ունենալու» պարգևը: (ՎԱՌ 46.20, տես նաև Ա Կորնթացիս ԺԲ.9, Մորոնի 10.11)
- «Հրաշքներ գործելու»: (Ա Կորնթացիս ԺԲ.10, ՎԱՌ 46.21, տես նաև Մորոնի 10.12)
- Մարգարեանալու պարգևը: (տես Ա Կորնթացիս ԺԲ.10, Մորոնի 10.13, ՎԱՌ 46.22) Հովհաննես Սիրեցյալը սովորեցրել է, որ «Հիսուսի վկայությունը մարգարեության հոգին է»: (Հայտնություն ԺԹ.10)
- «Հրեշտակներ և ծառայող հոգիներ տեսնելը»: (Մորոնի 10.14)

- «Հոգիների զանազանումը»: (Ա Կորնթացիս ԺԲ.10, ՎԱՌ 46.23)
- Տարբեր լեզուներով խոսելու պարգևը: (տես Ա Կորնթացիս ԺԲ.10, ՎԱՌ 46.24)
- «Լեզուներ թարգմանելու» պարգևը: (Ա Կորնթացիս ԺԲ.10, ՎԱՌ 46.25, տես նաև Մորոնի 10.16)

Այս հոգևոր պարգևները և սուրբ գրքերում գրված այլ պարգևներ Հոգու բազմաթիվ պարգևների միայն մի քանի օրինակներ են: Տերը կարող է օրհնել ձեզ այլ ուղիներով՝ կախված ձեր հավատարմությունից և ձեր ու նրանց կարիքներից, ում դուք ծառայում եք: Նա պատվիրել է մեզ ջանասիրաբար աշխատել, որպեսզի կարողանանք ստանալ հոգևոր պարգևներ.

Նա ասել է, որ մենք զգույշ լինենք, որ մեզ չխաբեն և որպեսզի չխաբվենք ջանասիրաբար պետք է որոնենք լավագույն պարգևները, միշտ հիշելով թե, դրանք ինչու համար են տրված,

Քանզի դրանք տրված են նրանց օգտի համար, ովքեր սիրում են Նրան և պահում են բոլոր Նրա պատվիրանները և նա ով ձգտում է այդպես անել, որպեսզի ամենը կարողանան օգտվել, ովքեր որոնում են կամ խնդրում Նրանից: (տես ՎԱՌ 46. 8–9, տես նաև հատված 26)

Լրացուցիչ հղագրումներ՝ Ա Կորնթացիս ԺԳ, ԺԴ.1–33, Մորոնի 10.17–25, ՎԱՌ 46.27–33, Հավատո Հանգանակներ 1.7

Տես նաև Սուրբ Հոգի, Հայտնություն

Հույս

Հույս բառը երբեմն սխալ են հասկանում. Մեր ամենօրյա լեզվում բառը հաճախ ունի անվստահության երանգ: Օրինակ մենք կարող ենք ասել, որ մենք եղանակի փոփոխության կամ ընկերոջ այցելության հույս ունենք: Սակայն ավետարանական լեզվում *հույս* բառն ունի հաստատ, անսասան և գործուն իմաստ: Մարգարեները խոսում են «անխախտ հույսի» (Ալմա 34.41) և «կենդանի հույսի» (Ա Պետրոս Ա.3) մասին: Մարգարե Մորոնին սովորեցրել է. «Ով որ հավատում է Աստծուն, կարող է անկասկած հուսալ ավելի լավ

աշխարհի համար, այո, նույնիսկ մի տեղի՝ Աստծո աջ կողմում, հույս, որը գալիս է հավատքից, դառնում խարիսխ մարդկանց հոգիների համար, ինչը դարձնում է նրանց կայուն և հաստատուն, միշտ հարստացնում բարի գործերով, առաջնորդում՝ փառաբանելու Աստծուն»: (Եբեր 12.4)

Երբ մենք հույս ունենք, մենք վստահում ենք Աստծո խոստումներին: Մենք ունենք խաղաղ համոզվածություն, որ եթե մենք անենք «արդարության գործերը», մենք «կստանանք [մեր] վարձքը, նույնիսկ խաղաղություն այս աշխարհում և հավերժական կյանք եկող աշխարհում»: (ՎԱՈ 59.23) Մորմոնը սովորեցնում էր, որ այդպիսի հույսը գալիս է միայն Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով. «Եվ ի՞նչն է, որի համար դուք պիտի հույս ունենաք: Ահա ես ասում եմ ձեզ, որ դուք կունենաք հույս, Քրիստոսի Քավության և նրա Հարության զորության միջոցով, բարձրացվելու դեպի հավերժական կյանք, և այս՝ ձեր հավատքի շնորհիվ առ նա՝ խոստումի համաձայն»: (Մորոնի 7.41)

Երբ ձգտում եք ապրել ավետարանով դուք աճում եք ձեր ունակությամբ. «որ հույսով ավելանաք Սուրբ Հոգու զորությունովը»: (Հռովմայեցիս ԺԵ.13) Ձեր հույսը մեծանում է, երբ աղոթում եք և որոնում ներումն Աստծուց: Մորմոնի Գրքում Ահարոն անունով մի միսիոներ հավաստիացրեց Լամանացի թագավորին. «Եթե դու խոնարհվես Աստծո առաջ, այո, եթե դու ապաշխարես քո բոլոր մեղքերից, և խոնարհվես Աստծո առաջ, և հավատքով կանչես առ նրա անունը, հավատալով, որ դու պիտի ստանաս, այդ դեպքում դու կստանաս հույսը, որ դու ցանկանում ես»: (Ալմա 22.16) Դուք նաև հույս եք ձեռք բերում, երբ ուսումնասիրում եք սուրբ գրքերը և հետևում դրանց ուսմունքներին: Պողոս Առաքյալը սովորեցրել է. «Ինչ որ գրվեցավ՝ մեր սովորելու համար գրվեցավ, որ համբերությամբ և գրքերի մխիթարությամբ հույսն ունենանք»: (Հռովմայեցիս ԺԵ.4)

Հույսի սկզբունքը տարածվում է մինչև հավերժություն, բայց այն կարող է ձեզ կայուն պահել նաև կյանքի ամենօրյա դժվարությունների մեջ: «Երանի նրան, որի օգնականը Հակոբի Աստվածն է. որ նրա հույսն իր Եհովա Աստծո վրա է»: (Սաղմոս ՃԽԶ. 5)

Հույսով դուք կարող եք ուրախություն գտնել կյանքում: Դուք կարող եք «ունենալ համբերություն, և կրել այդ չարչարանքները՝ անխախտ հույսով, որ դուք պիտի մի օր հանգստանաք բոլոր ձեր չարչարանքներից»: (Ալմա 34.41) Դուք կարող եք «առաջ մղվել Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ՝ ունենալով հույսի կատարյալ պայծառություն, և սեր Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ: Ուստի, եթե դուք առաջ մղվեք, սնվելով Քրիստոսի խոսքով, և համբերեք մինչև վերջ, ահա, այսպես է ասում Հայրը. Դուք կունենաք հավերժական կյանք»: (2 Նեփի 31.20)

Լրացուցիչ հղագրումներ՝ Երեմիայի Ողբեր Գ. 25–26, Ա Կորնթացիս ԺԵ.19–22, Ա Պետրոս Գ.15, Ա Հովհաննես Գ.2–3, Հակոբ 4.4–6, Ալմա 13.28–29, 27.28, Եթեր 12.32, Մորոնի 8.26, 9.25, 10.22

Տես նաև Ձախորդություն, Հիսուս Քրիստոսի Քավություն, Գթություն, Հավատք

Ձախորդություն

Որպես Երկնային Հոր փրկագնման ծրագրի մի մաս, մահկանացու կյանքի ընթացքում դուք հանդիպում եք ձախորդությունների: Փորձություններ, հուսախաբություններ, տխրություն, հիվանդություն, սրտի ցավ, որոնք կյանքի դժվար մասն են կազմում, բայց դրանք կարող են տանել դեպի հոգևոր աճի, մաքրագործման և առաջընթացի, երբ դուք դառնում եք դեպի Տերը:

Ձախորդությունները գալիս են տարբեր աղբյուրներից: Դուք երբեմն դիմակայում եք փորձությունների, որովհետև դրանք ձեր իսկ հպարտության և անհնազանդության հետևանքով են: Այս փորձություններից կարելի է խուսափել արդար ապրելով: Այլ փորձություններ պարզապես կյանքի բնական մասն են կազմում և կարող են երբեմն գալ, երբ արդար կյանքով եք ապրում: Օրինակ՝ դուք կարող եք փորձություններ տանել հիվանդության կամ անորոշության կամ էլ ձեր սիրելիների մահվան ժամանակ: Ձախորդություններ կարող են երբեմն գալ ուրիշների սխալ ընտրությունների և ցավ պատճառող խոսքերի և արարքների պատճառով:

Հավատքով արձագանքելով ձախորդությանը

Ձեր հաջողությունն ու երջանկությունը և այժմ և հավերժության մեջ մեծ մասամբ կախված են կյանքի դժվարությունների հանդեպ ձեր վերաբերմունքից:

Մորմոնի Գրքում նկարագրվում է մի պատմություն, որը ցույց է տալիս ձախորդության հանդեպ տարբեր արձագանքները: Մարգարե Լեքին և իր ընտանիքը մի քանի օր ճանապարհորդում էին անապատում՝ օգտագործելով իրենց աղեղներն ու նետերը, ուտելու բան որսալու համար: Երբ Լեքիի որդիների աղեղները շարքից դուրս եկան, ընտանիքը դժվարությունների հանդիպեց: Լամանի և Լեմուելի աղեղները կորցրեցին իրենց ճկունությունը, իսկ Նեփիինը ջարդվեց: Սոված ու հոգնած Լամանն ու Լեմուելը սկսեցին բողոքել Տիրոջ դեմ: Նույնիսկ Լեքին սկսեց տրտնջալ: Այնուամենայնիվ Նեփին հրաժարվեց հուսահատվել: Նա գնաց աշխատելու: Նա պատմում է. «Ես՝ Նեփիս, փայտից մի աղեղ սարքեցի և մի ուղիղ փայտաձողից մի նետ. ուստի, զինվեցի աղեղով ու նետով, պարսատիկով ու քարերով: Եվ ես ասացի հորս. Ու՞ր գնամ ուտելիք հայթայթելու»: Նեփիի խոսքերից խոնարհված, Լեքին հարցրեց Տիրոջը, թե ու՞ր գնային ուտելիք գտնելու: Տերը պատասխանեց նրա աղոթքներին և առաջնորդեց Նեփիին մի տեղ, որտեղ նա կարող էր ուտելիք ձեռք բերել: (Տես 1 Նեփի 16. 15–31)

Երբ որոշ մարդիկ ձախորդության են հանդիպում, նրանք նման են Լամանին ու Լեմուելին: Նրանք բողոքում են և դառնանում: Նրանք այսպիսի հարցեր են տալիս: «Ինչու՞ այս պետք է պատահեր ինձ հետ: Ինչու՞ պետք է ես այսպես տառապեմ: Ի՞նչ եմ արել սրան արժանանալու համար»: Բայց այս հարցերը զորություն ունեն իշխելու նրանց մտքերի վրա: Այս հարցերը կարող են փակել նրանց տեսադաշտը, կլանել նրանց էներգիան և զրկել նրանց այն փորձառություններից, որոնք Տերը կամենում է, որ նրանք ստանան: Այս ձևով արձագանքելու փոխարեն, մենք պետք է հետևենք Նեփիի օրինակին: Մտածեք այսպիսի հարցեր տալու մասին «Ի՞նչ պետք է անեմ: Ի՞նչ պետք է սովորեմ այս փորձառությունից: Ի՞նչը պետք է փոխեմ: Ու՞մ պետք է օգնեմ: Ինչպե՞ս կարող եմ հիշել իմ բազմաթիվ օրհնությունները փորձությունների ժամանակ»:

Տարբեր տեսակի ձախորդությունները պահանջում են տարբեր արձագանքներ: Օրինակ, եթե հիվանդացել եք, դուք պետք է համբերատար և հավատարիմ լինեք: Եթե դուք տառապում եք ուրիշների խոսքերի և արարքների պատճառով, դուք պետք է աշխատեք ներել նրանց, ովքեր վիրավորել են ձեզ: Եթե դուք բռնության զոհ եք, դուք պետք է անմիջապես օգնություն հայցեք: Եթե փորձությունները գալիս են ձեր իսկ անհնազանդության պատճառով, դուք պետք է ուղղեք ձեր վարքը և խոնարհաբար ներում հայցեք:

Չնայած ձախորդության հանդեպ ձեր արձագանքները կարող են տարբեր լինել, մեկ արձագանք պետք է կայուն լինի, դա Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ ձեր վստահությունն է: Մարգարե Ալման սովորեցրել է. «Ովքեր որ դնեն իրենց վստահությունն Աստծո վրա, պիտի սատարվեն իրենց փորձանքների և իրենց տագնապների, և իրենց չարչարանքների մեջ, և պիտի բարձրացվեն վերջին օրը»: (Ալմա 36.3)

Ապավինելով Երկնային Հորն ու Հիսուս Քրիստոսին

Երբ ապավինում եք Հորը և Որդուն, վստահ եք լինում, որ Նրանք սիրում են ձեզ կատարելապես, որ Նրանք ուզում են, որ դուք երջանիկ լինեք և որ նրանք կօգնեն ձեզ հոգեպես աճել: Դուք պահում եք պատվիրանները: Դուք ձգտում եք իմանալ Նրա կամքը և դուք անում եք այն, ինչ Նրանք պահանջում են, նույնիսկ այն դեպքում, երբ դուք մեկ այլ բան եք ցանկանում: Սփոփանք գտնելու համար ձեր աղոթքներն ուղեկցվում են ըմբռնմամբ, որ Երկնային Հայրը բոլոր հարցերն անմիջապես չի լուծի, Նա կարող է թույլ տալ, որ դուք սպասեք, որպեսզի կարողանաք շարունակել սովորել և աճել: Այդ բոլորի միջոցով դուք հանգստություն կգտնեք այն վստահությամբ, որ Փրկիչը կատարելապես հասկանում է ձեր փորձությունները: Որպես Իր անսահման Քավության մի մաս, Նա Իր վրա վերցրեց «իր ժողովրդի ցավերն ու հիվանդությունները»: Նա Իր վրա վերցրեց «նրանց թուլությունները, որպեսզի նրա սիրտը լցվի ողորմությամբ՝ համաձայն մարմնի, որպեսզի նա կարողանա իմանալ, համաձայն մարմնի, ինչպես սատարել իր

ժողովրդին ըստ նրանց թուլությունների»: (Ալմա 7.11–12) Քանի որ Նա տարել է ձեր ցավը, Նա գիտի ինչպես օգնել ձեզ: Եթե դուք դեպի նրան նայեք հավատքով, Նա կզորացնի ձեզ՝ դիմակայելու ինչ փորձություն էլ որ դուք անցնելու լինեք:

Երբ փորձությունների ժամանակ ձգտում եք ապավինել Տիրոջը, հիշեք հետևյալ խորհուրդը, որը տրվել էր Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով.

Նա, ով հավատարիմ է տառապանքի մեջ, նրա վարձքն ավելի մեծ է երկնքի արքայության մեջ:

Դուք չեք կարող ձեր բնական աչքերով տեսնել ներկա ժամանակում Աստծո ծրագիրն այն բաների վերաբերյալ, որոնք պիտի գան այսուհետև, և փառքը, որ շատ տառապանքներից հետո պիտի հետևի:

Քանզի շատ տառապանքներից հետո կգան օրհնությունները: (տես ՎԿՈ 58. 2–4)

Ձախորդության ժամանակ գտնել խաղաղություն և ուրախություն

Դուք կարող եք գտնել խաղաղություն և ուրախություն, նույնիսկ, երբ գոտեմարտում եք դժվարությունների և տխրության հետ: Մորմոնի գրքում կա մի պատմություն արդարակյաց մարդկանց մասին, ովքեր սովորեցին այս ճշմարտությունը: Տառապելով ճորտության մեջ մի դաժան կառավարիչի իշխանության տակ, նրանք դուրս թափեցին իրենց սրտերն Աստծո առջև: (տես Մոսիա 24.8–12) Տերը պատասխանեց.

«Բարձրացրեք ձեր գլուխները և հանգիստ եղեք, քանզի ես գիտեմ ուխտի մասին, որը դուք արել եք ինձ հետ. և ես կուխտեմ իմ ժողովրդի հետ ու կազատեմ նրանց ճորտությունից:

Եվ ես նաև կթեթևացնեմ բեռները, որոնք դրվել են ձեր ուսերին, որպեսզի դուք մինչև անգամ չզգաք դրանք ձեր մեջքերի վրա, մինչ դուք նույնիսկ ճորտության մեջ եք. և սա ես կանեմ, որպեսզի դուք կարողանաք որպես ինձ համար վկաներ կանգնել հետագայում, և որպեսզի դուք կարողանաք հաստատ իմանալ, որ ես՝ Տեր Աստվածս, այցելում եմ իմ ժողովրդին իրենց չարչարանքների մեջ»: (Մոսիա 24.13–14)

Մարդիկ արձագանքեցին հավատքով և «բեռները, որոնք դրվել էին [նրանց] վրա, դարձվեցին թեթև, այո, Տերն ուժեղացրեց նրանց , որ նրանք կարողանային իրենց բեռները հեշտությամբ տանել, և նրանք զվարթությամբ ու համբերատարությամբ հնազանդվեցին Տիրոջ ողջ կամքին»: (Մոսիա 24.15)

Այս արդարակյաց մարդկանց նման, դուք էլ կարող եք զվարթությամբ և համբերատարությամբ հնազանդվել Տիրոջ ողջ կամքին՝ իմանալով, որ Նա կզորացնի ձեզ ձեր փորձություններում: Նա խոստացել է, որ բոլոր բաները, որոնցով դուք չարչարվել եք, համատեղ կգործեն ձեր բարիքի և Իր անվան փառքի համար: (տես ՎԿՈՒ 98.3)

Լրացուցիչ հղագրումներ՝ Եբրայեցիս Դ.15–16, 2 Նեփի 2.11–24, Մոսիա 23.21–22, ՎԿՈՒ 105.6, 121.7–9, 122

Տես նաև Ներում, Հույս, Խաղաղություն, Փրկության Ծրագիր, Ապաշխարություն

Ձեռնադրություն

Ձեռնադրությունը քահանայության կողմից կատարվող բազմաթիվ արարողությունների՝ ինչպես օրինակ հաստատման, կարգման, կոչումներում ծառայության համար ձեռնադրության, հիվանդներին ծառայելու և քահանայության այլ օրհնություններ տալու համար Տիրոջ կողմից հայտնի դարձված ընթացակարգ է: (տես ՎԿՈՒ 42.44, Հավատո հանգանակներ 1.4–5) Նրանք, ովքեր ունեն համապատասխան քահանայության իշխանություն, դնում են իրենց ձեռքերը արարողությունը ստացող անձնավորության գլխին: Այդպես անելով, նրանք ծառայում են, որպես գործիք, որոնց միջոցով Տերն օրհնում է Իր զավակներին: (տես ՎԿՈՒ 36.2)

Այս ընթացակարգը միշտ օգտագործվել է քահանայություն կրողների կողմից: Ադամը ձեռնադրեց իր արդար արական սեռի հետնորդներին ձեռնադրմամբ: (տես ՎԿՈՒ 107.40–50) Երբ Հակոբը օրհնություն էր տալիս Եփրեմին և Մանասեին, նա դրել էր ձեռքերը նրանց գլուխների վրա: (տես Ծննդոց ԽԸ. 14–19) Ալմա «կարգեց քահանաներ ու երեցներ՝ ձեռքերը վրաները դնելով՝ ըստ Աստծո կարգի»: (Ալմա 6.1) Պետրոս և Հովհաննես Առա-

քյալները շնորհեցին Սուրբ Հոգու պարգևը ձեռնադրությամբ: (տես Գործք Ը.14–17) Այս ժամանակաշրջանում Հովհաննես Մկրտիչը Ահարոնյան Քահանայություն տվեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին ձեռնադրությամբ: (Տես Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1. 68–69)

Լրացուցիչ հղագրումներ՝ Թվոց ԻԷ. 18–23, Գործք ԺԹ. 1–6, Ա Տիմոթեոս Դ .14, ՎԿՈՒ 33.15, 35.6

Տես նաև Սուրբ Հոգի, Քահանայություն

Ճշմարտության Հոգի (*Տես* Սուրբ Հոգի)

Մահ, Ֆիզիկական

Ֆիզիկական մահը հոգու առանձնացումն է մահկանացու մարմնից: Ադամի անկումը աշխարհ բերեց ֆիզիկական մահ: (տես Մովսես 6.48)

Մահը Երկնային Հոր Փրկության ծրագրի կարևոր մասն է հանդիսանում: (տես 2 Նեփի 9. 6) Որպեսզի նմանվենք մեր Հավերժական Հորը, մենք պետք է մահ տանենք և հետագայում ստանանք կատարյալ, հարություն առած մարմիններ:

Երբ ֆիզիկական մարմինը մահանում է, հոգին շարունակում է ապրել: Հոգևոր աշխարհում արդարների հոգիները «ընդունվում են երջանկության մի վիճակի մեջ, որը կոչվում է դրախտ՝ հանգստության մի վիճակ, խաղաղության մի վիճակ, որտեղ նրանք պիտի հանգստանան բոլոր իրենց տագնապներից և բոլոր մտահոգություններից և վշտից» (Ալմա 40.12): Տեղը, որը կոչվում է հոգևոր բանտ պահվում է նրանց համար, ովքեր մահացել են իրենց մեղքերի մեջ, առանց ճշմարտության իմացության, կամ օրինազանցության մեջ, ժխտելով մարգարեներին: (ՎԿՈՒ 138. 32) Բանտում հոգիներին սովորեցնում են հավատք առ Աստված, ապաշխարություն մեղքից, մահացածների համար մկրտություն՝ մեղքերի թողության համար, Սուրբ Հոգու պարգևը՝ ձեռնադրմամբ և ավետարանի բոլոր մյուս սկզբունքները, որոնք նրանց համար կարևոր են իմանալ: (ՎԿՈՒ 138. 33–34) Եթե նրանք ընդունեն

ավետարանի սկզբունքները, ապաշխարեն իրենց մեղքերից և ընդունեն արարողությունները, որոնք նրանց համար կատարվում են տաճարներում, նրանք կընդունվեն դրախտում:

Հիսուս Քրիստոսի Քավության և Հարության շնորհիվ ֆիզիկական մահը միայն ժամանակավոր է: «Քանզի ինչպես Ադամով ամենը մեռնում են, այնպես էլ Քրիստոսով ամենը կենդանանում են»: (Ա Կորնթացիս ԺԵ.22) Բոլորը հարություն կառնեն, նշանակում է, որ յուրաքանչյուր անձնավորության հոգին կվերամիավորվի իր մարմնի հետ «վերականգնվ[ած] իրենց ճիշտ և կատարյալ կառուցվածքով» և այլևս ենթակա չեն լինի մահվան: (Ալմա 40. 23, տես նաև Ալմա 11. 44–45)

Դուք հավանաբար զգացել եք ցավ, որն առաջացել է ընտանիքի անդամի կամ ընկերոջ մահվան պատճառով: Այդ ժամանակ ցավ զգալը բնական է: Փաստորեն սգալը սիրո ամենախորը արտահայտություններից մեկն է: Տերն ասել է, որ մենք պետք է միմյանց հետ սիրով ապրենք, այնպես որ արտասվենք նրանց կորստյան համար, ովքեր մեռնում են: (ՎևՈւ 42.45) Մահվան պատճառով վիշտը վերացնելու միակ ուղին կյանքից սերը վերացնելն է:

Նույնիսկ, երբ սգում եք ձեր սիրելիների մահվան համար, դուք կարող եք մխիթարություն գտնել հարության խոստման մեջ և այն հավաստիացմամբ, որ ընտանիքները կարող են հավերժ լինել միասին: Դուք կարող եք «տեսնել վշտի մեծ պատճառ, և նաև ցնծության, վիշտ՝ մահվան և մարդկանց մեջ կործանման պատճառով, և ուրախություն ի կյանք՝ Քրիստոսի լույսի պատճառով»: (Ալմա 28.14, տես նաև հատվածներ 9–13)

Բացի մխիթարություն ստանալուց, երբ սիրելիներն են մահանում, դուք կարող եք խաղաղության մեջ լինել այն գիտելիքով, որ դուք էլ ի վերջո մահանալու եք: Երբ ապրում եք ավետարանով, կարող եք հիշել Տիրոջ խոստումը, որ նրանք, ովքեր մահանում են Նրանում, չեն ճաշակի մահ, քանի որ այն քաղցր կլինի նրանց համար: (ՎևՈւ 42.46)

Լրացուցիչ հղագրումներ՝ Եսայիա ԻԵ.8, Ա Կորնթացիս ԺԵ. 51–58, 2 Նեփի 9. 6–15, Մոսիա 16. 6–8

Տես նաև Հիսուս Քրիստոսի Քավություն, Դրախտ, Փրկության Ծրագիր, Հարություն

Մահ, Հոգևոր

Աստծուց առանձնացված լինելը հոգևոր մահ է: Սուրբ գրքերը սովորեցնում են հոգևոր մահվան երկու աղբյուրների մասին: Առաջին աղբյուրը՝ անկումն է և երկրորդը մեր իսկ անհնազանդությունը:

Մորմոնի Գրքի մարգարե Սամուելը սովորեցնում էր. «Ողջ մարդկությունը, Ադամի անկումով կտրված լինելով Տիրոջ ներկայությունից համարվում է մեռած, ինչպես աշխարհիկ բաների, այնպես էլ հոգևոր բաների վերաբերյալ»: (Հելաման 14.16) Երկրի վրա մեր կյանքի ընթացքում մենք առանձնացված ենք Աստծո ներկայությունից: Քավության միջոցով Հիսուս Քրիստոսը փրկագնում է ամենին այս հոգևոր մահից: Սամուելը վկայել է, որ Փրկչի Հարությունը «փրկագնում է բոլոր մարդկությանն առաջին մահից՝ այն հոգևոր մահից . . . Ահա Քրիստոսի հարությունը փրկագնում է մարդկությանը, այո, նույնիսկ ողջ մարդկությանը և բերում նրանց ետ՝ դեպի Տիրոջ ներկայությունը»: (Հելաման 14. 16–17) Մարգարե Լեքին սովորեցնում էր, որ Քավության շնորհիվ «բոլոր մարդիկ գալիս են դեպի Աստված, ուստի նրանք կանգնում են նրա ներկայության մեջ, դատվելու նրա կողմից, համաձայն այն ճշմարտությանը և սրբությանը, որը նրանում է»: (2 Նեփի 2.10)

Հետագայում հոգևոր մահ գալիս է մեր իսկ անհնազանդության հետևանքով: Մեր մեղքերը մեզ անմաքուր են դարձնում և անկարող բնակվելու Աստծո ներկայության մեջ: (տես Հռովմայեցիս Գ. 23, Ալմա 12.12–16, 32, Հելաման 14.18, Մովսես 6. 57) Քավության միջոցով Հիսուս Քրիստոսն առաջարկում է փրկագնում այդ հոգևոր մահից, բայց միայն երբ հավատք ենք գործադրում Նրա հանդեպ, ապաշխարում ենք մեր մեղքերից և հնազանդվում ավետարանի սկզբունքներին և արարողություններին: (տես Ալմա 13. 27–30, Հելաման 14.19, Հավատո Հանգանակներ 1.3)

Լրացուցիչ հղագրումներ 1 Նեփի 15. 33–35, Ալմա 40.26, 42.23

Տես նաև Հիսուս Քրիստոսի Քավություն, Հավատք, Անկում, Հնազանդություն, Ապաշխարություն, Մեղք

Մանկածնության կանոնավորում

Երբ ամուսնացած զույգերը ֆիզիկապես ի վիճակի են, նրանք արտոնություն ունեն մահկանացու մարմիններ ապահովել Երկնային Հոր հոգևոր զավակներին: Նրանք երջանկության մեծ ծրագրում իրենց դերն են խաղում, որը թույլ է տալիս Աստծո զավակներին ստանալ ֆիզիկական մարմիններ և մահկանացու կյանքի փորձ ձեռք բերել:

Եթե ամուսնացած եք, դուք և ձեր կողակիցը պետք է քննարկեք երեխաներ աշխարհ բերելու և նրանց արդարակեցության մեջ մեծացնելու ձեր սրբազան պարտականության մասին: Երբ այդ անեք, մտածեք կյանքի սրբության և իմաստի մասին: Խորհեք այն ուրախության մասին, որը գալիս է, երբ տանը երեխաներ են լինում: Մտածեք հավերժական օրհնությունների մասին, որոնք գալիս են լավ սերունդ ունենալուց: Ունենալով վկայություն այս սկզբունքների վերաբերյալ, դուք և ձեր կողակիցը պատրաստ կլինեք աղոթքով որոշել, թե քանի երեխա ունենալ և երբ նրանց ունենալ: Այսպիսի որոշումները ձեր երկուսիդ և Տիրոջ միջև են:

Երբ քննարկեք այս սուրբ հարցը, հիշեք, որ ամուսնության մեջ սեռական հարաբերությունները աստվածային հավանության են արժանանում: Մինչ՝ այս հարաբերությունների նպատակներից մեկը Աստծո զավակների համար ֆիզիկական մարմիններ ապահովելն է, մյուս նպատակը միմյանց հանդեպ սեր արտահայտելն է՝ ամուսնուն և կնոջը նվիրվածությամբ, հավատարմությամբ, հարգանքով և ընդհանուր նպատակով միմյանց կապելը:

Մարգարեներ

Որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, մենք օրհնված ենք ապրող մարգարեների առաջնորդությամբ, որոնք ոգեշնչված մարդիկ են և կանչված են խոսելու Տիրոջ համար, ճիշտ ինչպես Մովսեսը, Եսայիան, Պետրոսը, Պողոսը, Նեփին, Մորմոնը և սուրբ գրքի այլ մարգարեներ: Մենք հաստատում ենք Եկեղեցու Նախագահին որպես մեր մարգարե, տեսանող և հայտնող՝ միակ մարդը երկրի վրա, որը հայտնություն է ստանում առաջնորդելու ողջ Եկեղեցին: Մենք հաստատում ենք

նաև Առաջին Նախագահության խորհրդականներին և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներին որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ:

Ինչպես հնադարյան մարգարեները, մարգարեներն այսօր վկայում են Հիսուս Քրիստոսի մասին և սովորեցնում Նրա ավետարանը: Նրանք հայտնի են դարձնում Աստծո կամքը և ճշմարիտ էությունը: Նրանք համարձակորեն և պարզ են խոսում՝ մերժելով մեղքը և նախազգուշացնելով դրա հետևանքների մասին: Երբեմն նրանք կարող են ոգեշնչվել մարգարեանալ ապագա իրադարձությունների մասին մեր բարօրության համար:

Դուք միշտ կարող եք վստահել ապրող մարգարեներին: Նրանց ուսմունքներն արտահայտում են Տիրոջ կամքը, որը հայտարարել է, որ ինչ որ Ինքը խոսել է, խոսել է և չի արդարանում և չնայած երկինքներն ու երկիրն անցնեն, բոլորը պիտի իրականանան, լինի դա Նրա ձայնով, թե Իր ծառաների ձայնով, դա նույնն է: (ՎԱՈՒ 1.38)

Ձեր մեծագույն ապահովությունը կայանում է Տիրոջ խոսքին խստորեն հետևելու մեջ, որը տրվել է Նրա մարգարեների միջոցով, հատկապես Եկեղեցու ներկա Նախագահի: Տերը նախազգուշացնում է, որ նրանք ովքեր անտեսում են ապրող մարգարեների խոսքերը կընկնեն: (տես ՎԱՈՒ 1.14–16) Նա խոստանում է մեծ օրհնություններ նրանց, ովքեր հետևում են Եկեղեցու Նախագահին:

Նա ասում է, որ մենք պետք է ականջ դնենք նրա բոլոր խոսքերին և պատվիրաններին, որոնք նա կտա մեզ, երբ ստանա դրանք, քայլելով ողջ սրբությամբ Նրա առջև,

Քանզի նրա խոսքը մենք պետք է ընդունենք, կարծես այն լինի Նրա սեփական բերանից, ողջ համբերությամբ և հավատքով:

Քանզի այս բաներն անելով դժոխքի դարապասները չեն հաղթի մեզ, այո, և Տեր Աստված կցրի մեր առջևից խավարի ուժերը և կստիպի երկինքներին ցնցվել մեր բարիքի և Իր անվան փառքի համար: (ՎԱՈՒ 21.4–6)

Լրացուցիչ հղագրումներ՝ Բ Մնացորդաց Ի.20, Ամոս Գ.7, Եփեսացիս Բ.19–20, 1 Նեփի 22.1–2, Մոսիա 13.33–35, ՎԱՈՒ 107.91–92, Հավատո հանգանակներ 1.6

Մարգարեություն (*Տես* Հայտնություն, Հոգևոր պարգևներ)

Մարմինը ծակելը

Վերջին Օրերի մարգարեները ամենևին հավանություն չեն տալիս մարմինը ծակելուն, եթե դա բժշկական նպատակներով չի արվում: Եթե աղջիկները կամ կանայք ցանկանում են իրենց ականջները ծակել, նրանց խորհուրդ է տրվում կրել միայն մեկ զույգ համեստ ականջօղեր:

Նրանք, ովքեր ընտրում են անտեսել այս խորհուրդը, ցույց են տալիս հարգանքի պակասություն իրենք իրենց և Աստծո հանդեպ: Մի օր նրանք կզղջան իրենց որոշման համար:

Պողոս Առաքյալը սովորեցրել է մեր մարմինների կարևորության մասին և դրանք դիտավորյալ ապականելու վտանգի մասին. «Չգիտե՞ք որ դուք Աստծո տաճար եք և Աստծո Հոգին բնակված է ձեզանում: Եթե մեկն Աստծո տաճարն ապականե նրան էլ Աստված կապականե. որովհետև Աստծո տաճարը սուրբ է՝ որ դուք եք» (Ա Կորնթացիս Գ. 16–17):

Տես նաև Համեստություն, Դաջվածք

Մաքրաբարոյություն

Մաքրաբարոյությունը սեռական մաքրությունն է, մի հատկանիշ, որը «հաճո է Աստծուն»: (Հակոբ 2. 7) Մաքրաբարո լինելու համար, դուք պետք է բարոյապես մաքուր լինեք ձեր մտքերում, խոսքերում և գործերում: Դուք չպետք է որևէ սեռական հարաբերություն ունենաք նախքան օրինական ամուսնությունը: Երբ ամուսնանաք, դուք պետք է լիովին հավատարիմ լինեք ձեր ամուսնուն կամ կնոջը:

Ֆիզիկական մտերմությունն ամուսնու և կնոջ միջև գեղեցիկ է և սրբազան: Այն կարգվել է Աստծո կողմից երեխաների ստեղծման և ամուսնության մեջ սիրո արտահայտման համար:

Այժմ աշխարհում սատանան շատ մարդկանց է հավատացրել, որ սեռական մտերմությունն ընդունելի է ամուսնությունից դուրս: Բայց Աստծո տեսանկյունից դա լուրջ մեղք է: Դա վիրավորանք է այն զորությանը, որ Նա տվել է մեզ՝ կյանք ստեղծելու

համար: Մարգարե Ալման սովորեցրել է, որ բացառությամբ սպանությունից և Սուրբ Հոգին ուրանալուց, սեռական մեղքերն ավելի լուրջ են, քան մյուս մնացած մեղքերը: (տես Ալմա 39. 3–5)

Երբեմն մարդիկ փորձում են համոզել իրենք իրենց, որ ամուսնությունից դուրս սեռական հարաբերություններն ընդունելի են, եթե մասնակից կողմերը սիրում են միմյանց: Դա ճիշտ չէ: Մաքրաբարոյության օրենքի խախտումը և մեկ ուրիշին ևս խրախուսել այդպես անել՝ սիրո արտահայտություն չէ: Մարդիկ, ովքեր սիրում են միմյանց երբեք չեն վտանգի միմյանց երջանկությունն ու անվտանգությունը անձնական ժամանակավոր հաճույքի համար:

Երբ մարդիկ միմյանց համար բավականաչափ հոգ են տանում՝ պահելու մաքրաբարոյության օրենքը, նրանց սերը, վստահությունն ու նվիրվածությունն աճում է՝ առաջացնելով ավելի մեծ երջանկություն և միասնություն: Հակառակը, հարաբերությունները, որոնք կառուցված են սեռական անբարոյականության վրա, արագ են փչանում: Նրանք ովքեր սեռական անբարոյականությամբ են զբաղվում հաճախ զգում են վախ, հանցանք և ամոթ: Կարճ ժամանակ անց նրանց փոխհարաբերություններում գոյություն ունեցող բոլոր դրական զգացմունքները փոխարինվում են դառնությամբ, խանդով ու ատելությամբ:

Մեր Երկնային Հայրը մաքրաբարոյության օրենքը տվել է մեզ՝ մեր պաշտպանության համար: Այս օրենքին հնազանդվելը կարևոր է անձնական խաղաղության և բնավորության ուժի և ընտանեկան երջանկության համար: Երբ ձեզ սեռապես մաքուր եք պահում, դուք կխուսափեք հոգևոր և զգացմունքային վիրավորանքից, որը միշտ գալիս է ամուսնությունից դուրս որևէ մեկի հետ ֆիզիկական մտերմություն ունենալուց: Դուք կզգաք Սուրբ Հոգու առաջնորդությունը, զորությունը, մխիթարությունն ու պաշտպանությունը և տաճարային երաշխավորագիր ստանալու համար դուք կկատարեք կարևոր մի պահանջ և կմասնակցեք տաճարային արարողություններին:

Սեռական Մեղքեր

Տերն ու Նրա մարգարեները դատապարտում են սեռական անբարոյականությունը: Ամուսնությունից դուրս բոլոր սեռական

հարաբերությունները խախտում են մաքրաբարոյության օրենքը և ֆիզիկապես ու հոգեպես վտանգավոր են բոլոր նրանց համար, ովքեր զբաղվում են դրանցով:

Տասը Պատվիրանները իրենց մեջ ընդգրկում են պատվեր, որ մենք շնություն չանենք, որը նշանակում է՝ սեռական հարաբերություն ամուսնացած տղամարդու և որևէ մեկի միջև, որը նրա կինը չէ, կամ ամուսնացած կնոջ և որևէ այլ տղամարդու միջև, որը նրա ամուսինը չէ: (տես Ելից Ի.14) Պողոս Առաքյալն ասել է, որ «սա է Աստծո կամքը»,- որ մենք,- «ետ կենանք պոռնկությունից», որը սեռական հարաբերություն է չամուսնացած անձնավորության և որևէ մեկ ուրիշի միջև (Ա Թեսաղոնիկեցիս Դ.3): Վերջին Օրերի մարգարեները հաճախ խոսում են այս մեղքերի և սեռական բռնության գործադրման դեմ:

Մաքրաբարոյության օրենքի այլ խախտումների նման հոմոսեքսուալ վարքը լուրջ մեղք է: Այն դեմ է մարդկային սեռական նպատակներին: (տես Հռովմայեցիս Ա. 24–32) Այն աղճատում է սիրո հարաբերությունները և մարդկանց խոչընդոտում ստանալ այն օրհնությունները, որոնք նրանք կարող են գտնել ընտանեկան կյանքում և ավետարանի փրկարար արարողություններում:

Անձնական մաքրության Տիրոջ չափանիշով ամուսնությունից դուրս սեռական հարաբերությունից պարզապես հեռու մնալը բավարար չէ: Տերն Իր աշակերտներից պահանջում է բարձր բարոյական չափանիշներ, ներառյալ լիակատար հավատարմություն կողակցին մտքով և վարքով: Լեռան քարոզում Նա ասաց. «Լսել եք որ ասվեցավ առաջիններին, թե Շնություն մի անիր: Բայց ես ասում եմ ձեզ, թե ամեն որ մի կնկա վրա մտիկ տա նրան ցանկանալու համար, նա արդեն շնացավ նրա հետ իր սրտի մեջ»: (Մատթեոս Ե.27–28) Վերջին Օրերին Նա ասել է, որ մենք չպետք է . . . շնություն անենք, . . . կամ դրա նման որևէ մի այլ բան: (ՎԿՈ 59.6) Եվ Նա կրկին շեշտել է այն սկզբունքը, որ Նա սովորեցրել էր Սարի Քարոզում, որ եթե որևէ մեկը նայում է մի կնոջ ցանկանալով նրան, կամ եթե որևէ մեկը շնություն է անում իր սրտում, նա չի ունենա Հոգին, այլ կուրանա հավատքը և կերկյուղի: (տես

ՎԵՈՒ 63.16) Այս նախազգուշացումները վերաբերում են բոլոր մարդկանց, անկախ նրանից նրանք ամուսնացած են թե ամուրի:

Եթե սեռական մեղք եք գործել, խոսեք ձեր եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի հետ, որպեսզի նա օգնի ձեզ անցնել ապաշխարության պրոցեսի միջով: (տես «Ապաշխարություն», էջ 132–35)

Եթե գտնվում եք սեռական գայթակղությունների դեմ պայքարի մեջ, ներառյալ նույն սեռի նկատմամբ հակումը, տեղի մի տվեք այդ գայթակղություններին: Համոզված եղեք, որ կարող եք կատարել ընտրություն այդպիսի վարքից խուսափելու համար: Դուք կարող եք ստանալ օգնություն Տիրոջից, երբ աղոթեք ուժ խնդրելով և աշխատեք հաղթահարել խնդիրը: Որպես այս գործընթացի մի մաս դուք պետք է խորհուրդ հարցնեք ձեր եպիսկոպոսից կամ ճյուղի նախագահից: Նա կօգնի ձեզ:

Պահեք մաքրաբարոյության օրենքը

Անկախ նրանից թե որքան ուժեղ է թվում գայթակղությունը, Տերը կօգնի ձեզ, եթե ընտրեք հետևել Իրեն: Պողոս Առաքյալը հայտնել է. «Ձեզ ուրիշ փորձություն չի պատահի բացի մարդկային փորձությունից, բայց Աստված հավատարիմ է, որ չի թողնի ձեզ ձեր կարողությունիցը վեր փորձվելու, այլ փորձության հետ ելքն էլ կպատրաստի, որ կարողանաք համբերել»: (Ա Կորնթացիս Ժ.13) Հետևյալ խորհուրդը կարող է օգնել ձեզ հաղթահարել ներկա աշխարհի հաճախակի և աչք ծակող գայթակղությունները:

Այժմ որոշեք մաքրաբարո լինել: Դուք պետք է ընդունեք այդ որոշումը միայն մեկ անգամ: Ընդունեք այդ որոշումն այժմ, մինչև գայթակղության գալը, և թույլ տվեք, որ ձեր որոշումն այնքան ուժեղ և այնպիսի խորը պարտավորվածությամբ լինի, որպեսզի այն երբեք չխախտվի: Վճռեք այժմ, որ դուք երբեք չեք անի ամուսնությունից դուրս որևէ բան՝ արթնացնելու հզոր զգացմունքներ, որոնք պետք է արտահայտվեն միայն ամուսնության մեջ: Մի արթնացրեք այդ զգացմունքները մեկ ուրիշ մարդու մարմնում կամ ձեր սեփական մարմնում: Վճռեք այժմ, որ դուք լիովին հավատարիմ կլինեք ձեր կողակցին:

Վերահսկեք ձեր մտքերը: Ոչ ոք սեռական մեղք չի գործում մեկ վայրկյանում: Անբարոյական արարքները միշտ սկսվում են

անմաքուր մտքերից: Եթե դուք թույլ եք տալիս, որ ձեր մտքերը կանգ առնեն անպարկեշտ և անբարոյական բաների վրա, դուք արդեն առաջին քայլն եք անում դեպի անբարոյականություն: Անհապաղ փախչեք այնպիսի իրադրություններից, որոնք կարող են տանել դեպի մեղք: Աղոթեք կայուն ուժ ունենալու գայթակղությանը դիմադրելու համար և վերահսկեք ձեր մտքերը: Դարձրեք դա ձեր ամենօրյա աղոթքների մի մասը:

Հեռու մնացեք պոռնոգրաֆիայից: Մի դիտեք, մի կարդացեք կամ լսեք որևէ բան, որն արտացոլում է կամ նկարագրում է մարդկային մարմինը կամ սեռական հարաբերություն՝ այնպիսի մի ձևով, որը կարող է սեռական զգացումներ արթնացնել: Պոռնոգրաֆիկ նյութերը կախվածություն առաջացնող են և կործանարար: Դրանք կարող են ձեզ զրկել ինքնահարգանքից և կյանքի գեղեցկությունների զգացողությունից: Դրանք կարող են ձեզ պատառ - պատառ անել և տանել ձեզ դեպի կործանարար մտքերի և դաժան վարքի:

Եթե դուք ամուսնացած չեք և ժամադրվում եք, միշտ հարգանքով վերաբերվեք ձեզ ժամադրող անձնավորությանը: Երբեք նրան մի վերաբերվեք որպես մի առարկայի՝ ձեր վավաշոտ ցանկությունները բավարելու համար: Զգուշությամբ ծրագրեք դրական և կառուցողական զբաղմունքներ, որպեսզի դուք կամ ձեր ընկերը մենակ չմնաք առանց որևէ գործի: Մնացեք ապահով տարածքներում , որտեղ կարող եք հեշտորեն վերահսկել ձեզ: Մի մասնակցեք զրույցների կամ գործողությունների, որոնք առաջացնում են սեռական զգացմունքներ: Մի մասնակցեք կրքոտ համբույրների, մի պառկեք որևէ մեկի հետ կամ նրա վրա, կամ մի շոշափեք հագնված կամ առանց հագուստի որևէ մարդու մարմնի ինտիմ, սրբազան մասերը: Ոչ մեկին թույլ մի տվեք այդպիսի բաներ անել ձեզ հետ:

Եթե ամուսնացած եք, հավատարիմ եղեք ձեր կողակցին ձեր մտքերում, խոսքերում և գործերում: Տերն ասել է, որ մենք պետք է սիրենք մեր կանանց մեր ողջ սրտով և պետք է հարենք նրանց և ոչ թե ուրիշ մեկի: Եվ նա, ով նայում է որևէ կնոջ վրա ցանկանալով նրան, կուրանա հավատքը և չի ունենա Հոգին և եթե նա չապաշխարի նա պետք է դուրս գցվի: (տես ՎԵՌ 42.22–23) Երբեք որևէ

ձևի ֆլիրտով մի զբաղվեք: Որքան հնարավոր է խուսափեք հակառակ սեռից որևէ մեկի հետ մենակ մնալ: Հարցրեք ինքներդ ձեզ, թե արդյոք ձեր կողակցին դուր կգար, եթե նա իմանար ձեր խոսքերի և արարմունքի մասին: Հիշեք Պողոս Առաքյալի խորհուրդը. «Ամեն կերպ չար բանից հեռու կացեք»: (Ա Թեսաղոնիկեցիս Ե. 22) Եթե դուք հեռու մնաք այդպիսի հանգամանքներից, գայթակղությունը հնարավորություն չի ստանա զարգանալու:

Ներում ապաշխարողի համար

Լավագույն վարքագիծը կատարյալ է բարոյական մաքրությամբ: Սխալ է սեռական մեղք գործել պարզապես մտածելով, որ հետագայում կապաշխարեք: Այդ վերաբերմունքը ինքնըստինքյան մեղք է, դրսևորելով անպատկառություն Տիրոջ և այն ուխտերի հանդեպ, որոնք դուք կապել եք Նրա հետ: Սակայն, եթե դուք գործել եք սեռական մեղք, Տերը կների, եթե ապաշխարեք:

Ապաշխարությունը դժվար է, բայց հնարավոր է: Դուք կարող եք կրկին մաքուր լինել (տես Եսայիա Ա.18): Մեղքի հուսահատությանը կարող է փոխարինել ներման քաղցր խաղաղությունը: Որպեսզի իմանաք թե ինչպես պետք է ապաշխարեք, տես «Ապաշխարություն», էջ 132–35:

Աշխատեք այն օրվա համար, երբ արժանի կլինեք տաճար մտնել, առաջնորդվելով Սաղմոսողի խոսքերով.

«Ո՞վ վեր կգնա Տիրոջ սարը, և ո՞վ կկանգնի նրա սրբության տեղումը:

Նա, որ սուրբ է ձեռքով և անարատ սրտով. որ իր անձը անիրավության չի տալիս, և երդում չի անում նենգությունով»: (Սաղմոս ԻԴ. 3–4)

Լրացուցիչ մեջբերումներ՝ Ելից Ի.14, Ա Կորնթացիս Զ.18–20, Ալմա 38.12, 3 Նեփի 12. 27–30

Տես նաև Ամուսնություն, Պոռնոգրաֆիա

Մելքիսեդեկյան Քահանայություն

Եկեղեցում կան երկու Քահանայություններ, այսինքն՝ Մելքիսեդեկյան և Ահարոնյան (Տես ՎԵՈՒ 107.1): Մելքիսեդեկյան Քահանայությունը, որն ըստ Աստծո Որդու Կարգի է (Տես ՎԵՈՒ 107.3) սրանցից մեծագույնն է: Այն ունի նախագահության իրավունք, և ունի ուժ և իշխանություն եկեղեցու բոլոր պաշտոնների վրա: (տես ՎԵՈՒ 107.8) Այն նաև կրում է Եկեղեցու բոլոր հոգևոր օրհնությունների բանալիները: (Տես ՎԵՈՒ107.18) Այն կոչվում է մի մեծ քահանայապետի անունով, որն ապրել է Աբրահամ մարգարեի ժամանակաշրջանում: (տես ՎԵՈՒ 107.2–4, տես նաև Ալմա 13.14–19)

Մելքիսեդեկյան Քահանայության իշխանությամբ Եկեղեցու առաջնորդները ղեկավարում են Եկեղեցին և ուղղություն տալիս ավետարանի քարոզմանը ողջ աշխարհում: Մելքիսեդեկյան Քահանայության արարողություններում դրսևորվում է աստվածապաշտության զորությունը: (տես ՎԵՈՒ 84. 20)

Այս մեծագույն քահանայությունը տրվել էր Ադամին և եղել է երկրի վրա, երբ որ Տերը հայտնի է դարձրել Իր ավետարանը: Այն վերցվել էր երկրի վրայից մեծ ուրացության ժամանակ, բայց այն վերականգվեց 1829թ. մայիսին, երբ Պետրոս, Հակոբոս և Հովհաննես Առաքյալները շնորհեցին այն Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին:

Մելքիսեդեկյան Քահանայության կոչումներն են՝ Առաքյալ, Յոթանասունական, հայրապետ, քահանայապետ և երեց: Բարձրագույն Քահանայության Նախագահը Եկեղեցու Նախագահն է: (տես ՎԵՈՒ 107.64–66)

Եկեղեցում տղամարդիկ պետք է Մելքիսեդեկյան Քահանայության արժանի կրողներ լինեն, որպեսզի ստանան տաճարային օժտում և կնքվեն իրենց ընտանիքների հետ հավերժության համար: Նրանք իշխանություն ունեն սպասավորելու հիվանդներին և տալու հատուկ օրհնություններ ընտանիքի անդամներին և ուրիշներին: Նախագահող քահանայության առաջնորդների թույլտվությամբ, նրանք կարող են շնորհել Սուրբ Հոգու պարգևը

և ձեռնադրել արժանի ուրիշ տղամարդկանց Ահարոնյան և Մելքիսեդեկյան Քահանայության կոչումներում:

Երբ մարդը ստանում է Մելքիսեդեկյան Քահանայություն, նա մտնում է քահանայության երդման և կոչումը, մեջ: Նա ուխտում է լինել հավատարիմ, փառավորել իր կոչումը, «ջանասիրաբար ուշադրություն դարձնել հավերժական կյանքի խոսքերին» և «ապրել ըստ յուրաքանչյուր խոսքի, որ դուրս է գալիս Աստծո բերանից»: Նրանք, ովքեր պահում են այս ուխտը սրբագործվում են Հոգու կողմից և ստանում «բոլորն ինչ ունի Հայրը»: (Տես ՎԿՈՒ 84.33–34)

Տես նաև Ահարոնյան Քահանայություն, Քահանայություն

Թանկագին Մարգարիտ (*Տես* սուրբ գրքեր)

Մեղք

Երբ մենք կանխամտածված չենք հնազանդվում Աստծո պատվիրաններին, մենք մեղք ենք գործում: Մենք մեղք ենք գործում նաև, երբ արդար չենք գործում չնայած ճշմարտության վերաբերյալ մեր իմացությանը: (տես Հակոբոս Դ. 17)

Տերն ասել է, որ Նա «չի կարող նայել մեղքի վրա նվազագույն իսկ աստիճանի թույլտվությամբ»: (ՎԿՈՒ 1.31) Մեղքի հետևանքը Սուրբ Հոգու հետ քաշվելն է և հավերժության մեջ մեր Երկնային Հոր ներկայությամբ բնակվելու անկարողությունը, քանզի «ոչ մի անմաքուր բան չի կարող բնակվել Աստծո հետ»: (1 Նեփի 10.21)

Մեզանից յուրաքանչյուրը խախտել է պատվիրաններ կամ չի գործել համաձայն ճշմարտության մեր իմացությանը: Հովհաննես Առաքյալը սովորեցրել է. «Եթե ասենք թե մեղք չունենք, մեր անձերը խաբում ենք և ճշմարտություն չկա մեզանում: Ապա թե մեր մեղքերը խոստովանենք, նա [Հիսուս Քրիստոսը] հավատարիմ է և արդար որ մեր մեղքերը թողի մեզ, և սրբի մեզ ամեն անիրավությունից»: (Ա Հովհաննես Ա.8–9) Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով մենք կարող ենք ապաշխարել և ներվել մեր մեղքերի համար:

Լրացուցիչ հղագրումներ՝ Հռովմայեցիս Գ.23, Զ.23, Ալմա 5.41–42, 11.37, Հելաման 5.10–11, ՎԱՈ 82.1–3, 88.34–35

Տես նաև Հիսուս Քրիստոսի Քավություն, Մահ՝ հոգևոր, Ներում, Արդարադատություն, Ողորմածություն, Հնազանդություն, Ապաշխարություն, Գայթակղություն

Միասնություն

Անմիջապես Իր Քավությունն իրականացնելուց առաջ Փրկիչն աղոթեց Իր աշակերտների համար, որոնց Նա ուղարկել էր աշխարհ՝ քարոզելու ավետարանը: Նա նաև աղոթեց նրանց համար, ովքեր կհավատային Իրեն՝ Իր աշակերտների խոսքերի շնորհիվ: Նա աղերսեց միասնության համար. «Որ ամենքը մեկ լինեն, ինչպես դու, Հայր, ինձանում, և ես քեզանում, որ նրանք էլ մեզանում մեկ լինեն, որ աշխարհը հավատա, թե դու ուղարկեցիր ինձ»: (Հովհաննես ԺԷ.21)

Այս աղոթքից մենք իմանում ենք, թե ինչպես է ավետարանը միավորում մեզ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի և միմյանց հետ: Երբ մենք ապրում ենք ըստ ավետարանի՝ ստանալով փրկարար արարողությունները և պահելով մեր ուխտերը, մեր էությունը փոխվում է: Փրկչի Քավությունը սրբագործում է մեզ և մենք կարող ենք ապրել միասնության մեջ, վայելելով խաղաղություն այս կյանքում և պատրաստվելով հավերժ բնակվելու Հոր և Նրա Որդու հետ:

Տերն ասել է, որ եթե մենք մեկ չենք իրենը չենք: (տես ՎԱՈ 38.27) Դուք կարող եք որոնել և զարգացնել միասնության այս չափանիշը ձեր ընտանիքում և Եկեղեցում: Եթե ամուսնացած եք, դուք և ձեր կողակիցը կարող եք միավորվել նպատակով և գործով: Դուք կարող եք թույլ տալ, որ ձեր բացառիկ հատկանիշները լրացնեն միմյանց, երբ միասին դիմակայում եք դժվարություններին և աճում սիրո ու հասկացողության մեջ: Դուք կարող եք նաև միավորվել ընտանիքի այլ անդամների և Եկեղեցու անդամների հետ՝ միասին ծառայելով, միմյանց ուսուցանելով և մեկ մեկու խրախուսելով: Դուք կարող եք մեկ դառնալ Եկեղեցու Նախա-

գահի և Եկեղեցու մյուս առաջնորդների հետ, երբ ուսումնասիրում եք նրանց խոսքերը և հետևում նրանց խորհրդին:

Մինչ Եկեղեցին աճում է ողջ աշխարհով մեկ, բոլոր Վերջին Օրերի Սրբերը կարող են միավորվել: Մեր սրտերը կարող են լինել «միավորված միասնությամբ ու սիրով՝ մեկը մյուսի հանդեպ»: (Մոսիա 18.21) Մենք գնահատում ենք մշակութային բազմազանությունը և անհատական տարբերությունները, բայց մենք նաև ձգտում ենք «հավատքի միասնության», որը գալիս է, երբ մենք հետևում ենք ոգեշնչված առաջնորդներին և հիշում, որ մենք բոլորս նույն Հոր զավակներն ենք: (տես Եփեսացիս Դ. 3–6, 11–13)

Տես նաև Սեր, Ամուսնություն, Հնազանդություն, Ծառայություն, Սիոն

Միսոներական աշխատանք

Երբ ճաշակում ենք ավետարանով ապրելու օրհնությունները, մենք բնականաբար ցանկանում ենք այդ օրհնություններով կիսվել ուրիշների հետ: Տերը խոսել է այն ուրախության մասին, որը գալիս է մեր կյանք, երբ կիսվում ենք Նրա ավետարանով:

Նա ասել է, որ եթե լինի այնպես, որ մենք տքնենք բոլոր մեր օրերում ապաշխարության կանչելով այս ժողովրդին և բերենք նույնիսկ մեկ հոգի դեպի Նա, որքան մեծ կլինի մեր ուրախությունը նրա հետ մեր Հոր արքայությունում:

Եվ արդ, եթե մեր ուրախությունը մեծ լինի մեկ հոգու հետ, որին բերել ենք նրա մոտ մեր Հոր արքայությունը, որքան մեծ կլինի մեր ուրախությունը, եթե շատ հոգիներ բերենք դեպի Նա: (տես ՎԼՈ 18.15–16)

Յուրաքանչյուր անդամի միսիոներական պարտականությունը

Տերը հայտարարել է, որ միսիոներական աշխատանքը բոլոր Վերջին Օրերի Սրբերի պարտականությունն է: (տես ՎԼՈ 88.81) Որպես Տիրոջ Եկեղեցու անդամ դուք կարող եք ձեր կյանքի բարությամբ և ձեր վկայության ուժով օգնել պատրաստվել ձեր ընտանիքի անդամներին, ընկերներին և մյուս ծանոթներին հանդիպելու լիաժամկետ միսիոներներին:

Ամենահզոր միսիոներական ուղերձը, որ դուք կարող եք ուղարկել՝ Վերջին Օրերի Սրբի երջանիկ կյանքի ձեր սեփական օրինակն է: Հիշեք, որ մարդիկ չեն միանում Եկեղեցուն միայն այն պատճառով, որ սովորում են ավետարանական սկզբունքներ: Նրանք միանում են, որովհետև զգում են ինչ որ բան, որը սկսում է բավարարել նրանց հոգևոր կարիքները: Եթե նրանց հետ անկեղծ եք ձեր ընկերության մեջ, նրանք կկարողանան զգալ ձեր վկայության և երջանկության ոգին:

Բացի լավ օրինակ լինելուց, դուք կարող եք « միշտ պատրաստ լինել . . . պատասխան տալու ամենին, որ ձեր մեջ եղած հույսի համար պատճառ հարցնե»: (Ա Պետրոս Գ.15) Դուք կարող եք աղոթել՝ վերականգնված ավետարանի մասին ուրիշներին պատմելու հնարավորության համար: Այնուհետև դուք կարող եք զգոն լինել, որովհետև շատ մարդիկ են ձգտում ճշմարտության:

Ծառայել լիաժամկետ միսիա

Իր Հարությունից հետո Տերը պատվիրեց Իր աշակերտներին. «գնացեք բոլոր ազգերը աշակերտեցեք, նրանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունովը»: (Մատթեոս ԻԸ.19) Ի կատարումն այս պատվիրանի, Եկեղեցու գործունակ երիտասարդ տղամարդիկ պարտականություն ունեն հոգեպես և ֆիզիկապես պատրաստվել ծառայելու լիաժամկետ միսիայում: Միայնակ կանայք և մեծահասակ զույգերը նույնպես հնարավորություն ունեն ծառայել լիաժամկետ միսիայում: Եթե ցանկանում եք ծառայել լիաժամկետ միսիա, խոսեք ձեր եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի հետ:

Ծառայել Եկեղեցու նոր անդամներին

Միսիոներական աշխատանքը ներառում է նրանց օգնելն ու աջակցելը, ովքեր միանում են եկեղեցուն: Նրանց նոր պարտականությունները հաճախ պահանջում են մի կողմ թողնել իրենց հին ընկերներին և ծանոթներին: Բացի դրանից Եկեղեցին ներկայացնում է կյանքի մի ուղի, որը նրանց կարող է թվալ տարբեր և խստապահանջ:

Եկեղեցու յուրաքանչյուր նոր անդամ կարիք ունի երեք բանի՝ ընկերոջ, պարտականության և «Աստծո բարի խոսքով» սնուցման: (Մորոնի 6.4) Դուք կարող եք այս օգնությունն ապահովող ջանքերում մաս կազմել: Դուք միշտ կարող եք ընկեր լինել: Եթե նույնիսկ դուք այնպիսի դիրքում չեք կամ պաշտոնական եկեղեցական կոչումում կամ պարտականությունում այդ անելու համար, դուք կարող եք աշխատել նոր անդամների հետ ծառայություն մատուցելով: Եվ դուք կարող եք հնարավորություններ որոնել՝ կիսվելու Աստծո խոսքով նոր անդամների հետ:

Լրացուցիչ հղագրումներ՝ Մարկոս ԺԶ.15, Ալմա 26.1–16, ՎԿՈ 4, 60.2, 84.88, 123.12

Մխիթարիչ (*Տես* Սուրբ Հոգի)

Մկրտություն

Մորմոնի Գիրքը պատմում է մարդկանց մի խմբի մասին, ովքեր սովորեցին ավետարանը և մկրտվեցին մի վայրում, որը կոչվում էր Մորմոն: Իրենց մկրտության պահից ի վեր նրանք համարեցին Մորմոնը որպես գեղեցկության մի վայր, որովհետև մինչ նրանք այնտեղ էին, նրանք «եկան իրենց Քավիչի իմացությանը»: (Մոսիա 18.30) Զորացած իրենց վկայություններով և մկրտության ուխտով, նրանք հավատարիմ մնացին Տիրոջը, նույնիսկ, խիստ փորձության ժամանակ: (տես Մոսիա 23–24):

Մորմոնի Գրքի այս պատմության մարդկանց նման, դուք կարող եք ցնծալ, երբ հիշեք ձեր մկրտության ուխտը և Տիրոջ խոստումները ձեզ: Դուք կարող եք ուժ գտնել մկրտության արարողության մեջ, անկախ նրանից վերջերս եք մկրտվել, թե շատ տարիներ առաջ:

Մտնել Հավերժական Կյանքի Արահետը

Մկրտությունն ավետարանի առաջին փրկարար արարողությունն է (տես Հավատքի Հանգանակ 1.4): Քահանայության

իշխանությամբ մկրտության և հաստատման միջոցով, դուք դարձաք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ:

Երբ մկրտվեցիք, դուք ցույց տվեցիք Փրկչի օրինակին հետևելու ձեր պատրաստակամությունը: Նա նույնպես մկրտվեց, չնայած Նա առանց մեղքի էր: Ինչպես Նա բացատրեց Հովհաննես Մկրտչին, Նա պետք է մկրտվեր որպեսզի «ամեն արդարություն կատարե[ր]» (տես Մատթեոս Գ. 13–17):

Բոլորը, ովքեր ձգտում են հավերժական կյանքի պետք է հետևեն Փրկչի օրինակին՝ մկրտվելով և ստանալով Սուրբ Հոգու պարգևը: Մարգարե Նեփին ասել է, որ Փրկիչը ցույց է տվել մեզ «դարպասը, որով [մենք] պիտի մտնենք: Քանզի դարպասը, որով [մենք] պիտի մտնեք, ապաշխարությունն ու մկրտությունն է ջրով. և ապա գալիս է [մեր] մեղքերի թողությունը՝ կրակով և Սուրբ Հոգով: Եվ այն ժամանակ [մենք] այս նեղ և անձուկ արահետի վրա ենք, որը տանում է դեպի հավերժական կյանք» (2 Նեփի 31.17–18): Մենք բոլորս կստանանք հավերժական կյանք, եթե համբերենք մինչև վերջ, պահելով մեր ուխտերը և ստանալով փրկության մյուս արարողությունները:

Մկրտություն Տիրոջ Ձևով

Փրկիչը հայտնել է Մարգարե Ջոզեֆ Սմիթին մկրտության ճիշտ ձևը, հստակեցնելով, որ արարողությունը պետք է կատարվի մեկի կողմից, որը քահանայության իշխանություն ունի և որ այն պետք է կատարվի ընկղմամբ:

Անձնավորությունը, որը կանչվել է Աստծո կողմից և մկրտելու իշխանություն ունի Հիսուս Քրիստոսի կողմից, պետք է ջրի մեջ մտնի այն անձնավորության հետ, որը ներկայացել է մկրտվելու համար, և պետք է ասի՝ կոչելով նրան անունով. Լինելով լիազորված Հիսուս Քրիստոսի կողմից, ես մկրտում եմ քեզ անունով Հոր, և Որդու, և Սուրբ Հոգու: Ամեն:

Հետո նա պետք է ընկղմի նրան ջրի մեջ, և դուրս գա կրկին ջրից»: (տես ՎԱՈ 20.73–74)

Ընկղմումը խորհրդանշում է մարդու մեղսավոր կյանքը և վերածնունդը դեպի հոգևոր կյանք՝ նվիրաբերումը Աստծո և Նրա

զավակների ծառայությանը: Այն նաև խորհրդանշում է մահն ու հարությունը: (*Տես* Հռովմայեցիս Զ.3–6)

Փոքր Երեխաները և Մկրտությունը

Վերջին Օրերի հայտնությունից մենք գիտենք, որ փոքր երեխաները փրկագնվում են Հիսուս Քրիստոսի ողորմածության միջոցով: Տերն ասել է. «Նրանք չեն կարող մեղք գործել, քանզի սատանային իշխանություն չի տրված գայթակղելու փոքր երեխաներին, մինչև նրանք չսկսեն պատասխանատու դառնալ իմ առջև»: (տես ՎԿՈ 29. 46–47) Նրանք չպետք է մկրտվեն նախքան պատասխանատվության տարիքը, որը Տերը հայտնել է, որ ութ տարեկան հասակն է (տես ՎԿՈ 68.27, Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Ծննդոց ԺԷ.11): Ամեն մեկը, ով պահանջում է, որ փոքր երեխաները մկրտվեն «ուրանում է Քրիստոսի ողորմությունները և անարգում նրա քավությունն ու փրկագնելու նրա զորությունը»: (Մորոնի 8.20, տես նաև 8–19, 21–24 հատվածները)

Ձեր Մկրտության Ուխտը

Երբ դուք մկրտվեցիք, մտաք ուխտի մեջ Աստծո հետ: Դուք խոստացաք ձեր վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը, պահել Նրա պատվիրանները և ծառայել Նրան մինչև վերջ: (տես Մոսիա 18. 8–10, ՎԿՈ 20. 37) Դուք վերանորոգում եք այս ուխտը, երբ ամեն անգամ ճաշակում եք հաղորդությունից: (տես ՎԿՈ 20.77, 79)

Ձեզ վրա վերցնելով Հիսուս Քրիստոսի անունը: Երբ ձեզ վրա եք վերցնում Հիսուս Քրիստոսի անունը, դուք ձեզ համարում եք Նրանը: Դուք դնում եք Նրան և Նրա գործը առաջինը ձեր կյանքում: Դուք ձգտում եք ավելի շուտ նրան, ինչը Նա է ցանկանում, քան այն, ինչը դուք եք ցանկանում կամ աշխարհն է սովորեցնում ձեզ ցանկանալ:

Մորմոնի Գրքում թագավոր Բենիամինը բացատրում է, թե ինչու է կարևոր մեզ վրա վերցնել Փրկչի անունը.

«Չկա տրված մեկ այլ անուն, որով փրկություն է գալիս. հետևաբար, ես կկամենայի, որ դուք ձեզ վրա վերցնեք Քրիստոսի անունը, դուք, բոլորդ, որ մտել եք ուխտի մեջ Աստծո հետ, որ լինեք մինչև ձեր կյանքի վերջը հնազանդ:

Եվ կլինի այնպես, որ ով որ անի այս, կգտնվի Աստծո աջ կողմում, քանզի նա կիմանա անունը, որով նա կոչվում է. քանզի նա կկոչվի Քրիստոսի անունով:

Եվ այժմ կլինի այնպես, որ ով որ չի վերցնի իր վրա Քրիստոսի անունը, պետք է կոչվի մեկ այլ անունով. հետևաբար, նա կգտնի իրեն Աստծո ձախ կողմում»: (Մոսիա 5.8–10)

Պահել պատվիրանները: Ձեր մկրտության ուխտը պարտավորություն է գալ Աստծո արքայությունը, զատվելով աշխարհից և կանգնելով որպես Աստծո վկա «բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում»: (Մոսիա 18. 9) Որպես Աստծո վկա կանգնելու ձեր ջանքերը ներառում են այն ամենը, ինչ դուք անում եք և ասում: Ձգտեք միշտ հիշել և պահել Տիրոջ պատվիրանները: Ձեր մտքերը, լեզուն, և գործողությունները անարատ պահեք: Երբ ձգտում եք զվարճության՝ ինչպես օրինակ ֆիլմերի, հեռուստացույցի, ինտեռնետի, երաժշտության, գրքերի, ամսագրերի, և լրագրերի, զգույշ եղեք դիտել, լսել, կարդալ միայն այնպիսի բաներ, որոնք վեհացնող են: Հագնվեք համեստ: Ընտրեք այնպիսի ընկերներ, ովքեր քաջալերում են ձեզ հասնել ձեր հավերժական նպատակներին: Հեռու մնացեք անբարոյականությունից, պոռնոգրաֆիայից, թղթախաղից, ծխախոտից, ալկոհոլից, և արգելված թմրադեղերից: Ձեզ արժանի պահեք տաճար մտնելու:

Ծառայել Տիրոջը: Աշխարհի բաներից զատվելու պատվիրանը չի նշանակում, որ դուք պետք է մեկուսացնեք ձեզ ուրիշներից: Մկրտության ուխտի մի մասն է՝ ծառայել Տիրոջը, և դուք Նրան ծառայում եք լավագույն ձևով, երբ դուք ծառայում եք ձեր մերձավորներին: Երբ մարգարե Ալման սովորեցրեց մկրտության ուխտի մասին, նա ասաց, որ մենք պետք է «հոժար [լինենք] կրելու մեկ[ս] մյուսի բեռը, որ դրանք թեթև լինեն» և «հոժար [լինենք] սգալու նրանց հետ, ովքեր սգում են . . . և մխիթարել նրանց, ովքեր կարիք

ունեն մխիթարության»: (Մոսիա 18. 8–9) Եղեք բարի և հարգալի բոլոր մարդկանց հանդեպ, ուրիշներին վերաբերվել՝ հետևելով Հիսուս Քրիստոսի օրինակին:

Մկրտության խոստացված օրհնությունները

Երբ դուք պահեք ուխտը, որը կապում եք մկրտության ժամանակ, Տերը կօրհնի ձեզ ձեր հավատարմության համար: Օրհնություններից մի քանիսը, որոնք դուք ստանում եք՝ Սուրբ Հոգու անընդհատ ընկերակցությունն է, ձեր մեղքերի թողությունը և հոգեպես վերածնված լինելու արտոնությունը:

Սուրբ Հոգու Մշտական Ընկերակցությունը: Ձեր մկրտությունից հետո մեկ կամ մեկից ավելի Մելքիսեդեկյան Քահանայության իշխանությունը կրողներ դրեցին իրենց ձեռքերը ձեր գլխին և տվեցին ձեզ Սուրբ Հոգու պարգևը: Այս պարգևը ձեզ իրավունք է տալիս Սուրբ Հոգու մշտական ընկերակցությունն ունենալ այնքան ժամանակ, որքան որ արժանի կլինեք: Հոգու մշտական ընկերակցությունը մահկանացու կյանքում մեծագույն օրհնությունն է, որ դուք կարող եք ստանալ: Հոգին կառաջնորդի ձեզ արդարակեցության և խաղաղության ուղիներով՝ տանելով ձեզ դեպի հավերժական կյանք:

Մեղքերի Թողություն: Ձեր մկրտության շնորհիվ դուք կարող եք ստանալ մեղքերի թողություն: Այլ խոսքով ասած դուք կարող եք ներվել Փրկչի ողորմածության միջոցով: Այս օրհնությամբ ձեզ ի վերջո, կթույլատրվի ապրել Երկնային Հոր ներկայության մեջ:

Ձեր մեղքերին թողություն ստանալու համար, դուք պետք է գործադրեք հավատք առ Հիսուս Քրիստոս, լինեք անկեղծորեն ապաշխարող և միշտ ձգտեք պահել պատվիրանները: Մարգարե Մորմոնը սովորեցրել է. «Ապաշխարության առաջին պտուղները՝ մկրտությունն է, և մկրտությունը գալիս է հավատքով՝ պատվիրանների կատարման համար. և պատվիրանների կատարումը բերում է մեղքերի թողություն»: (Մորոնի 8. 25) Դուք «պահպանում եք ձեր մեղքերի թողությունը», երբ շարունակում եք խոնարհեցնել ձեզ Աստծո առջև՝ կանչելով առ Նա ամենօրյա աղոթքով, մնում եք

հաստատուն հավատքում և ծառայում նրանց, ովքեր կարիքի մեջ են: (տես Մոսիա 4.11–12, 26)

Լինելով Կրկին Ծնված: Մկրտության և հաստատման արարողություններից հետո, դուք ծնվեցիք կրկին դեպի նոր կյանք: Փրկիչն ասել է Նիկոդեմոսին. «Եթե մեկը ջրից և Հոգուց չծնվի, նա կարող չէ Աստծո արքայությունը մտնել»: (Հովհ. Գ. 5) Ճիշտ ինչպես մանկիկը ծնվելով մտնում է մի նոր գոյություն, դուք սկսեցիք նոր կյանք, երբ մտաք մկրտության ուխտի մեջ: Դուք կարող եք աճել հոգևորով և ավելի նմանվել Փրկչին՝ պահելով ձեր մկրտության ուխտը, նորոգելով ձեր ուխտը, ճաշակելով հաղորդությունը և ապաշխարելով ձեր մեղքերից: Պողոս Առաքյալը սովորեցրել է, որ երբ մենք մկրտվում ենք, մենք «պետք է կյանքի նորոգության մեջ ման գանք»: (Հռովմայեցիս Զ. 4)

Համբերել մինչև վերջ

Այժմ, երբ դուք մկրտվել եք և ստացել Սուրբ Հոգու պարգևը, դուք պետք է շարունակեք արդարակեցության մեջ, քանի որ այս արարողությունները Երկնային Հոր մոտ ապրելու համար ձեր վերադարձի ճամփորդության միայն սկիզբն են նշում: Մարգարե Նեփին սովորեցրել է.

«Հետո, երբ դուք ներս եք մտել այս նեղ և անձուկ արահետը, ես կհարցնեի, թե արդյո՞ք ամեն ինչ արված է: Ահա, ես ասում եմ ձեզ՝ Ոչ. քանզի դուք չէիք գա այսքան հեռու, եթե դա չլիներ Քրիստոսի խոսքով և անխախտ հավատքով նրա հանդեպ՝ ապավինելով ամբողջովին նրա արժանիքներին, որը հզոր է փրկելիս:

Ուստի դուք պետք է առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ՝ ունենալով հույսի կատարյալ պայծառություն և սեր Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ: Ուստի, եթե դուք առաջ մղվեք, սնվելով Քրիստոսի խոսքով, և համբերեք մինչև վերջ, ահա, այսպես է ասում Հայրը. Դուք կունենաք հավերժական կյանք»: (2 Նեփի 31. 19–20)

Լրացուցիչ հղագրումներ՝ Գործք Բ. 37–38, 2 Նեփի 31.4–13, Ալմա 7.14–16, 3Նեփի 11. 18–41, 27.13–22, ՎԿՈ 39. 5–6,10, 76.50–53

Տես նաև Հավատք, Սուրբ Հոգի, Հնազանդություն, Քահանայություն, Ապաշխարություն, Հաղորդություն

Մոլեխաղեր

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին դեմ է մոլեխաղերին, ներառյալ վիճակախաղերը, որոնք հովանավորվում են կառավարությունների կողմից:

Մոլեխաղը պայմանավորված է ոչնչի համար ինչ որ բան ստանալու ցանկությամբ: Այս ցանկությունը հոգեպես կործանարար է: Այն մասնակիցներին Փրկչի սիրո, և ծառայության ուսմունքներից հեռու է տանում և մղում դեպի հակառակորդի եսասիրությունը: Այն խորտակում է աշխատանքի արժեքը, խնայողության և ամեն բան անելիս ազնիվ ջանք թափելու ցանկությունը:

Նրանք, ովքեր մասնակցում են մոլեխաղի, շուտով հասկանում են այն գաղափարի խաբուսիկությունը, որ կարող են քիչ կամ ոչինչ չտալ և ստանալ փոխարենը ինչ որ արժեքավոր մի բան: Նրանք հասկանում են, որ կորցնում են մեծ քանակությամբ փող, իրենց սեփական պատիվը և ընտանիքի անդամների ու ընկերների հարգանքը: Խաբված և անձնատուր եղած, նրանք հաճախ մոլեխաղի մեջ են դնում գումարներ, որոնք նրանք պետք է օգտագործեին այլ նպատակների համար, ինչպես օրինակ իրենց ընտանիքների հիմնական կարիքները հոգալը: Մոլեխաղով զբաղվողները երբեմն այնքան են ստրկանում և հուսահատորեն ձգտում մոլեխաղերի պարտքերը վճարել, որ նրանք սկսում են գողություն անել և կորցնում են իրենց իսկ բարի անունը:

Առաջին Նախագահությունը հորդորում է մեզ միանալ ուրիշներին դիմակայելու մեր համայնքներում որևէ ձևի մոլեխաղերի օրինականացմանը և կառավարության կողմից հովանավորությանը:

Տես նաև Գայթակղություն

Մոլություն (*Տես* Թղթախաղ, Պոռնոգրաֆիա, Իմաստության խոսք)

Մորմոնի Գիրքը (*Տես* Սուրբ Գրքեր)

Յոթանասունական (*Տես* Եկեղեցու կառավարում)

Յոթանասունականների Քվորումներ (*Տես* Եկեղեցու Կառավարում)

Նախաերկրային գոյություն (*Տես* Փրկության Ծրագիր)

Նախասահմանվածություն

Նախաերկրային հոգևոր աշխարհում Աստված նշանակեց որոշ հոգիների իրենց մահկանացու կյանքի ընթացքում կատարել հատուկ առաքելություններ: Սա կոչվում է նախասահմանվածություն:

Նախասահմանվածությունը չի երաշխավորում, որ անհատները կստանան որոշակի կոչումներ կամ պարտականություններ: Այդպիսի հնարավորություններ այս կյանք են գալիս ազատ կամքի արդար օգտագործման արդյունքում, ճիշտ ինչպես արդարակյաց նախաերկրային գոյության արդյունքում եկավ նախասահմանվածությունը:

Հիսուս Քրիստոսը նախասահմանված էր իրականացնելու Քավությունը՝ դառնալով «Գառ, որ աշխարհի սկզբից հետե մորթված է»: (Հայտնություն ԺԳ.8, տես նաև Ա Պետրոս Ա.19–21) Սուրբ գրքերը պատմում են ուրիշների մասին, ովքեր նախասահմանված են եղել: Մարգարե Աբրահամն իմացավ իր նախասահմանված լինելու մասին, երբ նա տեսիլք ստացավ, որի ժամանակ նա տեսավ շատ ազնվական և մեծ հոգիներ նախաերկրային հոգևոր աշխարհում: Նա ասաց. «Աստված տեսավ, որ այդ հոգիները լավն էին և նա կանգնեց նրանց միջև և ասաց. Սրանց ինձ համար կառավարիչներ կդարձնեմ, քանզի նա կանգնած էր նրանց միջև, ովքեր ոգիներ էին և նա տեսավ, որ նրանք լավն էին, և նա ասաց ինձ՝ Աբրահամիս. դու նրանցից մեկն ես, դու ընտրված էիր մինչև քո ծնվելը»: (Աբրահամ 3. 22–23) Տերն ասաց Երեմիային. «Քեզ որովայնում չստեղծած ես քեզ գիտեի, և արգանդից դեռ դու դուրս չեկած ես քեզ սրբեցի, ես քեզ ազգերի մարգարե եմ

դրել»: (Երեմիա Ա.5) Հովհաննես Մկրտիչը նախասահմանված էր պատրաստելու մարդկանց՝ Փրկչի երկրային ծառայության համար: (տես Եսայիա Խ.3, Ղուկաս Ա.13–17, 1 Նեփի 10.7–10)

Նախասահմանվածության վարդապետությունը վերաբերվում է ոչ միայն Փրկչին և Նրա մարգարեներին, այլ Եկեղեցու բոլոր անդամներին: Նախքան երկրի ստեղծումը հավատարիմ կանանց տրվեց որոշակի պարտականություններ և հավատարիմ տղամարդիկ նախասահմանվեցին քահանայության որոշակի պարտականությունների: Չնայած դուք չեք հիշում այդ ժամանակը, դուք անկասկած համաձայնվեցիք կատարել կարևոր հանձնարարություններ ձեր Հոր ծառայության մեջ: Երբ դուք ապացուցեք, որ արժանի եք, ձեզ կտրվի հնարավորություններ կատարելու այն հանձնարարությունները, որոնք այն ժամանակ ստացաք:

Լրացուցիչ հղագրումներ՝ Ալմա 13.1–9, ՎԿՈ 138. 53–56

Տես նաև Ազատ Կամք, Փրկության Ծրագիր

Ներում

Սուրբ գրքերը հիշատակում են ներման մասին երկու ձևով: Տերը պատվիրում է մեզ ապաշխարել մեր մեղքերից և որոնել Նրա ներումը: Նա նաև պատվիրում է մեզ ներել նրանց, ովքեր վիրավորել են և ցավ պատճառել մեզ: Տերունական աղոթքում Հիսուսը խորհուրդ է տալիս մեզ խնդրել Երկնային Հորը «թողնել մեզ մեր պարտքերը, ինչպես մենք էլ թողնում ենք մեր պարտականներին»: (Մատթեոս Զ.12)

Ներում փնտրել Տիրոջից

Մեղքը ծանր բեռ է: Այն բերում է հանցանքի, լարվածության և տվայտանքի զգացման՝ գիտենալով, որ գործել ենք Երկնային Հոր կամքին հակառակ: Այն բերում է խղճի տանջալի խայթ, երբ մենք գիտակցում ենք, որ մեր վարմունքի պատճառով, գուցե ցավ ենք պատճառել ուրիշներին և զրկել մեզ օրհնություններ ստանալուց, որոնք մեր Հայրը պատրաստ է տալու մեզ:

Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք կարող ենք ներում ստանալ մեր մեղքերի համար՝ անկեղծ և լիակատար ապաշխարության միջոցով: Մեղսալիությունը բերում է տառապանք և ցավ, բայց Տիրոջ ներումը բերում է սփոփանք, հանգստություն և ուրախություն: Տերը խոստացել է.

Ահա, նա ով ապաշխարել է իր մեղքերից, նույնը ներված է և Ես՝ Տերս այլևս չեմ հիշում դրանք: (ՎԵՈՒ 58.42)

«Եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պես լինեն ձյունի պես պիտի սպիտականան. եթե նրանք որդան կարմիրի պես լինեն ասրի պես պիտի սպիտականան»: (Եսայիա Ա.18)

Դուք կարող եք զգալ այս հրաշքը, անկախ նրանից թե պետք է ապաշխարեք լուրջ մեղքերից, թե ամենօրյա թուլություններից: Ճիշտ ինչպես Փրկիչն աղերսում էր մարդկանց հնում, Նա այսօր էլ է աղերսում ձեզ՝

«Ինձ մոտ եկեք, ամեն վաստակածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ:

Ձեզ վրա առեք իմ լուծը և ինձանից սովորեցեք. որովհետև ես հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեր անձերի համար հանգստություն կգտնեք:

Որովհետև իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև»: (Մատթեոս ԺԱ. 28–30)

«Այժմ չե՞ք վերադառնա ինձ մոտ և ապաշխարի ձեր մեղքերից, և դարձի չե՞ք գա, որպեսզի ես կարողանամ բուժել ձեզ:

Այո, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե դուք գաք ինձ մոտ, դուք կունենաք հավերժական կյանք: Ահա, իմ ողորմության բազուկը մեկնված է դեպի ձեզ, և ով որ գա, նրան ես կընդունեմ. և օրհնված են նրանք, ովքեր գալիս են ինձ մոտ»: (3 Նեփի 9.13–14)

Ապաշխարություն բառի բացատրության համար տես «Ապաշխարություն», էջ 132–35:

Ներել ուրիշներին

Բացի մեր սեփական մեղքերին ներում փնտրելուց, մենք պետք է կամենանք ներել ուրիշներին: Տերն ասել է, որ մենք պարտավոր ենք ներել միմյանց, քանզի նա ով չի ներում իր եղբորը՝

նրա զանցանքները, դատապարտված կանգնում են Տիրոջ առջև, քանզի նրանում մնում է ավելի մեծ մեղք: Ես Տերս կներեմ ում կներեմ, բայց ձեզանից պահանջվում է ներել բոլոր մարդկանց: (ՎԱՌ 64. 9–10)

Կյանքի ամենօրյա հանգամանքներում դուք անկասկած ուրիշ մարդկանց կողմից կարող եք անիրավ վերաբերմունքի ենթարկվել՝ երբեմն ոչ կանխամտածված և երբեմն էլ դիտավորյալ: Հեշտ է դառնանալ կամ բարկանալ, կամ էլ վրեժխնդիր լինել այսպիսի իրավիճակում, բայց դա Տիրոջ ուղին չէ: Փրկիչը խորհուրդ է տվել. «Սիրեցեք ձեր թշնամիներին, օրհնեցեք ձեզ անիծողներին. բարի արեք ձեզ ատողներին. և աղոթք արեք ձեզ չարչարողների և ձեզ հալածողների համար»: (Մատթեոս Ե.44) Նա թողել է ներման կատարյալ օրինակ, երբ խաչի վրա էր: Ակնարկելով հռոմեացի զինվորներին, որոնք խաչել էին Նրան, Նա աղոթեց. «Հայր, թողիր դրանց. որովհետև չգիտեն թե ինչ են անում»: (Ղուկաս ԻԳ.34, տես տողատակի ծանոթություն *գ*)

Աղոթեք, որպեսզի ուժ գտնեք ներելու նրանց, ովքեր անիրավություն են արել ձեզ: Թողեք բարկության, դառնության կամ վրեժի զգացումները: Որոնեք բարին ուրիշների մեջ, փոխարենը կենտրոնանալու նրանց սխալների վրա և շեշտելու նրանց թուլությունները: Թույլ տվեք Աստծուն լինել նրանց դատավորը իրենց վիրավորական արարքների համար: Վիրավորված զգացումների հաղթահարումը կարող է դժվար լինել, բայց դուք կարող եք դա անել Տիրոջ օգնությամբ: Դուք կգտնեք, որ ներումը կարող է բուժել ահավոր վերքեր, փոխարինելով հակառակության և ատելության թույնը խաղաղությամբ և սիրով, որը միայն Աստված կարող է տալ:

Լրացուցիչ հղագրումներ՝ Մատթեոս Զ. 14–15, ԺԹ. 21–22, 1Նեփի 7.16–21

Տես նաև Հիսուս Քրիստոսի Քավությունը, Ուրիշներին Դատելը, Ապաշխարություն

Ներքնազգեստ (*Տես* Տաճարներ)

Նշաններ

Նշանները իրադարձություններ են կամ փորձառություններ, որոնք դրսևորում են Աստծո զորությունը: Դրանք հաճախ հրաշագործ են: Դրանք ցույց են տալիս կամ հայտարարում մեծ իրադարձությունների մասին, ինչպես օրինակ Փրկչի ծնունդը, մահը և Երկրորդ գալուստը: Դրանք հիշեցնում են մեզ, այն ուխտերի մասին, որոնք Տերը կապել է մեզ հետ: Նշանները կարող են նաև վկայել աստվածային կոչման մասին կամ ցույց տալ Տիրոջ դժգոհությունը:

Որոշ մարդիկ պնդում են, որ նրանք կհավատան Աստծուն կամ Նրա աշխատանքին, եթե կարողանան նշան ստանալ: Բայց Տերն ասել է, որ հավատքը գալիս է ոչ թե նշաններով, այլ նշաններ են հետևում նրանց, ովքեր հավատում են: (տես ՎԱՈ 63.9) Այդպիսի նշաններ տրվում են նրանց, ովքեր հավատարիմ են և հնազանդ, որպեսզի ուժեղացնեն նրանց իրենց հավատքում:

Լրացուցիչ հղագրումներ՝ Մատթեոս ԺԲ. 38–39, Մարկոս ԺԳ. 22–27, Ղուկաս Բ.8–17, Ալմա 30.43–52, Հելաման 14, 3 Նեփի 1.13–21, 8.2–25, Եթեր 12.6, ՎԱՈ 63.7–12

Տես նաև Հավատք, Հնազանդություն, Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստ

Շնորհ

Շնորհ բառը ինչպես օգտագործվում է սուրբ գրքերում, հիմնականում վերաբերվում է աստվածային օգնությանն ու զորությանը, որը մենք ստանում ենք Տեր Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով: Պետրոս Առաքյալը սովորեցրել է, որ մենք պետք է «աճենք մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհքովը և գիտությունովը»: (Բ Պետրոս Գ.18)

Փրկություն շնորհի միջոցով

Անկման պատճառով, յուրաքանչյուրը կտանի ժամանակավոր մահ: Շնորհի միջոցով, որը հնարավոր է դառնում Փրկչի քավող զոհաբերության միջոցով, բոլոր մարդիկ հարություն կառնեն և կստանան անմահություն: (տես 2 Նեփի 9.6–13) Բայց

միայն հարությունը մեզ չի արժանացնում Աստծո ներկայության մեջ հավերժական կյանքի: Մեր մեղքերը մեզ անմաքուր են դարձնում և անհամապատասխան՝ բնակվելու Աստծո ներկայության մեջ և մենք Նրա շնորհի կարիքն ունենք սրբվելու և կատարյալ դառնալու «այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել»: (2 Նեփի 25.23)

«Այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել» արտահայտությունը սովորեցնում է, որ մեր կողմից ջանք է պահանջվում Տիրոջ շնորհի լրիվությունը ստանալու և արժանի դառնալու՝ Նրա հետ բնակվելու: Տերը պատվիրել է մեզ հնազանդվել Իր ավետարանին, որը ներառում է հավատք ունենալ Նրա հանդեպ, ապաշխարել մեր մեղքերից, մկրտված լինել, Սուրբ Հոգու պարգևը ստանալ և մինչև վերջ համբերել: (տես Հովհ.Գ.3–5, 3Նեփի 27.16–20, Հավատո Հանգանակներ 1.3–4) Մարգարե Մորոնին գրել է, որ մենք ստանում ենք շնորհը, երբ գալիս ենք դեպի Փրկիչը և հնազանդվում ենք Նրա ուսմունքներին:

«Եկեք դեպի Քրիստոսը, և կատարելագործվեք նրանում, և հրաժարվեք ամեն անաստվածությունից, և եթե դուք հրաժարվեք ամեն անաստվածությունից և սիրեք Աստծուն, ձեր ողջ զորությամբ՝ մտքով և ուժով, ապա նրա շնորհը բավական է ձեզ, որ նրա շնորհով դուք կարողանաք լինել կատարյալ Քրիստոսում. և եթե Աստծո շնորհով դուք կատարյալ լինեք Քրիստոսում, դուք ոչ մի կերպ չեք կարող ուրանալ Աստծո զորությունը:

Եվ բացի այդ, եթե դուք Աստծո շնորհով կատարյալ լինեք Քրիստոսում և չուրանաք նրա զորությունը, ապա դուք կսրբագործվեք Քրիստոսում՝ Աստծո շնորհով, Քրիստոսի արյան հեղվելով, որը Հոր ուխտի մեջ է՝ մեղքերի թողության համար, այնպես որ դուք դառնում եք սուրբ՝ առանց բծի»: (Մորոնի 10.32–33)

Ստանալ շնորհ ձեր կյանքի ընթացքում

Բացի ձեր վերջնական փրկության համար պահանջվող շնորհից, դուք ձեր կյանքի յուրաքանչյուր օր այս ունակություն տվող զորության կարիքն ունեք: Երբ ջանասիրությամբ, համեստությամբ ու հեզությամբ մոտենաք ձեր Երկնային Հորը Նա կբարձրացնի և

կուժեղացնի ձեզ Իր շնորհի միջոցով: (տես Առակաց Գ.34, Ա Պետրոս Ե.5, ՎևՈւ 88.78, 106.7–8) Նրա շնորհին ապավինելը ձեզ հնարավորություն է տալիս առաջադիմել և աճել արդարության մեջ: Հիսուսն Ինքը «սկզբում չստացավ լրիվությունը, այլ շարունակեց շնորհից շնորհ, մինչև ստացավ լրիվությունը»: (ՎևՈւ 93.13) Շնորհն ունակություն է տալիս ձեզ օգնել կառուցելու Աստծո արքայությունը, ծառայություն, որը չէիք կարողանա մատուցել միայն ձեր ուժով կամ միջոցներով: (տես Հովհ.ԺԵ. 5, Փիլիպպեցիս Դ.13, Եբրայեցիս ԺԲ. 28, Հակոբոս Դ. 6–7)

Եթե երբևէ հուսահատվեք կամ շատ թույլ զգաք, որպեսզի շարունակեք ըստ ավետարանի ապրել, հիշեք այն ուժի մասին, որը կարող եք ստանալ շնորհի ունակություն տվող զորությամբ: Դուք կարող եք հանգստություն և վստահություն գտնել Տիրոջ այս խոսքերում. «Իմ շնորհը բավական է բոլոր մարդկանց համար, ովքեր իրենց խոնարհեցնում են իմ առջև. քանզի, եթե նրանք խոնարհեցնեն իրենց իմ առջև, և հավատք ունենան ինձանում, այն ժամանակ, նրանց թույլ կողմերը ես կդարձնեմ ուժեղ»: (Եթեր 12.27)

Լրացուցիչ հղագրումներ՝ Գործք ԺԵ.11, Հռովմայեցիս Ե.2, 2 Նեփի 10.24, 11.5

Տես նաև Հիսուս Քրիստոսի Քավությունը, Հարություն, Փրկություն

Շնություն (*Տես՝* Մաքրաբարոյություն)

Ողորմածություն

Մեր Երկնային Հայրը գիտի մեր թուլությունները և մեղքերը: Նա ողորմածություն է ցույց տալիս, երբ Նա ներում է մեզ մեր մեղքերը և օգնում մեզ վերադառնալ բնակվելու Նրա ներկայության մեջ:

Այդպիսի կարեկցանքը կարող է թվալ, թե հակասության մեջ է արդարադատության օրենքի հետ, որը պահանջում է, որ ոչ մի անմաքուր բան թույլ չտրվի բնակվել Աստծո հետ: (տես 1 Նեփի 10.21) Բայց Հիսուս Քրիստոսի Քավությունը հնարավոր դարձրեց Աստծո համար «լինել մի կատարյալ, արդար Աստված, և՝ մի ողորմած Աստված նույնպես»: (Ալմա 42.15)

Ստանալ Աստծո ողորմածությունը

Փրկիչը բավարարեց արդարադատության պահանջները, երբ Նա կանգնեց մեր տեղը և կրեց պատիժը մեր մեղքերի համար: Այս ինքնազոհաբերման ակտի շնորհիվ Հայրը կարող է ողորմածաբար մեզանից հեռացնել պատիժը և ողջունել մեզ Իր ներկայության մեջ: Տիրոջ ներումն ստանալու համար, մենք պետք է անկեղծորեն ապաշխարենք մեր մեղքերից: Ինչպես մարգարե Ալման է սովորեցրել. «Արդարադատությունը ներկայացնում է բոլոր իր պահանջները, և նաև՝ ողորմածությունն է հայցում այն բոլորը, ինչն իր սեփականն է. և այսպես, բացի անկեղծորեն զղջացողից, ոչ մեկը չի փրկվում»: (Ալմա 42.24, տես նաև հատվածներ 22–23, 25)

Մեղքի ներումը Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի կողմից ողորմածության միակ պարգևը չէ: Յուրաքանչյուր օրհնություն, որ դուք ստանում եք ողորմածության ակտ է, ավելին, քան դուք երբևէ ինքնուրույն կարող էիք արժանի լինել: Մորմոնը սովորեցրել է. «Բոլոր բաները, որոնք բարի են, գալիս են Քրիստոսից, այլապես մարդիկ ընկած էին, և ոչ մի բարի բան չէր կարող գալ նրանց»: (Մորոնի 7.24) Օրինակ՝ դուք աստվածային ողորմածության կրողն եք, երբ Երկնային Հայրը լսում է և պատասխանում ձեր աղոթքներին, երբ ստանում եք առաջնորդություն Սուրբ Հոգուց և երբ քահանայության զորությամբ ապաքինվում եք հիվանդությունից: Չնայած այս բոլոր օրհնությունները գալիս են որպես ձեր հնազանդության հետևանք, դուք երբեք չէիք կարողանա ստանալ դրանք միայն ձեր ջանքերի միջոցով: Դրանք ողորմածության պարգևներ են սիրող և գթառատ Հորից:

Ցույց տալ ողորմածություն ուրիշներին

Խոսելով Իր աշակերտների մասին Փրկիչը պատվիրել է. «Ուրեմն եղեք ողորմած, ինչպես ձեր Հայրն էլ ողորմած է»: (Ղուկաս 6.36) Ուրիշների հետ ձեր հարաբերություններում դուք կարող եք հետևել ձեր Երկնային Հոր ողորմածության օրինակին: Ձգտեք զերծ պահել ձեր կյանքը գոռոզությունից, հպարտությունից և մեծամտությունից: Որոնեք գթառատ, հարգալից,

ներող, մեղմ և համբերատար, լինելու ուղիներ, նույնիսկ երբ տեղյակ եք ուրիշների թերություններին: Երբ այդպես անեք, ձեր օրինակը ուրիշներին կառաջնորդի ավելի ողորմած լինել և դուք Աստծո ողորմածությանն արժանանալու համար ավելի շատ իրավունք կունենաք:

Լրացուցիչ հղագրումներ՝ Մատթեոս Ե.7, Ղուկաս Ժ. 25–37, Ալմա 34.14–16

Տես նաև Գթություն, Ներում, Շնորհ, Արդարադատություն

Որդեգրում

Երեխաները պետք է մեծացվեն ծնողների կողմից, ովքեր հարգում են ամուսնական երդումները և նրանց ապահովում սիրով ու աջակցությամբ: Որդեգրումը կարող է մեծ օրհնություն լինել շատ երեխաների համար, ովքեր ծնվում են առանց այս հնարավորության:

Երբ երեխան բեղմնավորվել է ամուսնությունից դուրս, լավագույն տարբերակը երեխայի մոր և հոր համար ամուսնանալն է՝ աշխատելով հաստատել հավերժական ընտանեկան հարաբերություններ: Եթե հաջող ամուսնության հավանականությունը մեծ չէ, նրանք պետք է երեխային որդեգրման տան, նախընտրելի է ՎՕՍ Ընտանեկան Ծառայությունների միջոցով: Մանկիկին ՎՕՍ Ընտանեկան Ծառայության միջոցով որդեգրման տալով, չամուսնացած ծնողներն անում են այն լավագույնը երեխայի համար, ինչ իրենք կարող են: Այն ապահովում է հոր և մոր հետ երեխայի կնքումը տաճարում և մեծացնում ավետարանի օրհնությունների հեռանկարը որդեգրմանը մասնակցող բոլոր մարդկանց կյանքում: Որդեգրումը անեսասեր, սիրո որոշում է, որն օրհնում է երեխայի ծնողներին, երեխային և որդեգրող ընտանիքին:

Եթե ամուսնացած եք և դուք ու ձեր կողակիցը ցանկանում եք երեխա որդեգրել, պետք է գիտենաք մասնակից երկրների և կառավարական գործակալությունների բոլոր իրավական պահանջները: Խորհրդակցեք ձեր քահանայության առաջնորդների և եթե հնարավոր է ՎՕՍ Ընտանեկան Ծառայությունների աշխատակազմի անդամների հետ: Եթե ՎՕՍ Ընտանեկան Ծառայությունների գրա-

սենյակը չի գործում ձեր տարածաշրջանում, աշխատեք ձեր քահանայության առաջնորդների հետ գտնել արտոնագրված, լիազորված գործակալություններ, որոնք պաշտպանում են և՛ երեխաներին, և՛ որդեգրող ծնողներին:

Պաշտամունք

Պաշտել Աստծուն նշանակում է տալ Նրան սեր, ակնածանք, ծառայություն և նվիրում: Տերը պատվիրել է Մովսեսին. «Աստծուն պաշտիր, քանզի դու միայն նրան պիտի ծառայես»: (Մովսես 1.15) Այս ժամանակաշրջանում Նա պատվիրել է, որ մենք պետք է սիրենք Տիրոջը մեր Աստծուն մեր ողջ սրտով, մեր ողջ զորությամբ, մտքով և ուժով և Հիսուս Քրիստոսի անունով մենք պետք է ծառայենք Նրան: (տես ՎԱՈ 59. 5) Եթե դուք դնեք որևէ բան Աստծո սիրուց վեր, դուք կեղծ պաշտամունք, կամ կռապաշտություն եք գործադրում (տես Ելից Ի. 3–6):

Հորը պաշտելու ուղիներից մեկը՝ աղոթքն է: Ալման սովորեցրել է իր որդի Հելամանին. «Կանչիր առ Աստված քո բոլոր գոյամիջոցների համար. այո, թող բոլոր քո արարքները լինեն ի Տերը, և ուր էլ որ գնաս, թող դա լինի Տիրոջով, այո, թող քո բոլոր մտքերը ուղղված լինեն առ Տերը. այո, թող քո սրտի գորովանքը դրված լինի Տիրոջ վրա հավիտյանս»: (Ալմա 37.36)

Դուք պետք է Եկեղեցի հաճախեք պաշտամունքի հոգով: Տերը պատվիրել է, որ մենք, որպեսզի կարողանանք ավելի լիովին անարատ պահել մեր անձը աշխարհից, պետք է աղոթքի տուն գնանք և մատուցենք մեր հաղորդությունները Նրա սուրբ օրը, քանզի իսկապես սա մեր աշխատանքներից հանգստանալու նշանակված մի օր է և մեր նվիրատվությունները վճարենք Ամենաբարձրյալին: (ՎԱՈ 59. 9–10)

Քահանայության արարողություններին մասնակցելը ևս ձեր պաշտամունքի մի մասն է կազմում: Երբ դուք ակնածանքով ճաշակում եք հաղորդությունը և տաճար հաճախում, դուք հիշում եք և երկրպագում ձեր Երկնային Հորը և արտահայտում ձեր երախտագիտությունը Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի համար:

Բացի պաշտամունքի արտաքին դրսևորումներից, դուք պետք է ունենաք պաշտամունքային վերաբերմունք, ուր էլ որ գնաք և ինչ էլ որ անեք: Ալման սովորեցրեց այս սկզբունքը մարդկանց մի խմբի, որոնք վտարվել էին իրենց պաշտամունքի վայրից: Նա օգնեց նրանց տեսնել, որ ճշմարիտ պաշտամունքը չի սահմանափակվում շաբաթվա մեկ օրով: (տես Ալմա 32.11) Խոսելով նույն խմբի մարդկանց հետ, Ալմայի ընկերակից՝ Ամուղեկը հորդորեց նրանց ասելով. «երկրպագե՛ք Աստծուն, որտեղ էլ որ լինեք, հոգով և ճշմարտությամբ»: (Ալմա 34.38)

Լրացուցիչ հղագրումներ՝ Սաղմոս ՂԵ. 6–7, Մոսիա 18. 25, Ալմա 33. 2–11, ՎԿՈ 20.17–19, 29, Հավատո Հանգանակներ 1.11

Տես նաև Ծոմապահություն և Ծոմի Նվիրատվություններ, Հայր Աստված, Սեր, Աղոթք, Հանգստյան օր

Պատերազմ

Տերն ասել է, որ վերջին օրերում կլինեն պատերազմներ և պատերազմների համբավներ և ողջ երկիրը խռովության մեջ կլինի և մարդկանց սրտերը կնվաղեն: (տես ՎԿՈ 45.26)

Որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ մենք խաղաղության ժողովուրդ ենք: Մենք հետևում ենք Փրկչին, որը Խաղաղության Իշխանն է: Մենք անհամբերությամբ սպասում ենք Նրա հազարամյա թագավորությանը, երբ պատերազմները կվերջանան և երկրի վրա խաղաղություն կվերահաստատվի: (տես Եսայիա Բ. 4) Սակայն մենք ընդունում ենք, որ այս աշխարհում կառավարության ղեկավարները երբեմն ռազմական ուժեր են ուղարկում պատերազմ՝ պաշտպանելու իրենց ազգերը և իդեալները:

Վերջին Օրերի Սրբերը ռազմական հարցերում իրենց չպետք է զգան երկփեղկված իրենց երկրի և իրենց Աստծո միջև: Եկեղեցում «մենք հավատում ենք թագավորներին, նախագահներին, ղեկավարներին ու մյուս իշխանություններին հպատակվելուն, օրենքին հնազանդվելուն, այն հարգելուն ու պաշտպանելուն»: (Հավատո Հանգանակներ 1.12) Զինվորական ծառայությունը ցույց է տալիս նվիրվածություն այս սկզբունքին:

Եթե Վերջին Օրերի Սրբերը կանչվում են ճակատամարտի, նրանք կարող են նայել Զորավար Մորոնիի՝ Մորմոնի Գրքի մեծ զինվորական առաջնորդի օրինակին: Չնայած նա հզոր մարտիկ էր, նա «չէր հրճվում արյունահեղությամբ»: (Ալմա 48.13) Նա «հաստատուն էր Քրիստոսի հավատքում» և կռվելու նրա միակ պատճառն էր. «պաշտպանել իր ժողովրդին, [իր] իրավունքները, և [իր] երկիրը և [իր] կրոնը» (Ալմա 48.13): Եթե Վերջին Օրերի Սրբերը պետք է գնան պատերազմ, նրանք պետք է գնան ճշմարտության և արդարության ոգով, բարին գործելու ցանկությամբ: Նրանք պետք է գնան Աստծո բոլոր զավակների հանդեպ սեր ունենալով իրենց սրտերում, ներառյալ նրանց հանդեպ, ովքեր գտնվում են հակառակ կողմում: Այդ ժամանակ, եթե նրանցից պահանջվի թափել մեկ ուրիշի արյունը, նրանց արածը չի համարվի որպես մեղք:

Տես նաև Քաղաքացիական Կառավարում և Օրենք, Խաղաղություն

Պարտք

Մարգարե Զոզեֆ Սմիթի միջոցով Տերը մի անգամ ասել է մի խումբ Սրբերի, որ Իր կամքն է, որ մենք վճարենք մեր բոլոր պարտքերը: (տես ՎԿՈ 104.78) Եկեղեցու վաղ օրերից սկսած Տիրոջ մարգարեները անընդհատ նախազգուշացրել են մեզ խուսափել պարտքի ճորտությունից:

Պարտքի ամենամեծ վտանգներից է դրան ուղեկցող տոկոսը: Վարկերի որոշ տեսակներ, ինչպես օրինակ վարկաքարտերը ունեն առանձնապես բարձր տոկոսադրույքներ: Մեկ անգամ, երբ պարտքի տակ եք ընկնում, տեսնում եք որ տոկոսներն անգութ են: Այն շարունակում է հավաքվել անկախ ձեր իրավիճակից, դուք աշխատանք ունեք, թե գործազուրկ եք, առողջ եք, թե հիվանդ: Այն երբեք չի վերանում մինչև պարտքը չվճարվի: Մի խաբվեք վարկային առաջարկներով, նույնիսկ, եթե պարտք վերցնելը դարձնում են գրավիչ՝ խոստանալով, որ տոկոսադրույքները ցածր կլինեն կամ որոշակի ժամանակի ընթացքում տոկոսներ չեն լինի:

Հետևեք ձեր ֆինանսական վիճակին: Սահմանափակեք ձեր գնումները՝ որքան հնարավոր է խուսափելով պարտքից: Շատ

դեպքերում պարտքից կարող եք խուսափել իմաստուն ձևով,կառավարելով ձեր ռեսուրսները: Եթե ամեն դեպքում պարտք եք վերցրել, օրինակ խելամիտ մի գումար՝ համեստ տուն գնելու համար կամ վերջացնելու ձեր կրթությունը, աշխատեք, որքան հնարավոր է արագ վերադարձնել և ազատել ձեզ կախվածությունից: Երբ վճարեք պարտքերը և հավաքեք որոշ խնայողություններ, դուք պատրաստ կլինեք ֆինանսական փոթորիկներին, որոնք կարող են հարվածել ձեզ: Դուք ապաստան կունենաք ձեր ընտանիքի համար և խաղաղություն ձեր սրտում:

Լրացուցիչ հղագրումներ՝ Ղուկաս ԺԶ.10–11, ՎԵՌ 19.35

Պոռնոգրաֆիա

Պոռնոգրաֆիան մարդկային մարմինը կամ սեռական հարաբերությունը այնպիսի ձևով պատկերող կամ նկարագրող որևէ նյութ է, որն առաջացնում է սեռական զգացումներ: Այն տարածվում է լրատվական տարբեր տեսակների միջոցով, ներառյալ՝ ամսագրերը, գրքերը, հեռուստատեսությունը, կինոնկարները, երաժշտությունն ու ինտեռնետը: Դա այնքան վնասակար է հոգու համար, ինչպես ծխախոտը, ալկոհոլը և թմրադեղերը մարմնի համար: Որևէ ձևի պոռնոգրաֆիկ նյութեր օգտագործելը Աստծո պատվիրանների խախտում է: Վարդապետություն և Ուխտերում ասվում է, որ մենք չպետք է շնություն անենք . . . կամ դրա նման որևէ բան: (ՎԵՌ 59.6) Այն կարող է տանել այլ լուրջ մեղքերի: Եկեղեցու անդամները պետք է խուսափեն որևէ ձևի պոռնոգրաֆիայից և արգելք հարուցեն դրա արտադրությանը, տարածմանն ու օգտագործմանը:

Պոռնոգրաֆիան առաջացնում է խիստ հակվածություն: Այլ հակումների նման այն մարդկանց դրդում է փորձել և որոնել ավելի հզոր խթանիչներ: Եթե դուք փորձում եք այն և թույլ տալիս ձեզ մնալու նրա թակարդում, այն կկործանի ձեզ, այլասերելով ձեր միտքը, սիրտը և հոգին: Այն կզրկի ձեզ ինքնահարգանքից և կյանքի գեղեցկության հանդեպ ձեր զգացումից: Այն կծվատի ձեզ և կմղի ձեզ դեպի չար մտքեր և հնարավոր է դեպի չար գործեր:

Այն սարսափելի վնաս կհասցնի ձեր ընտանեկան հարաբերություններին:

Պոռնոգրաֆիայի հակում առաջացնող բնույթի և այն վնասի պատճառով, որ կարող է հասցնել մարմնին և հոգուն, Աստծո ծառաները անընդհատ նախազգուշացրել են մեզ հեռու մնալ դրանից: Եթե ընկել եք պոռնոգրաֆիայի թակարդը, անմիջապես կանգ առեք և օգնություն հայցեք: Ապաշխարության միջոցով դուք կարող եք ներում ստանալ և գտնել հույս ավետարանում: Ձեր խնդիրը հաղթահարելու համար, գնացեք ձեր եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի մոտ՝ խորհուրդ հարցնելու և որոնեք բժշկում Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով: Խնդրեք Տիրոջից, որ Նա ուժ տա ձեզ հաղթահարելու այդ սարսափելի հակումը:

Լրացուցիչ հղագրումներ՝ Մատթեոս Ե.27–28, Հռովմայեցիս Զ.12, Ալմա 39.9, ՎԿՈ 42.23

Տես նաև Մաքրաբարոյություն, Գայթակղություն

Ջոզեֆ Սմիթ

1820թ. գարնանը 14-ամյա Ջոզեֆ Սմիթը որոնում էր Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին, երբ նա կարդաց մի հատված Աստվածաշնչում. «Բայց եթե մեկը ձեզանից իմաստության պակասություն ունի թող խնդրի Աստվածանից, որ ամենին տալիս է առատությամբ և չի նախատում, և կտրվի նրան»: (Հակոբոս Ա.5, տես նաև Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.11–12) Պարզ, անսասան հավատքով երիտասարդ Ջոզեֆը հետևեց այդ հատվածի խորհրդին: Նա մենակ գնաց ծառերի մի պուրակ, որտեղ աղոթեց, թե որ եկեղեցուն պետք է միանար: Ի պատասխան նրա աղոթքի Հայր Աստվածը և Հիսուս Քրիստոսը հայտնվեցին նրան: Մյուս բաների թվում Նրանք ասացին նրան, որ նա չպետք է միանա այդ ժամանակ գոյություն ունեցող եկեղեցիներից ոչ մեկին: (Տես Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.13–20):

Երբ Ջոզեֆ Սմիթն ապացուցեց իր արժանիությունը, նրան տրվեց մի աստվածային առաքելություն, որպես Աստծո մարգարե: Նրա միջոցով Տերն իրականացրեց մեծ ու զարմանահրաշ

մի գործ, որը ներառում էր Մորմոնի Գրքի առաջ գալը, քահանայության վերականգնումը, արժեքավոր ավետարանական ճշմարտությունների բացահայտումը, Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցու կազմավորումը և տաճարային աշխատանքի հիմնադրումը: 1844թ. հունիսի 27-ին Ջոզեֆը և նրա եղբայրը՝ Հայրամը սպանվեցին զինված ամբոխի հարձակման ժամանակ: Նրանք կնքեցին իրենց վկայություններն իրենց արյամբ:

Վերականգված ավետարանի վերաբերյալ ձեր վկայությունը որպեսզի լիակատար լինի, այն պետք է ներառի վկայություն Ջոզեֆ Սմիթի աստվածային առաքելության մասին: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ճշմարտացիությունը հիմնված է Առաջին Տեսիլքի և Տիրոջ կողմից Մարգարե Ջոզեֆին տրված մյուս հայտնությունների վրա: Նախագահ Ջոն Թեյլորը՝ Եկեղեցու երրորդ Նախագահը գրել է, որ Ջոզեֆ Սմիթը՝ Տիրոջ Մարգարեն և Տեսանողը, այս աշխարհում մարդկանց փրկության համար, բացի Հիսուս Քրիստոսից, արել է ավելին, քան որևէ այլ մարդ, որ երբևիցե ապրել է այստեղ: (տես ՎևՈւ 135.3)

Լրացուցիչ հղագրումներ՝ Եսայիա ԻԹ.13–14, 2 Նեփի 3.3–15, Վ ևՈւ 5.9–10, Ջոզեֆ Սմիթ – Պատմություն:

Տես նաև Մարգարեներ, Ավետարանի Վերականգնում

Սատանա

Սատանան, որը կոչվում է նաև հակառակորդ կամ դև, թշնամի է արդարության և նրանց, ովքեր ձգտում են հետևել Աստծուն: Նա Աստծո հոգևոր զավակն է, որը մի ժամանակ իշխանություն ունեցող հրեշտակ էր Աստծո ներկայության մեջ: (ՎևՈւ 76.25, տես նաև Եսայիա 14.12, ՎևՈւ 76.26–27) Բայց Երկնքում նախաերկրային Խորհրդի ժամանակ, Լյուցիֆերը՝ ինչպես սատանան կոչվում էր այդ ժամանակ, ապստամբեց Երկնային Հոր և փրկության ծրագրի դեմ: Աստծո դեմ այս ապստամբության ժամանակ սատանան ձգտում էր կործանել մարդու ազատ կամքը (Մովսես 4.3): Նա ասաց, որ կազատեր ողջ մարդկությանը, որ ոչ մի հոգի չէր կորչի և անկասկած կաներ դա, ուստի նրան պետք է տրվեր պատիվը: (Մովսես 4.1)

Սատանան համոզեց երկնային զորքերի մեկ երրորդին հեռանալ Հորից: (ՎԱՌ 29.36) Այս ապստամբության հետևանքով սատանան և նրա հետևորդները կտրվեցին Աստծո ներկայությունից և ֆիզիկական մարմին ստանալու օրհնությունից զրկվեցին: (տես Հայտնություն ԺԲ.9) Նրանց նաև մերժվեց փառքի որևէ արքայությունում ժառանգություն ստանալու հնարավորությունից:

Երկնային Հայրը հանդուրժում է, որ սատանան և սատանայի հետևորդները գայթակղեն մեզ որպես մեր մահկանացու կյանքի փորձառության մի մաս: (տես 2 Նեփի 2.11–14, ՎԱՌ 29.39) Քանի որ սատանան «ջանում է, որ բոլոր մարդիկ լինեն թշվառ, ինչպես ինքը» (2 Նեփի 2.27), նա և նրա հետևորդները փորձում են շեղել մեզ արդարությունից: Նա ուղղում է իր ամենաուժեղ ընդդիմությունը Երկնային Հոր երջանկության ծրագրի ամենակարևոր կողմերին: Օրինակ՝ նա ձգտում է կասկածի տակ դնել Փրկչին և քահանայությանը, կասկած գցել Քավության զորության վրա, կեղծել հայտնությունը, շեղել մեզ ճշմարտությունից և հերքել անձնական պատասխանատվությունը: Նա փորձում է քայքայել ընտանիքը՝ սեռի մեջ շփոթություն առաջացնելով, խթանելով սեռական կապեր ամուսնությունից դուրս, ծաղրելով ամուսնությունը և տարահամոզելով ամուսնացած այն զույգերին երեխա չունենալ, ովքեր հակառակ դեպքում երեխաներ կմեծացնեին արդարության մեջ:

Դուք չպետք է տեղի տաք սատանայի գայթակղություններին: Դուք զորություն ունեք ձեր մեջ տարբերելու բարին չարից և կարող եք միշտ որոնել Տիրոջ օգնությունն աղոթքի միջոցով: (Տես «Գայթակղություն» էջ 174–76)

Լրացուցիչ հղագրումներ՝ Եսայիա ԺԴ. 12–17, 1 Նեփի 15.23–24, 2 Նեփի 2.16–18, Մորոնի 7.12, ՎԱՌ 10.5, 29.36–40, 46–47, 76.25–29

Տես նաև Ազատ կամք, Մեղք, Գայթակղություն

Սարկավագ (*Տես* Ահարոնյան Քահանայություն, Քահանայություն)

Սելեստիալ Արքայություն (*Տես* Փառքի Արքայություններ)

Սեռական անբարոյականություն (*Տես* Մաքրաբարոյություն)

Սեր

Սերը խորը նվիրվածության, հոգատարության և քնքշանքի զգացում է: Հիսուս Քրիստոսի հետևորդներին բնորոշ է սեր Աստծո և մերձավորների հանդեպ: (տես Մատթեոս ԻԲ. 35–40, Հովի. ԺԳ. 34–35, 2 Նեփի 31. 20) Մենք ցույց ենք տալիս մեր սերը Երկնային Հոր հանդեպ պահելով Նրա պատվիրանները և ծառայելով Նրա զավակներին: Ուրիշների հանդեպ մեր սիրո արտահայտությունը կարող է լինել բարությունը նրանց հանդեպ, նրանց լսելը, նրանց հետ սգալը, նրանց մխիթարելը, նրանց ծառայելը, նրանց համար աղոթելը, նրանց հետ ավետարանով կիսվելը և նրանց ընկերը լինելը:

Մեր սերը մեծանում է նրանց հանդեպ, ովքեր մեր շրջապատում են, երբ հիշում ենք, որ բոլորս Աստծո զավակներն ենք, որ մենք հոգևոր քույրեր և եղբայրներ ենք: Սերը, որն առաջանում է այս գիտակցությունից, զորություն ունի անցնելու բոլոր ազգերի, հավատքների և ռասաների սահմանները:

Լրացուցիչ հղագրումներ՝ Ղևտեցոց ԺԹ.18, 34, Երկրորդ Օրինաց Զ.5, Ղուկաս Զ. 31–36, Հովի. ԺԵ. 9–15, Ա Հովի. Դ.7–21, ներառյալ տողատակի ծանոթագրություններ 12*ա*, Մոսիա 4.14–15, ՎևՈ 4.5, 12.8, 112.11, 121. 41–45

Տես նաև Գթություն, Ողորմածություն, Հնազանդություն, Ծառայություն

Սիոն

Վարդապետություններ և Ուխտերում կան բազմաթիվ հատվածներ, որոնցում Տերը պատվիրում է Սրբերին, ձգտել առաջ բերել և հաստատել Սիոնի գործը: (ՎևՈ 6. 6, տես նաև ՎևՈ 11.6, 12.6, 14.6)

Սիոն բառը սուրբ գրքերում ունի տարբեր իմաստներ: Բառի ամենաընդհանուր սահմանումը «սրտով մաքուր»-ն է (ՎևՈ 97.21): *Սիոնը* հաճախ օգտագործվում է այս իմաստով ևս՝ ի նկատի ունենալով Տիրոջ ժողովրդին կամ Եկեղեցուն և նրա ցցերին: (տես ՎևՈ 82.14)

Այս ժամանակաշրջանի վաղ օրերին Եկեղեցու ղեկավարները խորհուրդ էին տալիս անդամներին կառուցել Սիոնը

արտագաղթելով դեպի մի կենտրոնական վայր: Այսօր մեր ղեկավարները խորհուրդ են տալիս կառուցել Սիոնը, որտեղ մենք ենք ապրում: Եկեղեցու անդամներին խնդրվում է մնալ իրենց հայրենիքներում և օգնել հաստատել Եկեղեցին այնտեղ: Կառուցվում են բազմաթիվ տաճարներ, որպեսզի Վերջին Օրերի Սրբերը ողջ աշխարհով մեկ կարողանան ստանալ տաճարային օրհնություններ:

Սիոն բառը կարող է նաև վերաբերվել որոշակի աշխարհագրական տեղանքների, ինչպես օրինակ՝

- Ենովքի քաղաքը (տես Մովսես 7. 8–21):
- Հնադարյան Երուսաղեմ քաղաքը: (տես Բ Սամուել Ե. 6–7, Գ Թագավորաց Ը. 1, Դ Թագավորաց Թ. 28)
- Նոր Երուսաղեմը, որը կկառուցվի Ջաքսոն Կոմսությունում, Միսսուրի (տես ՎԿՈ 45. 66–67, 57.1–3, Հավատո Հանգանակներ 1.10):

Լրացուցիչ հղագրումներ՝ Եսայիա Բ. 2–3, 1 Նեփի 13.37, ՎԿՈ 35:24; 39:13; 45:68–71; 59:3–4; 64:41–43; 90:36–37; 97:18–28; 101:16–18; 105:5; 115:5–6; 136:31

Սկզբնական մեղք

Ադամի ու Եվայի Անկման պատճառով, բոլոր մարդիկ ապրում են Աստծուց առանձնացված և ֆիզիկական մահվան ենթակա, ընկած վիճակում: Սակայն մենք չենք դատապարտվում այն բանի համար, որը կոչվում է «սկզբնական մեղք»: Այլ խոսքով ասած մենք պատասխանատու չենք Եդեմական պարտեզում գործած Ադամի օրինազանցության համար: Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է. «Մենք հավատում ենք, որ մարդիկ կպատժվեն իրենց սեփական մեղքերի համար և ոչ թե Ադամի օրինազանցության համար»: (Հավատո Հանգանակներ 1.2)

Քավության միջոցով Փրկիչը վճարեց Եդեմական պարտեզում գործված օրինազանցության համար: (տես Մովսես 6.53) Նա տվել է մեզ հարության հանդեպ վստահություն և խոստում,

որ ըստ մեր հավատարմության մենք կարող ենք վերադառնալ՝ հավերժ բնակվելու մեր Երկնային Հոր ներկայության մեջ:

Տես նաև Անկում

Սմիթ, Ջոզեֆ Կրտ. (*Տես* Ջոզեֆ Սմիթ)

Սրբապղծություն

Սրբապղծությունը հարգանքի բացակակայությունն է կամ արհամարհանքը սուրբ բաների հանդեպ: Այն ներառում է Աստվածության որևէ անդամի անվան հաճախակի կամ ոչ ակնածալի օգտագործումը: Այն նաև ներառում է որևէ ձևի անմաքուր կամ գռեհիկ խոսելաձև կամ վարվելաձև:

Միշտ օգտագործեք Երկնային Հոր, Հիսուս Քրիստոսի և Սուրբ Հոգու անունները ակնածանքով և հարգանքով: Նրանց անունների չարաշահումը մեղք է: Սրբապիղծ, գռեհիկ կամ կոպիտ լեզուն, ժեստերը ինչպես նաև անբարոյական կատակները վիրավորական են Տիրոջ և ուրիշների համար:

Կեղտոտ խոսելաձևը վնասում է ձեր հոգուն և այլասերում ձեզ: Մի թույլ տվեք ուրիշներին ազդել ձեզ վրա, օգտագործելու կեղտոտ խոսելաձև: Ընդհակառակը, օգտագործեք մաքուր խոսելաձև, որը բարձրացնում է և վեհացնում ուրիշներին: Ընտրեք ընկերներ, ովքեր օգտագործում են ճիշտ խոսելաձև: Ցույց տվեք օրինակ, որը կխրախուսի ձեր շրջապատին մաքուր խոսելաձև օգտագործել: Եթե ընկերները և ծանոթներն օգտագործում են սրբապիղծ խոսքեր, բարեհոգաբար խրախուսեք նրանց ընտրել այլ բառեր: Եթե նրանք համառեն, քաղաքավարի հեռացեք կամ փոխեք թեման:

Եթե հայհոյելու սովորույթ եք ձեռք բերել, դուք կարող եք փոխել այն: Սկսեք փոխվելու որոշում ընդունելուց: Աղոթեք օգնության համար: Եթե գայթակղվում եք օգտագործել սրբապիղծ խոսելաձև, լռեք կամ ասեք ձեր ասելիքը այլ ձևով:

Լրացուցիչ հղագրումներ՝ Ղևտեցոց ԺԹ.12, ՎևՈւ 63.60–64

Տես նաև Համեստություն, Գայթակղություն

Սուրբ գրքեր

Երբ Աստծո սուրբ մարդիկ գրում են կամ խոսում Սուրբ Հոգու զորությամբ, նրանց խոսքերը դառնում են սուրբ գրքեր, դառնում Տիրոջ կամքը, դառնում Տիրոջ միտքը, դառնում Տիրոջ խոսքը, դառնում Տիրոջ ձայնը և Աստծո զորությունն ի փրկություն: (տես ՎԱՈ 68.4) Եկեղեցու պաշտոնական կանոնիկ սուրբ գրքերն են, որոնք հաճախ կոչվում են ստանդարտ գրքեր, Աստվածաշունչը, Մորմոնի Գիրքը, Վարդապետություն և Ուխտերը և Թանկագին Մարգարիտը: Այս սուրբ գրքերը նկարագրված են էջ 156–59-ում:

Սուրբ գրքերի ամենօրյա ուսումնասիրությունը

Սուրբ գրքերի հիմնական նպատակը Քրիստոսի մասին վկայելն է, օգնելով մեզ գալ դեպի Նա և ստանալ հավերժական կյանք: (տես Հովհաննես Ե.39, 20.31, 1 Նեփի 6.4, Մոսիա 13.33–35) Մարգարե Մորմոնը վկայել է՝

«Ով որ կարողանա կառչած մնալ Աստծո խոսքին, որը կենդանի է ու հզոր, որը կտոր-կտոր է անում դևի ողջ խորամանկությունը, և ծուղակները, և խաբեությունները, և առաջնորդում է Քրիստոսի մարդուն մի անձուկ ու նեղ ուղիով այն հավիտենական թշվառության անդունդի վրայով, որը պատրաստված է կլանելու ամբարիշտներին,

Եվ հասցնում է նրանց հոգիները, այո, նրանց անմահ հոգիները, Աստծո աջ կողմը, երկնքի արքայությունում՝ նստելու Աբրահամի, և Իսահակի, և Հակոբի, և մեր բոլոր սուրբ հայրերի հետ՝ այլևս դուրս չգնալու»: (Հելաման 3.29–30)

Վերջին օրերի մարգարեները խորհուրդ են տալիս մեզ կարդալ սուրբ գրքերն ամեն օր, ինչպես անհատապես այնպես էլ մեր ընտանիքների հետ: Նրանք խրախուսում են մեզ, ինչպես Նեփին խրախուսում էր իր եղբայրներին, վերաբերել սուրբ գրքերի հատվածները մեզ, գտնելով ուղիներ, որպեսզի հնադարյան սրբազան պատմությունները կիրառենք այսօր մեր կյանքում: (տես 1 Նեփի 19.23–24) Նրանք խրախուսում են մեզ «քննել սուրբ գրքերը» (Հովհաննես Ե.39) և «սնվել Քրիստոսի խոսքերով»: (2 Նեփի 32.3)

Դուք մեծ օգուտ կստանաք հետևելով այս խորհրդին: Սուրբ գրքերի ամենօրյա իմաստալի ընթերցումն օգնում է ձեզ ընկալունակ լինել Սուրբ Հոգու շշունջներին: Այն կառուցում է ձեր հավատքը, ամրացնում է ձեզ գայթակղության դեմ և օգնում է ձեզ մոտենալ ձեր Երկնային Հորը և Նրա Սիրելի Որդուն:

Սուրբ գրքերի ձեր անհատական ընթերցանության համար ծրագիր մշակեք: Մտածեք մի որոշակի ժամանակահատված տրամադրել ամեն օր սուրբ գրքերն ընթերցելու համար: Այդ ժամանակի ընթացքում, ջանասիրաբար կարդացեք՝ ուշադիր լինելով Հոգու հուշումների հանդեպ: Խնդրեք Երկնային Հորն օգնել ձեզ իմանալ, թե Նա ինչ կկամենար որ դուք սովորեիք և անեիք:

Շարունակեք կարդալ սուրբ գրքերը, հատկապես Մորմոնի Գիրքը, ողջ ձեր կյանքի ընթացքում: Դուք կվերահայտնագործեք սուրբ գրքերի գանձերը կրկին և կրկին, գտնելով դրանցում նոր իմաստ և կիրառում, երբ ընթերցեք դրանք կյանքի տարբեր էտապներում:

Եթե ամուսնացած եք, ժամանակ հատկացրեք ամեն օր սուրբ գրքերն ընտանիքով կարդալու համար: Այս ջանքը գործադրելը կարող է դժվար լինել, բայց այն կբերի հրաշալի, հավերժական արդյունք: Հոգու առաջնորդությամբ ծրագրեք սուրբ գրքերի ընթերցում, որը կբավարարի ձեր ընտանիքի կարիքները: Մի վախեցեք սուրբ գրքերը կարդալ փոքր երեխաներին: Այդ սրբազան հիշատակարանների լեզուն կարող է ազդել նույնիսկ շատ փոքրիկների վրա:

Աստվածաշունչ

Աստվածաշունչը բաժանվում է երկու մասի՝ Հին Կտակարան և Նոր Կտակարան: Հին Կտակարանը սրբազան հիշատակարան է Իր ուխտի ժողովրդի հետ Սուրբ Երկրում Աստծո գործերի մասին: Այն պարունակում է այնպիսի մարգարեների ուսմունքները, ինչպիսիք են՝ Մովսեսը, Հեսուն, Եսայիան, Երեմիան, և Դանիելը: Նոր Կտակարանը արձանագրել է Փրկչի ծննդի, մահկանացու մարմ-

նում ծառայության և Քավության մասին: Այն ավարտվում է Փրկչի աշակերտների ծառայությամբ:

Քանի որ Աստվածաշունչը թարգմանվել է շատ անգամներ, այն տպագրվել է զանազան տարբերակներով: Անգլերենով Հակոբոս թագավորի տարբերակը ընդունվել է Եկեղեցու կողմից որպես սուրբ գիրք:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում մենք խորապես հարգում ենք Աստվածաշունչը և դրա սրբազան ուսմունքները: Մենք կարող ենք ուժ և սփոփանք ստանալ Իր ժողովրդի հետ Աստծո գործերի պատմություններից:

Մորմոնի Գիրքը՝ Եվս Մեկ Վկայություն Հիսուս Քրիստոսի Մասին

Մորմոնի Գիրքն առաջ եկավ այս ժամանակաշրջանում Տիրոջ կամքով: Այն Իր ժողովրդի հետ Աստծո գործերի մասին մի հիշատակարան է, ովքեր ապրել էին հնադարյան Ամերիկաներում: Տիրոջ մարգարեները փորագրել էին բնագիր արձանագրությունները ոսկե թիթեղների վրա: Տերը հայտարարել է, որ Մորմոնի Գիրքը պարունակում է Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը: (ՎԱՌ 20.9, տես նաև ՎԱՌ 42.12)

1827թ. սեպտեմբերի 22-ին, Մորոնի անունով մի հրեշտակ՝ Մորմոնի Գրքի վերջին մարգարեն, հանձնեց այս հիշատակարանները մարգարե Ջոզեֆ Սմիթին: Աստծո պարգևով և զորությամբ Մարգարե Ջոզեֆը հիշատակարանը թարգմանեց անգլերեն: Այդ ժամանակից Մորմոնի Գիրքը թարգմանվել է բազմաթիվ ուրիշ լեզուներով:

Մորմոնի Գրքի հիմնական նպատակն է համոզել բոլոր մարդկանց «որ Հիսուսը Քրիստոսն է՝ Հավերժական Աստվածը, որը հայտնվում է բոլոր ազգերին» (Մորմոնի Գրքի տիտղոսաթերթ): Այն սովորեցնում է, որ բոլոր մարդիկ «պետք է գան դեպի նա, այլապես նրանք չեն կարող փրկվել»: (1 Նեփի 13.40) Ջոզեֆ Սմիթն ասել է, որ Մորմոնի Գիրքը «մեր կրոնի պորտաքարն է, և մարդն ավելի կմոտենար Աստծուն ըստ նրա ցուցմունքների, քան ըստ որևէ այլ գրքի»: (Մորմոնի Գրքի նախաբան)

Մորմոնի Գիրքը ևս մեկ վկայություն է այն ճշմարտությունների վերաբերյալ, որոնք սովորեցվում են Աստվածաշնչում: Այն նաև վերականգնում է «պարզ և արժեքավոր ճշմարտություններ», որոնք կորել են Աստվածաշնչից թարգմանչական սխալների պատճառով կամ «հանվել են» փորձելով «խեղաթյուրել Տիրոջ ճշմարիտ ուղիները»: (տես 1 Նեփի 13.24–27, 38–41) Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը «պիտի սերտաճեն ի հերքումն կեղծ վարդապետությունների, դադարեցնելով հակառակությունները, և հաստատելով խաղաղություն»: (2 Նեփի 3.12)

Մորմոնի Գրքի ավարտին մոտ Մորոնի մարգարեն սովորեցնում է մեզ, թե ինչպես կարող ենք իմանալ, թե գիրքը ճշմարի՞տ է՝ «Երբ դուք ստանաք այս բաները, ես կկամենայի հորդորել ձեզ, որ դուք հարցնեք Աստծուն՝ Հավերժական Հորը, Քրիստոսի անունով, թե արդյոք այս բաները ճիշտ չե՞ն, և եթե դուք հարցնեք մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս, նա կհայտնի ձեզ դրանց ճշմարտության մասին՝ Սուրբ Հոգու զորությամբ»: (Մորոնի 10.4, տես նաև հատվածներ 3 և 5)

Վարդապետություն և Ուխտեր

Վարդապետություն և Ուխտերը պարունակում են հայտնություններ տրված Մարգարե Ջոզեֆ Սմիթին: Այն նաև ներառում է մի քանի հայտնություններ տրված վերջին օրերի այլ մարգարեների: Այս սուրբ գիրքը եզակի է, որովհետև այն հնադարյան փաստաթղթերի թարգմանություն չէ: Այն Տիրոջ կողմից Իր ընտրյալ մարգարեներին տրված հայտնությունների հավաքածու է:

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է, որ Վարդապետություն և Ուխտերը Եկեղեցու հիմքն են այս վերջին օրերում և օգտակար են աշխարհին՝ ցույց տալով, որ Փրկչի արքայության գաղտնիքների բանալիները կրկին վստահվում են մարդուն»: (ՎևՈւ 70 բաժնի խորագիր)

Թանկագին Մարգարիտ

Թանկագին Մարգարիտը բաղկացած է Մովսեսի, Աբրահամի գրքերից, Մարգարե Ջոզեֆ Սմիթի ոգեշնչված Մատթեոս գլուխ

24-ի թարգմանությունից և Մարգարե Զոզեֆի մի քանի գրվածքներից:

Մովսեսի գիրքը Զոզեֆ Սմիթի կողմից Աստվածաշնչի ոգեշնչված թարգմանության մի փոքրիկ հատված է: Այն Հին Կտակարանի Ծննդոց գրքի սկզբում Մովսեսի գրվածքների ավելի լիավարտ հիշատակարանն է: Այն պարունակում է շատ վարդապետություններ և ուսմունքներ, որոնք կորել էին Աստվածաշնչից և տալիս է լրացուցիչ տեղեկություններ փրկության ծրագրի վերաբերյալ, երկրագնդի արարման և Ադամի ու Ենովքի հետ Տիրոջ գործերի մասին:

Աբրահամի գիրքը պապիրուսի վրա գրված հնադարյան հիշատակարանների թարգմանություն է, որը Եկեղեցու սեփականությունը դարձավ 1835թ.: Մարգարե Զոզեֆ Սմիթը թարգմանեց հիշատակարանը հայտնությամբ: Այդ գիրքը պարունակում է ճշմարտություններ Երկնային Խորհրդի մասին, երկրագնդի արարման, Աստծո էության և քահանայության մասին:

Զոզեֆ Սմիթ՝ Մատթեոսը ավելացնում է Իր Երկրորդ Գալստյան վերաբերյալ Փրկչի ուսմունքների մասին մեր գիտելիքները:

Զոզեֆ Սմիթի գրվածքները Թանկագին Մարգարիտում ներառում են՝

- Զոզեֆ Սմիթ՝ Պատմություն, որը Մարգարեի Եկեղեցու պատմությունից մի հատված է: Այն պատմում է դեպքերը, որոնք հանգեցրեցին Եկեղեցու վերականգնմանը, ներառյալ՝ Առաջին Տեսիլքը, Մարգարե Զոզեֆ Սմիթին Մորոնիի այցելությունները, ոսկե թիթեղների ձեռքբերումը և Ահարոնյան Քահանայության վերականգնումը:
- Հավատո Հանգանակները, որոնք գրել է Մարգարե Զոզեֆ Սմիթը որպես հավատքի և վարդապետության հիմնական դրույթներ:

Լրացուցիչ հղագրումներ՝ Հռովմայեցիս ԺԵ.4, 2, Բ Տիմոթեոս Գ. 15–17, 2 Նեփի 25.26, Ալմա 17.2–3, 3 Նեփի 23.1–5, Վևու 18.33–36, Հավատո Հանգանակներ 1.8

Տես նաև Մարգարեներ, Ավետարանի Վերականգնում, Հայտնություն

Սուրբ Հոգի

Սուրբ Հոգին Աստվածության երրորդ անդամն է: Նա հոգևոր անձ է, առանց միս և ոսկորներ ունեցող մարմնի: (տես ՎԱՌ 130.22) Նրա մասին հաճախ նշվում է որպես՝ Հոգի, Սուրբ Հոգի, Աստծո Հոգի, Տիրոջ Հոգի կամ Մխիթարիչ:

Սուրբ Հոգու դերը

Սուրբ Հոգին գործում է կատարյալ միասնությամբ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ՝ կատարելով մի քանի դերեր օգնելու ձեզ ապրել արդար և ստանալ ավետարանի օրհնությունները:

Նա «վկայում է Հոր և Որդու մասին» (2 Նեփի 31.18) և հայտնում ու սովորեցնում է «ճշմարտությունը բոլոր բաների մասին»: (Մորոնի 10.5) Դուք կարող եք հաստատ վկայություն ունենալ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին միայն Սուրբ Հոգու զորությամբ: Նրա հաղորդակցությունը ձեր հոգու հետ շատ ավելի մեծ հավաստիություն է կրում, քան որևէ այլ հաղորդակցություն, որը դուք կարող եք ստանալ ձեր բնական զգայարանների միջոցով:

Երբ դուք ձգտում եք մնալ արահետի վրա, որը տանում է դեպի հավերժական կյանք, Սուրբ Հոգին «ցույց կտա ձեզ բոլոր բաները, որ դուք պետք է անեք» (տես 2 Նեփի 32.1–5): Նա կարող է առաջնորդել ձեզ ձեր որոշումներում և պահպանել ձեզ ֆիզիկական և հոգևոր վտանգից:

Նրա միջոցով դուք կարող եք ստանալ Հոգու պարգևները ի բարօրություն ձեզ և նաև ի բարօրություն նրանց, ում սիրում եք և ծառայում: (տես ՎԱՌ 46.9–11)

Նա է Մխիթարիչը: (Հովհ. ԺԴ.26) Ինչպես սիրող ծնողի հանգստացնող ձայնը կարող է խաղաղեցնել լացող երեխային, Հոգու շշունջները կարող են հանդարտեցնել ձեր վախերը, լռեցնել ձեր կյանքի հոգեմաշ մտատանջությունները և սփոփել ձեզ, երբ վշտացած եք: Սուրբ Հոգին կարող է լցնել ձեզ «հույսով և կատարյալ սիրով» և «սովորեցնել ձեզ արքայության խաղաղաբեր բաները»: (Մորոնի 8.26, ՎԱՌ 36.2)

Նրա զորության միջոցով դուք սրբացվում եք, երբ ապաշխարում եք, ստանում մկրտության արարողություններն ու հաստատումը և մնում հավատարիմ ձեր ուխտերին (տես Մոսիա 5.1–6, 3Նեփի 27.20, Մովսես 6.64–68):

Նա Խոստումի Սուրբ Հոգին է: (տես Եփեսացիս Ա.13, ՎևՈւ 132.7, 18–19, 26) Այդ դերում Նա հաստատում է, որ քահանայության այն արարողությունները, որոնք դուք ստացել եք և այն ուխտերը, որոնք դուք արել եք, ընդունելի են Աստծուն: Այս հաստատումը կախված է ձեր հարատև հավատարմությունից:

Սուրբ Հոգու պարգևը

Ճշմարտության բոլոր ազնիվ որոնողները կարող են զգալ Սուրբ Հոգու ազդեցությունը, որն առաջնորդում է նրանց դեպի Հիսուս Քրիստոսը և Նրա ավետարանը: Այնուամենայնիվ, Սուրբ Հոգու միջոցով տրված լիակատար օրհնությունները մատչելի են միայն նրանց, ովքեր ստանում են Սուրբ Հոգու պարգևը և մնում արժանի:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում մկրտվելուց հետո, Մելքիսեդեկյան Քահանայության մեկ կամ մեկից ավելի կրողներ դրեցին իրենց ձեռքերը ձեր գլխին և քահանայության սրբազան արարողությամբ հաստատեցին ձեզ Եկեղեցու անդամ: Որպես այս արարողության մի մաս, որը կոչվում է հաստատում, ձեզ տրվեց Սուրբ Հոգու պարգևը:

Սուրբ Հոգու պարգևը տարբեր է Սուրբ Հոգու ազդեցությունից: Ձեր մկրտությունից առաջ դուք ժամանակ առ ժամանակ կարողանում էինք զգալ Սուրբ Հոգու ազդեցությունը, և այդ ազդեցության շնորհիվ դուք կարողանում էիք ճշմարտության մասին վկայություն ստանալ: Այժմ, երբ դուք ունեք Սուրբ Հոգու պարգևը, դուք իրավունք ունեք Աստվածության այդ անդամի ընկերակցությունն ունենալ, եթե պահեք պատվիրանները:

Սուրբ Հոգու պարգևի լիակատար վայելումը ներառում է՝ հայտնության և սփոփանքի ստացումը, ուրիշներին հոգևոր պարգևների միջոցով ծառայելն ու օրհնելը և մեղքից սրբագործված և սելեստիալ արքայություն բարձրանալու համար արժանի լինելը:

Այս օրհնությունները կախված են ձեր արժանավորությունից, դրանք գալիս են քիչ քիչ, ժամանակ առ ժամանակ, երբ դուք դրանց համար պատրաստ եք դառնում: Երբ դուք ձեր կյանքը ներդաշնակության եք բերում Աստծո կամքի հետ, աստիճանաբար Սուրբ Հոգին մեծ չափով եք ստանում: Մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտնել է, որ Աստծո արքայության խորհուրդները կարելի է տեսնել ու հասկանալ միայն Սուրբ Հոգու զորությամբ, որն Աստված շնորհում է նրանց, ովքեր սիրում են Նրան և մաքրում են իրենց Նրա առջև: (տես ՎԿՈ 76.114–116)

Հիշեք, որ «Տիրոջ Հոգին չի բնակվում անսուրբ տաճարներում»: (Հելաման 4.24) Չնայած դուք ստացել եք Սուրբ Հոգու պարգևը, Հոգին կբնակվի ձեզ հետ միայն այն ժամանակ, երբ դուք պահեք պատվիրանները: Նա ձեզանից ետ կքաշվի, եթե դուք վիրավորեք Նրան աստվածանարգությամբ, անմաքրությամբ, անհնազանդությամբ, ապստամբությամբ կամ այլ մեղքերով: Ձեզ մաքուր պահեք: Բարությամբ լցրեք ձեր կյանքը, որպեսզի կարողանաք արժանի լինել Սուրբ Հոգու մնայուն ընկերակցությանը:

Լրացուցիչ հղագրումներ՝ Մատթեոս Գ.11, Հովհ. ԺԵ.26, ԺԶ.13, Գործք Բ.38, Ը.12–17, Թ.1–6, Ա Կորնթացիս Բ.9–14, ԺԲ.3, Գաղատացիս Ե.22–23, 1Նեփի 10.17–19, 2Նեփի 31.17, ՎԿՈ 8.2–3, 39.20–24, 68.25–28, 121.46, Հավատո Հանգանակներ 1.4

Տես նաև Մկրտություն, Աստվածություն, Ձեռնադրում, Հայտնություն, Հոգևոր Պարգևներ

Սուրբ Հոգու Պարգև (*Տես* Սուրբ Հոգի)

Սուրճ (*Տես* Իմաստության Խոսք)

Սփոփող Միություն

Սփոփող Միությունը հիմնադրվել է Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից 1842թ. մարտի 17-ին, Իլինոյիս, Նավու քաղաքում: Իր հիմնադրման օրերին Սփոփող Միությունն ուներ երկու հիմնական նպատակ՝ ապահովել սփոփանք աղքատներին և կարիքավորներին և փրկել հոգիներ: Կազմակերպությունը շարունակում է գործել

այսօր՝ հավատարիմ մնալով այդ սկզբնական առաջնահերթ սկզբունքներին: Ողջ աշխարհով մեկ Սփոփող Միության քույրերն աշխատում են քահանայություն կրողների հետ, իրականացնելով Եկեղեցու առաքելությունը: Նրանք աջակցում են միմյանց, երբ

- Մեծացնում են իրենց վկայությունները Հիսուս Քրիստոսի մասին՝ աղոթքի և սուրբ գրությունների ուսումնասիրության միջոցով:
- Հետևում Սուրբ Հոգու հուշումներին, որոնում հոգևոր ուժ:
- Նվիրվում ամուսնությունների զորացմանը և ընտանիքներին:
- Գտնում ազնվացում մայրության և ուրախություն կանացիության մեջ:
- Հրճվում ծառայությամբ և բարի գործերով:
- Սիրում կյանքը և ուսումը:
- Կանգնում ճշմարտության և արդարության համար:
- Հաստատում քահանայությունը, որպես երկրի վրա Աստծո իշխանություն:
- Ցնծում տաճարային օրհնություններով:
- Հասկանում իրենց աստվածային ճակատագիրը և ձգտում վեհացման:

Եթե դուք Սփոփող Միությունում եք, կազմակերպության առաքելության մեջ ներդրում կատարելու ուղիներից մեկը կարող է լինել, որպես այցելող ուսուցիչ ծառայելու նշանակումն ընդունելը: Երբ դուք այցելում եք և ծառայում ձեզ նշանակված քույրերին, ժամանակ տրամադրեք ավետարանը սովորեցնելու և ընկերություն ստեղծելու համար: Անհատներին ծառայելուց բացի, դուք կարող եք կարևոր դեր խաղալ ընտանիքները զորացնելու գործում:

Ծխերում և ճյուղերում ղեկավարներ են նշանակվում յուրաքանչյուր 18 տարեկան կամ բարձր տարիքի քույրեր: Քահանայության և Սփոփող Միության ղեկավարները հետևում են այցելող

ուսուցիչներին՝ օգնելու բավարարել յուրաքանչյուր քրոջ հոգևոր և մարմնական կարիքները:

Որպես Սփոփող Միության քույր, դուք հանդիսանում եք համաշխարհային քույրության անդամ, որոնք միավորված են նվիրվածությամբ առ Հիսուս Քրիստոսը: Դուք միանում եք Աստծո մյուս դուստրերին, որպես հավատք, առաքինություն, խորաթափանցություն և գթություն ունեցող կին, այն հաստատ իմացությամբ, որ ձեր կյանքը իմաստ, նպատակ և ուղղություն ունի: Սփոփող Միությունում ձեր մասնակցությամբ, դուք հնարավորություն ունեք վայելել քույրության զգացումը և ընկերությունը, մատուցել իմաստալի ծառայություն, կիսվել ձեր վկայությամբ և ձեր տաղանդներով և հոգեպես աճել:

Վարդապետություն և Ուխտեր (*Տես* Սուրբ Գրքեր)

Վեհացում (*Տես* Հավերժական Կյանք)

Վկայություն

Վկայությունը Սուրբ Հոգու կողմից տրված հոգևոր հաստատումն է: Վկայության հիմքը այն գիտելիքն է, որ Երկնային Հայրն ապրում և սիրում է մեզ, որ Հիսուս Քրիստոսն ապրում է, որ Նա Աստծո Որդին է, և որ Նա իրականացրել է անսահման Քավություն, որ Զոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն է, որը կանչվեց վերականգնելու ավետարանը, որ մենք այսօր առաջնորդվում ենք ապրող մարգարեի կողմից, և որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Փրկչի ճշմարիտ Եկեղեցին է երկրի վրա: Այս հիմքով վկայությունն աճում է ներառելով ավետարանի բոլոր սկզբունքները:

Ձեռք բերել և զորացնել վկայությունը

Որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ դուք սրբազան հնարավորություն և պատասխանատվություն ունեք ձեռք բերել ձեր սեփական վկայությունը: Ձեռք բերելով

վկայություն, դուք պարտավոր եք պահպանել այն ողջ ձեր կյանքի ընթացքում: Ձեր երջանկությունն այս կյանքում և ողջ հավերժության մեջ մեծապես կախված է նրանից, թե արդյոք դուք քաջարի եք Հիսուսի վկայության մեջ (տես ՎԵՈՒ 76. 79, տես նաև հատվածներ 51, 74, 101): Երբ աշխատում եք այս գործընթացի վրա, հիշեք հետևյալ սկզբունքները.

Վկայության համար որոնումները սկսվում են արդար, անկեղծ ցանկությունից: Ձեր Երկնային Հայրը կօրհնի ձեզ համաձայն ձեր սրտի արդար ցանկությունների և Իր կամքը կատարելու ձեր ջանքերի: Խոսելով մարդկանց մի խմբի հետ, որոնք դեռ վկայություն չունեին ավետարանի մասին, Ալման սովորեցրեց. «Եթե դուք արթնացնեք և զարթնեցնեք ձեր ունակությունները, մինչև անգամ իմ խոսքերի վրա մի փորձարկմամբ, և գործադրեք հավատքի մի մասնիկ, այո, նույնիսկ եթե դուք չեք կարող ավելին , քան ցանկանալ հավատալ, թողեք այդ ցանկությունը գործի ձեր մեջ, մինչև որ դուք հավատաք, այնպես որ դուք կարողանաք տեղ տալ իմ խոսքերի մի մասին»: (Ալմա 32. 27)

Վկայությունը գալիս է Սուրբ Հոգու խաղաղ ազդեցությունից: Վկայության արդյունքները կարող են հրաշագործ և կյանքը վերափոխող լինել, բայց վկայության պարգևը սովորաբար գալիս է որպես խաղաղ հավաստիացում, առանց Աստծո զորության տպավորիչ դրսևորումների: Նույնիսկ Ալման, որին այցելել էր հրեշտակ և տեսել էր Աստծուն Իր գահին նստած, կարիք ուներ ծոմ պահել և աղոթել, որպեսզի կարողանար վկայություն ստանալ Սուրբ Հոգու զորությամբ: (Տես Ալմա 5.45–46, 36. 8, 22)

Ձեր վկայությունը կաճի աստիճանաբար՝ ձեր փորձառությունների միջոցով: Ոչ ոք միանգամից չի ստանում լիակատար վկայություն: Ձեր վկայությունն ուժեղանում է ձեր փորձառությունների միջոցով: Այն կմեծանա, երբ դուք պատրաստակամություն դրսևորեք ծառայելու Եկեղեցում, որտեղ էլ որ կանչվեք: Այն կաճի, երբ դուք պատվիրանները պահելու որոշում ընդունեք: Երբ բարձրացնեք և զորացնեք ուրիշներին, դուք կտեսնեք, որ ձեր վկայությունը շարունակում է զարգանալ: Երբ աղոթում եք և ծոմ պահում, ուսումնասիրեք սուրբ գրքերը, հաճախեք Եկեղեցական ժողովներին և

լսեք ուրիշներին, ովքեր կիսվում են իրենց վկայություններով, դուք կօրհնվեք ոգեշնչման պահերով, որոնք կուժեղացնեն ձեր վկայությունը: Այդպիսի պահեր կգան ձեր ողջ կյանքի ընթացքում, երբ ձգտեք ապրել ավետարանով:

Երբ կիսվեք ձեր վկայությամբ այն կուժեղանա: Մի սպասեք, որ ձեր վկայությունը լիովին զարգանա և հետո կիսվեք: Վկայության զարգացման որոշ մասը տեղի է ունենում այն ժամանակ, երբ կիսվում եք: Փաստորեն դուք կտեսնեք, որ երբ ձեր վկայությունից տալիս եք այն, ինչ ունեք, այն կվերադարձվի ձեզ ավելի ուժեղացած:

Վկայություն բերելը

Ծոմապահության և վկայության ժողովների ժամանակ և ձեր ընտանիքի անդամների ու ընկերների հետ զրույցների ընթացքում, ձեզ կարող է հուշում գալ կիսվելու ձեր վկայությամբ: Այդպիսի դեպքերում դուք պետք է հիշեք, որ չպետք է կիսվեք երկար, տպավորիչ ելույթով: Ձեր վկայությունը կլինի շատ զորեղ, երբ այն արտահայտվի որպես համառոտ, սրտառուչ հավաստիացում Փրկչի, Նրա ուսմունքների և Վերականգման մասին: Աղոթեք առաջնորդության համար և Հոգին կօգնի ձեզ գիտենալ, թե ինչպես արտահայտել ձեր սրտում եղած զգացումները: Դուք մեծ ուրախություն կզգաք, երբ օգնեք ուրիշներին կիսվել այն հույսով և համոզմունքով, որ Տերը ձեզ է տվել:

Լրացուցիչ հղագրումներ՝ Հովհաննես Է. 17, Ա Կորնթացիս Բ. 9–14, Հակոբոս Ա. 5–6, Մորոնի 10. 3–5, ՎԱՈ 6. 22–23, 62. 3, 88. 81

Տես նաև Հիսուս Քրիստոսի Քավություն, Ծոմապահություն և Ծոմի Նվիրատվություններ, Հայր Աստված, Սուրբ Հոգի, Աղոթք, Հայտնություն, Հոգևոր Պարգևներ

Տաճարներ

Տաճարները տառացիորեն Տիրոջ տունն են: Դրանք երկրպագության սուրբ վայրեր են, որտեղ կարող է այցելել Տերը: Միայն տունը կարող է սրբությամբ համեմատվել տաճարների հետ:

Պատմության ընթացքում Տերը պատվիրել է Իր ժողովրդին տաճարներ կառուցել: Այսօր Եկեղեցին լսում է ողջ աշխարհով մեկ տաճարներ կառուցելու Տիրոջ կոչին՝ տաճարային օրհնությունները դարձնելով ավելի մատչելի մեր Երկնային Հոր մեծ թվով զավակների համար:

Արարողություններ ապրողների համար

Տաճարների հիմնական նպատակը սելեստիալ արքայությունում մեր վեհացման համար անհրաժեշտ արարողություններ ապահովելն է: Տաճարային արարողությունները տանում են դեպի մեծագույն օրհնություններ, որոնք մատչելի են Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով: Այն ամենն, ինչ անում ենք Եկեղեցում՝ մեր ժողովները և միջոցառումները, մեր միսիոներական ջանքերը, մեր կողմից ուսուցանվող դասերը և երգվող երգերը պետք է նպատակաուղղվեն դեպի Փրկիչը և սուրբ տաճարներում արվող աշխատանքը:

Օժտումը մի արարողություն է, որը մենք ստանում ենք տաճարում: *Օժտում* բառը նշանակում է «պարգև» և տաճարային օժտումը իրոք պարգև է Աստծուց: Արարողությունը բաղկացած է մի շարք հրահանգներից և ներառում է ուխտեր, որոնք կապում ենք արդար ապրելու և ավետարանի պահանջներին ենթարկվելու համար: Օժտումն օգնում է մեզ կենտրոնանալ Փրկչի, մեր Երկնային Հոր ծրագրում Նրա դերի և Նրան հետևելու մեր պարտավորության վրա:

Մեկ այլ տաճարային արարողություն է սելեստիալ ամուսնությունը, որով ամուսինն ու կինը կնքվում են միմյանց հետ հավերժության համար: Տաճարում կատարված կնքումը շարունակվում է հավերժ, եթե ամուսինն ու կինը հավատարիմ են մնում իրենց կապած ուխտերին:

Երեխաները, որոնք ծնվել են ծնողներից, ովքեր կնքվել են տաճարում, ծնվում են ուխտի մեջ: Այդ երեխաները ինքնաբերաբար դառնում են հավերժական ընտանիքի մաս: Այն երեխաները, որոնք ուխտի մեջ չեն ծնվում, նույնպես կարող են դառնալ հավերժական ընտանիքի մաս, երբ նրանց բնական կամ որդեգրած

ծնողները կնքվում են միմյանց հետ: Ծնողների հետ երեխաների կնքման արարողությունը կատարվում է տաճարում:

Եթե ստացել եք տաճարային արարողություններ, միշտ հիշեք այն ուխտերը, որոնք դուք կապել եք: Վերադարձեք տաճար այնքան հաճախ, որքան կարող եք: Եթե դուք հայր կամ մայր եք, սովորեցրեք ձեր երեխաներին տաճարի կարևորության մասին: Օգնեք նրանց պատրաստվել արժանի լինել տաճար մտնելու:

Եթե դուք դեռ չեք ստացել տաճարային արարողությունները, սկսեք պատրաստվել այժմ: Եթե հնարավորությունները թույլ են տալիս հաճախեք տաճար՝ մասնակցելու մահացածների համար մկրտություններին և հաստատումներին:

Արարողություններ մահացածների համար

Մարդիկ, ովքեր մահացել են առանց ավետարանական հիմնական արարողությունների, կարող են ստանալ այդ արարողությունները տաճարներում կատարվող աշխատանքի միջոցով: Դուք կարող եք կատարել այս աշխատանքը ձեր նախնիների և ուրիշների համար, ովքեր մահացել են: Նրանց փոխարեն դուք կարող եք մկրտվել և հաստատվել, ստանալ օժտում և մասնակցել ամուսնու և կնոջ, երեխաների ու ծնողների կնքումներին:

Դուք պետք է ակտիվորեն որոնեք ձեր մահացած նախնիների մասին տեղեկություններ, որպեսզի նրանց համար կատարվի տաճարային աշխատանք:

Մահացածների համար տաճարային աշխատանքի և ընտանեկան պատմության աշխատանքի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ «Ընտանեկան Պատմության Աշխատանք և Ծագումնաբանություն» էջ 61–64:

Տաճար մտնելու արժանավորություն

Դուք պետք է արժանի լինեք տաճար մտնելու համար: Դուք հաստատում եք ձեր արժանավորությունը երկու հարցազրույցների ժամանակ՝ մեկը ձեր եպիսկոպոսության անդամի կամ ճյուղի նախագահի հետ և մյուսը՝ ձեր ցցի նախագահության որևէ անդամի կամ միսիայի նախագահի հետ: Ձեր քահանայության

առաջնորդները այս հարցազրույցները կվարեն առանձին ու գաղտնի: Յուրաքանչյուր հարցազրույցի ժամանակ քահանայության առաջնորդը ձեզ կհարցնի ձեր անձնական վարքի և արժանավորության մասին: Ձեզ կհարցնեն Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի Քավության վերաբերյալ ձեր վկայության մասին և կհարցնեն, թե արդյո՞ք աջակցում եք Եկեղեցու գերագույն և տեղական առաջնորդներին: Ձեզ կխնդրեն հաստատել, թե արդյոք բարոյապես մաքուր եք և պահում եք Իմաստության Խոսքը, վճարու՞մ եք լրիվ տասանորդ, ապրու՞մ եք Եկեղեցու ուսմունքների հետ ներդաշնակության մեջ և պահպանու՞մ եք որևէ կապ կամ համակրանք ուրացած խմբերի հետ:

Եթե հարցազրույցների ժամանակ դուք այդ հարցերին տաք ընդունելի պատասխաններ և եթե դուք և ձեր քահանայության առաջնորդները բավարարված լինեն, որ արժանի եք տաճար մտնելու, դուք կստանաք տաճարային երաշխավորագիր: Դուք և ձեր քահանայության առաջնորդները կստորագրեն երաշխավորագիրը, որը ձեզ թույլ կտա տաճար մտնել հաջորդ երկու տարիների ընթացքում, քանի դեռ արժանի կմնաք:

Տաճարային երաշխավորագրի հարցազրույցները ձեզ ընձեռում են մեծ հնարավորություն քննել ձեր արժանավորությունը և ձեր կյանքի ձևը: Եթե ձեր կյանքում ինչ որ բան բաց է թողված, եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի հետ նախօրոք պայմանավորվեք ձեր տաճարային երաշխավորագրի հարցազրույցի վերաբերյալ խոսելու համար: Նա կկարողանա օգնել ձեզ նախապատրաստվել տաճարային երաշխավորագրին արժանի դառնալու համար:

Տաճարային հագուստներ

Երբ տաճար գնաք, դուք պետք է հագնեք ձեր ամենալավ հագուստները, ինչպես անում եք եկեղեցի գնալիս: Տաճարի ներսում դուք փոխում եք ձեր հագուստները՝ հագնելով տաճարային ճերմակ հագուստներ: Հագուստների փոխելը տեղի է ունենում հանդերձարանում, որտեղ օգտագործում եք փակվող պահարան

և մեկուսացված հանդերձարանային տարածք: Տաճարում խստորեն պահպանվում է համեստություն:

Երբ դուք դնում եք ձեր հագուստները փակվող պահարանում, կարող եք թողնել ձեր աշխարհիկ մտահոգությունները ետևում: Ճերմակ հագնված դուք տաճարում կարող եք զգալ մյուսների հետ ինչպես մեկ անձ և ունենալ հավասարության զգացում նրանց հետ, քանի որ բոլորը ձեր շրջապատում նույնատիպ են հագնված:

Կրել տաճարային ներքնազգեստ

Երբ ստանում եք օժտումը, դուք ձեր ողջ կյանքի ընթացքում տաճարային ներքնազգեստ կրելու օրհնությանն եք արժանանում: Դուք պարտավոր եք այն կրել համաձայն օժտման ժամանակ տրված հրահանգների: Հիշեք, որ օրհնությունները, որոնք կապված են այս սրբազան արտոնության հետ, կախված են ձեր տաճարային ուխտերը պահելու արժանավորությունից և հավատարմությունից:

Ներքնազգեստը հանդիսանում է մշտական հիշեցում այն ուխտերի մասին, որոնք դուք կապել եք տաճարում: Դուք պետք է դրանց վերաբերվեք հարգանքով բոլոր դեպքերում: Դուք չպետք է դրանք ի ցույց դնեք նրանց, ովքեր չեն հասկանում դրա կարևորությունը և չպետք է հարմարեցնեք հագուստների տարբեր ոճերի հետ: Երբ դուք կրեք այն պատշաճորեն, այն պաշտպանություն կապահովի գայթակղության և չարի դեմ: Ներքնազգեստ կրելը Փրկչին հետևելու ներքին պարտավորության արտաքին դրսևորումն է:

Տաճար հաճախելու օրհնությունները

Բացի քահանայության սրբազան արարողությունները կատարելու վայր լինելուց, տաճարը խաղաղության և հայտնության վայր է: Երբ խռովված եք և երբ կարևոր որոշումներ են ծանրանում, ճնշելով ձեր միտքը, դուք կարող եք ձեր մտահոգությունները տաճար տանել: Այնտեղ դուք կարող եք ստանալ հոգևոր առաջնորդություն:

Երբեմն դուք գուցե զգաք, որ չեք կարողանում հստակ մտածել, որովհետև ձեր միտքը ծանրաբեռնված է բազմաթիվ խնդիրներով և ուշադրություն խլող իրարանցմամբ: Տաճարում այս մտացրվածությունը կարող է կարգավորվել, մառախուղն ու մշուշը կարող են բարձրանալ և դուք կարող եք հասկանալ բաներ, որոնք դուք նախկինում չեք հասկացել: Դուք կարող եք նոր ուղիներ գտնել այն դժվարությունները հաղթահարելու համար, որոնց հանդիպում եք:

Տերը կօրհնի ձեզ, երբ դուք մասնակցեք տաճարային սրբազան արարողությունների աշխատանքներին: Եվ օրհնությունները, որոնք Նա կտա ձեզ չեն սահմանափակվի տաճարում ձեր գտնվելու ժամանակահատվածով: Նա կօրհնի ձեզ ձեր կյանքի բոլոր բնագավառներում: Տաճարային ձեր աշխատանքները հոգեպես կզորացնեն և կմաքրեն ձեզ:

Լրացուցիչ հղագրումներ՝ Եսայիա Բ. 1–3, ՎԿՈ 88.119, 109–110, 124.39–41

Տես նաև Ուխտեր, Ընտանեկան Պատմության Աշխատանք և Ծագումնաբանություն, Ամուսնություն, Արարողություններ, Փրկության ծրագիր

Տասանորդ

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ լինելու օրհնություններից մեկը՝ տասանորդ վճարելու արտոնությունն է: Ապրելով տասանորդի օրենքով, դուք մասնակցում եք Աստծո արքայության կառուցմանը երկրի վրա:

Տասանորդի սահմանումը և նպատակը

Լրիվ տասանորդ վճարելու համար դուք Տիրոջն եք տալիս ձեր եկամուտի մեկ տասներորդ մասը՝ Իր Եկեղեցու միջոցով: Դուք հանձնում եք ձեր տասանորդը ձեր եպիսկոպոսության կամ ճյուղի նախագահության որևէ անդամի:

Տեղական առաջնորդները փոխանցում են տասանորդի ֆոնդերը ուղիղ Եկեղեցու վարչություն, որտեղ խորհուրդը որոշում է սրբազան ֆոնդերի օգտագործման համապատասխան ուղիներ: Այս խորհուրդը բաղկացած է Առաջին Նախագահությունից, Տաս-

ներկու Առաքյալների Քվորումից և Նախագահող Եպիսկոպոսությունից: Գործելով հայտնության համաձայն, նրանք որոշումներ են ընդունում՝ ըստ Տիրոջ կողմից տրված ցուցումների: (Տես ՎևՈւ 120.1)

Տասանորդի ֆոնդերը միշտ օգտագործվում են Տիրոջ նպատակների համար՝ տաճարների, ժողովատների կառուցման և դրանք կարգին վիճակում պահելու, միսիոներական աշխատանքին աջակցելու և Եկեղեցու աշխատանքը ողջ աշխարհով մեկ իրականացնելու համար:

Լրիվ տասանորդ վճարելու օրհնությունները

Տասանորդի օրենքը զոհաբերություն է պահանջում, բայց ձեր հնազանդությունը այդ օրենքին բերում է օրհնություններ, որոնք շատ ավելի մեծ են, քան ձեր կողմից տրված որևէ բան: Մաղաքիա մարգարեն սովորեցրել է.

«Բոլոր տասանորդը տարեք գանձատունը, որ իմ տանը պաշար լինի. և ինձ մեկ փորձեցեք սրանով, ասում է Զորաց Տերը, թե արդյոք չեմ բանա ձեզ համար երկնքի պատուհանները և օրհնություն թափի ձեզ համար՝ մինչև որ նրա համար տեղ չլինի»: (Մաղաքիա Գ. 10)

Այս օրհնությունները գալիս են բոլորին, ովքեր վճարում են իրենց եկամտի լրիվ տաս տոկոսը, նույնիսկ եթե այդ գումարը շատ փոքր է: Երբ հնազանդվում եք այս օրենքին, Տերը կօրհնի ձեզ ինչպես հոգևոր առումով, այնպես էլ նյութական:

Ստանձնել տասանորդ վճարելու պարտավորություն

Եթե դեռ չեք հաստատել տասանորդ վճարելու հետևողական սկզբունք, դուք գուցե դժվարություն ունենաք հավատալ, որ դուք կարող եք թույլ տալ ձեզ վճարել ձեր եկամտի մեկ տասներորդ մասը: Բայց հավատարիմ տասանորդ վճարողները գիտեն, որ նրանք չեն կարող թույլ տալ իրենց տասանորդ չվճարել: Ուղղակի տառացիորեն և հրաշագործությամբ երկնքի պատուհանները բացվում են և օրհնություններ են թափվում նրանց վրա:

Հիշե՛ք, որ տասանորդ վճարելը այնքան փողի հարց չէ, որքան հավատքի հարց: Վստահեք Տիրոջը: Նա պատվիրան է տվել մեր օգուտի համար և Նա տվել է դրան ուղեկցող խոստում: Որոնեք ուժ Նեփիի հավատքի մեջ, որն ասել է. «Եկեք հավատարիմ լինենք Տիրոջ պատվիրանները պահելիս, քանզի ահա, նա ավելի զորեղ է, քան ողջ աշխարհը»: (1 Նեփի 4.1)

Տես նաև՝ Ծոմապահություն և Ծոմի Նվիրատվություններ

Տաս Պատվիրանները

Տաս Պատվիրանները հավերժական ավետարանական սկզբունքներ են, որոնք անհրաժեշտ են մեր վեհացման համար: Տերը հայտնել է դրանք Մովսեսին հնադարյան ժամանակներում (տես Ելից Ի.1–17), և Նա վերահաստատել է դրանք վերջին օրերի հայտնություններում: (տես ՎԿՈ 42.18–29, 59.5–13, 63.61–62) Տաս պատվիրանները ավետարանի կարևոր մասն են: Այս պատվիրաններին հնազանդվելը ճանապարհ է հարթում ավետարանի մյուս պատվիրաններին հնազանդվելու համար:

Տաս պատվիրանների հետևյալ ակնարկը ներառում է համառոտ բացատրություններ, թե ինչպես են դրանք շարունակում կիրառվել մեր կյանքում այսօր:

1. «Բացի ինձանից ուրիշ աստվածներ չունենաս»: (Ելից Ի.3) Մենք պետք է անենք բոլոր բաները մեր աչքը պահելով միայն դեպի Աստծո փառքին: (ՎԿՈ 82.19) Մենք պետք է սիրենք և ծառայենք Տիրոջը մեր ողջ սրտով, զորությամբ, մտքով և ուժով: (տես Երկրորդ Օրինաց Զ.5, ՎԿՈ 59.5)
2. «Քեզ համար կուռք չշինես»: (Ելից Ի.4) Այս պատվիրանում Տերը դատապարտում է կուռքեր պաշտելը: Կռապաշտությունը կարող է ընդունել բազմաթիվ ձևեր: Որոշ մարդիկ չեն խոնարհվում քանդակած պատկերների կամ արձանների, բայց դրա փոխարեն իրենց կենդանի Աստծուն փոխարինում են այլ կուռքերով, ինչպես օրինակ՝ փողով, նյութական ունեցվածքներով, գաղափարներով, կամ հեղինակությամբ: Իրենց կյանքում «նրանց գանձն

իրենց աստվածն է», աստված, որը «կոչնչանա իրենց հետ»: (2 Նեփի 9.30)

3. «Քո Եհովա Աստծո անունը դատարկ տեղը չհիշես» (Ելից Ի.7): Բացատրության համար տես՝ «Սրբապղծություն», էջ 128–29:
4. «Հիշիր հանգստության օրը նրան սուրբ պահելու համար» (Ելից Ի.8): Այս պատվիրանը բացատրելու համար տես «Հանգստության օր» էջ 145–47:
5. «Պատվիր քո հորը և քո մորը»: (Ելից Ի.12) Սա մի պատվիրան է, որը մնում է պարտադիր, նույնիսկ, երբ մենք մեծանում ենք: Մենք միշտ պետք է ուղիներ գտնենք մեր ծնողներին պատվելու համար:
6. «Սպանություն մի անիր»: (Ելից Ի.13) Բացատրության համար թե այս պատվիրանն ինչպես է վերաբերվում նրանց, որոնցից պահանջվում է պատերազմ գնալ, տես «Պատերազմ» էջ 183–84:
7. «Շնություն մի անիր»: (Ելից Ի.14) Վերջին օրերի մի հայտնության մեջ Տերը դատապարտում է ոչ միայն շնությունը, այլ «դրա նման որևէ բան» (ՎԱՈ 59.6): Պոռնկությունը, համասեռությունը և այլ սեռական մեղքեր յոթերորդ պատվիրանի խախտումներ են: Լրացուցիչ բացատրության համար տես «Մաքրաբարոյություն», էջ 29–33:
8. «Գողություն մի անիր»: (Ելից Ի.15) Գողությունը անազնվության մի ձև է: Ազնվության բացատրության համար տես էջ 84:
9. «Քո դրացու դեմ սուտ վկայություն մի անիր»: (Ելից Ի.16) Սուտ վկայություն տալն անազնվության մեկ այլ ձև է: Ազնվության բացատրության համար տես էջ 84:
10. «Մի ցանկանար»: (Ելից Ի.17) Ցանկանալը կամ նախանձելը որևէ բանի համար, որը պատկանում է ուրիշին վնասակար է հոգու համար: Այն կարող է կլանել մեր մտքերը և վարակել մեզ ապերջանկության և անբավարարվածու-

թյան մշտական զգացումով: Այն տանում է դեպի այլ մեղքեր և ֆինանսական պարտքեր:

Չնայած Տաս Պատվիրանների մեծ մասը նշում են բաներ, որոնք մենք *չպետք է* անենք, դրանք նաև ներկայացնում են բաներ, որոնք մենք *պետք է* անենք: Փրկիչն ամփոփեց Տաս Պատվիրանները երկու սկզբունքով՝ սեր Տիրոջ հանդեպ և սեր մեր մերձավորների հանդեպ.

«Սիրիր քո Տեր Աստծուն քո բոլոր սրտովը քո բոլոր անձովը և քո բոլոր մտքովը:

Սա է առաջին և մեծ պատվիրանքը:

Երկրորդն էլ սրա նման. Սիրիր քո ընկերին քո անձի պես: (Մատթեոս ԻԲ. 37–39)

Լրացուցիչ հղագրումներ՝ Մոսիա 12.33–36, 13.11–24

Տես նաև Ազատ կամք, Մաքրաբարոյություն, Ազնվություն, Հնազանդություն, Սրբապղծություն, Ակնածանք, Հանգստյան Օր, Պատերազմ, Պաշտամունք

Տասներկու Առաքյալների Քվորում (*Տես* Եկեղեցու կառավարում)

Տարածքային Յոթանասունական (*Տես* Եկեղեցու Կառավարում)

Տաք ըմպելիքներ (*Տես* Իմաստության Խոսք)

Տիրոջ Հոգին (*Տես* Սուրբ Հոգի, Քրիստոսի Լույս)

Տնային Ուսուցում (*Տես* Քահանայություն)

Ցից (*Տես* Եկեղեցու կառավարում)

Ուխտ

Ուխտը սրբազան համաձայնություն է Աստծո և անհատի կամ մարդկանց խմբի միջև: Աստված դնում է որոշակի պայմաններ, և Նա խոստանում է օրհնել մեզ, երբ մենք հնազանդվենք այդ

պայմաններին: Երբ ընտրում ենք չպահել ուխտերը, մենք չենք կարող ստանալ օրհնությունները և որոշ դեպքերում մեր անհնազանդության հետևանքով մենք պատիժ ենք կրում:

Քահանայության բոլոր փրկարար արարողությունները ուղեկցվում են ուխտերով: Օրինակ, դուք ուխտ եք անում, երբ մկրտվում եք, և յուրաքանչյուր անգամ հաղորդությունը ճաշակելով դուք վերանորոգում եք ձեր ուխտը: (տես Մոսիա 18.8–10, ՎԱՈ 20.37, 77, 79) Եթե ստացել եք Մելքիսեդեկյան Քահանայություն, դուք մտել եք քահանայության երդման և ուխտի մեջ: (տես ՎԱՈ 84. 33–44) Տաճարային օժտման և կնքման արարողությունները ներառում են նաև սրբազան ուխտեր:

Միշտ հիշեք և պատվեք այն ուխտերը, որոնք դուք կապում եք Տիրոջ հետ: Այդ ժամանակ ձեզ անհրաժեշտ չի լինի պատվիրել բոլոր բաները, որ դուք պետք է անեք: (տես ՎԱՈ 58. 26–28) Դուք կոգեշնչվեք Սուրբ Հոգու կողմից և Քրիստոսանման վարքը կլինի ձեր էության մի մասը: Ինչպես խոստացել է Տերը, դուք «կստանաք հայտնություն հայտնության վրա, գիտելիք գիտելիքի վրա, որպեսզի կարողանաք իմանալ գաղտնիքները և խաղաղության բաները, որոնք ուրախություն են բերում, որոնք բերում են կյանք հավերժական»: (ՎԱՈ 42. 61) Ձեր մեծագույն հույսը կլինի վայելել սրբագործումը, որը գալիս է այս աստվածային առաջնորդությունից, ձեր մեծագույն երկյուղը պետք է լինի այս օրհնությունների կորուստը:

Լրացուցիչ հղագրումներ՝ Երեմիա ԼԱ. 31–34, Մոսիա 5, Մորոնի 10.33, ՎԱՈ 82.10, 97.8, 98.13–15

Տես նաև՝ Աբրահամյան Ուխտ, Մկրտություն, Ամուսնություն, Արարողություններ, Քահանայություն, Հաղորդություն, Տաճարներ

Ուրացություն

Երբ անհատ մարդիկ կամ խմբեր հեռանում են ավետարանի սկզբունքներից, նրանք գտնվում են ուրացության վիճակում:

Համընդհանուր ուրացության ժամանակաշրջաններ են տեղի ունեցել աշխարհի պատմության ընթացքում: Արդարակեցության

ժամանակներին հաճախ հաջորդել է մարդկանց վերադարձը դեպի ամբարշտություն: Մեկ օրինակ է հանդիսանում Մեծ Ուրացությունը, որը տեղի ունեցավ Փրկչի կողմից Իր Եկեղեցին հաստատելուց հետո: Փրկչի և Նրա Առաքյալների մահից հետո, մարդիկ խեղաթյուրեցին ավետարանի սկզբունքները և չվավերացված փոփոխություններ կատարեցին Եկեղեցու կազմակերպման և քահանայության արարողությունների մեջ: Համատարած ամբարշտության պատճառով Տերը վերցրեց քահանայության իշխանությունը երկրի վրայից:

Մեծ Ուրացության ժամանակ մարդիկ առանց կենդանի մարգարեների կողմից աստվածային առաջնորդության էին: Հիմնադրվեցին բազմաթիվ եկեղեցիներ, բայց դրանք չունեին քահանայության իշխանություն՝ մարդկանց առաջնորդելու դեպի Հայր Աստծո և Հիսուս Քրիստոսի ճշմարիտ գիտությունը: Սուրբ Գրքերի որոշ մասեր խեղաթյուրվեցին կամ կորան և ոչ ոք իշխանություն չուներ շնորհելու Սուրբ Հոգու պարգևը կամ կատարելու քահանայության այլ արարողություններ: Այս ուրացությունը տևեց մինչև Երկնային Հայրը և Նրա Սիրելի Որդին հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին 1820թ. և սկսվեց ավետարանի լրիվության վերականգնումը:

Մենք այժմ ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ Հիսուս Քրիստոսի ավետարանը վերականգնվել է: Բայց ի տարբերություն հին ժամանակների Եկեղեցու, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին չի ենթարկվի համընդհանուր ուրացության: Սուրբ գրքերը սովորեցնում են, որ այն երբեք կրկին չի կործանվի (տես ՎԿՈ 138.44, տես նաև Դանիել Բ. 44):

Չնայած այլևս տեղի չի ունենա ևս մեկ համընդհանուր ուրացություն ճշմարտությունից, մենք պետք է յուրաքանչյուրս զգուշանանք անձնական ուրացությունից: Անձնական ուրացությունից կարող ենք ինքներս մեզ ապահովագրել՝ պահելով մեր ուխտերը, հնազանդվելով պատվիրաններին, հետևելով Եկեղեցու առաջնորդներին, ճաշակելով հաղորդությունից և անընդհատ զորացնելով մեր վկայությունը սուրբ գրքերի ամենօրյա ուսումնասիրությամբ, աղոթքով և ծառայությամբ:

Լրացուցիչ հղագրումներ՝ Եսայիա ԻԴ. 5, Ամոս Ը. 11–12, Մատթեոս ԻԴ. 4–14, Գործք Ի. 28–30, Բ Տիմոթեոս Գ. 1–5, 14–15, Դ. 3–4, 1 Նեփի 13.24–29, Մորմոն 1. 13–14, ՎԼՈ 1.15–17, Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.17–19

Տես նաև Եկեղեցու Կառավարում, Քահանայություն, Ավետարանի Վերականգնում

Փառքի արքայություններ

Հիսուս Քրիստոսի Քավությամբ բոլոր մարդիկ հարություն կառնեն: (տես Ալմա 11.42–45) Հարություն առնելուց հետո, մենք կկանգնենք Տիրոջ առջև դատվելու: (տես Հայտնություն Ի.12, 3 Նեփի 27.14) Մեզանից յուրաքանչյուրին կնշանակվի մի հավերժական բնակավայր փառքի հատուկ արքայությունում: Տերը սովորեցրել է այս սկզբունքը, երբ Նա ասել է. «Իմ Հոր տանը շատ բնակարաններ կան»: (Հովհ. ԺԴ.2)

Կան փառքի երեք արքայություններ՝ սելեստիալ արքայություն, թերեստրիալ արքայություն և թելեստիալ արքայություն: Փառքը, որ դուք կժառանգեք, կախված կլինի ձեր դարձի խորությունից, որը կարտահայտվի ձեր հնազանդությամբ Տիրոջ պատվիրաններին: Այն կախված կլինի այն ձևից, որով դուք «ստացել եք Հիսուսի վկայությունը»: (ՎԼՈ 76.51, տես նաև հատվածներ 74, 79, 101)

Սելեստիալ արքայություն

Սելեստիալ արքայությունը երեք փառքի արքայություններից ամենաբարձրն է: Այս արքայությունում նրանք հավերժ կբնակվեն Հայր Աստծո և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի ներկայության մեջ: Սա պետք է լինի ձեր նպատակը՝ ժառանգել սելեստիալ արքայությունը և օգնել ուրիշներին ևս ստանալ այդ մեծ օրհնությունը: Այս նպատակին չեն հասնում մեկ անգամից, այն ողջ կյանքի արդարության և նպատակասլացության արդյունքն է:

Սելեստիալ արքայությունն այն տեղն է, որը պատրաստված է նրանց համար, ովքեր ստացել են Հիսուսի վկայությունը» և դարձվել կատարյալ Հիսուսի՝ նոր ուխտի միջնորդի միջոցով, որն իրագործեց այս կատարյալ քավությունը իր սեփական արյան

հեղմամբ: (ՎԱՈ 76.51, 69) Այս պարգևը ժառանգելու համար մենք պետք է ստանանք փրկության արարողությունները, պահենք պատվիրանները և ապաշխարենք մեր մեղքերից: Ավելի մանրամասն բացատրություն նրանց մասին, ովքեր կժառանգեն սելեստիալ փառք, տես Վարդապետություն և Ուխտեր 76. 50–70, 92–96:

1836թ. հունվարին Մարգարե Ջոզեֆ Սմիթը ստացավ մի հայտնություն, որն ընդարձակեց նրա հասկացողությունը սելեստիալ փառք ժառանգելու պահանջների վերաբերյալ: Նա զարմացավ, երբ տեսավ իր մեծ եղբորը՝ Ալվինին այնտեղ, չնայած Ալվինը մահացել էր մինչև մկրտության արարողությունը ստանալը: (Տես ՎԱՈ 137.1–6) Այդ ժամանակ Տիրոջ ձայնը եկավ Մարգարե Ջոզեֆին ասելով որ.

բոլոր նրանք, ովքեր մահացել են առանց այս ավետարանի իմացության, ովքեր կընդունեին այն, եթե նրանց թույլ տրվեր ապրել, կլինեն Աստծո սելեստիալ արքայության ժառանգներ:

Նաև բոլոր նրանք, ովքեր կմահանան այսուհետև առանց դրա իմացության, ովքեր կընդունեին այն իրենց ողջ սրտով, ժառանգներ կլինեն այդ արքայության,

Քանզի Ես՝ Տերս կդատեմ բոլոր մարդկանց համաձայն նրանց գործերի, համաձայն նրանց սրտի ցանկությունների: (ՎԱՈ 137.7–9)

Ակնարկելով այս հայտնությունը Մարգարե Ջոզեֆն ասել է, որ նա տեսավ, որ բոլոր երեխաները, ովքեր մահանում են նախքան պատասխանատվության տարիքը, փրկվում են երկնքի սելեստիալ արքայությունում: (ՎԱՈ 137.10)

Մարգարե Ջոզեֆի մեկ այլ հայտնությունից մենք իմանում ենք, որ սելեստիալ արքայությունում կան երեք աստիճաններ: Բարձրագույն աստիճանի բարձրանալու համար և ընտանեկան հարաբերությունները հավերժորեն շարունակելու համար մենք պետք է մտնենք «նոր և հավերժական ուխտի մեջ» և այդ ուխտին հավատարիմ լինենք: Այլ խոսքով ասած պահանջվում է տաճարային ամուսնություն սելեստիալ փառքի բարձրագույն աստիճանին հասնելու համար: (Տես ՎԱՈ 131.1–4): Բոլոր նրանք, ովքեր արժանի են մտնել ամուսնության այդ նոր և հավերժական

ուխտի մեջ, կունենան այդ հնարավորությունը, լինի դա այս կյանքում թե հաջորդ կյանքում:

Թերեստրիալ արքայություն

Նրանք, ովքեր ժառանգում են թերեստրիալ փառքը «ստանում են Որդու ներկայությունից, բայց ոչ Հոր լրիվությունից: Հետևաբար նրանք թերեստրիալ մարմիններ են և ոչ թե սելեստիալ մարմիններ և կտարբերվեն փառքով ինչպես լուսինն է տարբերվում արևից»: (ՎևՈւ 76:77–78) Ընդհանուր առմամբ թերեստրիալ արքայությունում գտնվող անձինք կլինեն պատվավոր մարդիկ, ովքեր կուրացվել էին մարդկանց խորամանկությամբ: (ՎևՈւ 76.75) Այս խումբը կընդգրկի Եկեղեցու անդամներ, ովքեր «քաջ չէին եղել Հիսուսի վկայության մեջ»: (ՎևՈւ 76. 79) Այն կընդգրկի նաև նրանց, ովքեր մերժել են մահկանացու կյանքում ավետարանը ընդունելու հնարավորությունը, բայց ովքեր հետագայում ընդունել են այն հետմահկանացու հոգևոր աշխարհում: (Տես ՎևՈւ 76.73–74) Ավելի շատ բան իմանալու համար նրանց մասին, ովքեր կժառանգեն թերեստրիալ փառքը, տես Վարդապետություն և Ուխտեր 76.71–80, 91, 97:

Թելեստիալ արքայություն

Թելեստիալ փառքը կպահվի այն անձանց համար, ովքեր «չեն ընդունել Քրիստոսի ավետարանը, ոչ էլ Հիսուսի վկայությունը»: (ՎևՈւ 76.82) Այս անձինք կստանան իրենց փառքը հոգևոր բանտից փրկագնման միջոցով, որը երբեմն կոչվում է դժոխք: (տես ՎևՈւ 76. 84, 106) Մանրամասն նկարագրություն նրանց մասին, ովքեր կժառանգեն թելեստիալ փառքը, գտնվում է Վարդապետություն և Ուխտեր 76. 81–90, 98–106, 109–112 հատվածներում:

Կորուստ

Որոշ մարդիկ արժանի չեն լինի բնակվել փառքի որևէ արքայությունում: Նրանք կկոչվեն «կորստի որդիք» և ստիպված կլինեն

բնակվել մի արքայությունում, որը փառքի արքայություն չէ: (ՎևՈւ 76.32, 88.24) Այսպիսին կլինի վիճակը նրանց, ովքեր գիտեն [Աստծո] զորությունը և եղել են դրանից ճաշակողներ, բայց թույլ են տվել դևի զորությունից հաղթվելու և ուրանալու ճշմարտությունը և արհամարհել են [Աստծո] զորությունը (ՎևՈւ 76.31, տես նաև հատվածներ 30, 32–49):

Լրացուցիչ հղագրումներ՝ Ա Կորնթացիս ԺԵ.40–42, ներառյալ տողատակի ծանոթագրություն 40ա, ՎևՈւ 88. 20–39, 130.18–19

Տես նաև Հիսուս Քրիստոսի Քավություն, Հավերժական կյանք, Երկինք, Դժոխք, Փրկության ծրագիր

Փրկագնման ծրագիր

Նախաերկրային գոյության ընթացքում Երկնային Հայրը պատրաստել էր մի ծրագիր հնարավորություն տալու մեզ դառնալ Իր նման և ստանալ լիակատար ուրախություն: Սուրբ գրքերն այս ծրագիրն անվանում են «փրկության ծրագիր» (Ալմա 24.14, Մովսես 6.62), «երջանկության մեծ ծրագիր» (Ալմա 42.8), «փրկագնման ծրագիր» (Հակոբ 6.8, Ալմա 12.30) և «ողորմածության ծրագիր»: (Ալմա 42.15)

Փրկության ծրագիրն ավետարանի լրիվությունն է: Այն ներառում է Արարումը, Անկումը, Հիսուս Քրիստոսի Քավությունը և բոլոր օրենքները, արարողությունները և ավետարանի վարդապետությունները: Բարոյական ազատ կամքը, ինքնուրույն ընտրելու և գործելու կարողությունը նույնպես կարևոր են Երկնային Հոր ծրագրում: Այս ծրագրի շնորհիվ մենք կարող ենք կատարելագործվել Քավության միջոցով, ստանալ լիակատար ուրախություն և հավերժ ապրել Աստծո ներկայության մեջ: Մեր ընտանեկան հարաբերությունները կարող են տևել ողջ հավերժությունների ընթացքում:

Դուք Երկնային Հոր ծրագրի մասնակիցն եք և ձեր հավերժական փորձառությունը կարելի է բաժանել երեք հիմնական մասի՝ նախաերկրային կյանք, մահկանացու կյանք և կյանք մահից հետո: Երբ սկսում եք հասկանալ ծրագիրը, դուք պատասխաններ եք գտնում այն հարցերին, որոնք հուզում են այնքան շատ մարդ-

կանց: Որտեղի՞ց ենք եկել: Ինչու՞ ենք այստեղ: Ու՞ր ենք գնում այս կյանքից հետո:

Նախաերկրային կյանք

Նախքան երկրի վրա ծնվելը դուք ապրում էիք Երկնային Հոր ներկայության մեջ որպես Նրա հոգևոր զավակներ: Այդ նախաերկրային գոյության ժամանակ դուք մասնակցել եք մի խորհրդի Երկնային Հոր մյուս հոգևոր զավակների հետ: Այդ խորհրդի ժամանակ Երկնային Հայրը ներկայացրեց Երջանկության Իր մեծ ծրագիրը: (տես Աբրահամ 3.22–26)

Երջանկության ծրագրի համաձայն նախաերկրային Հիսուս Քրիստոսը՝ Հոր Անդրանիկ հոգևոր Որդին, ուխտեց Փրկիչ լինել: (տես Մովսես 4.2, Աբրահամ 3.27) Նրանց, ովքեր հետևեցին Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին, թույլ տրվեց գալ երկիր՝ մահկանացու կյանքի փորձ ձեռք բերելու և դեպի հավերժական կյանք առաջադիմելու համար: Լյուցիֆերը՝ Աստծո հոգևոր մեկ այլ զավակ, ապստամբեց ծրագրի դեմ և «ձգտեց կործանել մարդու ազատ կամքը»: (Մովսես 4.3) Նա դարձավ սատանա և նա ու նրա հետևորդները դուրս գցվեցին երկնքից և մերժվեցին ֆիզիկական մարմին ստանալու արտոնություններից և մահկանացու կյանքի փորձառությունից: (տես Մովսես 4.4, Աբրահամ 3.27–28)

Ձեր նախաերկրային կյանքի ընթացքում, դուք զարգացրել եք ձեր ինքնությունը և մեծացրել ձեր հոգևոր ունակությունները: Օրհնված լինելով ազատ կամքով, դուք կատարել եք կարևոր որոշումներ, ինչպես օրինակ՝ Երկնային Հոր ծրագրին հետևելը: Այդ որոշումներն այն ժամանակ և այժմ ազդել են ձեր կյանքի վրա: Դուք աճել եք բանականությամբ և սովորել եք սիրել ճշմարտությունը և պատրաստվել եք աշխարհ գալու համար, որտեղ դուք կկարողանայիք շարունակել ձեր առաջընթացը:

Մահկանացու կյանք

Այժմ դուք գտնվում եք մահկանացու կյանքում: Ձեր հոգին միացել է ձեր մարմնի հետ՝ ձեզ աճելու և զարգանալու այնպիսի հնարավորություններ ընձեռելով, որոնք հնարավոր չէին նախա-

մահկանացու կյանքում: Ձեր գոյության այս մասը սովորելու ժամանակաշրջան է, որի ընթացքում դուք կարող եք ստուգվել, ընտրել գալու դեպի Քրիստոս և նախապատրաստվել արժանի լինելու հավերժական կյանքին: Սա նաև մի ժամանակ է, երբ դուք կարող եք օգնել ուրիշներին գտնելու ճշմարտությունը և ձեռք բերելու վկայություն փրկության ծրագրի վերաբերյալ:

Կյանք մահից հետո

Երբ մահանաք, ձեր հոգին կմտնի հոգևոր աշխարհ և կսպասի հարությանը: Հարության ժամանակ ձեր հոգին և մարմինը կվերամիավորվեն և դուք կդատվեք և կընդունվեք փառքի որևէ արքայությունում: Փառքը, որը կժառանգեք կախված կլինի ձեր դարձի խորությունից և Տիրոջ պատվիրաններին ձեր հնազանդությունից: (տես Փառքի արքայություններ, էջ 92–95) Այն կախված կլինի ձեր կողմից Հիսուսի վկայությունը ընդունելու ձևից: (տես ՎևՈւ 76.51, տես նաև հատվածներ 74, 79, 101)

Օրհնություններ ծրագրի իմացությունից

Փրկության ծրագրի վկայությունը կարող է ձեզ հույս տալ և նպատակ, երբ մաքառեք կյանքի դժվարությունների դեմ: Դուք կարող եք վերահաստատում գտնել այն գիտակցությամբ, որ դուք Աստծո զավակն եք և որ դուք ապրել եք Նրա ներկայության մեջ, նախքան երկրի վրա ծնվելը: Դուք կարող եք ձեր ներկա կյանքում իմաստ գտնել՝ գիտենալով, որ մահկանացու կյանքում ձեր կատարած գործերը ազդելու են ձեր հավերժական ճակատագրի վրա: Այս գիտելիքով դուք կարող եք կարևոր որոշումները հիմնավորել ավելի շուտ հավերժական ճշմարտությունների վրա, քան կյանքի փոփոխվող հանգամանքների վրա: Դուք կարող եք անընդհատ բարելավել ձեր հարաբերությունները ընտանիքի մյուս անդամների հետ, ուրախանալով այն խոստմամբ, որ ձեր ընտանիքը կարող է հավերժական լինել: Դուք կարող եք ուրախություն գտնել Քավության և Տիրոջ պատվիրանների, արարողությունների, ուխտերի և վարդապետությունների ձեր վկայությամբ, գիտենալով, որ նա ով կատարում է արդարության գործերը

կստանա իր վարձքը, նույնիսկ խաղաղություն այս աշխարհում և հավերժական կյանք եկող աշխարհում: (տես ՎԵՈՒ 59.23)

Լրացուցիչ հղագրումներ՝ 2Նեփի 2.5–30, 10.23–25, Ալմա12.24–37, 22.12–14, 42, Մովսես 6.47–62

Տես նաև Ազատ կամք, Հիսուս Քրիստոսի Քավություն, Արարում, Մահ՝ Ֆիզիկական, Անկում, Հայր Աստված, Ավետարան, Երկինք, Դժոխք, Հիսուս Քրիստոս, Փառքի Արքայություններ, Դրախտ, Հարություն

Փրկված (*Տես* Փրկություն)

Փրկություն

Ուրիշ քրիստոնյաների հետ զրուցելիս ձեզ երբեմն կարող են հարցնել «Դուք փրկվա՞ծ եք»: Նրանք, ովքեր տալիս են այս հարցը, սովորաբար ի նկատի ունեն անկեղծ խոստովանելու կամ հայտարարելու այն փաստը, որ դուք ընդունել եք Հիսուս Քրիստոսին որպես ձեր անձնական Տիրոջ և Փրկչի: Տալով այս հարցը, նրանք ցույց են տալիս իրենց հավատքը Պողոս Առաքյալի կողմից գրված հետևյալ խոսքերին.

«Եթե բերանովը Հիսուսին Տեր դավանես և սրտումդ հավատաս, թե Աստված հարություն տվավ նրան մեռելներից, կապրես: Քանզի սրտով հավատում ենք արդարանալու համար, և բերանով դավանում ենք փրկվելու համար»: (Հռովմայեցիս Ժ.9–10)

Պատասխանելով «Փրկվա՞ծ եք» հարցին:

Հռովմայեցիս Ժ. 9–10, *փրկված* և *փրկություն* բառերը նշանակում են ուխտի հարաբերություն Հիսուս Քրիստոսի հետ: Այս ուխտի հարաբերությամբ մեզ ապահովված է փրկություն մեղքի հավերժական հետևանքներից, եթե մենք հնազանդ լինենք: Յուրաքանչյուր Վերջին Օրերի Սուրբ փրկված է ըստ այս իմաստի: Մենք դարձի ենք եկել վերականգնված ավետարանով: Մկրտության արարողության միջոցով մենք մտել ենք ուխտի հարաբերության մեջ Փրկչի հետ, վերցնելով նրա անունը մեզ վրա: Մենք վերանորոգում ենք մեր մկրտության ուխտը հաղորդություն վերցնելով:

Փրկություն բառի տարբեր իմաստները

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու վարդապետությունում *փրկված* և *փրկություն* բառերն ունեն տարբեր իմաստներ: Ըստ այդ իմաստների «Դուք փրկվա՞ծ եք» հարցի ձեր պատասխանը կլինի կամ «Այո» կամ «Այո, բայց պայմանով»: Հետևյալ բացատրությունները ցույց են տալիս *փրկություն* բառի վեց տարբեր իմաստները:

Փրկություն ֆիզիկական մահից: Բոլոր մարդիկ ի վերջո մահանում են: Բայց Հիսուս Քրիստոսի Քավության և Հարության միջոցով բոլոր մարդիկ հարություն կառնեն՝ կփրկվեն ֆիզիկական մահից: Պողոսը վկայել է. «Ինչպես Ադամով ամենը մեռնում են, այնպես էլ Քրիստոսով ամենը կենդանանում են»: (Ա Կորնթացիս ԺԵ.22)

Փրկություն մեղքից: Քրիստոսի Քավության միջոցով մեղքից մաքրագործվելու համար, դուք պետք է հավատք գործադրեք առ Հիսուս Քրիստոս, ապաշխարեք, մկրտվեք, և ստանաք Սուրբ Հոգու պարգևը (տես Գործք Բ.37–38): Եթե դուք մկրտվել եք և ստացել Սուրբ Հոգին, համապատասխան քահանայության իշխանությամբ, դուք արդեն պայմանականորեն փրկված եք մեղքից: Դուք ամբողջովին չեք փրկվի մեղքից մինչև այս երկրի վրա ձեր կյանքի ավարտը, երբ հավատարմորեն համբերեք մինչև վերջ:

Հիշեք, որ դուք չեք կարող փրկվել *ձեր մեղքերի մեջ*, դուք չեք կարող ստանալ ոչ պայմանական փրկություն՝ պարզապես հայտարարելով առ Քրիստոս ձեր հավատքի մասին, հասկանալով որ դուք անխուսափելիորեն մեղքեր կգործեք ձեր մնացած կյանքի ընթացքում: (տես Ալմա 11.36–37) Աստծո շնորհով դուք կարող եք փրկվել *ձեր մեղքերից*: (տես Հելաման 5.10–11) Այս օրհնությունը ստանալու համար, դուք պետք է հավատք գործադրեք առ Հիսուս Քրիստոս, ձգտեք պահել պատվիրանները, թողնեք մեղքը և նորոգեք ձեր ապաշխարությունը և մաքրագործումը հաղորդության արարողության միջոցով:

Լինելով վերստին ծնված: Ձեզ կարող են երբեմն հարցնել, թե դուք վերստին ծնվե՞լ եք: Հոգևոր վերածննդի սկզբունքը հաճախ

է հանդիպում սուրբ գրքերում: Նոր Կտակարանը պարունակում է Հիսուսի ուսմունքը, որ մենք պետք է «վերստին ծնվենք» և որ մինչև մենք «ջրից և հոգուց չծնվ[ենք] [չենք] կարող Աստծո արքայությունը մտնել» (Հովհաննես Գ.3, 5): Այս ուսմունքը հաստատվում է Մորմոնի Գրքում. «Ողջ մարդկությունը, այո, տղամարդիկ ու կանայք, բոլոր ազգերը, ցեղերը, լեզուները և ժողովուրդները պիտի վերստին ծնվեն. այո, Աստծուց ծնվեն, փոխված՝ իրենց մարմնական ու ընկած վիճակից դեպի արդարության մի վիճակի, լինելով փրկագնված Աստծուց, դառնալով նրա որդիներն ու դուստրերը: Եվ այսպես, նրանք դառնում են նոր արարածներ. և մինչև նրանք չանեն այս, նրանք ոչ մի կերպ չեն կարող ժառանգել Աստծո արքայությունը»: (Մոսիա 27.25–26)

Վերածնունդը գործընթաց է, որը տեղի է ունենում մեր մկրտությունից և Սուրբ Հոգին ստանալուց հետո: Այն գալիս է որպես մեր հոժարակամության արդյունք. «մտնել ուխտի մեջ մեր Աստծո հետ՝ կատարելու նրա կամքը և բոլոր բաներում հնազանդ լինելու նրա պատվիրաններին, որ նա կպատվիրի մեզ մնացած մեր բոլոր օրերում»: (Մոսիա 5.5) Այդ ժամանակ մեր «սրտերը փոխվել են նրա անվան հանդեպ՝ հավատքի միջոցով, հետևաբար, [մենք] ծնվել ենք նրանից» (Մոսիա 5.7): Եթե դուք մկրտվել եք և ստացել Սուրբ Հոգու պարգևը, ուխտելով ձեր վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը, դուք կարող եք ասել, որ դուք վերստին ծնվել եք: Եվ դուք կարող եք նորոգել այդ վերածնունդը ամեն կիրակի, երբ ճաշակում եք հաղորդությունը:

Փրկություն տգիտությունից: Շատ մարդիկ ապրում են խավարի մի վիճակում՝ չիմանալով վերականգված ավետարանի լույսը: Նրանք հեռու են պահվում ճշմարտությունից, որովհետև չգիտեն, թե որտեղ գտնեն այն: (ՎԱՈ 123.12) Որպես Տիրոջ Եկեղեցու անդամ, դուք փրկված եք այս վիճակից: Դուք գիտություն ունեք Հայր Աստծո, Հիսուս Քրիստոսի, կյանքի նպատակի, փրկության ծրագրի, և ձեր հավերժական ներուժի մասին: Դուք կարող եք ապրել որպես Փրկչի աշակերտ, որը հայտարարել է. «Ես եմ աշխարհի լույսը. ով որ իմ ետևից գա, նա խավարումը չի գնա այլ կյանքի լույսը կընդունի»: (Հովհաննես Ը.12)

Փրկություն երկրորդ մահից: Սուրբ գրքերը երբեմն խոսում են երկրորդ մահից փրկության մասին: Երկրորդ մահը վերջնական հոգևոր մահն է՝ լինելով կտրված ամեն արդարությունից և մերժված փառքի որևէ արքայությունում տեղ ունենալուց: (տես Ալմա 12.32, ՎԱՈ 88.24) Այս երկրորդ մահը չի գա մինչև Վերջին Դատաստանը և այն կգա շատ քչերին: (տես ՎԱՈ 76.31–37) Գրեթե յուրաքանչյուր անձի, որը երբևէ ապրել է երկրի վրա երաշխավորված է փրկություն երկրորդ մահից: (տես ՎԱՈ 76.40–45)

Հավերժական կյանք կամ վեհացում: Սուրբ գրքերում *փրկված* կամ *փրկություն* բառերը հաճախ վերաբերվում են հավերժական կյանքին կամ վեհացմանը: (տես Աբրահամ 2.11) Հավերժական կյանքը Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին իմանալն է և Նրանց հետ հավերժ բնակվելը՝ սելեստիալ արքայության բարձրագույն աստիճանում տեղ ժառանգելը: (տես Հովհաննես ԺԷ.3, ՎԱՈ 131,1–4, 132.21–24) Այս մեծ պարգևը ստանալու համար, մենք պետք է անենք ավելին, քան մեր մեղքերից ապաշխարելը և մկրտվելը և համապատասխան քահանայության իշխանության կողմից հաստատվելը: Տղամարդիկ պետք է ստանան Մելքիսեդեկյան Քահանայություն և Եկեղեցու բոլոր անդամները պետք է տաճարում սրբազան ուխտեր կապեն ու պահեն, ներառյալ հավերժական ամուսնությունը:

Եթե մենք օգտագործում ենք *փրկություն* բառը հավերժական կյանք իմաստով, մեզանից ոչ մեկը չի կարող ասել, որ մենք փրկվել ենք մահկանացու կյանքում: Այդ փառավոր պարգևը կգա միայն Վերջին Դատաստանից հետո:

Լրացուցիչ հղագրումներ՝ Մատթեոս Ժ.22, Մարկոս ԺԶ.16, Եփեսացիս Բ.14–18, 2 Նեփի 25.23, 26, Մոսիա 5.8–15, 3 Նեփի 9.21–22, Մորոնի 10.32–33, Հավատո Հանգանակներ 1.3

Տես նաև Հիսուս Քրիստոսի Քավություն, Մկրտություն, Հավերժական կյանք, Շնորհ, Փառքի արքայություններ, Փրկության ծրագիր

Քահանա (*Տես* Ահարոնյան Քահանայություն, Եկեղեցու կառավարում, Քահանայություն)

Քահանայության բանալիներ (*Տես* Քահանայություն)

Քահանայություն

Քահանայությունն Աստծո հավերժական զորությունն ու իշխանությունն է: Քահանայության միջոցով Աստված ստեղծեց և կառավարում է երկինքները և երկիրը: Այս զորության միջոցով Նա փրկագնում է և վեհացնում Իր զավակներին, իրականացնելով «մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39):

Երկրի վրա մարդկանց տրված քահանայության իշխանությունը

Աստված տալիս է քահանայության իշխանություն Եկեղեցու արական սեռի անդամներին, որպեսզի նրանք գործեն Իր անունով՝ Իր զավակների փրկության համար: Քահանայություն կրողները կարող են լիազորված լինել քարոզելու ավետարանը, սպասավորելու փրկության արարողությունները և կառավարելու Աստծո արքայությունը երկրի վրա:

Եկեղեցու արական սեռի անդամները կարող են սկսել իրենց քահանայության ծառայությունը, երբ նրանք դառնում են 12 տարեկան: Նրանք սկսում են կրելով Ահարոնյան Քահանայություն և ավելի ուշ կարող են արժանի դառնալ ստանալու Մելքիսեդեկյան Քահանայություն: Իրենց կյանքի տարբեր էտապներում և երբ նախապատրաստվում են ստանալ տարբեր պարտականություններ, նրանք կրում են քահանայության տարբեր պաշտոններ, ինչպես օրինակ՝ սարկավագ, ուսուցիչ, կամ Ահարոնյան Քահանայության քահանա և Մելքիսեդեկյան Քահանայության երեց կամ քահանայապետ: (Ահարոնյան և Մելքիսեդեկյան Քահանայության մասին հատուկ տեղեկությունների համար, տես էջ 3–4, և 101–2)

Եկեղեցու արական սեռի անդամին քահանայություն տալու համար մի լիազորված քահանայություն կրող պետք է այն շնորհի նրան և կարգի այդ քահանայության որևէ պաշտոնում: (տես Եբրայեցիս 5.4, ՎևՈ 42.11, Հավատո Հանգանակներ 1.5)

Չնայած քահանայության իշխանությունը տրվում է միայն արժանի արական սեռի անդամներին, քահանայության օրհնու-

թյունները մատչելի են բոլորին՝ տղամարդկանց, կանանց և երեխաներին: Մենք բոլորս օգտվում ենք քահանայության արդար առաջնորդությունից և մենք բոլորս ունենք արտոնություն՝ ստանալու քահանայության փրկարար արարողությունները:

Քահանայություն և ընտանիք

Քահանայության ամենակարևոր կիրառումը տեղի է ունենում ընտանիքում: Եկեղեցում յուրաքանչյուր ամուսին և հայր պետք է ձգտի արժանի լինել կրելու Մելքիսեդեկյան Քահանայություն: Իր կնոջ հետ որպես հավասար ընկերակից, նա նախագահում է արդարությամբ և սիրով, ծառայելով որպես ընտանիքի հոգևոր առաջնորդ: Նա առաջնորդում է ընտանիքին ամենօրյա աղոթքում, սուրբ գրքերն ուսումնասիրելիս և ընտանեկան երեկոյի ժամանակ: Նա աշխատում է իր կնոջ հետ սովորեցնելու երեխաներին և օգնելու նրանց պատրաստվել ստանալու փրկարար արարողությունները: (տես 68.25–28) Նա քահանայության ուղղություն տվող, ապաքինող և սփոփող օրհնություններ է տալիս:

Բազմաթիվ ընտանիքներ Մելքիսեդեկյան Քահանայության հավատարիմ կրողներ չունեն իրենց ընտանիքներում: Այնուամենայնիվ, ընտանեկան ուսուցիչների և քահանայության առաջնորդների ծառայության միջոցով Եկեղեցու բոլոր անդամները կարող են վայելել քահանայության զորության օրհնություններն իրենց կյանքում:

Քահանայության քվորումներ

Քահանայության քվորումը եղբայրներից կազմված խումբ է, ովքեր կրում են քահանայության նույն կոչումը: Քվորումների հիմնական նպատակն է ծառայել ուրիշներին, կառուցել միասնություն և եղբայրություն և հրահանգավորել միմյանց վարդապետությունների, սկզբունքների և պարտականությունների մեջ:

Եկեղեցու կազմակերպության բոլոր մակարդակներում գոյություն ունեն քվորումներ: Եկեղեցու Նախագահը և նրա խորհրդականները կազմում են Առաջին Նախագահության Քվորումը: Տասներկու Առաքյալները ևս կազմում են քվորում: Յոթա-

նասունականները՝ ինչպես Գերագույն Իշխանավորներն այնպես էլ Տարածքային Իշխանավորները, նույնպես կազմավորված են քվորումներով: Յուրաքանչյուր ցցի նախագահ նախագահում է քահանայապետերի քվորումի վրա, որը կազմված է այդ ցցի բոլոր քահանայապետերից: Յուրաքանչյուր ծուխ կամ ճյուղ սովորաբար ունի երեցների, քահանաների, ուսուցիչների և սարկավագների քվորումներ: Քահանայապետերը ևս կազմակերպվում են ծխերում, ծառայելով քահանայապետերի խմբերում:

Տնային ուսուցում

Այն պահից սկսած, երբ քահանայություն կրողները ձեռնադրվում են ուսուցչի կոչումում, նրանք հնարավորություն և պարտավորություն են ստանձնում ծառայել որպես տնային ուսուցիչ: Նրանք այս ձևով են աշխատում՝ կատարելով իրենց պարտականությունը՝ միշտ հսկելով եկեղեցին և լինելով նրանց հետ և զորացնելով նրանց: (ՎևՈւ 20.53)

Տնային ուսուցիչները սրբազան պարտավորություն ունեն լինել Եկեղեցու անհատների և ընտանիքների առաջնահերթ օգնության աղբյուրը: Նրանք այցելում են իրենց նշված անդամներին առնվազն ամիսը մեկ անգամ, օգնում ծնողներին իրենց պարտականություններում, սովորեցնում ավետարանը ընտանիքի յուրաքանչյուր անդամին, ընկերակցում են և օգնում անդամներին՝ նախապատրաստվել ընդունելու տաճարային արարողությունները և ավետարանի օրհնություններին արժանի ապրել:

Ծխերում և ճյուղերում առաջնորդները հոգ են տանում, որ տնային ուսուցիչներ նշանակվեն յուրաքանչյուր ընտանիքին կամ անձնավորությանը: Նրանք հետևում են, որ տնային ուսուցիչներն օգնեն բավարարել յուրաքանչյուր անդամի հոգևոր և աշխարհիկ կարիքները:

Քահանայության բանալիներ

Եկեղեցում քահանայության իշխանության գործադրումը ղեկավարվում է այն մարդկանց կողմից, ովքեր կրում են քահանայության բանալիները: (տես ՎևՈւ 65.2,154.123) Նրանք,

ովքեր կրում են քահանայության բանալիները, իրավունք ունեն նախագահել և ղեկավարել Եկեղեցին իրենց իրավասության սահմաններում: Օրինակ՝ եպիսկոպոսը կրում է քահանայության բանալիները, որը նրան հնարավորություն է տալիս նախագահել իր ծխում: Ուստի, երբ այդ ծխում մի երեխա պատրաստվում է մկրտվել, այն անձնավորությունը, որը մկրտում է երեխային, պետք է լիազորություն ստանա եպիսկոպոսից:

Հիսուս Քրիստոսը կրում է քահանայության բոլոր բանալիները: Նա Իր Առաքյալներին է տվել այն բոլոր բանալիները, որոնք անհրաժեշտ են Իր Եկեղեցին կառավարելու համար: Միայն ավագ Առաքյալը՝ Եկեղեցու Նախագահը կարող է օգտագործել (կամ լիազորել մեկ այլ անձնավորության օգտագործել) այդ բանալիները՝ ողջ Եկեղեցին կառավարելու համար: (տես ՎԿՈւ 43.1–4, 81.2, 132.7)

Եկեղեցու Նախագահը լիազորում է քահանայության բանալիները քահանայության այլ առաջնորդների, որպեսզի նրանք կարողանան նախագահել իրենց պարտականությունների շրջանակներում: Քահանայության բանալիներ են շնորհվում տաճարների նախագահներին, միսիաների, ցցերի, շրջանների, և ճյուղի նախագահներին և քվորումի նախագահներին: Անձնավորությունը, որը ծառայում է այս կոչումներից որևէ մեկում, կրում է բանալիները միայն մինչև իր ազատվելը: Խորհրդականները չեն ստանում բանալիներ, բայց նրանք ստանում են լիազորություն և պատասխանատվություն ըստ կոչման և նշանակման:

Քահանայության արդար գործադրում

Եթե դուք քահանայություն կրող եք, հիշեք, որ քահանայությունը պետք է լինի ձեր մի մասը բոլոր ժամանակներում և բոլոր հանգամանքներում: Այն վերարկու չէ, որը դուք կարող եք հագնել կամ հանել ըստ ցանկության: Քահանայության որևէ կոչումում կարգումը ողջ կյանքի ընթացքում ծառայության կանչ է, խոստումով, որ Տերը ձեզ արժանի կդարձնի կատարելու Իր աշխատանքը՝ համաձայն ձեր հավատարմությանը:

Դուք պետք է արժանի լինեք, որպեսզի ստանաք և գործադրեք քահանայության զորությունը: Խոսքերը, որոնք դուք խոսում

եք և ձեր ամենօրյա վարքն ազդում է ձեր ծառայելու ունակության վրա: Հասարակության մեջ ձեր վարքը պետք է անթերի լինի: Ձեր վարքը անձնական կյանքում նույնիսկ ավելի կարևոր է: Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով Տերը հայտարարել է, որ քահանայության իրավունքները անքակտելիորեն կապված են երկնքի զորությունների հետ և որ երկնքի զորությունները չեն կարող կառավարվել, ոչ էլ գործադրվել բացի միայն արդարության սկզբունքներով: (տես ՎԿՈ 121.36) Նա նախազգուշացրել է քահանայություն կրողներին.

որ, երբ մենք փորձում ենք ծածկել մեր մեղքերը կամ բավարարել մեր հպարտությունը, մեր սին փառասիրությունը կամ գործադրել վերահսկողություն կամ իշխանություն կամ էլ հարկադրանք մարդկանց զավակների հոգիների վրա, ինչ որ չափի անարդարությամբ, ահա, երկինքները հեռանում են մեզանից, Տիրոջ Հոգին վշտանում է, և երբ այն հեռանում է, Ամեն, այդ քահանայությանը կամ այդ մարդու իշխանությանը: (տես ՎԿՈ 121.37–38)

Դուք քահանայության մեջ չեք կարող պահպանել որևէ զորություն կամ ազդեցություն բացի միայն համոզելով, երկայնամիտ, փափկասիրտ և հեզ լինելով ու անկեղծ սիրով, բարեսրտությունով և կատարյալ գիտությամբ, որը մեծապես պիտի լայնացնի հոգին՝ առանց կեղծավորության և առանց նենգության: Եթե Սուրբ Հոգին մղում է ձեզ նախատել որևէ մեկին, հետո ցույց տվեք ավելի մեծ սեր հանդեպ նրան, ում հանդիմանել եք, որպեսզի նա չհամարի ձեզ իր թշնամին, որ նա իմանա, որ ձեր հավատարմությունն ավելի ուժեղ է, քան մահվան կապանքները: (տես ՎԿՈ 121.41–3)

Երբ արդարությամբ և սիրով գործադրեք քահանայությունը, դուք ուրախություն կգտնեք՝ ծառայելով Տիրոջ ձեռքում որպես գործիք: Նա ասել է,

որ մեր սրտերը պետք է նաև լցված լինեն գթությամբ բոլոր մարդկանց և հավատքի ընտանիքի հանդեպ և առաքինությունը պիտի զարդարի մեր խորհուրդները շարունակաբար, այնժամ մեր վստահությունը կուժեղանա Աստծո ներկայությամբ և քահա-

նայության վարդապետությունը կծորա մեր հոգիների վրա, ինչպես ցողը երկնքից:

Սուրբ Հոգին կլինի մեր մշտական ընկերակիցը և մեր գավազանը՝ արդարության և ճշմարտության անփոփոխ գավազան և մեր տերությունը պիտի լինի հավիտենական տերություն և առանց հարկադրանքի հոսի դեպի մեզ հավիտյանս հավիտենից: (տես ՎԱՈ 121.45–46)

Լրացուցիչ հղագրումներ՝ Հովհաննես ԺԵ.16, Գործք Ը.14–20, Հակոբոս Ե.14–15, ՎԱՈ 13, 20,84,107, Ջոզեֆ Սմիթ– Պատմություն 1.68–73

Տես նաև Ահարոնյան Քահանայություն, Եկեղեցու կառավարում, Մելքիսեդեկյան Քահանայություն, Արարողություններ, Ավետարանի վերականգնում

Քաղաքացիական Կառավարում և Օրենք

Վարդապետություն և Ուխտերի 134 բաժինը շարադրում է Վերջին Օրերի Սրբերի «հավատքը երկրային կառավարության օրենքների նկատմամբ ընդհանրապես»: (ՎԱՈ 134 բաժնի վերնագիր) Բաժինը պարունակում է հետևյալ դրույթները.

Մենք հավատում ենք, որ կառավարությունները Աստծո կողմից են սահմանված՝ մարդու օգտի համար, և նա մարդուն պատասխանատու է պահում դրանց հետ կապված իրենց գործողությունների համար, ինչպես օրենքներ սահմանելիս այնպես էլ դրանք կիրառելիս, հասարակության բարիքի և ապահովության համար . . .

Մենք հավատում ենք, որ բոլոր մարդիկ պարտավոր են աջակցել և պաշտպանել համապատասխան կառավարությունները, որոնց մեջ նրանք ապրում են, մինչ անբաժան և անքակտելի իրավունքներով պաշտպանված են այդպիսի կառավարությունների օրենքներով, և որ խռովությունն ու ապստամբությունը անվայելուչ են այդպես պաշտպանված յուրաքանչյուր քաղաքացու համար և պետք է պատժվի համապատասխանաբար, և որ բոլոր կառավարություններն իրավունք ունեն հաստատել այնպիսի օրենքներ, ինչպես որ իրենց իսկ դատողությամբ լավագույնն

են համարում հասարակության շահն ապահովելու համար, բայց միևնույն ժամանակ սուրբ պահելով խղճի ազատությունը:

Մենք հավատում ենք, որ յուրաքանչյուր մարդ պետք է հարգվի իր դիրքում՝ կառավարիչներ և դատավորներ՝ որպես այդպիսիք, կարգված լինելով անմեղներին պաշտպանելու և հանցավորներին պատժելու համար և որպեսզի բոլոր մարդիկ հարգանք ու ակնածանք ցույց տան օրենքներին, որովհետև առանց դրանց խաղաղությունն ու ներդաշնակությունը կփոխարինվի անիշխանությամբ և ահաբեկչությամբ. մարդկային օրենքները հաստատված լինելով այդ իսկ նպատակով՝ կարգավորելով մեր շահերը որպես անհատներ և ազգեր, մարդ մարդու միջև, իսկ երկնքից տրված աստվածային օրենքները՝ սահմանելու կանոններ հոգևոր հարցերի վերաբերյալ՝ հավատքի և երկրպագության, երկուսի համար էլ մարդը պետք է պատասխան տա իր Արարչին: (տես ՎԱՈ 134. 1, 5–6)

Եկեղեցու և պետության առանձնացման մի կարևոր տարր է հանդիսանում կրոնական ազատություն շնորհելու կառավարության պատասխանատվությունը: Վերջին Օրերի մարգարեները աջակցում են այս սկզբունքին, ինչպես նշվում է հավատքի տասնմեկերորդ հանգանակում. «Մենք վերապահում ենք արտոնություն երկրպագել Ամենազոր Աստծուն համաձայն մեր սեփական խղճի թելադրանքի և թույլ ենք տալիս բոլոր մարդկանց նույն արտոնությունը, թող նրանք երկրպագեն ինչպես, որտեղ, կամ ում որ կամենում են»: Կողմնակից լինելով եկեղեցու և պետության առանձնացմանը, Եկեղեցին չի աջակցում ոչ մի քաղաքական կուսակցության կամ թեկնածուի: Այն չի թույլատրում օգտագործել իր շենքերը և հարմարությունները քաղաքական նպատակների համար: Եկեղեցին չի մասնակցում քաղաքականության, մինչև որևէ բարոյական հարց վեճի առարկա չի դառնում, այդ դեպքում Եկեղեցին հաճախ իր խոսքն է ասում:

Չնայած Եկեղեցին քաղաքականապես չեզոք է մնում, Եկեղեցու առաջնորդները խրախուսում են անհատ անդամներին իրենց մասնակցությունը բերել որպես քաղաքացիներ: Որպես Վերջին Օրերի Սուրբ դուք պետք է հասկանաք ձեր տեղը և դիրքը այն

երկրում, որտեղ ապրում եք: Սովորեք երկրի պատմությունը, ժառանգությունը և օրենքները: Եթե հնարավորություն ունեք քվեարկելու և մասնակցելու կառավարման գործերին, ակտիվ մասնակցություն հանդես բերեք՝ աջակցելով և պաշտպանելով ճշմարտության, արդարության և ազատության սկզբունքները:

Լրացուցիչ հղագրումներ՝ ՎԵՈՒ 98.10, Հավատո Հանգանակներ 1.12

Քրիստոսի Լույսը

«Քրիստոսի Լույսը» տարածվում է Աստծո ներկայությունից՝ լցնելով տարածության անսահմանությունը: Այն «լույս է, որն առկա է բոլոր բաներում, որը լույս է տալիս բոլոր բաներին, որն օրենքն է, որով բոլոր բաները կառավարվում են»: (ՎԵՈՒ 88.12–13, տես նաև հատվածներ 6–11) Այս զորությունը ազդեցություն է բարու համար բոլոր մարդկանց կյանքում: (տես Հովհ. Ա.9, ՎԵՈՒ 93.2) Սուրբ գրքերում Քրիստոսի լույսը երբեմն կոչվում է Տիրոջ Հոգին, Աստծո Հոգին, Քրիստոսի Հոգին կամ Կյանքի Լույսը:

Քրիստոսի Լույսը չպետք է շփոթել Սուրբ Հոգու հետ: Այն անձնավորություն չէ, ինչպես Սուրբ Հոգին: Դրա ազդեցությունը առաջնորդում է մարդկանց գտնել ճշմարիտ ավետարանը, մկրտվել և ստանալ Սուրբ Հոգու պարգևը: (տես Հովհ. ԺԲ.46, Ալմա 26.14–15)

Խիղճը Քրիստոսի Լույսի դրսևորումն է, որը մեզ ունակություն է տալիս տարբերել բարին չարից: Մարգարե Մորմոնը սովորեցրել է. «Քրիստոսի Հոգին տրվում է ամեն մարդու, որպեսզի նա կարողանա բարին տարբերել չարից, ուստի, ես ցույց եմ տալիս ձեզ դատելու ուղին. քանզի ամեն բան, որ հրավիրում է անել բարիք, և համոզում է հավատալ Քրիստոսին, առաջանում է Քրիստոսի զորությամբ ու պարգևով. ուստի, դուք կարող եք կատարյալ իմացությամբ տարբերել՝ դա Աստծուց է . . . Եվ այժմ, իմ եղբայրներ, տեսնելով, որ դուք գիտեք լույսը, որով դուք կարող եք դատել, լույս, որը Քրիստոսի լույսն է, տեսեք, որ դուք սխալ չդատեք. քանզի այն նույն դատաստանով, որ դուք եք դատում, դուք ևս պիտի դատվեք»: (Մորոնի 7.16, 18)

Լրացուցիչ հղագրումներ՝ Հովհ. Ը.12, Ալմա 28.14:

Տես նաև Խիղճ, Սուրբ Հոգի

Քվորում (*Տես* Քահանայություն)

Օժտում (*Տես* Տաճարներ)

Սովորեք ինձանից և լսեք իմ խոսքերը. քայլեք իմ հոգու հեզության մեջ, և դուք պիտի խաղաղություն ունենաք ինձանում:

Վարդապետություն և Ուխտեր 19.23

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02368 63201 3
36863 201